



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1655

1656

1657

1658

4
-12

2011

ԱՆԻԾԵԱԼՆ

ՀԵՂԻՆՅԱՊ

*** ԱՐԲՍՆ

ԹԱՐԳՄԱՆՆՅ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

ԶՄԻՌՆԻՍ.

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1875

ԱՆԻԾԵԱԼՆ

ՄԱՍՆ ԳԻՆԳԵՐՈՐԴ

ԴՐԱՌՈՒԹ ՄԸ ՑԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆ

Ա.

ԽԱՌՈՒԱԾ ՍԷՐ ՄԸ

Մատչե՛ղ՝ որ անչափս կ'փափարէր Պ* * * կոմսուհոյն ընդ-
նշմարել տուած գումարը շահել, գումար մը զոր դատին աւար-
տէն ետք պիտի ընդունէր, շատ լաւ խաղաց իր դերը: Չուրա-
ցաւ տոմնէին Գլավիէրի երէցին առջև ըսած խօսքերը, բայց
պնդեց թէ այն ասեւն բարկութեան ենթակայ կ'գտնուէր: Քանի
որ ինքզինքը գտած էր, պարտաւոր էր ճշմարտութիւնը յայտ-
նել, և ճշմարտութիւնն այս է որ վերապատուելի հարք մաս
չունէին այս կտակին մէջ:

Նախադահն որ այս տեսակ ուրացումներու սովորած էր, այս
կոշտ աղջկան այլևայլ հարցումներ, մինչև անգամ սպառնալեք
ըրաւ, բայց նա միշտ պատասխանեց.

— Արդէն զիտցածս ըսի ձեզ, Պ. նախագահ, չեմ կարող
սրիշ բան մ'ըսել:

Քլավիէրի երէցին վկայութիւնը ճշմարիտ կարևորութիւն մը
աւնեցաւ: Լիտսէս հաստատեց Աէրալձնի պատմութիւնը, և ու-
րիշ բաղմամբու էական պարագաներ հաղորդեց որոնք բուն խնդրոյն
աւելի լոյս տուին:

Աէրալձն վերստին խօսելով հաստատեց թէ Մատլէզի յետս
կոչումներն որչափ կասկածելի էին, անոր բերնէն փախած պատ-
մութենէ ետք, երբոր իր ընչասիրութիւնն 'ի դերև ելեր էր,
պատմութիւն մը զոր Քլավիէրի երէցն անաչառ ճշդութեամբ կը
յայտնէր:

Երբոր դատաւիտութիւնը լմնցաւ, կայսերական իրաւարանն
սկսաւ խօսիլ: Ըսաւ նա որ կտակարարին կամքն օրինաց առջև՝
կտակին կամքն է, թէ բարկութեան ժամանակ սպասուհւոյ մը
բերնէն ելած անորոշ խօսքերու վրայ՝ անկողմնակալ դատաւոր-
ներ չեն կարող վճիռ մը տալ, այլ նոյն իսկ յետկարին վրայ,
որ ամէն կանոնաց համեմատ շինուած՝ կտակարար կնոջ կողմէ կը
ներկայի, երբոր իր բոլոր մտաւորական հանդամանաց ազատ գործ-
ածութիւնը կ'վայելէր:

Ատենակալն խորհրդածելու համար քաջութիւնն հտն՝ վերստին
դարձաւ և վճիռ մ'արձակեց որ դատախազ փաստարանին ապա-
ցոյցը մերժելով՝ յստիշատութեան և աւանդադրի գործ չէր տես-
ներ խնդրոյն մէջ, և Պ. Գուրնիշօնն՝ իրրև ճշմարիտ տէր քննիչ
կտակարար կնկան՝ կ'նկատէր:

Ըյս դատատանն անպատամ զարմանք պատճառեց:

Աէրալձն բորբոխին զղեանամ քաշուեցաւ դնաց:

Տ . . . ի թէ զգլխուց կողմը մուշեկան տրակտութեամբ ընդունեց
այս վճիռը: Շնորհակալեաց պատարագներ մատուցին Հաւատա-
քնութեան մատրան մէջ, ուր ներկայ գանուեցան Տ . . . ի բո-
լոր ազնուականները: Ամենէն անձնուէր սպաշխարու հիներն Տիրա-
մարց առջև անթիւ մամբ վառել տուին: Աւանական եղբարք այս
դէպքն Անարատ Աստին մէկ միջնորդութիւնը սեպիցին, որով
իր հատարիմ՝ ծառնեները կ'վարձատրէր . . . :

Արծաւորներ գաւառական Գիտին այցի դացին: անոր այցե-
տոմններ ուղարկեցին: Արքեպիսկոպոսն յաղթական կերպարանօք,
Պակէլի ընկերակցութեամբ՝ ամենէն առաջ գացողներէն մին եղաւ
որպէս զի վերապատուելի հարքը շնորհաւոր է: Եւ Քարիզի ու-
ղաւառական բոլոր կրօնական լրագիրներն իմացուցին թէ ժէզ-
վիդաց բոլոր զրպարտիչներն ափ 'ի բերան ու խայտատակ եղան:

Աէրալձն յաղթութիւնը տանելու կ'յուտար: Արդարև իր փա-
ռաւոր ճարտարախօսութիւնը յաղթութիւն մ'էր, սակայն դատը
կորոյս: Այս մարդն ատենարանի ճշմարիտ տաղանդին հետ դրա-
կան խելք մ'ունէր: Թէև համոզուած էր որ ժէզվիդներն 'ի
Տ . . . մեծ վարկ ունէին և վճռաջինջ ատենին գիմնելով մեծ բան
մը ձեռք չպիտի ձգէր. սակայն Թուլիօյի գրեց դատին արդիւնքն
և յորդորեց որ անմիջապէս բարձրագոյն գատարանին վերակոչէ,
ոչ այնքան շահելու յուսով որչափ պայքարը շարունակելու և զօ-
րաւոր հակառակորդաց առջև պարտեալ չի բնելու համար:

Թուլիօ պատասխանեց Աէրալձնի թէ իր դիտաւորութիւնը ոչ
միայն վերաբողոքել էր, այլ նաև դասն աւելի ուժղին յառաջ
վարել, թէ իրեն համար ոչ այնքան շահու ինդիր մ'էր այս,
թէ և ծանր իր սիրական Լուիզին համար, որչափ պարտաւորութիւն
մը մինչև վերջն իր հալածիչներու դէմ մարտելու, և անոնց
դիմակը քաղաքակիրթ աշխարհի առջև վար առնելու: Ուստի իր
բարեկամին յայտնեց թէ Թէզվիդաց դէ՞ յիշատակէր անուամբ
գործ մը յօրինած է, զոր անմիջապէս 'ի լոյս պիտի ընծայէր:
Եթէ դատաւորաց առջև յաջողութիւն մը չգտաւ, դէթ հասար-
ակաց կարծեաց առջև յաղթանակել կ'ուզէր: Իրեն համար,
դատին վատտակն այս բանիս մէջն էր:

Քիչ ատենէն Տ . . . ի մէջ ամէն մարդ իմացաւ թէ սոսկալի
յիշատակաղիր մը պիտի հրատարակուէր, թէ վիճարանութիւն-
ներն աւելի մեծ ազնուկ սիտի հանէին քան թէ առաջին դատին
մէջ, և թէ անուանի միաբանութիւնը Աէրալձնի ճարտարախօս
լեզուա վերստին սիտի ձաղկուէր: Նորէն մտաւանջութիւնն սկսաւ
վերապատուելի հարց անձնուէր մարդոց մէջ, և մտաւանջութեան
հետ՝ սովորական իմոթեաց պաղատանքն և դաւերն որ այս պա-
ղատանաց կ'օրհնէ:

Երբ Ժուլիօ իմացաւ իր և իր քրոջ ընչից կորուստը՝ բոլոր ճիգը թափեց որպէս զի այս հարուածն ըստ կարի նուազ սոսկալի ընէ : Թէ իր բողոքին կարևորութեան վրայ չափազանց կերպով խօսեցաւ անոր , և թէ իր հրատարակելիք յիշատակաղիլը կայսերական աստեղին մէջ անտարակոյս ունենալիք մեծ ներդրութեան վրայ պնդեց : Լուիզ այս աղւոր յոյսերուն հաւտալ ցցուց , բայց հարուածը մեծ էր իր սրտին վրայ : Իր խեղճ խղիկին մէջ փակուեցաւ և արտասուաց մէջ քիչ մը միսիթարութիւն փնտոեց այն աղէտից առջև զորս 'ի վաղուց քաջ գուշակեր էր :

Վէրտլօն՝ թէ և ճարտար՝ չէր կրցեր կնկան մը սրամտութենէ ազատիլ : Իր նամակներն՝ որ քանի մ'ատենէ 'ի վեր աւելի հազուադիւս և նուազ սրտակցական էին՝ ցոյց տուեր էին Լուիզին որ անոր սէրն օր ըստ օրէ կ'պաղէր : Գառնին կորուստը վերջին սիրային կայծերն ալ պիտի մարէր : Այս էր Լուիզին ներքին համոզումը , և կանայք՝ սրտի դաղտնեաց մասին՝ գուշակ են : Շատ շանցաւ՝ դիտեց որ Վէրտլօնէ ստացած գիրերը շփոթ են : Լուիզ ազնուութեամբ պատասխանեց թէ ամէն բան կ'իմանար : Վէրտլօն ինքզինքն անբասիր հանելու փոյթ չըրաւ : Իրենց թղթակցութիւնը դրեթէ բոլորովին դադրեցաւ և Լուիզն սիրող սիրտը խորտակեցաւ :

Նա ջանոց Ժուլիօյի վրայ ամել այս սէրը զոր ապաշնորհ մարդ մ'արատեր էր : Նախ՝ սիոփելու և իր դառն յիշատակին հետ միայնակ չմնալու համար՝ իր եղբորը մօտ աւելի ստէպ զբտնուելու սկսաւ : Եթէ Վէրտլօն սիրոյ ամէն հմայքն ունեցեր էր , Ժուլիօ բարեկամութեան ամենէն գողտրիկ գորովը կ'վայելէր : Մին միւսը չէր հարկաւ , բայց սիրոյ մէջ անդուծ պատրանքէ ետք՝ ջերմ բարեկամութիւն մը , եղբոր մը հետ սրտահոս հաղորդակցութիւն մը դարձեալ հոգւոյ վերքէ համար ամենէն անոյշ սպեղանի մ'է :

Լուիզ՝ այս երկնային դեղին ողջատուն արդիւնքը փոքր առ փոքր զգաց : Եթէ այս դեղը մտքէն չէր հաներ այն մարդն որու իր հոգին առած էր լիովին , մեծազին փոխարինութիւն մը կ'ստանար և քիչ քիչ Լուիզն սիրտը սկաւ հասկընսլ թէ՛ այն ամուսինն

որ իրեն հաւատարմութիւն պիտի ուխտէր աւելի սրտաբուխ երջանկութիւն մը չպիտի կարենար իրեն հաղորդել քան թէ այսչափ անձուէր , սիրող եղբայր մ'որու միակ , բոլորանուէր սէրն ինքն էր : Գարձեալ Լուիզ ոչ թէ թե աղջիկ մ'էր և ոչ արտակերտն կին մը : Նա մտածեց որ ժամանակն իր վերքը պիտի գոցէ : Եւ սիրոյ մէջ մարդ գրեթէ կ'բժշկուի այն օրն որ կ'գուշակէ թէ կարող է բժշկուիլ :

Ժուլիօ անձկութեամբ դիտեց այն ներքին փոփոխութիւնն որ տեղի կ'ունենար իր քրոջ և սիրահարին մէջ : Այս լուծութիւնը մէկ կողմէ յարգանք , միւս կողմէ ամօթխածութիւն եղաւ : Լուիզն կրած անբողոքոյն փորձն իր բնաւորութեան խոր թախծութիւն մ'ազդեց որ Ժուլիօյի համար նոր հրապոյր մ'ունեցաւ : Նա կարծեց թէ այս խեղճ վերաւոր սիրտը մտադիւր պիտի հանդէսէր իր սրտին վրայ :

Բ

* * * ԿՈՄՍՈՒՀԻՈՑՆ ՅԱՆԿՈՒԳՆ ԽՈՐՀՈՒԴԸ

Ժեզվիլայ մեծ արուեստն է աշխարհային միջոցներէ՝ զոր իւրացրնելու կ'յաջողին , օգուտ քաղել : Ամէն կրօնական ուխտերէն — և ասոր համար զանոնք չեն մեղադրեր — ժեզվիլայ միաբանութիւնն է միայն որ ամենէն քիչ նորատի օրիորդները վանքը կ'քէ , նա մանաւանդ երբ նոյն օրիորդները ծննդեան , հարստութեան , գեղեցկութեան և ուշիմութեան առաւելութիւններն ունին : Անոնց ամուսնութեան հանդիսատես լինիլ , զանոնք ուխտին պաշտպանութիւններն ընել , նոյնպէս նորասերունդ երիտասարդաց մայրեր , որպէս զի օրին մէկն անոնց դաստիարակութիւնը ստանանն , իրենց շատ աւելի կարևոր կ'թուի քան թէ զանոնք

կուսարան մ'ուղարկել որ իրենց չհասկըցած լատիններէն լեզուա-
ժամբողութիւն ընեն : Եւ եթէ հայր Պրիֆար կամեր էր կրօնու-
հի ընել Լուիզը , տիկին Քլավիէրի ժառանգութեան գործին դէմ
էղող արգելք մը բառնալու համար էր :

Նոյն կերպով չեն վարուիր միւս կրօնական միաբանութիւննե-
րը : Կարմէլեան հայր մը նախ Սուրբ-Թէրէզայի ընդունելի գործ
մ'ըրած կ'համարի , և ապա Աստուծոյ , եթէ յաջողի Կարմէլի
աստիճան մէջ թաղել նորատի օրիորդ մ'որ աշխարհիս վրայ բարձր
և փայլուն վիճակի հասնելու սահմանուած է : Երբ մի անգամ
այսպիսի էակ մը կրօնամոլութեամբ պաշարեն , երբ մի անգամ
համոզեն զինքն որ խարաղանի հանգոյցներով , քուրձի ծայրերով
պատառեն այն մարմինն որ ողջպահութեան անուամբ քաղաքա-
կրթութեան մեզ բերած բոլոր փափկութեանց վարժած է , այն
ատեն մարդկան մեղաց համար քաւիչ զոհ մը պիտի լինի , և 'ի
բաց մերժեալ աշխարհային ու ընտանեկան խնդութեանց փոխա-
բէն պիտի ընդունի նա քերովբէական հիացումներ և մարմնէն ե-
լած հոգւոյ մ'երանութիւնները , քանի նոյն մարմինը տկարա-
նայ , Քրիստոսի հոգւոյն մէջ կորսուելու , անոր նուիրական վե-
րացը մէջ ապաւինելու , և անոր մէջ անբաւ հեշտութիւններ
գտնելու համար , հեշտութիւններ զոր աշխարհային անձինք ոչ
դգալ և ոչ հասկընալու կարող են . երբ մի անգամ այս ամենն
աղջկան մտքին մէջ կ'տողորին ըսի , աղջիկ մ'որ ոչ ինքզինքը
կ'ճանչէ և ոչ աշխարհը , այն ատեն վանականը կարծէ թէ խիստ
մեծ գործ մը կատարեր է : Չերեակայեր իսկ՝ որ Թէրէզա տ'Ա-
վիլայի և Մարիամ Ալբօքի տիպարներուն հետեւելու համար աղ-
ջիկ մը յորդորելով , անոր միտքը խանդարեց , լաւ ևս ըսենք ,
բոլորովին յիմարացուց . միատիքականութիւնն իր բարձրադոյն զօ-
րութեան աստիճանին հասած ուրիշ բան չէ : Բնչպէս որ սէրը
պժգալի կատողութիւն մը կ'գառնայ երբ բարոյականի , բանականու-
թեան և ամօթխածութեան օրինաց համեմատ չկանոնաւորիր , նոյն-
պէս այս ազնիւ զգացումն որ կ'յորդորէ գեղեցիկ հողինքը զԱս-
տուած փնտուել ու սիրել , մոլեռանդներու ձեռք ուղղուելով
անրնական բան մը կ'գառնայ որ կարծուածէն աւելի հեշտական

սիրոյ բոցերուն կ'նմանի : Եւ այս է անշուշտ պատճառն այն սոս-
կալի պայքարներուն որ կ'մղուին չար ոգւոյն հետ՝ սուրբերու և
մանաւանդ միատիքականութեան մէջ ամենէն աւելի յառաջացած
սրբուհիներու կենսադրութեան մէջ , ինչպէս որ հրատապ ոճով
նկարագրած են իրենց պատմիչները : Բնութիւնն ու բանականու-
թիւնն այս անմիաներուն չափազանց խստամբերութենէ նախատուե-
լով՝ վրէժ կ'լուծէ անոնց երեակայութիւնը հրէշային երազներով
ընլով և իրենց ապաշխարութենէ մաշած մարմիններու մէջ վա-
ռելով հեշտախտութեան այնպիսի հրավառ իղձեր որոց արդէն
հրածեշտ սուած են : Հրեշտակին և կենդանւոյն մէջ անցած այս
ցաւազին պայքարներու բարեպաշտ պատմիչներն ամէն ինչ սա-
ղաէլին վրայ կ'ձգեն . չեն տեսներ որ միակ պատճառը մարմնոյ
և հոգւոյ մէջ եղած իմաստուն հաւասարակշուութեան բղխումն է :
Եւ այն յիմարները՝ որ նորատի աղջիկները կ'առաջնորդեն , ար-
բուն հասակի տէր կանայք՝ միատիքական ըսուած լեռին զազաթը
կեցած՝ ծափ կ'ղարնեն ' ' ' :

Սեր միտքն աստանօր քննել չէ թէ արդեօք կառավարութիւն-
ները , մեր արդի իրաւանց սիղբունքին համեմատ՝ կատարելու պար-
տիք չունին , հսկողութիւն մը գործածելու պէտք չունին այս
վանական հաստատութեանց վրայ ուր բարբառոսական կանոնի մը
կատարումն իրապէս նիւթական ու բարոյական անձնասպանութիւն
մ'է : Այսպիսի ժամանակ մ'որ այլանդակ միատիքականութեան
զաղափարներն օր ըստ օրէ աւելի ոյժ կ'աւնուն՝ այս բանս ծան-
րակշիւ ինդիք մ'է զոր միայն անցնելու ատեն կ'նշանակենք :

Կրօնական ազատութիւնը քան ամէն ազատութիւն աւելի նուիր-
ական է . բայց յիմարութեան և անձնասպանութեան ազատու-
թիւնը կրօնական ազատութիւնը չէ , և եկեղեցւոյ ազատութիւնը
նուազ կատարեալ չպիտի լինէր երբ կառավարութիւնը՝ միայն
դանուած օրէնքը գործածելով , ոչ Կարմէլեանի , ոչ Վլարիսեա-
նի և ոչ ուրիշ որ և է վանական հիմնարկութեանց հանդուրժէր :
Քաղաքական իշխանութեան կ'մնայ մտածել թէ արդեօք այն մթին
վանական տուններն ազատ թողլով՝ որոց վրայ բնաւ հսկողութիւն
մը չընեն , պարզապէս ողբալի զեղծմանց ազատութիւն տուած

չլինիր : Սակայն՝ կ'կրկնենք, ժեզվիդներն այս ճամբուն մէջ չեն նետեր իրենց Փէլէրէնէրն : Բարձր հողեկանութիւնն իրենց մտահոգութեանց մէջ երկրորդ կարգը կ'բռնէ . միատիքական լեռին դադարն երկրէս շատ հեռի կ'թուի իրենց : Աշխարհային կանայք որ զիրենք կ'գրուատեն, կ'փառաբանեն՝ շատ աւելի օգտակար են իրենց քան թէ ճշմոհականներ որ դժնփակ ծանր ապաշխարութեանց կ'ենթարկին իրենց համար :

Կանայք խանդավառ են . իրենց դիւրաբորբոք բնաւորութենէ՝ իրենց վրայ տիրապետող զղայումները դուրս թափելու կ'յորդորուն : Քանի որ վերապատուելի հարքն ընարեր են՝ պարտաւոր են անոնց համբաւը շինել, ստիպել իրենց ամուսիններն որ զաւակնին անոնց սան դաստիարակելու : Այս ամենը բնապէս կը կատարուի : Շարժիչ զօրութիւն մ'է որոց ժեզվիդները բնաւ պէտք չունին թեթեւ մղում անդամ տալու, և զօր հարկ է երբեմն չափաւորել :

Վասն զի միշտ ընտրութիւն մ'ընել պէտք է այս կնային անձնութիւնութեանց մէջ, որոց էական առաքինութիւնը խոհեմութիւնը չէ միշտ, և այս պատճառաւ իսկ կրնան վտանգաւոր դառնալ : Այս ընտրութիւնը դժուարին է, և ամենէն փորձաւորները միայն կարող կ'լինին : Անակնկալը մեծ դեր կ'խաղայ այս բաներուս մէջ և ամենէն ճարտար մարդոց հաշիւներն 'ի դերն կ'հանէ :

Պ * * * Կոմսուհին գործածելը Մատլէզի լուծութիւնը դնելու, առանց մտքէն անցընելու որ ինք հայր Քանտալի ձեռքը լոկ գործի մ'էր, վարպետ մարդու գործ էր : Միաբանութիւնը բնաւ իր վերայ արատ բերելու բան մը չէր ըրած, իր արկղը չէր բացած, ամէն ինչ շահ էր այս գործողութեան մէջ : Միայն չէին մտածեր որ կրնար մեծ վտանգ յառաջ դալ խրոխտ կոմսուհին իր գլխին գործելու թողլով . չէին խորհեր որ իր յաջողութեամբը մոլորած՝ մանրակրկիտ տեսչութեան մը լծին ներքե չպիտի մտներ և իր չափազանց եռանդը զսպել դժուարին պիտի լինէր :

Արդարեւ Պ * * * կոմսուհին վերապատուելի հարց գտին համար այնքան խանդով վառուած էր, տիկին Քլալիէրի կտակին խնդրոյն աւթիւ, որ այս բանս իրեն մենամուտութիւն մը դարձեր

էր : Ժեզվիդներն անշուշտ պիտի յաջողէին : Արդէն անդամ մը զանոնք ազատեր էր, միթէ երկրորդ անգամ մ'ալ չէր կարող զանոնք ազատել : Վասն զի, պէտք չէր ծածկել, վճռաջինջ ասենին տրուած բողոքը կրնար յաջողիլ : Եթէ կրօնական աշխարհն ուրախութեան աղաղակներ արձակեր էր Գուբնիշճնի 'ի նպաստ տրուած վճիռն իմանալով՝ «չարախորհուրդ մարդիկ ալ» ազդուութեամբ ատոր հակառակ զղայումներ յայտներ էին և այս բողոքին նկատմամբ իրենց յոյսերը բացէ 'ի բաց կ'յայտնէին : Ա'ըսէին թէ Թուլիօյի յիշատակողին այնպիսի իրողութիւններ երևան պիտի հանէր, որ եթէ կանխաւ դիտցած լինէին առաջին դատաւորներն իրենց վճիռն ուրիշ կերպով պիտի տային : Բայց դարձեալ՝ հնչլինակին անժխտելի տաղանդով այս յիշատակողիբը բարոյական մեծ ներգործութիւն պիտի ունենար : Նոյնպէս կ'ըսէին թէ Ալէքստըն Թեզվիդաց դէմ ծանր ծանր յայտնութիւններ ունի ընելու և թէ յափշտակութեան դէմ 'ի նորոց յարձակումներ կրնային երևան դալ : Ինչ և է, թէ կորուսէին և թէ շահէին դատը՝ ժեզվիդները մեծ հարուած մը պիտի ընդունէին : Մինչև անգամ զանազան սնորէնութիւններ ընելու խօսքեր կ'դառնային : Ա'ըսէին թէ իրենց գպրոքը բառնալու համար կառավարութեան խնդիր պիտի մատուցանէին :

Բոլոր այս շշուկները՝ զոր անտարակոյս չափէն աւելի կ'մեծցընէին, Պ * * * կոմսուհին յուսահատութեան կ'տանէր : Ինքն ևս անձնապէս երկիւղներ ունէր : Եթէ երբէք Մատլէզ երևան հանէր իրենց մէջ բոլոր անցած դարձածը, այն ատեն ի'նչ պիտի ընէր : Բայց այս ևս հաւանական չէր, քանի որ նէ դեռ ևս չէր ստացած բոլոր խոստացեալ գումարը : Բայց այն վատանուն ազատականներն ամէն բանի կարող են . կարելի է Մատլէզը համոզելու փորձ ըրին, իր յետս կոչման պատճառներն իմացան, թերևս զանի խօսել տալու համար աւելի ստակ խոստացան քան թէ մենք լուեցընելու համար : Կոմսուհին այնպէս կ'կարծէր որ մասունական ընկերութիւնն այս գործին դուրսն էր : Տարակոյս չկար որ այս անշահ քահանան, Թուլիօ արեղան, մասուն էր, միտ չդնելով այս աղանդին դէմ արձակուած բանադրանաց : Այս բո-

ղըքին դէմ արդեւք մը հանելով միայն կարելի էր ժէզվիզներն ազատել և Աստուծոյ փառքը, որոց կ'սպառնային Ֆրանմասօններն և ազաա խորհողները :

Բաց ինչպէս հասնիլ պէտք էր այս նպատակին :

Եթէ կին մը փոքր ինչ ուշիմ է, վէպ մը հիւսելու դժուարութիւն չբաշեր : Պ* * * կոմսուհին, այս խնդրոյն վրայ փոքր ինչ խորհելէն ետև՝ վէպ մը յօրինեց, չէ թէ գրելու այլ 'ի գործ դնելու համար : Իր անձինքն որոշեց, նոյնպէս անոնց տալիք դերերը, և իրեն խաղալիքը, և եթէ տեսարանը լաւ կարգադրուէր, ժէզվիզները պիտի ազատէին :

Պէտք չէր ժամանակ անցընել : Ա՛մօտենար այն վայրկեանն երբ դատը կայսերական ատենանը պիտի ելնէր : Ժէզվիզներն իրենց լրտեսներու միջոցաւ զիտէին որ Ժուլիօյի տպագրիչը քանի մ'օրէն ձեռագիր յիշատակադիրը ստանալու կ'սպասէր որպէս զի զայն անմիջապէս շարել տայ : Տ . . . ի գրքածախ մը մեծ շահեր ընելու կ'յուսար այս գործէն : Գիրքը հազարաւոր օրինակներով պիտի ծախուէր և բոլոր Ֆրանսա պիտի շրջէր :

Ժուլիօ ամէն շաբաթ օրերն իր թեմին հիւանդաց այցելութիւն ընելու սովորութիւն ունէր : Իր ներկայութիւնը, իր անոյշու մխիթարական խօսքերն օրհնութիւն մ'էր տառապողներուն համար : Իր ձայնը կ'ամոքէր վիշտեր : Ողջապահի խորհուրդներ կ'տար որոց կ'հետեւէին և հիւանդութիւնը հմայքով մ'անհետ կ'լինէր : Գրեթէ արամադիր էին ըրածներն իբրև հրաշք հրատարակել, և եթէ Ժուլիօ կախարդի դերը խաղալու արամադրութիւն ունենար՝ բոլոր թեմը պատրաստ պիտի գտնէր իբր այն զինքը գովաբանելու :

Հինգշաբթի օր մը, տաս տասն երկու տարու փոքրիկ զիւղացի մ'որ 'ի Սէնդ-Վլանտէն օտար մ'էր, երիցատունը հասաւ և օրհորդ Լուիզ Քլավիէրը հարցուց : Մարթան զանի ներս հրամայուց : Տղան տոմսակ մը յանձնեց Լուիզին :

« Օրիորդ ,

« Քու մօրդ և տիկին Քլավիէր հօրբրօջդ մէկ բարեկամուհին

քու և մանստանդ Պ. Ժուլիօյի օգտին համար խիստ կարևոր բան մ'ունի քեզի հաղորդելու : Եթէ հաճի Սէնդ-Վլանտէնի մատուռը գալ, անդ պիտի գտնես այս տողերը գրող անձն որ մասնաւոր պատճառներով ստիպեալ է ձեր տունը չներկայանալու : Մէկ ժամու խօսակցութիւն բաւական է քեզի յայտնելու խնդրը : Շուտ եկուր . ժամերն անդին են » :

Այս նամակը մեծ զարմանք պատճառեց Լուիզին, և իր առաջին զգացումն եղաւ այս հրաւերին անձամբ չպատասխանել : Յետոյ ուշի ուշով զիրը քննեց : Ձեռագիրը կնիկան մը գիրն էր . տառերը կանոնաւոր էին, ուղղագրութիւնն անասողաանելի : Թուղթը սահուն ու հոտաւէտ էր . ամէն ինչ գրողին ազնուացետական սովորութիւնները կ'յայտնէր : Անշուտ Տ . . . ի ընկերութեան մէկ կիին էր որ իրեն խօսիլ կ'ուզէր : Լուիզ՝ քիչ մը վարանելէն ետև՝ Սէնդ-Վլանտէնի մատուռն երթալու որոշեց :

Անդ հասնելով՝ պարզ հաղուած տիկին մը տեսաւ որ Տիրամօր մը պատկերին առջև ծունր դրած էր : Այնպէս կ'ցոյցնէր որ շատ ջերմօտանդ կերպով կ'աղօթէ : Լուիզ չգիտնալով թէ արդեօք այս կիինն էր իրեն սպասողը՝ մատրան մէջ քանի մը քայլ առաւ : Այն ատեն տիկինը գլուխը դարձուց և Լուիզ Պ* * * կոմսուհին ձանչեց . զանի երբեմն իր հօրքրօջ տունը տեսեր էր :

Այն ատեն իր անորոշ երկիւղները փարատեցան : Խորանին առջև ծռեցաւ նա, և կարճ աղօթք մ'ընելէն ետև՝ եկեղեցիէն ելաւ կոմսուհւոյն հետ : Հեռացան մեծ ձամբէն, որ սովորաբար նոյն պահուն բաւական բանուկ էր, և դէպ 'ի լեռը զարկին : Երբ ժայռի մը դար ու փոս վայրը հասան որ դալարագեղ զարգարուած էր և շոճիներու փունջ մը զայն կ'հովանաւորէր այնպէս որ չէր թողուր արևուն ճառագայթից ներս թափանցելու, կոմսուհին նստաւ և Լուիզն իր քրօջ նստել տուաւ : Սովորական բարեկները տալէն ետև՝ խորին լուութիւն մը պահեր էր :

Վերջապէս այս լուութիւնը խղելու որոշեց .

— Օրիորդ, շատ քիչ անգամ առիթ ունեցեր եմ քեզ ընկերութեանց մէջ հանդիպելու, և սակայն, դու միշտ մեծ համակրութիւն մ'ազգած ես ինձ :

— Շատ շնորհատարտ եմ՝ քեզ, տիկին :

— Այս համակրութեանս պատճառն անտարակոյս քու չքնաղ ձիրքդ, և մանաւանդ քու բարեպաշտութիւնդ էր : Գիտէի որ՝ քու տոհմիկ ծննդեան, զեղեցիութեան, հարստութեան միջոցաւ տոանալիք վիճակէդ հրաժեշտ ապրով՝ ամէն այս առաւելութիւնս ներն Աստուծոյ զոհել և Նուիրակն—Սրբի մնաստանը քաշուիլ կ'ուզէիր : Այդ աղոթ ու բարի խորհուրդ մ'էր, աղջիկս : Գուտադանդ ունիս, բարձր խելք ունիս. այս անդին ձիրքդ աշխարհչիս նորատի աղջկանց զաստիարակութեան նախընտրել, զեղեցիկ, մինչև անգամ զիւցաղնական ընթացք մ'էր, և քեզ կ'սիրէի որ այդ արիւթիւնն ունէիր :

Լուիզ կարմրեցաւ : Այս խորհուրդները շատ հեռու էին իր մտքէն և կոմսուհւոյն գովեստաները սկսեր էին զինքը շփոթել :

— Աղջիկս, կ'երևի ինձ, շարունակեց կոմսուհին իր ձայնին խիստ զգուշելի հնչումներ տալով, կ'երևի ինձ որ սուքեղ ունեցած այս սէրս, որ կարծածէդ շատ աւելի է, իբրև ունք կ'տայ ինձ միջնորդելու քեզի և Թուլիօ արեղային վերաբերող ամենակարևոր խնդրոյ մը համար :

Լուիզին ուղիղ խելքը, սրտի բնազդում մը կ'զգուշացրնէին զինք կոմսուհւոյն շողմարար խօսքերուն դէմ : Այս աղու ձայնն իրեն բնական չէր երևեր : Մակայն՝ միւս կողմէ կ'զատասպարաէր այս տպաւորութիւններն և այն պսղ կերպն որով պատասխանեց .

— Պատրաստ եմ, տիկին, քեզ մտիկ ընելու : Ի՞նչ է խնդիրը :

Բայց կոմսուհին զեռ իր յառաջանը չէր աւարտած : Նա գիտեց որ նորատի աղջկան վրայ ընելու փափաքած ներդործութիւնը պարապի ելեր էր : Արիշ պահուելի միջոց մ'ունէր. զայն գործածեց :

— Սիրելի Լուիզ, ըստ անոր, ներէ ինձ ընտանեբար խօսիլ քեզի : Մայրդ արդէն ճանչեր և սիրեր եմ, և աւասիկ ստոր համար մանաւանդ քեզ կ'սիրեմ :

Տասն հինգ տարիէ՛ ՚ի վեր մեռած մօր մը յիշատակը, որ զեռ կենդանի էր Լուիզն սրտին խորը, ՚ի գերեւ չգրգռեց կոմսուհին : Վասն զի Լուիզն սիրաւ շարժեցաւ, և արտասուալի աջօք կոմսուհւոյն նայելով, անոր ըսաւ .

— Միթէ իմ մօրս բարեկամուհին էիր, և հիմակ անոր վրայ ունեցած սէրդ իմ վրայ սիրտի ածենս. շնորհակալ եմ, տիկին :

Եւ Լուիզ զորովաղին սեղմեց կոմսուհւոյն կարկառած ձեռքը :

Այս անգամ ստունութիւնը դնաց, և ժէզվիկայ եռանդոս բաբեկամուհին, Լուիզին ձեռքն իր ձեռքին մէջ սեղմելով .

— Այո՛, աղջիկս, ըսաւ, շատ սիրեցի քու մայրդ, և իմ վրայ մեծ վստահութիւն ունէր : Ուստի, թէե՛ք քու հօրքբոջ առանձնական կենաց պատճառաւ, շատ քիչ քեզ տեսնելու առիթ ունեցայ, բայց իմ սէրս խանդաղին կ'հետեւէր քեզ . խնդութեամբ կ'դիտէի որ մօրդ փափաքած աղջիկը կ'գառնայիր, երանի թէ ապրէր որ տեսնէր : Մայրդ որ այնչափ զեռատի մեռաւ, այնպիսի հիւանդութենէ մը զօր բժիշկները բնաւ չհասկըցան : Անոր սրտին մէջ բարոյական վեշա մը կար, զրեթէ ստոյգ եմ այս մասին :

Լուիզ այս յիշատակներով հետզհետէ այլայլելով՝ կոմսուհւոյն դէմ հակակրութիւնը կ'փարատէր, և կոմսուհին ալ, որ այս բանս լաւ գիտեր էր, իր տարած յաղթանակին վրայ կը ջնջար :

— Մի միայն քեզ սիրելուս համար է, Լուիզ, որ քու սատիկ սիրած մէկ անձիդ հօղը կ'տանիմ : Այդ անձը՝ սոյն պահուս՝ ճշմարիտ վտանգի մ'ենթարկած է :

— Թուլիօ՛, իմ եղբայրս, զոչեց Լուիզ :

— Այո՛, սիրելի Լուիզ, Պ. Թուլիօ արեղան, քու եղբայրդ : Արդէն գիտես՝ Գուրնիշօնի դէմքով ժէզվիկայ դէմ անօրէն գատ մը վարեց :

— Ա՛չ, տիկին, այս անիրաւ գատ մը չէ. մենք քաջ համողութեամբ ենք որ Պ. Գուրնիշօն իմ հօրքբոջս ճշմարիտ ժառանգորդը չէ :

— Լաւ ուրե՛մն, Լուիզ, վասն զի տիկին Քլավիէրի աղջկան պարտաւոր եղած անկեղծութեամբս սիրտի խօսիմ, երբ քու հօրքբոջ իրօք միտք ունենար իր բոլոր ինչքը ժէզվիկայ սալ, միթէ իր կամքը քեզի համար նախընտրական չպիտի լինէր :

— Այո՛, տիկին, նախընտրական սիրտի լինէր թէ իմ եղբօրս և

Թէ ինձի համար, եթէ ստոյգ չլինէ ինք թէ պառաւութենէ տկարացած մարի մը վրայ ճնշում եղած չէր: Իմ հօրքոյրս մինչև յետին վայրկեան զՂջայ որ զլուխ ծուեր էր այն աղղեցութեան առջև որու ճնշումը կ'զգար թէև անկից ազատելու ոյժ չունէր: Իմ եղբօրս տունը գտնուած աստեղէս 'ի վեր' իմ յիշատակներս զրգուեցի, նոյնպէս ժամանակին իմ զրած քանի մը յիշագիրներս, և ամենն ալ միացընելով Պ. Վէրտլճնի հաղորդեցի — Լուիզի ձայնը գողաց այս անունն արտասանելու ասեն, կոմսուհին դիտեց և ժպտեցաւ — այնպիսի իրողութիւններ գտաւ որ զործին նոր լոյս պիտի բերեն և տարակոյս չկայ որ բողոքը յաջող վախճան մը պիտի ունենայ:

— Մտիկ ըրէ ինձ, Լուիզ, նախ Աստուծոյ առջև կ'երգնում որ ստոյգ եմ թէ տիկին Քլավիէր իր ստացուածքն եղբօրդ չէր կամեր թողուլ: Չես կարող անգիտել թէ այս անխոհեմ երիտասարդին այլանդակ և յեղափոխական դադափարներն որչափ կը վշտացընէին հօրքրոջ սիրար: Նա շատ անգամ այս ցաւը քու առջև յայտնած է:

— Այո՛, տիկին, բայց գիտեմ նաև թէ ինչ դժոխային անդամութեամբ իմ եղբայրս զբարտեցին անոր առջև, իր կարծեաց չափազանցութիւն տալով: Եւ սակայն հօրքոյրս զորովաղին կ'սիրէր զանի. նա կարծէր թէ կ'սխալէր Թուլիօ, բայց անոր խորհրդոյ անկեղծութեան վրայ տարակոյս չունէր:

Եւ վերջապէս, տիկին, յարեց Լուիզ, իմ հօրքոյրս չէր կրօնար Թուլիօյի ըրած յանդիմանութիւններն ինձ ընել, և սակայն ինձի հետ ալ նոյն կերպով վարուեցաւ: Հետևապէս եղբօրս կարծիքը չեն պատճառ որ զինքը ժառանգութենէ զրկելու յորդորեց:

— Բայց, սիրելի Լուիզ, քու մօրդ ձգած փոքրիկ բաժինը՝ թէև աշխարհի մէջ ապրելու համար աննշան է, բաւական յարմար օժիտ մը կ'կազմէր Նոթթիլան-Սքոթ մենաստանը մտնելու համար: Հօրքրոջը ձգած թողալին ալ այդ բաժինը կ'աւելցընէր, և նա համոզուած պիտի լինէր որ քու կրօնական կոչումը հաստատ էր, ինչպէս որ ես ալ այս համոզումն ունիմ որ տակաւին հաստատ է: Սակայն այժմ խնդիրն այդ կիտին վրայ չէ, այլ

եղբօրդ վրայ: Լուիզ, քեզն բայէ 'ի բաց կ'խոստովանիմ, քեզ վերաւորելն աչքս առնլով, որ անոր վրայ շատ մեծ համակրութիւն չունիմ: Եկեղեցոյ, և եկեղեցոյ կողմէ հաւանեալ կրօնական ուխտից թշնամիները՝ իմ թշնամիներս են, և ուրիշ թշնամի չեմ ճանչեր: Բայց քու սիրոյդ և սոսկալի գայթակղութեան մը առաջն առնլու համար՝ պատրաստ եմ անոր օգնական ձեռք մը կարկառել: Ժամանակը սուղ է, աղջիկս, եթէ առ վճռաջինջ աստեանն ըրած բողոքն երկու աւուր մէջ յետս չկուչէ, նոյնպէս վերապատուելի հարց դեմ եղբօրդ զրած պժգալի յիշատակաւորը, Թուլիօ արեղան առաջնորդին կողմէ պիտի արգիլուի կրօնական պաշտօնէ: Գիտես արդէն որ այս արդելման սպառնալիքը կար իրեն դեմ. լաւ, գիտցիր նաև որ այս արգելումն ազդարարող զիրը պատրաստ և ստորադրուած է:

Լուիզ յորդ արտասուք թափեց: Տակաւին շատ կաշկանդուած լինելուն դաստիարակութեան մը պաշարումներով, զոր Միշլէ լաւ կ'բացատրէ այս խօսքով՝ պէղանդէան դաստիարակութիւն, հետևապէս ամենէն ամօթալի աղտը կ'համարէր արգիլում մը: Ասկից զատ՝ Լուիզ երազներ տեսեր էր, որոց մէջ գոռողութիւնն ու եղբայրական սէրն իրարու հետ կ'խառնուէին: Թուլիօ՝ որ այնքան մեծ էր իմացականութեամբը, այնքան զեր 'ի վեր էր քան ամենն, անտարակոյս եկեղեցոյ բարձրագոյն աստիճաններուն պիտի հասնէր: Այս փայլուն, յուսալից տեսարանին տեղ՝ պէտք էր տեսնել ուրիշ մ'որ ամէն նուաստութեամբ և նախասանօք լինէր:

— Աւելի ծանրակշիւ բան մը կայ, վրայ բերաւ կոմսուհին որ քանի մը վայրկենէ 'ի վեր լուութիւն կ'պահէր:

Գ.

ԺԵԶՎԻԻԷՅ ԱՄՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լուիզ գլուխը վեր վերցուց:

— Եւ ուրիշ ի՞նչ ծանր բան կրնայ լինիլ, տիկին :

— Արդեւումը, թերեւս գիտես, եկեղեցիէն չզատեր քահանայ մը : Այդ պատիժ մ'է, եկեղեցական իշխանութեան կողմէ տրուած արատ մ'է : Բայց դարձեալ՝ յանցաւորը քրիստոնէական ընտանեաց մէկ անդամը կ'համարուի : Ուրիշ աւելի ահաւելի պատուհաս մը կայ, որ մեր օրերը հազու տեսնուած է, և ահա այդ պատուհասը կ'սպառնայ եղբորդ :

— Յանուն Աստուծոյ, տիկին, գոչեց Լուիզ, խօսէ, ինչ կայ, Անոր համար խորանն ենելու արդիլուելէն աւելի սոսկալի բան մը կայ : Ո՛հ, կ'պաղատիմ, բացատրէ միտքդ : Ի՞նչ է ուրեմն այդ պատուհասն որով եղբորս կ'սպառնան :

— Ծայրագոյն բանադրանքը, ըսաւ կոմսուհին ցած ձայնով և որպէս թէ ինքն ևս կ'զարհուրէր արտաբերած խօսքերէն :

Այս խոշոր բառը, «ծայրագոյն բանադրանք» Լուիզին ականջին օրոտման պէս հնչեց : Բոլորովին գոյնը նետեց : Աստուածաբանական խնդիրներու մասին տգէտ լինելով չէր կրնար նկատել թէ քանի ծաղրելի և անհնար էր կոմսուհւոյն ըսածը :

— Բանադրանքը, ըսաւ նա : Բայց, տիկին, բանադրանք կրելու համար՝ պէտք է որ մարդ յանցանք գործած լինի :

— Քահանայապետաց կոնդակներուն և սահմանայ գէմ դնելն ամէն կաթոլիկի համար յանցանք մ'է : Աւելի մեծ յանցանք մ'է քահանայի մը համար :

— Եւ իմ եղբայրս ի՞նչ կերպով հակառակ կ'դնուի քահանայապետական կոնդակներու և սահմանաց :

— Քու կրօնական դատախազակութիւնդ՝ մի շատ կանանցը պէս, շատ թեթեւ եղած է, իմ սիրելի աղջիկս, ըսաւ կոմսուհին, որ փոքր ինչ աստուածաբանական զրեանքը թղթատած լինելուն, մանաւանդ այլանդակները, վարդապետութիւն մ'ինքնիրեն յօրիներ էր և անոր վրայ Լուիզին համար հնարած վէպը կ'հիմնէր : Գիտցիր ուրեմն, շարունակեց նա, որ ժեզվիկաց կանոնադրութեան երկրորդ հիմնական սկզբունքն է այս. հոբևոր և մարմնասոր իբաց մեջ վեհապետական պատկանութեանը՝ ըստ վարդապետութեան ճշմարիտ կաթոլիկաց, իր Բացարձակ իշխանութեանը հազարրեց միաբանութեան զբար-

պէսին անչին մեջ, ընկերութեան հոբևոր և մարմնասոր պատկանութեան և աճան հասար : Հետեւապէս կ'իմանաս, սիրելի Լուիզ, որ զօրապետն անվրիպելի դատաւոր մ'է իր միաբանութեան վերաբերող հոգևոր և մարմնասոր օգտից մէջ, ինչպէս որ Պասյն ալ դատաւոր է Պասպականութեան վերաբերող հոգևոր և մարմնասոր իրաց մէջ :

Լուիզ այս խնդիրներով բնաւ զբաղած չէր, միայն Նախնական-Սրբի մենաստանին մէջ ծայրագոյն անդրլեռնեայ գաղափարաց մէջ կրթուած էր : Իր բնական ուղիղ խելքը, իր եղբորը բերնէն լսած կարծիքն իր մտած մէջ քիչ մը լոյս բերեր էին : Ժամանակ պէտք էր նախկին տպաւորութիւնները մոռնալու համար : Եւ Լուիզ, ակամայ՝ ինքնիրեն հարցընելու պարտաւորներ էր թէ արդեօք իր սիրական ժուլիօն դժնդակ մոլորութեան մէջ չէր գտնուեր հայր Պրիֆարի, անուանի Գուրնիշնի և բարեպաշտ կանանց կողմէ դրուատեալ վարդապետութենէ մը հեռանալով, այս անձինք որ իրկունը կ'դային տիկին Քլավիէրի հետ թուղթ խաղալու : Ժեզվիկաց տրուած այս բանադրանաց, բացարձակ իշխանութեան և անսխալականութեան խօսքերն իր գլխուն մէջ տաղտուկալի գաղափարներու շփոթութիւն մը կ'ձգէր . իր երկիրդներն ուղիղ դատողութեան կ'մնասէին, և կոմսուհին կ'յաղթանակէր տեսնելով որ արհաւրօք յաջողեր էր հաստացընելու ուղածն այս խեղճ աղջկան :

— Քրանտայի մէջ գեռ չեն գիտեր, ըսաւ նա, ժեզվիկաց իշխանութեան բոլոր մեծութիւնը : Մեր անտիկաթոլիկական օրէնքը չեն ներեր անոնց՝ ի մասնաւորին գործադրել զայն . բայց նոյն օրէնքը չեն կարող ջնջել միակ ատեանէ մը տրուած իրաւունքն որմէ՝ երկրիս վրայ՝ զերագոյնը չկայ բողոքելու համար, այս է Հռոմի ատեանը : Պապերը, շարունակեց կոմսուհին, այնքան հեռու տարին իրենց շնորհներն այս միաբանութեան համար որ բոլորովին Հռոմի նուիրեալ է, որ Պօղոս Գ ժեզվիկաց արտօնութիւն տուաւ հառաչանելու և սպառնաւ գնելու աշխարհիս ասին կողմերը, որ և է եկեղեցական աշխարհական իշխանութեան շնայելով : Ս. Պօղոս Ե աւելի հեռու տարաւ իր շնորհը . այս միաբանութեան կոնդակով

պարզեց բոլոր անցեալ, ներկայ և ապագայ արդեն-ի-ն-ներք զոր Պատերը շնորհեր էին զանազան կրօնական միաբանութեանց և այն ասելու զոր կրօնային շնորհել արանց մասնաւոր զխնդրութեան մը : Ա՛րեւմտեան ուրբեմն, ժէզվիկաց հակառակելով իրենց աշխարհային շահուց նկատմամբ՝ նոյն իսկ պապութեան դէմ կ'զինին : Ահա մասնաւորապէս այս բանս կ'վերաբերի քնզն և յատկապէս եղբորդ, եթէ այդ աղէտալի ճամբուն մէջ յարատեւէք : Նոյնպէս ծայրադոյն բանադրանք կայ ասին Ռաբաբորէ, իշխանի դէմ որ միաբանութեան և իր հալածանք զբայ հարկ մը կամ որորդ մը կ'դնէ : Ահներև է որ այժմ Գրանսան վարող այն ողորմելի քաղաքային օրինադրին շնորհիւ, ժէզվիկները չեն կարող այս իրաւունքը յառաջ տանիլ, բայց այդ իրաւունքը կայ ու կ'մնայ . բայց անոնք որ ընկերութեան զեռն մը կը հասցնեն, որ կ'համարձակին անոնց վերաբերող բան մը դրաւել, որ ուրիշն դէմ կ'յարձակին, որ ժէզվիկաց համբուսին դէմ կ'դառնանն բանադրուած են : Արդ՝ եղբայրդ իր հօրքրոջ կաակը լուծել տալ կամելով վասն զի կարծէ թէ ժէզվիկները ժառանգորդ են, Պ. Գուրնիշովի տեղ, և այս իրաւ է, ժէզվիկաց սեպհակնութեան կ'վնասէ : Անոնց դէմ յիշատակադիր մը դրելով, անոնց համբաւն կ'վնասէ : Ա՛րեւմտեան, իմ խեղճ աղջիկս, եթէ քաղաքային, հեթանոսական օրէնքը չէ կարող զանի ձերբակալել, և եթէ յանդգնէր իսկ ընկերութիւնը դատաւարտել, հողերական օրէնքը յանցապարտ քահանայն պիտի պատժէր . նախ արդելումն՝ որ արդէն յանցաւորին գլխուն վրայ կախուած է և սոսկալի բանադրանքը : Ա՛ճիւր Էռուճէն եկաւ, և երկու օրէն դատաւական Գէտն եպիսկոպոսին պիտի ուղարկէ, և այս ալ պիտի ստիպուի զայն հրատարակելու :

— Երկու օրէն, գոչեց Լուիզ՝ բոլորովին շուարելով աստուածաբանական իմաստակութիւններէն որով կոմսուհին գլուխը ցաւցուցեր էր :

— Երկու օրէն, ըսաւ կոմսուհին պաղութեամբ, վճիւր, — հրամանը պաշտօնական է — պիտի կատարուի և եկեղեցւոյ մէջ պիտի կախուի :

Լուիզ բոլորովին զարհուրած էր :

— Անշուշտ հասկըցար, աղջիկս, որ վերապատուելի հարք այս ծայրայեղ միջոցը ձեռք առնլու ստիպուեցան որպէս զի ինքզինքնին սլաշտպանեն : Սակայն դարձեալ որչափ բարեսիրտ ու ներողամիտ են, մանաւանդ հայր Պրիֆար այնչափ համակրութիւն ունի քու վրագ, հողիդ այնքան սիրելի է իրեն, այնքան երկիրդ զգաց, իբրև խոստովանահայրդ, տեսնելով որ թերևս քու կրօնական կոչումդ պիտի կորսուի այն անձին հետ տեսութիւն ընելովդ որ պէտք էր զայն ամբարնել, որ դարձեալ կ'փափաքի՝ քու սիրոյդ համար՝ եղբայրդ ազատելու փորձ մ'ընել, և ծուլիօ արեղային փրկութիւնը քու ձեռքդ է :

— Ի՛մ ձեռքս է, տիկին, խօսէ, ի՛նչ պարտիմ ընել : Ի՛մ եղբորս համար ամէն զոհողութիւններ ընելու պատրաստ եմ :

— Լաւ ուրբեմն, այն ատեն զանի պիտի ազատես, ինքզինքդ պիտի ազատես . և մինչև անգամ, յարեց կոմսուհին անհոգութեամբ — բայց ըսելէքս երկրորդական կարևորութիւն մ'ունի քեզի համար — մինչև անգամ Պ. Վէրալտի մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանես :

— Պ. Վէրալտն է :

Լուիզի ձայնն այլայլեցաւ, և սաստիկ կարմրութիւն մ'իր զգացած այլայլութիւններէն զունասեալ գէմքը զունաւորեց :

— Աստուած, ըսաւ կոմսուհին իւրովի, որ ուշադիր կ'դիտաէր աղջիկը, միտքէս կ'անցնէր, և հիմակ ստոյգ եմ, նա կ'սիրէ փաստաբանը :

— Աստուած իմ, այն, շարունակեց կոմսուհին բարձրաձայն, երկու օր կայ կնութեան ուղեց շատ հարուստ աղջիկ մը : Զեմ կարող ըսել իր անունը, գաղտնիք մ'է իմ քովս . բայց աղջկան ծնողքն որ շատ կրօնասէր են, պատասխան տուին որ այս ամուսնութեան պիտի հաւանին միայն թէ Պ. Վէրալտն սոյն դատը վարելէն կասի : Իսկ Վէրալտն կարծէ թէ իր պատիւը կ'պահանջէ որ դատը վարէ : Ահներև է որ եթէ բողոքք անդի չունենար, Պ. Վէրալտն պատուական ամուսնութիւն մը պիտի բնէր : Նորապի աղջիկը զինքը կ'սիրէ :

Լուիզին դէմքը նորէն կատաղոյն դեղնութիւն մը պատեց :

— Խօսակ, տիկին, ըսաւ, ինչ կարող եմ ընել :

— Միթէ համոզուած ես որ եղբայրդ քու շահուդ համար այս դատը կ'վարէ :

— Տիկին, նախ արդարութեան համար, ապա ինձի համար :

— Արդարութիւնը միայն վերապատուելի հարց կողմը կրնայ լինիլ. իրենք միայն ձեռնհաս գատաւորներ են այս մասին :

— Լաւ, տիկին, կ'հասկընամ որ անոնց առջև դուրս ծռելու պարտաւոր էինք : Բայց՝ յանուն Աստուծոյ, ինչպէս կարող եմ եղբորս սպառնացող հարուածն իրմէ հեռացընել :

— Հայր Պրիֆար որ զիս քեզի ուղարկեց, երկու բան միայն կ'պահանջէ : Եթէ հաւանիս, բանադրանաց կոնդակը զոր վերապատուելի հարք Հռոմէն ստացան պիտի կրակը նետուի, և արդեւման հրամանը չպիտի արձակուի : Հայր Պրիֆար յանձն կ'առնու գործը կարգադրել առաջնորդարանի մէջ :

— Ըսէ, տիկին, ըսէ, ևս այդ հարստութեան աչք չունիմ այսուհետև : Այժմ՝ ինչ բանի պիտի ծառայէ :

— Լաւ, մտածեց կոմսուհին, Աւերտլոնի կարծեցեալ ամուսնութեան լուրն իր արդիւնքն ունեցաւ :

— Ահա տամ, աղջիկս, ըսաւ նա, քու հողիդ բարձրերը կը թուի քան թէ աշխարհային կորնչելի իրաց կ'կապուի : Աշխարհս արժանի չէ քեզ ունենալու :

— Խնդիրն իմ վրայ չէ, տիկին, այլ եղբորս վրայ. ժամերն անդին են :

— Լաւ ուրեմն, նախ քու կողմէդ հրամեշտ տուր բողոքին = Այս է հայր Պրիֆարի առաջարկած առաջին պայմանը : Հիմակ պիտի ըսեմ քեզի թէ ինչպէս զրել պէտք է այդ հրաժարումը : Եւ կոմսուհին ուղեորութեան փոքր պարկէ մը հանեց պէտք եղածը զրելու համար :

— Տարակոյս չկայ՝ որ եթէ անդամ մ'այս թուղթը գատաւորին յանձնուի, եղբայրդ պիտի զգայ որ իր կողմէ վարելիք դասն անօգուտ պիտի դառնայ : Եւ ոչ իսկ եղբայրական սիրոյ փաստը պիտի կարենայ մէջ բերել :

Այն թուղթն այսպէս գրուած էր .

« Ես Լուիզ Ժուլիօ Քլաւիէր, որ կ'ընակիմ և այն, կ'յայտարարեմ որ՝ ինձ հասած տեղեկութեանց վրայ բոլորովին համոզուած լինելով որ իմ հօրբրոջ Սիւզան Վիտրա Քլաւիէրի կամքն եղած է իր բոլոր ստացուածքը Պ. Գուրնիշօնի թողուլ՝ ի բաց առեալ կտակին մէջ յիշուած բաժինները, կ'յայտանեմ որ իմ եղբորս անուան եղած բողոքէն կ'հրաժարիմ, չկարծելով որ խղճի մտօք կարող եմ կտակի մը տրամադրութիւնները վէճի ներքև ձգելու, որոց ի նպաստ Պ. Գուրնիշօնի եղած լինիլը զիտեմ, առանց այն պայմանաց որ աւանդակի մը կ'կազմեն :

« Ի Սէնդ-Ավանտէն, 12 սեպտեմբեր 1860 » :

— Տիկին, ըսաւ Լուիզ, իր ստորագրութիւնը գնելէն ետև, այս կ'ընեմ եղբայրս ազատելու համար, բայց չեմ ծածկեր, եթէ զիտնար այս ընթացք՝ պիտի դատապարտէր : Ասան զի՛ իրօք իբրև խաբէութիւն, զիտցածիս հակառակը կ'վկայեմ : Թեզ վեղաց ստացուածքը պահպանելու վրայ է անշուշտ խնդիրը, և այս տուած թուղթս ստայօգ թուղթ մ'է : Թող Աստուած ներէ ինձ և անոնց որ այս ծայրայեղ վիճակին կ'գրգեն զիս :

— Գու անցած դարձածն իրապէս չես տեսներ : Ի՞նչ փոյթ եթէ քու յայտարարութեանդ ո՞ճը Գուրնիշօնի վրայ կ'դառնայ : Ան շատ պարագաներ ուր ներելի է անորոշ բաւեր զործածել, և այս ալ այն պարագայից մին է :

— Այժմ, տիկին, իմ եղբորս անդորրութիւնը գնելու համար ինչ է երկրորդ պայմանը :

— Այդ պայմանը, ըսաւ կոմսուհին, յատկապէս հայր Պրիֆար կ'պահանջէ քեզնէ քու օգտիդ համար :

— Աերջապէս, ինչ է խնդիրը, ըսաւ Լուիզ զրեթէ անհամբեր :

— Պէտք չէ որ մեր մէջ անցածն եղբայրդ իմանայ : Յուսամ որ վերջէն ալ խոհեմութեան պահանջածը միայն անոր պիտի յայտնես : Ուստի վաճառք մը պիտի քաշուիս՝ մինչև որ այս գործն աւարտի : Ճիշտ ժամանակն է ասպաշխարելու և Աստուծմէ հայցելու որ կրօնական կոչմանդ վրայ քեզ լուսաւորէ : Հայր Պրիֆար

Փար համոզուած է որ դու իրօք ունիս այդ կոչումը : Չկրնար
ըմբռնել թէ ի՞նչ տեսած կրնաս լինիլ աշխարհիս մէջ որ Աս-
տուծոյ ըրած խոստումներդ մոռնալու չափ քեզ հրապուրէ :

— Ո՛հ , այս աշխարհիս վրայ ուրիշ կարօտագին բան մը չու-
նիմք բայց եթէ իմ սիրելի ծուլիօս , ըսաւ Լուիզ , որու սիրտը
կ'ձմլուէր քանի իր սիրահարին մասնութիւնը կ'յիշէր :

Աւաղ , այս մասնութիւնն արդէն դուշակուած էր . Վէրտլօնի
վերջին գիւրերը բառական զգացումներ տուեր էին այդ բանը : Բայց
երկիրն որչափ հետի է իրականութենէ : Խեղճ Լուիզ՝ Պ * * *
կոմսուհիոյ լուրը կասկածի ներքեւ չլրաւ՝ Վէրտլօնի ամուսնու-
թեան մասին : Թէև այս անգամ ժամագրութեան այլայլութիւն-
ներէն սրտաբեկ՝ դարձեալ հայր Պրիֆարի երկրորդ պայմանին
հնազանդելէն առաջ՝ գիմարեց : Կոմսուհիոյ հետ մեկնիլ , ա-
ռանց ձայն տալու և խորհուրդ հարցնելու ծուլիօյէն հեռանալ ,
մահաբեր հոգեբու ենթարկել զանի , այս ամենը կարելի բան չէր :

Կոմսուհին պատասխան տուաւ Լուիզին ամէն առարկութեանց :

— Հայր Պրիֆարի համար այս երկրորդ պայմանն այնքան կա-
րևոր է որչափ առաջինը : Այս սուրբ ասպաշխարութեան կրթու-
թիւններէն ետք՝ ազատ պիտի լինիս Սէնդ-Վալանտէն դառնալու :
Գարձեալ կարող ես եղբորդ գրել :

Յետոյ բանալրանաց և արդելման սպառնալիքը կրկնեց :

Լուիզ զիջաւ և կոմսուհիոյ տուած հրահանգին համամատ՝
Ծուլիօյի հետեալ գիրը գրեց .

« Սիրելի իմ ծուլիօ ,

« Համոզուած եմ որ Պ . Կուրնիշօնի դէմ մեր վարած գատն
անիրաւ է : Եմ մասին , ետ կ'կենամ բողոքէս : Քանի մ'օրուան
համար քեզնէ կ'հեռանամ : Քու ձեռքդ է իմ վերադարձս տես-
նել քիչ ատենէն 'ի Սէնդ-Վալանտէն : Հրաժարէ այդ դժբաղդ
գատէն : Մանաւանդ ժեզվիկաց դէմ՝ յիշատակադիրդ հրատարա-
կելու դիտաւորութենէդ ետ կեցիր , որ իմ և քու գլխուդ ծանր
փորձանք պիտի բերեն : Այս ըրէ քու քրոջդ սիրուն : Չեմ կա-
րող աւելի պարզարանել , բայց որոշած եմ 'ի Սէնդ-Վալանտէն

չգառնալու մինչև որ իմ իղձս չկատարես : Մտածէ որ եթէ մեր
ժես թերևս յաւիտեան իրարմէ բաժնուած մնալու վճիռ մը տուած
պիտի լինիս » :

Պ * * * կոմսուհին աաղաչեց Լուիզն որ հայր Պրիֆարի հա-
մար այս նամակին մէկ օրինակն իրեն տայ : Յետոյ՝ շրջան մ'ըրին
լեռին վրայ և Լուշօնի ճամբան հասան : Օրը կ'տարածամէր .
կառք մը կ'տպասէր անդ . կոմսուհին Լուիզին հետ կառքը մտաւ :

Գ
ԱՏԵԱՆԸ

Երբ իրկունը ծուլիօ տուն դարձաւ՝ ընթրիքի ժամն արդէն շատ
անցած էր , և ինքնիրեն կ'ծիծաղէր մտածելով որ Լուիզ սիրուն
կուռ մը պիտի ընէր իրեն հետ որ Մարթային եփած կերակուրը
պողեր էր : Բայց այնքան լաւ պատճառներ ունէր յառաջ քշե-
լու , իր օգնած հիւանդներուն կողմէ այնքան օրհնութիւններ կը
բերէր Լուիզին որ խաղաղութիւնը շուտով պիտի հաստատուէր :
Խնդալով պաղ կերակուրը պիտի ուտէին , զայն պատուական պի-
տի գտնէին և պիտի թողուին որ բարեսիրտ Մարթան ուղածին
չափ արտնջայ : Ծուլիօ թերևս երբէք այնքան չէր վայելած այս
փոքրիկ յարկին խնդութիւնները , ուր Լուիզ բոլորովին ախեղբքն
էր իրեն համար :

Նախ բառական զարմացաւ իմանալով որ իր մեկնելէն ժամ մը
ետք՝ Լուիզ երկրատունէն ելեր էր և տակաւին չէր դարձեր :
Մարթան պատմեց ծուլիօյի անցած դարձածը , փոքրիկ զրպեքը ,
բերած նամակը , և ինչպէս Լուիզ՝ զայն կարգալէն ետև՝ շրջա-
դընտար փոխեր , զգալն ու շալն առեր և առանց բան մ'ըսելու
Դուրս ելեր էր :

Այս մանր պարալաները ժուլիօն վրդովեցին : Ի՞նչ կ'նշանան
 կէր այդ հազուստն ու կապուսար : Մինչև այն ատեն Լուիզի նոր
 սուղն արդիւլեր էր զինք Սէնդ-Վլանտէնի և շրջակայ քանի մը
 տուներ այցելութեան երթալու : Ո՛ր դայած կրնար լինիլ : Ոչ
 դըք կ'ճանչէր նա : Հապա այն գիրն ո՛սկից կ'հասնէր : Պահ մը
 ժուլիօ Վէրալօնի վրայ մտածեց : Արդեօք իր քրոջը հետ ժամա-
 գիր եղեր էին : Բայց Վէրալօն գիտէր որ երիցասան դուռը միշտ
 բաց մնացած էր իրեն համար : Հարկ չկար զաղանի միջոց մը
 բռնել Լուիզին հետ խօսելու համար , և նոյն ինք Լուիզ այս ըն-
 թացքն անշուշտ անվայելուչ գտնելու պարտաւոր էր : Եւ խեղճ
 ժուլիօ սրտին խորէն սաստիկ կ'զայրանար : Այս զայրոյթը քիչ
 ատենէն դադրեցաւ : Եթէ Լուիզ դուրս ելած էր արդէն նշա-
 կեալ անդ մ'երթալով Վէրալօնը ատենելու՝ շատունց դարձած
 պիտի լինէր : Հինգ ժամ անցեր էր իր մեկնելէն 'ի վեր : Ան-
 տարակոյս իր եղբայրն այսպէս մտատանջութեան մէջ թողլու չպի-
 տի յանձն առնուր : Վէրալօն այս գործին մէջ մատ չունէր , Այն
 ատեն ուրիշ կարծիք մը , սոսկալի կարծիք մը ծնաւ ժուլիօյի
 մտքին մէջ : Թերևս Լուիզ վտանգի մը հանդիպած էր :

Ի՞նչ պէտք էր ընել : Չկար նշան մը . . . : Մարթան չյիտէր
 թէ ո՞ր կողմը դայած էր նա : Գրացիները հարց ու փորձ ընե-
 լով բան մ'երևան չելաւ : Պէտք էր դեռ սպասել :

Ժուլիօ սեղանին առջև նստած՝ որու վրայ Մարթան կերակու-
 րը դրեր էր , գլուխը ձեռաց մէջ ամիոփած՝ կ'մտածէր , և իր
 երեակայութիւնը մինակ չարագուշակ նկարներ իրեն առջևը կը
 բերէր : Պատասխան չէր տար Մարթային որ դէթ քիչ մ'ապուր
 ուտելու կ'յորդորէր : Ժուլիօ ոտք կ'եղնէր , սենեկին մէջ մեծա-
 քայլ կ'քալէր , ապա դուրս կ'եղնէր , ճամբաները կ'քննէր և անձ-
 կութեամբ կ'հարցընէր իւրովի թէ արդեօք ո՞վ աւեր էր իր
 քոյրը : Իրկունն այսպէս անցաւ . Ժուլիօ կ'պատրաստուէր երթալ
 իր թեմականները դանել , որ դեռ նոր իրենց դաշտերէն կ'դառ-
 նային , և խնդրել որ ջահներ առնուն և իրեն հետ եղնեն քոյրը
 փնտռելու : Ամէն մէկը տարբեր ճամբայ մը բռնելով կրնային ու-
 ղողել թէ ո՞ր կողմը հասնին և իրարու միանան :

Յանկարծ երիցատան դուռը կ'զարնեն : Նոյն ինքն է , կ'ըսէ
 ժուլիօ : Ա'երթայ բանալու , և իր առջևը կ'տեսնէ գրեթէ ա-
 սուշ պատանի մը : Այս տղան Սէնդ-Վլանտէնի մօտակայ գիւ-
 դէն էր . բոլոր լեռնականաց ծանօթ էր , որոցմէ ողորմութիւն
 խնդրելով ամենուրեք կ'թափառէր : Ինչ որ իրեն ըսէին բաւա-
 կան կ'հասկընար և կարող էր մանր մունր յանձնարարութիւններ
 կատարել : Բայց իր բերանը միայն շփոթ ձայներ կ'արտաբերէր
 կամ քանի մը բառեր զոր թշուառութենէն վարժեր էր արտա-
 սանելու . հաց . . . կ'մսիմ . . . սու մը . . . : Այս բառերը թո-
 թովեց ժուլիօյին իր քրոջը նամակը յանձնելով : Լուիզ այս
 տղուն հանդիպեր էր Սէնդ-Վլանտէնի մատուռէն քիչ մը հե-
 ուու , և անոր յանձներ էր կոմսուհւոյն թեղադրութեամբը դրած
 գիրը : Կոմսուհին ընդգիմութիւն չցուցուց որ Լուիզ այս ապուշը
 գրաբեր ընէ : Ամէն լրատարներէն նուազ վտանգաւորն էր : Եւ
 Լուիզ ուրախ եղաւ իմանալով որ իր եղբայրը դժնդակ հոգեբու
 մէջ չպիտի անցընէ բոլոր գիշերը :

Խեղճ ապուշը շատ կ'սիրէր նորատի քահանայն և իր քոյրը .
 ասոնք անուշութեամբ անոր կ'խօսէին , և սակաւ աղւոր կերա-
 կուրներ կ'տային , և այս ալ ողորմելի արարածին ամենէն աւելի
 սիրած բանն էր : Անտարակոյս նամակը բերելու շտապեր էր ,
 վասն զի արին քրտինքի մէջ կ'երեւէր , բայց դարձեալ ողբալի
 ձայնով մը կ'կրկնէր . — Ա'մսիմ . . . կ'մսիմ . . . հաց . . . սու
 մը — : Ժուլիօ ներս մտուց զանի և Մարթային ապսպրեց որ
 պէտք եղածը հոգայ . ապա՝ Լուիզին գիրը բացաւ դողդողալով :

Անփնայէս անոր մէջ քսամներ զաւ մը տեսաւ , իր քրոջ և
 իրեն լարուած ծուղակ մը : Այս մասին բնաւ տարակոյս չկար :
 Իր քոյրը վախըննելու և անոր ծայրայեղ որոշում մ'ընել աա-
 լու համար շահ ունեցողները միայն կարող էր ամբաստանել :
 Ուստի այս ամենը ժէզվիդաց գործ էր :

Սակայն ժուլիօյի սոսկալի մտատանջութիւնը փոքր ինչ դադ-
 րեցաւ : Ո՛ր էր Լուիզ : Անտարակոյս քիչ ատենէն պիտի իմա-
 նար : Բայց գոնէ լեռան անդունդները խուզարկելու պէտք չու-
 նէր , իր քրոջ վիրաւոր մարմինը դանելու ահօելի երկիւղով :

Մարդու մը սիրտը պատառոզ ամէն կսկիծներէ անցնելէն ետե՛
այս զիրն երջանկութիւն մ'էր : Իսկ տխմար դրաբերէն տեղեկու-
թիւններ ուզել՝ բոլորովին անօրուտ բան էր : Անտարակոյս հե-
տեւեալ օրն ուրիշ նամակ մը գալով՝ այն խորհրդաւոր գործը
պիտի բացատրէր :

Սէնդ-Սվանտէնի երէցը վայրկեան մը հանդիստ չդտաւ զի-
շերը : Ո՛ւր էր Նուիզ . ինչպէս այս նամակն իրեն դրել տալու
յաջողեր են :

Իր բողոքէն և յիշատակագրին հրատարակութենէ ետ կենա-
լու բնաւ միտք չունէր : Պժգալի գաւ մը կար ասոր մէջ զոր պէտք
էր երևան հանել :

Հետեւեալ առտու՝ Տ . . . զնալու համար ճամբայ ելաւ : Իր
տպագրիչին տունը գնաց և իր ձեռագիրներն անոր յանձնեց :
Տ . . . ի կարևոր մէկ լրագրի մը միջոցաւ փոքրիկ յօդուած մը
պիտի տպուէր և ծանուցում պիտի լինէր որ յիշատակագիրը
մամլոյ տակ է : Անկից ելաւ և դատաստանական ատենանը գնաց :

Տեղակալ դատաւորը ժուլիոյի իմացոյ թէ Գուրնիշօնի ՚ի
նպաստ տրուած վճռոյն դէմ եղած բողոքագրին յետս կոչումը
նոյն առաւօտ իսկ հասած էր դատարանը :

Ժուլիօ՝ կայսերական փոխանորդին տեղակալին կողմէ մեծ մար-
դավարութեամբ ընդունուեցաւ , և լսեց անոր յայտարարութիւնը :
Ժուլիօ Նուիզի գրած նամակը յանձնեց որպէս զի դատաւորները
զիտանն իր քրոջ աներեւոյթ լինելուն լուրը , գործ մը զոր իրա-
ւամբ կրնար վերագրել զլուեղի մեքենայութեանց :

Այն ատենն էր որ Քրանսայի գատաւորական իշխանութիւնը
կրօնական միաբանութեանց վրայ մեծ հսկողութիւն կ'ընէր : Եր-
կրին շատ կողմերէն ծանր ծանր գանդասներ հասեր էին , և զա-
նազան խուզարկութիւններէ երևան ելեր էր որ մանր աղջիկներ՝
իրենց ծնողաց բողոքներուն հակառակ՝ գաղտնի փականքի ներքև
գրուեր են : Այլ և այլ դատեր տեղի ունեցեր էին , և ապացու-
ցուած էր որ կրօնական միաբանութեանց պատկանող անդամներ
անմասն չէին այս ոճիրներուն որ իրօք խտաիւ արգիլուած են :

— Հիմակ խիստ հրամաններ պիտի տանք , ըսաւ տեղապահը ,

որ օրիորդ Քլավիէրը փնտռեն , ոչ միայն գաւառիս , այլ բոլոր
Քրանսայի մէջ : Անոր կերպարանին նկարագիրը պիտի ուղարկուի
մեր արտաքին դեսպանական գործակալաց , և ոստիկանութիւնը
բան մը զանց չպիտի ընէ զայն գտնելու համար : Բայց մեր բոլոր
ճիղն այս սպարազայիս մէջ մի միայն անսպաշտօնական պիտի լի-
նի : Եւ ոչ մէկուն դէմ գատ չենք կարող վարել : Չեր քոյրն
անչափահաս չէ . քսան երկու տարու է . հետևապէս ինքն իր
անձին տէրը՝ օրինաց առջև : Չեր ինձ տուած թղթին մէջ յիշա-
տակուած են գժբաղղութիւններ որոց կրնայ ենթարկած լինիլ
ձեզի պէս : Բայց օրէնքը միայն յանցանքը կ'պատժէ և երբէք
վտանդի մ'ենթադրութիւնը : Շատ յայտնի է որ այս գործին մէջ
ժեզվիզները մատ ունին . բայց եթէ իրենց ստացած համբաւին
արժանի են , բաւական ճարտար գանուած են իբրև անհաղորդ
երևելու այնպիսի գործի մը մասին , որու գլխաւոր շարժառիթ-
ներն են : Ինչ որ կ'ուզէք գրաւ կ'գնեմ որ ձեր քոյրը Նա-
կա-Սքոթն և ոչ մէկ վանուց մէջ պիտի դանուի , որոց տեսչու-
թիւնն իրենց ձեռքն է : Եթէ իրաւունք անգամ ունենայինք , մի-
այն կերպական խուզարկութիւններ պիտի կարենայինք ընել անդ .
բայց հաւտացէք որ ժեզվիզաց դէմ յանցանաց հիմը չպիտի կա-
րենայինք դանել և հաստատել :

— Արեմն օրէնքն անզօր է : Գուք ինքնին կ'խոստովանիք որ
ժեզվիզներն այս դատապարտելի անիրաւութեան հեղինակներն են :
Բունութեամբ եղած է այն , քանի որ զոհը կ'յայտարարէ թէ
վտանդի մէջ է : Աղետից վրայ կ'լսուի , որ կրնան եղեր պատա-
հիլ իրեն և ինձի դէմ եթէ երբէք դատէն ետ չկենամ :

— Քիչ մը պատճառարանութեանց մէջ ծայրայեղ են , պա-
րոն արեղայ : Արովհետև քոյրդ կ'գրէ թէ վտանդի մէջ է , որ-
պէս զի իրաւամբ կամ յանիրաւի յետս կոչումը ստանայ , պէտք
չէ հետեցընել որ իրօք վտանդ կայ : Նա թերևս միամտօրէն
հաւտաց որ վտանդ կայ , թէև միայն սպառնալիք եղած են , կամ
քեզ ահաբեկելու համար նիւթուած գաւի մ'անդիտարար զոհ
ընկած է , դաւ մը զոր իր սպարդ և անկեղծ հսկողութ չէ կրցած
Ղուշակել : Բոլոր այս սպարազաները յանցանք չեն կազմեր և օ-

բէնքն ալ միայն յանցաւորները կ'ընեն : Գարձեալ՝ ժէզվիկոյց կրօնամուլ բարեկամներ՝ եթէ ոչ անգէտա՝ դէթ իրենց լոկն հաւանութեամբ՝ թեքս խաւարին դաւադրութիւն մը հնարեն և օրինաց դէմ զանի՝ ի գործ գնեն : Գատարանները՝ քանի մ'ամիս առաջ այսպիսի իրողութիւններով արձագանք տուին : Արդէն զիտենք՝ որ երկու երեք քաղաքաց մէջ մօտ օրերս պիտի ՚ի դատ կոչուին անձնագրաւման յանցանօք բռնուած կրօնականներ : Բայց վերտախն կ'ըսեմ, դրաւեալ անձինք անշափահաս են : Սակայն դարձեալ, այս յայտարարութեանց չնայելով՝ որ, ինչպէս կ'երևի՝ քեզ զարմանք կ'պատճառեն՝ ամէն ճգունք պիտի թափենք որ նպաստաւոր վախճան մը տանք գործին : Չափահաս թէ ոչ՝ եթէ քոյրդ որոգայթ մ'ընկած է, եթէ մեղապարտ նենդու թիւններով իր ազատութեան դէմ բռնաբարութիւն եղած է, անոր օգնելու պարտաւոր ենք :

Մեր եռանդեան վրայ վստահ եղիր, պարոն : Գու ալ քու կողմէ ամէն խուզարկութիւն զանց մի ըներ : Քեզ միշտ համակիր զգայմամբ պիտի ընդունիմ, և եթէ թեթև նշան մ'անգամ գտնես իմացու ինձ որ յանցաւորներուն հետքը գտնենք, եթէ հնար է :

Ժուլիօ տեղապահին դահլճէն ելաւ բոլորովին սրտաբեկ : Անխրատութեամբ մը վերադարձած անձինք չեն կրնար ըմբռնել թէ ինչպէս օրէնքը չէ կարող դարմանել անմիջապէս իրենց գանդատանաց առիթ եղող զոհանքը : Երբ դատարանները՝ որ պաշտօն ունին յանցանաց պատիժ անօրինել՝ գործը կ'երկարաձգեն, կը քննեն, պատճառն ամենուն ազատութիւնը պաշտպանելու համար է : Ժուլիօ՝ իր քրոջ մեկնելէն ՚ի վեր՝ իրեն համար փոքրիկ դատավարութիւն մ'ըրեր էր : Արդէն իր երեակայութեամբ կ'զիտէր՝ այն յանցաւոր ժէզվիկոյցները, այն մարդիկ որ ժառանգութիւնները կ'կողոպտեն և ՚ի հարկին ժառանգութիւնները հսկողութեան ներքե կ'գնեն, իբրև յանցաւոր գատաստանական ասեաններու առջև՝ քանի որ քստմենքի միջոցներ ՚ի գործ գրեք էին որպէս զի իր բողբէն զինքը կասեցընեն : Գատարոն այս աղոր կրակին վերայ պաղ ջուր թափեր էր : Պէտք էր ոճիրը հաստատել ժէզվիկ մը կամ ուրիշ մէկը գատի կոչելէն առաջ :

Վէրալօն իմացաւ՝ դրեթէ պաղ արիւնով, Ժուլիօյի բերնէն՝ Լուիզին արկածը :

— Ի՞նչպէս այս կոշտ ծուղակին մէջ կրցեր է ընկնիլ : Ճշմարիտը կանայք բնաւ խելք չունին :

— Աստուած իմ, ո՞ր գիտէ : Անմեղ և պարզմիտ աղջիկ մ'այնպիսի մարդոց ձեռքը . . . :

— Պէտք է շատ միամիտ լինիլ հաւտալու համար որ մեր ժամանակներն ուրիշին վրայ բռնութիւն բանեցընելը կարելի է :

— Սակայն այսպիսի բան մը պատահած է :

— Օ՛ն անգըր, այո՛, տղոց վրայ : Գիտենք արդէն Պլուստի գործը . . . : Բայց քսան երկու, քսան երեք տարեկան աղջիկ մը :

Բացայայտ էր որ Վէրալօն Լուիզը վրայ յանցանքներ կ'փնտռէր :

— Հիմակ ի՞նչ պիտի ընենք :

— Ես ալ չեմ գիտեր : Յիշատակագրիդ մէջ խօհեմ եղիր : Ժէզվիկոյները կարելի է քեզ ՚ի գատ կոչն իբրև զբարտիչ, և բանտ կայ. զոյոյշ եղիր : Ուրիշ վրէժ չունենալով՝ շատ ուրախ պիտի լինին եթէ տեսնեն որ դու ինքնին կորստեանդ կ'զիմես : Եւ արդարեւ՝ քաղաքային ատենին վճուէն ետքը, կ'սկսիմ հաւտալ որ քեզի հետ ներողամտութեամբ չպիտի վարուին : Տխուր բան է ըսելը, բայց Թէմիս տիկինը զօրաւորներու համար յատուկ սէր մ'ունի :

— Հասցա Լուիզը :

— Ի՞նչ ընենք : Նա չափահաս է : Եթէ խել մը սնտաի բաներով զինք խաբեցին և վանքէ վանք կ'ստըացընեն, ո՞ր պիտի երթաս զանի գտնելու : Գու ալ ինձի չափ զիտես թէ ի՞նչ բանի կարող են այդ մարդիկ :

— Բնաւ միտիթարիչ չես :

— Բարեկամդ իմ, պէտք է գրական լինիլ կենաց մէջ և ամէն բան եղածին պէս տեսնել : Քոյրդ յիմարութիւն մ'ըրաւ. ասոր հետեանքը պիտի կրես : Քիչ շատ իր կամօքը հեռացաւ քեզնէ. իր նամակին ոճէն չհասկըցուիր որ բռնութեան ենթակայ եղած է. միայն անոր երկիւղ ազդած են :

— Ուրեմն ինձ խորհուրդ պիտի տաս թեքս որ իմ բողբէն ետ կենամ :

— Ամենևին : Դեռ ևս յոյս մը կայ , պէտք է փորձել : Մեր երջանկութիւնն անկից կախում ունի : Այս սպառնալեաց առջև մանաւանդ պէտք չէ որ ընկրկիս :

— Այդ է և իմ դիտաւորութիւնս : Թէզվիդաց վրայ դրած յիշատակադիրս տպագրիչին տարի :

— Մեծ ուշադրութեամբ կարգս միշտ փորձերը : Մանաւանդ քրոջդ առեանդին վրայ բնաւ ակնարկութիւն մի ընեք : Իբրև գրպարտիչ կրնան քեզ դատի կոչել : Այս խորհուրդ վերստին կ'տամ :

— Հասցա Լուիզ :

— Պէտք է փնտռել զանի :

Թուլիօ քաշուեցաւ դնաց : Երբէք այսչափ պաղ չէր դտած մէքրոջնր : Սէրը մտրած էր , բարեկամութիւնը մոռցուած : Թուլիօ հասկըցաւ այս բանս :

Հաս օրեր 'ի S . . . անցուց . . . իր խուզարկութիւններն ապարդիւն ելան : Իսկ ոտախիւանութեան խուզարկութիւնները , թէև իր ամենէն ճարպիկ դործակալները գործածեց , աւելի յաջող արդիւնք մը չունեցան : Յայտնի եղաւ որ օրիորդ Քլապիէր 'ի S . . . չէր գտնուեր , և շատ հաւանական էր որ Սէնդ-Ավանտէնէն մեկնելու ատեն՝ քաղքէն չէր անցած :

Խուզարկութիւնները Բարիզի մէջ շարունակուեցան , նոյնպէս գաւառներն ու օտար երկիրներ : Ատենը Թուլիօյի տուած խօսքը պահեց : Արդարութեան պաշտօնէին իմաց տուին կայսերական փոխանորդին տեղեկագրովը՝ Սէնդ-Ավանտէնի գէպքը :

Ե

Լ. ԲՈՒՄ'Ն

Երիցատան տեսքը՝ որու մէջ Թուլիօ իր սիրական գանձը պահէր էր , գրգռեց իր սրտին մէջ բոլոր այն ցտեղը զոր շարժումը՝

այցելութիւնները , մեծ քաղքի մը մէջ սպոյտները կարծես թէ ամոքեր էին : Առանձնութիւնը սոսկալի կերպով զանոնք սաստկացուց : Իր վերջէն գանուած յիշողիւններէն քաղուած այս քանի մ'երեսները կ'այստնեն՝ 'ի սպառ խորտակուած կենացը բոլոր դաւնութիւնը :

.

« Եւ այժմ միայնակ եմ :

« Իմ՝ երջանկութեան բոլոր երազներս , ամենէն աղքատիկ երիցատան մէջ , իմ անարատ խնդութեանց բոլոր յոյսերը , զԱստուած , բնութիւնը , ամենամաքուր բարեկամութիւնը վայելելու համար անցեալ կենացս բոլոր ուրախութիւնները վայրկեան մը միայն տեկցին :

« Իմ ձեռքէս յափշտակեցին իմ Լուիզս , երկրային բարեաց մէջ միակ բարիքն էր զոր Աստուծմէ խնդրած էի : Ո՛ր պահած են զինք : Կարելի է ծովերէն անդին տարին . . . Ժէզվիդական ուղին բոլոր աշխարհս կ'ընդգրկէ :

« Հաս անպամ՝ այս դժնդակ դէպքէն 'ի վեր՝ կ'երևի ինձ թէ կենացս վրայ դարեր անցած են և թէ այս այլանդակ իրողութիւնն առասպելական մէկ ժամանակ մը տեղի ունեցած է , երբ օրէնքն ոչ զոք պաշտպանելով , վասն զի ամէն մէկ աւատական հողի սահմանը կ'գաղբէր այն , աստեաներ պարտք կ'համարէին զինուելու սրպէս զի բարեսիրական հսկողութիւն մ'ընեն և այրին ու որբը պաշտպանեն :

« Եթէ այս ոճիրը՝ որ իմ հողիս յուսահատութեան կ'տանի , միջին դարու մէջ տեղի ունենար , պէտք էր սահմանաւոր երկիր մը միայն շրջիլ իմ՝ քրոջս բանտը դանկու համար : Եւ սակայն այժմ՝ առանձնութեան դարն եմ : Եւ կարելի է որ քոյրս՝ զգալաւոր կանանց հետ նաև մը կ'բեռնաւորեն Չինաստան կամ Աւստրալիա առաքելութեան ուղարկելու համար : Թուլիօ , ելիր ուրեմն այս ժամուս թափառական ասպետ մ'եղիր :

« Բայց չանիծենք մեր քաղաքակրթութիւնը : Եթէ այն ազակաց փախստեան , կանանց առեանդին , տկար կամ խաբուած բարբաճներու բանտարկելութեան ու վանական մենութեան կ'օգ-

նէ, թոյլ կ'տայ նաև ինձ ձայնս ընելի առնել մինչև աշխարհիս ամէն կողմը, ուր իմ լեզուս կրնայ իմանալի լինիլ: Կարող եմ, այս և յաջորդ դարուց համար աղարտել այն թշուառներն որ իմ վրայ կ'յարձակին: Ապագային պիտի կտակեմ իմ ազդու բողոքս ուխտի մ'անկանոն փառասիրութեան դէմ, որու ճակատադիրը կաթոլիկութեան կործանումը պիտի բերէ:

« Բայց այս մարդիկ իմ անկարողութեանս վրայ կ'ծիծաղին: Կարելի է այն միջոցին որ ցաւէս այս տողերը թղթիս վրայ կը թափեմ որ սիոփիմ և իմ մենակերպ ժամերուս տաղտուկն ընդհատեմ՝ մարդկային արդարութենէ իրենց խարդաւանայ հաստատութեան վճիռը կ'ընդունին: Եւ մոլեռանդ տխմար մարդիկ այս յաղթանակին վրայ պիտի ծափ զարնեն և երկինքը պիտի օրհնեն: Յանիրաւի ամբաստանուած վերապատուելի հարց համար շնորհակալութեան պատարագ պիտի մատուցանեն առ Աստուած, իսկ կողպատուած անձը, այս մարդոց մարտիրոսը սուրբ ատելութեանց հրէշային առարկան պիտի դառնայ, անիծելալը պիտի լինի, որու վրայ բանադրանք պիտի տեղան, Պարիսը պիտի լինի, որու ոչ ձեռք պիտի դպչի կղերը, ոչ աչքը բարև պիտի տայ:

« Ա՛ր բանականութիւն, ո՛ր են քու յաղթանակներդ: Մնասպաշտութիւն, բարոյական զղացման ստորնութիւն, սոսկալի կրօնամոլութիւն, դուք տակալին ինչ մեծ զօրութիւն ունիք:

« Եւ դարձեալ կ'զարմանան թէ աշխարհիս մէջ ո՞րչափ հակառակութիւն կ'գտնեն: Իրենց դէմ ահադին գաւազրութիւն մը կ'շարունակուի դարէ դար: Եւ այն օրն որ իրենց հսկայական շնուածքներով կ'հրատարակեն բոլոր աշխարհի՛ ղերենք յաղթահարող յեղափոխութեանց վրայ յաղթանակներ, և առ ոչ ինչ հանել դատական աքսորները նորոգ զարդանալով և յաջողութիւններ գտնելով՝ որ դեր ՚ի վեր են իրենց ամենէն փայլուն ժամանակներէն, քաղաքային ընկերութիւնն առաջուանէ աւելի անհաշտ կ'գտնեն, անցեալ դարերու պէս վախնալով այն տիրապետութեանէ զոր բոլոր Եւրոպայի վրայ գործածեցին, և խօհական զգուշութիւններ առնելով՝ որպէս զի չձօնին այն աստուածապետական

գրութեան ներքև որու ամենէն եռանդոտ սատարներն են: Եւ արդի աշխարհի անդուլ ատելութիւններն իրենց զարմանք կ'պատճառէ: Անոր դէմ կատաղի պատերազմ մը հրատարակած են: Աշխարհ ինքզինքը կ'պաշտպանէ:

« Շատ դուռը են երբ կարող են ըսել.

« — Ենք չենք զայն հալածողներն այլ կրօնը, այլ եկեղեցին, պապութիւնն է, որու ամենէն եռանդուն պաշտպանները կը գտնուին »:

« Եւ սակայն ինչպէս կրօնի լաւագոյն նեցուկներն էք քան թէ քառասուն հազար քահանայք որ Փրանսա կ'գտնուին, դուք որ միայն չորս հինգ հարիւր ժէզվիդք էք և մեր մէջ քարոզութեան ու դասատուութեան պաշտօն կ'վարէք:

« Միթէ ձեր բեմական ճարտասանութիւնն աւելի արժէք ունի քան թէ մերը: Թէզվիդին քարոզը միթէ նշանաւոր զանազանութիւն մ'ունի թեմին երէցին քարոզէն: Այդ տարբերութիւնը մենք չենք տեսներ: Ձեր ուսուցչութիւնն ունի եղանակ մ'որ ծանօթ չլինի և ՚ի գործ չդրուի գաւառական յետին կղերանոցին մէջ՝ ինչպէս ձեր վարժարաններուն մէջ: Ի՞նչ կ'ըսէք խոստովանարանը բարեպաշտ հողիներու եթէ ոչ ինչ որ ամենքը կարող են ըսել: Գուք աւելի ներողամտ էք, այդ ձեր դիտնալիք բանն է: Վ՛շողքորթիք դաս մ'որ ձեզ կ'սիրէ և ձեզի իր ոսկին կ'թափէ: Երկինք կ'առաքէք զանի վարդազարդ ճամբէ մը. մենք այդ ընթացքին հակառակելու պէտք չունինք: Աստուած բարի է այդ մարդոց համար, ինչպէս աղքատ մարդոց, դիւղացւոց և մեր բոլոր հօսը կազմող աշխատաւորաց համար: Բայց կ'աղաչեմ, հրաժարեցէք ուրեմն այն դուռը պահանջումէն որով կաթոլիկութեան յառաջապահ գունդը լինելու կ'պարծիք: Ձեզնէ առաջ կար եկեղեցին, և ձեր գեղեցիկ գրութիւններէն ՚ի վեր եկեղեցին կը տաղնապի, և այն աշխարհային Հուովմը, զոր ձեր ուսերուն վրայ կ'կրէք՝ աւերակ կ'դառնայ:

« Ս. Իդնատիոս ձեր միաբանութիւնը հատատեց տասնվեցերորդ դարուն: Ս. Վէնսան ար Բօլ իրը հիմնեց տասն և եօթներորդ դարուն առաջին տարիները:

« Ինչո՞ւ համար կ'ստանան աշխարհիս մէջ. Անկցին ժեղվողք :

« Ինչո՞ւ համար չսլուացին . Անկցին Լազարիողնէրը :

« Սուլբիսեանք որ նոյն ատենը հիմնուեցան շատ ծանօթ են : Ֆրանսայի առաջին կղերանոցն ունին : Իրենց տունէն ելան մի շատ եպիսկոպոսներ , քարոզիչներ , կրօնագէտ հեղինակներ : Բոլոր Ֆրանսայի մէջ բազմաթիւ կղերանոցներ կ'վարեն : Ի Տ . . . ես անոնց աշակերտն էի : Ինչո՞ւ համար հասարակայնն ատելութիւններ չեն հասնիր այս մարդոց դէմ՝ որ անտարակոյս շատ աւելի և տևողական ծառայութիւններ կ'մատուցանեն կրօնի քան թէ ձերինները , առանց սարժենալու որ եկեղեցական ամէն իրաց մէջ առաջիններն են :

« Երբէք լուած չէ . Անկցին Սուլբիսեանք խօսքը , նոյնպէս զիտեմ թէ Սուլբիսեան անուր՝ Լեզուի մէջ՝ կեղծաւորութեան և փարիսեցիութեան համանշանակ չէ :

« Միթէ այնպէս է նաև այս նախատալից բառը , ժեղվողք :

« Աւրեմն մարդիկ ձեզի դէմ են , վասն զի ձեզի դէմ սոսկալի դանդաղներ ունին : Սուլբիսեանց դէմ ատելութեան բառ մ'անգամ չկայ , և ոչ Լազարիսողներուն ու ամէն խոնարհ քահանայից միաբանութեան մէջ որ լոկ հոգևոր սլաշտծով կ'ընտան , վասն զի այս տեսակ մարդոց դէմ բնաւ դանդաղ չկայ :

« Աւրեմն ձեր միաբանութիւնն ատելով կրօնը չեն ատեր , այլ գոռոզութեան , փառասիրութեան , տիրապետութեան և քարէտաշարական հարգութեան մոլութիւնները . . . : Ձկայ տարի մ'որ ձեր անունը հնչած չլինի դատարանի մ'առջև : Երբ նախորդ կառավարութեան օրով՝ հզօր էիք , նոյն ընթացքն ունէիք . այս նոր դրութեան ներքև նոյն միջոցները կ'որոժածէք , նոյն ատելութիւնները կ'զրդուէք ձեզի դէմ : Մի դանդաղտիք , այս է ժողովրդոց արդարութիւնը :

« Բայց այս տեղ ժեղվողաց դէմ դատական արձանագիր մը կ'չլինեմ : Ճշմարիտն աւելի մեծ խմաստութիւն է խոտի շիղ մը քննել կամ ժամ մ'աւելի բնութեան նկարները նկատել , որ իմ աչաց առջև կ'կանգնին՝ որ այնքան փառայել են այս լեբանց մէջ :

« Միրելի Պիրենեանք , որ այնչափ սքանչելի էք թարմութեամբ

և կենդանութեամբ , որ ուսման և դիտութեան համար այնքան հարուստ էք , ո՞վ կ'ըսէ թէ աւելի երկար ժամանակ ձեզ պիտի տեսնեմ : Եթէ իմ խեղճ քոյրս բունի ձերբակալ ըրին , միթէ ուրիշ հազար տեսակ միջոցներով չե՞ն կարող եղբայրը բռնել : Պէտք է որ իմ Գիճակաշարի ձեզմէ՞ք՝ անուամբ դիբբս ժեղվողի դրամով ինձ վճարուի : Իբրև խոնարհ ծառաներ կ'որոժածեն այն մեր անմիտ եպիսկոպոսական գասը զոր մեզի դէմ կ'ծառայեցընէ և որ չմտածեր բնաւ որ կաթոլիկ աշխարհի առջև երկրորդ աստիճանի կ'իջնէ : Եւ արդար է . եկեղեցին կառավարողներն են միայն եպիսկոպոսներ : Խեղճ արքեպիսկոպոսը խոհական գործ մը ընել պիտի կարծէ իր քահանայից մին անոնց զօհեցով : Եւ օրին մէկը՝ իմ երկրական իշխանութիւնս կրնան ձեռքէս առնուլ վարչային սլաշտ նամակով մը :

« Աղէ , ծռենք մեր զլուխը : Անիծեալ , վրէժխնդրութեանց սպասէ : Բարիդ , դնա՛ զօրացուր հոգիդ սրբէս զի արցոյր դառնայ և հարուածոց ու նախատանաց դիմանայ :

« Եւ դուք , անոյշ նկարներ , նուիրական յիշատակ կնկան մը որու սիրար միայն իմ սրտիս վրայ տրոփեց , մի տառապէք զիս սաստիկ , մի դաք մաքուր ուրախութիւններ ուշս բերելու , որ թերևս իմ վշտաղին կենացս մէջ վերջինները պիտի լինին , չպիտի կարենամ տանիլ իմ սրտիս մորմոքն ու վիշտերը » :

9

ԹԱՓԵՌԱԿԱՆ ՀՐԷԻՆ ՏԲԱՄԸՆ

Տ . . . ի դատական ատեանին տուած վճուոյն դէմ եղած բողոքագրէն քիչ մը ժամանակ առաջ , վճիռ մ'որ Թուլիօյի և Ղուիզի ստացուածոց կողպուտը կ'հաստատէր , հասարակաց կարծիքը

արամադեղով ժէզվիղներէն նշանաւոր վրէժ մը լուծեր էր : Հաս-
քառոյ տաքղլուխ ժողովրդեան ամէն յայտարարութիւններն աղմկա-
լի են : Անոնք սաստիկ կ'զղան . իրենց սէրն ու ատելութիւնը
խանդաղին կ'յայտարարեն : Յետին ծայր դիւրազղած լինելով՝ կան
ժամեր ուր իրենց ըրածը չզիտեն , և անոնց մէջ զղացումը դժուա-
րաւ կ'մնայ բռնութեան սահմանին մէջ :

Դիպուածով սեպէ , սեպէ թէ բնազդումով որ պատրաստուե-
լիք թատրերգութիւնն անշուշտ մեծ աղմուկ պիտի հանէր , թէ
ժէզվիղաց պարունակած ամբաստանութիւններովը , թէ նոյն թատր-
երգութեան ներկայացումը ժուլիջի գատին հետ ունեցած համա-
դիպութեամբը , որ ժիւլ Արնի , Տ . . . ի թատրոնին տեսուչը ,
օր մը ծանուցում ըրաւ հրապարակաւ Թափառակա՛ն հրէ՛ն ներկա-
յացումը : Տաղանդաւոր դերասան մը Ռօտէնի գերը պիտի խաղար :

Տ . . . քաղքին մէջ մեծ աղմուկ ելաւ : Ժէզվիղաց լրտեսներն
խսկոյն այս անհաճոյ լուրն անոնց իմացուցին : Արօնասէր մարդիկ
զայթակղութիւն , պոռացին . «Պ . նախադասը չկամիր որ զայն
ներկայացընեն» : Ամէն կերպով խլրտեցան : Տեղական իշխանու-
թիւնն անսասան մնաց : Տ . . . ի քաղաքապետը , որ թատրոնի վե-
րատեսչութիւնն ունի , պատասխանեց թէ տեսարանին ազատու-
թիւնը պիտի պահէ , քանի որ թատրերգն անբարոյական բան մը
չունէր , և թէ Բարիզի մէջ ներկայացուեր էր : Աուսակալը , քաղ-
քին կրօնական ազդեցութիւններէն սպառնալիք տեսնելով , ստի-
պուեցաւ՝ ապահով լինելու համար , հեռազրով կառավարութեան
դիմել կարծիք հարցընելու համար : Արօնական կուսակցութիւնը
յաղթութեան մը կ'սպասէր : Ներքին դործոց պաշտօնայն պա-
տասխանեց թէ վարչութիւնը բնաւ պէտք չունի թատերական ներ-
կայացումներու խառնուիլ՝ որոնք քաղաքապետական իշխանութեան
հսկողութեան կ'վերաբերէին :

Այն ատեն դատաւորական ատեանը դիմեցին և բարձրագոյն
դատարաններու , որոնք ամէն միջամտութիւն զլացան այս դործին
նկատմամբ որ իրենց ձեռնհասութենէ դուրս էր :

Ուրեմն թատրերգը պիտի ներկայացուէր :
Ժէզվիղաց նպաստաւոր եղող կուսակցութեան բոլոր այս խլո-

տումներն ու դաւերը ժողովրդեան յայտնի էին : Շատ նշանակա-
կան լեղուաւ կ'խօսէին այս մասին մինչև սրձարաններու մէջ : Այն
շրջանները՝ ուր կ'հաւաքուին ազատական մարդիկ՝ խօսակցութեան
ուրիշ նիւթ չունէին : Տ . . . ի մէջ մեծ դործ մ'եղաւ այս :

Առաջին ներկայացման օրն իսկ Պ . Ժիւլ Արնի նամակ մը կ'ըս-
տանար . այս նամակը բերողն էր անձ մ'որ թատրոնին հարցու-
ցեր էր՝ խորհրդաւոր կերպով մը , Պ . տեսուչին դահլիճը : Նա-
մակն այս մտօք դրուած էր .

«Հայր Աիլլէ , ժէզվիղաց դաւաւապետը , թատրոնին արդոյ
տեսուչին խիստ կարևոր բան մ'ունի հաղորդելու : Չափազանց
պարտաւոր պիտի մնար իրեն եթէ ծանրութիւնն առնուր կարելի
եղածին պէս շուտով վերապատուելի հարց տունը , Հաւատա-
քնութեան փողոցը՝ դալու :

«Պ . տեսուչը քաջ կ'ըմբռնէ անշուշտ կարևոր պատշաճութեանց
պատճառներն որ չեն ներեր զիս անձամբ գրասենեակը գալու :
Ուստի բարեհաճի ինձ ներողամիտ լինելու :

«Իր անձնուէր ծառան ,
«ԿԻՅԼԷ Ս . Ժ .»

Պ . Ժ . Արնի , իբրև կենցաղապէս մարդ , շատ քաղաքավար
էր և չէր կրնար մերժել դաւաւապետ հօր հրաւերը : Ուստի շուտ
մը ճամբայ ելաւ Հաւատաքնութեան փողոցը գնալու : Ժամը մէկին
մօտ վերապատուելի հարց տունը հասաւ :

- Պ . Աիլլէ , ժէզվիղաց դաւաւապետը , ըսաւ նա բարասանին :
- Երթամ իմաց տալու , պարոն , ձեր անունն ի՞նչ է :
- Թատրոնին տեսուչը :

Այն նրբագաւիթն ուր Պ . Ժ . Արնի բարասան կրօնաւորին կը
խօսէր հաղորդակցութիւն ունէր փոքրիկ դաւթին հետ , ուր վե-
րապատուելի հարց նոյն պահուն հանդիստ կ'ընէին : Ոմանք այս
չարահնչիւն անունը , թատրոնի Պ . տեսուչը՝ լսեր էին : Խսկոյն
այս անունը բերնէ բերան անցաւ , և երբ Պ . Ժ . Արնի գաւթէն
անցաւ դաւաւապետին դահլիճը մտնելու՝ տեսաւ վերապատուելի

հաշիւն որ երեսնին խաչ կ'հանէին որպէս թէ Սաղայելը մտած լինէր իրենց սրբանուէր տան մէջ :

Հետեւեալ խօսակցութիւնը , զոր Պ. Ժիւլ Ռընի ամենուն յայտնեց , իր և հայր Ալլլէի մէջ տեղի ունեցաւ :

— Պարոն , փութայի ձեր հրաւերին վրայ դալ :

— Իրաւի շատ բարի էք , Պ. տնօրէն : Մեզի շատ ծանր եկած բանի մը վրայ ձեզի հետ քիչ մը խօսիլ կ'ուզեմ : Տրամա մը պիտի ներկայացընել տաք որ դժբաղդարար մեզի դէմ է : Մտայ ներկայ վիճակին մէջ այդ ներկայացումը կրնայ ծանր հետեանք ունենալ . պիտի զրդուէ այն արդէն Տ . . . ի մէջ բորբոքած կիրքը : Արդեօք կարելի չէ՞ համաձայնիլ մեր մէջ որ այդ ներկայացումն ետ արուի :

— Այդ շատ դժուարին է , պարոն , հասարակութեան առջև խոստմնազանց պիտի երևիմ :

— Ա'իմանամ : Սակայն եթէ դերասաններուն զոհացուցիչ փոխարինութիւն մը տրուէր . . . :

Տնօրէնը հասկըցաւ իր առջև գտնուող մարդը . ուզեց իմանալ թէ այս բանակցութեան մէջ մինչև ո՞ր կրնայ երթալ :

— Պարոն , դերասանները , ըսաւ , իրենց արհեստը կ'սիրեն : Իրենց համար չկայ փոխարինութիւն մ'որ կարենայ այն ծափահարութեանց տեղը բռնել , զոր հասարակութեան արդարութենէ կ'սպասեն , երբ իրենց դերերը լաւ խաղան :

— Սակայն մեծ գումար մը . . . :

— Պարոն , երբէք չպիտի համարձակիմ իմ դերասաններուս առաջարկել ինչ որ իրենց ազնուաբար վարած պաշտօնին դէմ նուաստութիւն մը կրնայ համարուիլ :

— Սակայն դարձեալ նայեցէք . . . դուք անդամ . . . կարևոր կէտն է Տ . . . ի մէջ զայնթակողութեան մ'առաջն առնուլ : Բարեխորհուրդ մարդիկ այդ ընթացքդ պիտի գովեն . . . :

— Շնորհակալ եմ , պարոն , ես այն մարդերէն եմ որ ծախու չեն առնուիր :

Ժեզվիլը տակաւին չէր վհատեր : Այս հաստատ ու չոր պաշտասխանին դէմ՝ դեռ ոյժ ունեցաւ ըսելու :

— Կարող ենք մինչև քսան հազար ֆրանք ստալ :

— Ո՛հ , պարոն , այդ ըսածէդ աւելի դեղեցիկ ծանուցում մը չկրնար լինիլ : Ձեզ խոնարհաբար կ'ողջունեմ :

Եւ վերապատուելի դաւառապետն ապուշ կրթած թողուց ու գնաց :

Ինչպէս այս մարդիկ՝ որ ճարտարամտութեան կողմէ մեծ համբաւ ունին , այս պատասխանն առնուլ չափ ընկան , ինչպէս չէին հասկըցած որ մերժում մը հաւանական լինելով՝ իրենց առաջարկութեամբը Տ . . . ի մէջ ծաղը ու ծանակ պիտի լինէին : Այս խրոզութիւնն իրրե պատմիչ՝ կ'յայտարեմ , չեմ բացատրեր : Հաւանապէս դաւառապետը կարծէր թէ թատրի տնօրէն մը , դերասաններ՝ անարդ մարդիկ են և ստակով դիւրաւ կ'շահուին :

Անողուտ է ըսել թէ ինչ ահագին վիլլուկ հանեց ՚ի Տ . . . Պ. Ժիւլ Ռընիի և դաւառապետ ժեզվիլին մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը : Այս դէպքը՝ ելէկտրական կայծի մը պէս վաղեց բոլոր քաղքին մէջ : Թատրոնը շատ փոքր եկաւ ներս մտնելու փափաքող ամբոխին համար . Կապիտուլէ բոլոր հրապարակը խիտ խիտ խոներ էին . և մինչդեռ Ռեպէնի դերը խաղացող անձն այնպիսի զզալի ճշմարտութեամբ կ'նկարագրէր այն մարդն որ իր շինծու հեղութեամբը կ'սոնարհի որպէս զի իր բոլոր գոռոզութեան բարձունքն ելնէ , ստորայարկին հանդիսականներն ոտն ու ծափ կ'զարնէին ուժղին , և այս դրնդիւնը դուրսը կ'հնչէր հեռաւոր որոտման մը պէս և կ'միանար թատրոնին դռնէն ներս մտնել չկրցող ամբոխին աղաղակներուն , որ սաստիկ կատողած՝ Լոյօլայի որդուց դէմ՝ բուռն խօսքեր կ'ժայթքէր :

Ամբողջ ամիս մը , մի և նոյն ներկայացումը տրուեցաւ անթիւ բաղմութեան առջև որու եռանդը կարծես թէ չպիտի մարէր , և որ միշտ նոյն ներկայացումը կ'պահանջէր : Քանի մ'անդամ ոստիկանութեան զիմը հարկ եղաւ որպէս զի ողորմելի ժեզվիլայ դէմ եղած շատ ազմիլի յայտարարութիւններ , և շատ ծանր ակնարկութիւններ լսափանին : Հասարակութիւնը Ռեպէնը ներկայացընող դերասան երկինք բարձրացուց : Անոր պսակներ կ'նետէին , երբ անսարան ելնէր՝ երեք անդամ միաբան ծափահարութեամբ

զինքը կ'բարեւէին : Խաղը վերջանալէն ետե՛ շատ անգամ զինքը կ'կոչէին . քիչ մնաց որ մարդիկ զինքը յաղթանակաւ պիտի վերջընէին տանէին : Թատրոնէն դուրս ելնելու ատենը : Անոր վրայ կեղբորնացաւ բոլոր հարաւային խանդն ու եռանդը : Ժէզվիղնե-րէն վրէժ կ'լուծէին այս մոլեղին ծափահարութիւններով :

է

ՎԵՐԱԲՈՂՈՒՔԵԱԼ ԴԱՏ

Լուիլին մեկնելէն երեք օր ետք՝ Ժուլիօ այս նամակը ստացաւ .

«Եղբայր իմ,

«Յանոն Աստուծոյ, եթէ զիս կ'սիրես, մի՛ լքաներ զիս : Հաւտա այս անգամ որ իմ աղատութիւնս, թերեւ կեանքս վտանդի մէջ պիտի մնայ : Ետ կեցիր դատէն : Քեզնէ շատ հեռու եմ, բայց քու դատէն հրաժեշտդ իմ աղատութիւնս պիտի բերէ » :

Այս անգամ Ժուլիօ տարակուսանաց մէջ ընկաւ : Թէզվիղնե-րը, վասն զի տարակոյս չունէր որ անոնք էին յափշտակիչները, այսպիսի ոճիր մը գործելու կարող էին :

— Ո՛չ, ո՛չ երբէք : Ասոր մէջ մեծաբանութիւն կայ : Խեղճ աղջկան մը զղացած երկիւղէն օգուտ քաղել կ'ուզեն, կարելի է խղիկ մը փակած են զինքը՝ ամէն յարաբերութենէ հեռու : Ո՛չ, ոճիր մը չպիտի գործուի : Կարելի չէ այս : Այս խօսքը՝ կ'ըսէի է կեանքս : Վասն զի մեջ լինէ՛ չափազանց վշտի արդիւնք է, ուրիշ ոչ ինչ :

Սակայն իր քրոջ յուսահատութեան տեսիլը Ժուլիօյի սրտին մեծ կսկիծ եղաւ

— Այլ սակայն, կ'ըսէր նա իւրովի, ի՛նչ փոյժս է այս հաւատութիւնը : Եթէ Լուիլ իր ժառանգութեան տիրանա՛ր՝ Վէրտուն հետը պիտի ամուսնանար : Եթէ աղքատ է, ինձ պիտի մնայ, իմն պիտի լինի, իմ ամենասիրելի Լուիլու : Աշխարհ արժանի չէ այս դանձուն : Թերեւ մեր դատին կորուստը միջոց մ'է որով Նախախնամութիւնը կ'ուզէ որ անգործ օրեր անցընէ ինձի հետ, նանրասէ՛ր և ապականեալ ընկերութենէ՛ հեռի : Լաւ ուրեմն, ետ կենանք այս դատէն : Այս դժբաղդ դատը վերստին կորուսելու շատ հաւանականութիւններ կան : Բայց ո՛չ, Ժուլիօ, դու իրաւունք չունիս քրօջ համար կատելու : Այն մ'է, նորաստի կին մ'որ կենաց բաներու անդէտ պահուած է : Նա իր յետս կոչումը ստորագրեց . բայց դու որչափ ատեն որ անգործելի մնաս, անոր յետս կոչումն արժէք չպիտի ունենայ : Իր քսան երեք տարին չնայելով՝ քեզի համար սանուհի մ'է : Պարտքդ մինչև վերջը կատարէ : Անոր վրայ մտածէ, մտածէ ապագային վըրայ : Գու իրաւունք մ'ունիս զանի երիցատան մը մէջ թաղելու : Օր մը խղճի խայթ պիտի ունենաս, թերեւ ինքզինքդ պիտի յանդիմանես, և պիտի ըսես իւրովի որ վատ ու ինքնասէ՛ր եղար :

Սակայն Ժուլիօյի միտքը կասկած մ'ընկաւ :

— Հասցաւ եթէ այս զիրն իմ քրօջս զիրը չլինէր :

Չայն նորէն ձեռքն առաւ, ուշի ուշով քննեց : Չատ զատ նա յելով տառերը Լուիլին գրածն էին, սակայն փոքր ինչ վարանմամբ դժուած կ'թուէին : Իւրաքանչիւրը տպագրեալ տառի պէս կ'երևէր, իրարու մօտ նշանակուած : Ժուլիօ զեղագիր դասատուէ մ'իմացեր էր որ զրաննոյնները միշտ՝ ըստ երևոյթին՝ աննշան դժերէ ինքզինքնին կ'մասնէին, ինչպէս կետադրութեամբ և տառերուն դժերուն մէջ : Ժուլիօ երկար քննութեան պէտք չունէր համոզուելու համար որ նամակը շինծու էր : Մանր մանր դժերէ հասկըցաւ որ իր քրօջը ձեռագիրը չէր այն :

— Տարակոյս չունիմ, ըսաւ Ժուլիօ իւրովի, որ այս զիրն իմ քրօջս գրածը չէ :

Հետեւեալ օրը գրաբերն ուրիշ նամակ մը բերաւ : Առաջնոյն պէս S . . . քաղքէն գրոշմուած կ'երևէր :

« Եթէ քառսուն ութ ժամու մէջ դատէն հրամեշտոյ դատարանը չհասնի , իմ բաղդս անդառնալի կերպով վճռուած պիտի լինի , և երբէք քոյրդ չպիտի տեսնես : Եղբայր իմ , գթա՛ իմ վրաս » :

Այս անգամ՝ նամակին նենդադիր լինելն աւելի յայտնի կ'երևեր , զրոզն այնչափ հող չէր տարած : Նամակն այնպիսի գլխադրեր կ'ստանար որ Լուիզի գրածը չէին : Ասկից զատ՝ Լուիզ արուեստական բառեր ինչո՞ւ պիտի գործածէր : Միթէ գիտէր թէ ի՞նչ է յետս կոչում ու դատարան :

— Համբերութիւն , ըսաւ Ժուլիօ իւրովի , այս դաղտնիքը պիտի սարդուի անշուշտ : Ժեզվիզաց ըրածն իրենց քովը չպիտի մնայ :

Եւ Ժուլիօ վերաբողոքելու դիտաւորութեան մէջ հաստատ կեցաւ . բայց երկու նամակները կայսերական իրաւաբանին ուղարկեց :

Վերջապէս քաղաքային ատենին վճռոյն դէմ Ժուլիօյի ըրած բողոքին համար ունկնդրութեան օրը հասաւ : Գատն աւելի մեծ ատեննի մ'առջև ելած էր : Տ . . . ի բնակիչներն աւելի ևս յուզուեցան այս անգամ քան թէ առաջին անգամ : Տենդային զրգուութիւն մ'էր որ բոլոր քաղաքը կ'սլաշարէր համաճարակ ժահահոտութեանց պէս որ ժանտ հիւանդութեանց ժամանակ կ'վարակին ամենուրեք : Հակառակ կուսակցութիւններ , կղերական և ազատասէր դասերն իրարու կատաղօրէն կ'նայէին : Հարաւային երկիրները՝ միշտ մարդիկ կոշտ պատճառաբանութեան սահմանը կ'հասնին և ստէպ այն սահմանէն կ'անցնին : Տիրամօր սեղանին առջև շատ աւելի մոմեր վառուեցան այս անգամ քան թէ առաջին դատին ժամանակ : Ամէն դատու կրօնամուկ կանայք աւանդատուները կ'խուսէին և զողզողալով՝ վերապատուելի հարց յաջողութեան համար բարեմաղթութիւններ կ'ընէին :

Միւս կողմէ՝ Ժուլիօյի յիշատակադիրը ժեզվիզաց դէմ ահադին զղբիւն մը հաներ էր : Հրատարակիչը՝ իբրև հնարագէտ մարդ՝ սոյն գործին խորադիր գրի էր . Յայտնու ժեզվիզոյ , և իբրև ստորին խորադիր , Վերաշինել տրեւին հասար յիշատակագիր : Գիրքի մը զիբքն ունէր , և չէ թէ յիշատակագրի մը : Արեմն պարս

սաւատետր մ'էր որ բոլոր աշխարհ պիտի շրջէր և նշանաւոր միաբանութեան դէմ՝ ընդհանուր ատելութիւն մը պիտի գրդուէր : Առաջին անգամ հազարաւոր օրինակներ տպուեցան և հազիւ բաւեցան Տ . . . քաղքին բնակչաց համար : Գրքավաճառներու գործակալներ հասան և հետոցհետէ նոր օրինակներ տպել տալ հարկ եղաւ : Գատը մեծ աղմուկ հաներ էր : Էնդէքստիս Պէլէի դատական թղթակիցը ճիշտ կ'գրէր բայց շատ հետաքրքրաշարժ կերպով նկարագրեր էր առաջին վիճարանութիւնները : Նա իմացուցեր էր բողոքն ու երևելի յիշատակադիրը : Բարիդէն , Պրիւքստէլէն , Լոնտօնէն , Գիւրէնէն , մինչև անգամ Բեդրեսպուրիէն բաղձմաթիւ օրինակներ ասպարէր էին : Այս գիրքն եւրոպական հրատարակութիւն մ'ունեցաւ :

Ժուլիօ զայն անկեղծութեամբ գրած էր :

Ատելութեան բառ մը , չարասէր բանբասանք մը չկար վերապատուելի հարց դէմ : Միաբանութեան անգամոց առանձին առաքինութիւնները կ'գովէր : Այս մասին վեհանքն էր : Իսկ ուխտին ընդհանուր կառավարութեան գրութեան , նոյնպէս տիրապետող ողւոյն , անկուշտ զօջաքաղութեան , ճոխ ժառանգութիւններ կաստելու համար իրեն գործ դրած ճարտար և անդուլ միջոցներու մասին՝ գիրքն ահաւելի էր : Նա կ'ցուցնէր ամէն մէկ ժեզվիզ՝ Հոռոմ գտնուող զօրապետէն սկսեալ մինչև յետին աննշան անգամն ճախարակի պէս այս ահադին մեքենային կնճուտ անիւներուն մէջ իր յատուկ պաշտօնովը : Բոլորն այս խօսքով կ'ամփոփուէր . « Ժեզվիզոյ մասօնականութիւն մ'են » :

Թերևս Վէրալիօն նուազ ճարտասան , նուազ եռանդուն կերպով դատավարեց այս ատենին քան թէ քաղաքական դատարանին առջև : Մեծ ներշնչութենէ զուրկ էր : Յաջողութեան չէր յուսար ալ և Լուիզէն քաշուէր էր . բայց աւելի կծու , աւելի ծանր հարուածներ տուաւ ժեզվիզաց :

— Գիտեմ , ըսաւ , թէ ատենիս վճիւն ի՞նչ պիտի լինի : Իր որոշումներն այնքան կ'յարգեմ որ քաջայոյս եմ որ պարզապէս իր խղճին պիտի հետևի և իր վճիւն ըստ օրինի պիտի արձակէ : Պարելի է որ այս եպերելի գործը լուսաւորող իրողութիւնները

դատաւորաց միտքը չհամոզեն ինչպէս որ իմս համոզած են , նոյնպէս անոնց որ այս ժամուս Եւրոպայի մէջ այս դատին պարագաներուն վերահասու կ'դանուին : Բայց այս շրջապատէս դուրս , և 'ի բաց առեալ այն պատճառներն որ օրինաւորութեան մասին թերեւս կասկած մը հանեն դատաւորաց մէջ որ պաշտօն ունին հաստատելու կամ ոչնչացնելու առաջին դատավճիռը , քաղաքային աշխարհիս մէջ ուրիշ վճիռ մը պիտի լինի՝ բարոյական մասին , որ այս մարդոց համար մշտատե աղտ մը պիտի մնայ : Թամանակակից պատմութեան մէկ երեսը դրեցինք : Պիտի սպացուցուի որ տասնեկններորդ դարու մէջ՝ նենդութիւնը , ամօթալի միջոցներ , կողոպուտը , իր երկար և խաւարին ճամբաներով զործածուեր են , այնպիսի միարանութեան մը կողմէ որ սրբութիւն կ'դասէ : Վեհերոս և շատ բանի մէջ անդէտ աղջկան մը վրայ կրօնի ահարկու աղղեցութիւններ 'ի զործ դրեր են որպէս զև զանի աշխարհէ հեռացնելու և վանքի մը մէջ թաղուելու յորդորեն , և այս ժամուս՝ սուկալով կ'ըսեմ , այս նորատի օրիորդն որ հայր Պրիֆարի մ'ամէն հնարադիտութեան երկար ժամանակ զիմադրեց , իր անկեղծութեան լարուած որոգայթի մը մէջ ընկած է :

Նենդութեամբ կամ բռնութեամբ թէ թափառական թէ դրաւեալ լինի օրիորդը՝ միշտ իր եղբորը տունէն յափշտակուած կը համարուի : Թերևս արդարութիւնն այս իրողութեան մասին պէտք եղած խուզարկութիւնները պիտի ընէ , իրողութիւն որ մեզի կ'յիշեցնէ այն դատապարտելի անձնադրաւումներն որով ասկից առաջ դատարանները մեծ ձայն հանեցին : Զդուշութեամբ պիտի խօսինք ամբաստանութեան մը վրայ որու խորհրդաւոր տարերքը մեզի անյայտ կ'մնան , այլ սակայն արդի խնդրոյն հետ սերտիւ կապուած է : Այժմ՝ աղատօրէն շարժեցէք : Տասնամեայ հողասիրութեամբ , ցածութեամբ , դաւերով ձեռք ձգուած այս կէս միլիօնը թող ձեր արկղը մանէ , Տ . . . ի կեդրոնը ձեր կառուցած շքեղ բերդաքաղաքին համար անկից մաս հանեցէք : Սո՛ւղ պիտի նստած լինի ձեզի այն : Վճարած պիտի լինիք այն պատուով որմէ ցնցոտիներով ծածկուած թշուառներն անդամ չեն հրածարիր : Վճարած պիտի լինիք զայն վատահամբաւութեան սև աղ-

տով՝ զոր օրէնքը՝ ձեր ճակտին վրայ կոխելու իրաւունք կ'տայ ինձ՝ իր դատավճռոյն սպասելով :

Ճարտասանութիւնն անիրաւ ելաւ : Այստերական ատենին վճիռը քաղաքային դատարանին դատաստանը հաստատեց : Թէզվիկայ յաղթանակը վճռական եղաւ :

Ը

ԹԷԶՎԻԳԸՅ ԶՕՐԸՊԵՏԻՆ ԿԱՄԵԿԸ

Թէզվիկայ դէմ Թուրիօյի դատը բոլոր Եւրոպայի մէջ ահաղին թնդիւն մը հանեց : Թուրիօ լաւ հասկըցեր էր որ հասարակաց կարծեաց առջև շահելիք դատ մ'էր այս , եթէ դատարաններն իրաւական անհրաժեշտ ապացոյցներ իսկ չդնէին այս կապտու մը հաստատելու համար : Իրապէս ինքն էր որ յաղթահարեր էր ժէզվիկները . իր դիրքը կ'խօսէր :

Այլ սակայն՝ ատենին դատավճռոյն առջև՝ ժէզվիկայ բարեկամներուն ուրախութիւնը մեծ եղաւ , մեծ եղաւ նաև զայրոյթն անիծեալ քահանային դէմ որ իբրև անտի-քրիստոս եկեր էր հայհոյել տալու՝ հարաւոյ ամենէն սուրբ քաղաքին և բոլոր Քրանսայի մէջ ժէզվիկայ այս անչափս մեծարեալ ուխտը :

Հռոմէն խիստ նամակ մը հասաւ : Միարանութեան ղօրապետը Տ . . . ի դաւառապետին պաշտօնապէս դրեց թէ չէր կարող հասկընալ թէ ի՞նչպէս Աստուծոյ և Ս . Սթոռին մեծ սպասաւորաց դէմ այն վատանուն գիրքը զրօղը՝ զեռ ևս Քրանսայի մէկ վիճակի կրօնական հովիւներուն կարող կ'դանուի , թէ ասոր մէջ զայթակղութիւն մը կար զոր եկեղեցիէն արմատաքի խլելու ժամանակն էր , և կ'պատուիրէր դաւառապետին որ իր անուամբ Տ . . . ի եպիսկոպոսին երթոյ և զարմանքը յայտնէ . թէ չէր ուրանար

ժամանակին դժուարութիւններն ու այն զոյղ ձևերը զոր՝ խոտու-
 թենէ խոյս տալու հակամէտ եպիսկոպոսներ պարտաւոր էին բա-
 նեցընել իրենց կղերին նկատմամբ, բայց թէ վերջապէս ներողա-
 մտութիւնը սահմաններ ունէր, թէ ժամանակին բերմամբ կրնար
 մեղսակցութիւն համարուիլ այն, թէ չէր կրնար երբէք հաւատալ
 որ եպիսկոպոսն անտարբեր լինի միաբանութեան պատուոյն, բայց
 թէ այն ողորմելի գատին հանած համբաւին վրայ, մինչդեռ Աս-
 տուած և Անարատ Այոյն անմեղ միաբանութիւնը յայտնապէս
 պաշտպաներ էին, արդար էր որ այս նոր հալածանաց զրդիոր,
 և փորձողիւր այլ անբաւ նախատանօք լի դրքոյկին հեղինակը, ե-
 կեղեցական իշխանութեան կողմէ բացարձակ դատապարտուի, իբ-
 րև ասպայոյց որ քրիստոնէայ ժողովրդեան առջև այնքան սիրելի
 այդ իշխանութիւնը բնաւ ակնառութիւն ըրած չէ միաբանութեան
 ամբաստան եղիկելի քահանային, այլ ընդ հակառակն՝ անոր անձն
 ու գրուածքը դատապարտած է՝ կրօնական կանոնաց և կրթութեան
 համեմատ :

Գաւառապետին կ'ապսպրէր որ իր խորին յարգանքը մատու-
 ցանէ դերապատուելի եպիսկոպոսին և կ'այսնէր նաև որ խնդիր
 տուած էր Ինքեռէ միաբանութեան Թուլիօ արքեպիսկոպոսին հեղինա-
 կած պարսաւատեարին դատապարտութեան համար :

Այս թուղթն առնելով՝ իրեն նպաստաւոր դատալծուէն զօրա-
 ցած՝ վերապատուելի հայրն եպիսկոպոսարանը գնաց : Անդ՝ շատ
 հեզ ոճով այլ արդու իմաստով յայտնեց միաբանութեան հրա-
 մանները գերապայծառ եպիսկոպոսին, առանց ընդունած նամակը
 հաղորդելու :

— Գիտէք, ըստ անոր արքեպիսկոպոսը, թէ Պ. Ասիէլ, ես,
 կրօնական ժողովին անդամներն և բոլոր կղերն որչափ նպաստե-
 ցինք այս գործին, և ուրախ ենք ձեր ստացած յաջողութեան
 վրայ :

— Գիտեմ այդ, Սրբազան տէր :
 — Ախոտովանիմ որ այն հէք քահանային պատճառաւ պա-
 տիւս գրեթէ վտանգի մէջ գրի : Իմ հրամաններուս զիմադրելու
 առիթ սուի իրեն : Արքեպատուելի հայր, պահանջեր էի, որո-

շակի պահանջեր էի որ իր դատէն կասի : Բայց ի՞նչ անուղղելի
 զլուխ մ'ունի նա :

— Բայց հիմակ, Սրբազան տէր :
 — Անայիք, վերապատուելի հայր իմ, իմ խիստ հրամաններս
 կատարել տալու միջոցիս կայ առի : Եթէ վճռաջինջ ատենին
 որոշումէն առաջ անոր դէմ խոտութեամբ վարուէի, անշուշտ
 պիտի ամբաստանէին ձեզ որպէս թէ անոր պաշտօնանկութիւնն
 իզնէ խնդրած լինիք :

— Այդ կարելի է : Իսկ հիմակ, Սրբազան տէր :
 — Հիմակ շատ շփոթած եմ : Ավարանիմ, վերսաին խորհելու
 պէտքը կ'զգամ : Քաջ գիտէք որ հասարակութեան մէկ զօրաւոր
 մասն իր կողմն է, մինչև անգամ այնպիսի մարդիկ որ անկեղծ
 կրօնասէրներ են :

— Այդ նոր պատճառ մ'է, Սրբազան տէր, որ աւելի ևս
 թոյլ տալու արամադիր կ'երևիք :

— Ես թոյլ տամ, վերապատուելի հայր. ես այս գործն ա-
 ւելի եռանդով բռնած եմ քան թէ ձեր սրբակրօն միաբանութիւ-
 նը : Տ . . . ի մէջ զիս կ'մեղադրեն երբ իմ քահանայներէս մին
 ձեզի դէմ յարձակելու կ'յանդդնի : Սակայն խոհեմութեան կա-
 նոնները . . . :

Գաւառապետը դիտեց որ արքեպիսկոպոսին միտքն երկարաձգել
 էր գործն և թէ որոշած էր Թուլիօյի դէմ խոտիւ չվարուիլ : Թա-
 մանակն էր պահեստի ունեցած մեծ գէնքն ՚ի գործ դնել : Արք-
 եպիսկոպոսին ներկայացուց զօրապետին դիրը :

Այս գրեթէ սպառնալից նամակը յայտնի շփոթութեան մէջ
 ձգեց արքեպիսկոպոսը : Բնաւ չէր կամեր անհաճոյ լինիլ զօրա-
 պետին, որ, նոյն պահուն՝ Պիոս Թին ժեզվիլոպց հետ ըրած հաշ-
 տութենէ ետք՝ կարախնալութեան աստիճանին համար իրեն շատ
 ձեռնառու պիտի լինէր : Միւս կողմէն ինքզինքը նուաստացած կը
 տեսնէր : Թէզվիղն իբրև Պասյ կ'իսուէր և կ'սպառնար արքեպիս-
 կոպոսին, իբրև ստորին պաշտօնէի մը :

— Գրեցէք վերապատուելի զօրապետին, հայր իմ, որ ձեր ի-
 բաւունքն ըստ ամենայնի սեղը պիտի գայ : Ծանր պատճառներ,

որ թերևս Նորին Սրբութեան վիճակաց մէջ այնքան խստութեամբ չեն պահանջուիր, մեծ զգուշութիւններ կ'հրամայեն մեզ մեր կղերին նկատմամբ, իշխանութեան տրամադրութիւնները զիտենք, և պայքարի ատեն, պէտք ունինք շրջահայեցութեամբ վարուիլ: Բայց քաջ զիտցիք որ նշանաւոր կերպով պիտի ցոյց տամ թէ որչափ սրտմտած եմ այս նորատի քահանային ընթացքին դէմ:

Եւ ժէզվիղին հետ ունեցած տեսակցութիւնն աւարտեց այլ և այլ սիրալիր խօսքեր ընելով՝ որ Նորին Վերապատուութեան ցոյց տուին թէ որչափ եպիսկոպոսն իրեն անձնուէր էր նոյնպէս ժէզվիղաց պատկառելի միաբանութեան:

Նոյն օրը՝ երեկոյեան սուրհանդակով՝ հետևեալ ինքնագիր նամակը ճամբայ գրեր էր Սէնդ-Յովանտէնի համար.

«S . . . ի եպիսկոպոսարան, և Սրբազանին դահլէճը.
S . . . 29 սեպտեմբեր 1860.

«Իմ ամենասիրելի երէցս,

«Ձեզի հետ կարևոր խնդրոյ մը համար բերանացի խօսիչ կ'ուզեմ: Թէև իմ քահանաներու համար մեծ է սէրս, բացառիկ վիճակն որու մէջ ձեզ պիտի դնեմ, ինձ յատուկ հոգ տանիչ կ'հրամայէ: Ուրեմն եկէք ինձի հետ խորհրդակցելու: Կ'ցաւիմ սաստիկ որ այս ուղևորութեան ծանրութիւնը ձեզի կ'տամ:

«Ձեզ ժամ առաջ կ'սպասեմ:

«Ձեր սիրալիր և անձնուէր

«ԲԻԷՐ ՉՐՈՆՍՈՒՆ ՔՐԻՔ
Եպիսկոպոս S . . . ի»

«Առ ժողովի Բլալիէր սքեշայ, Սէնդ-Յովանտէնի երէց»:

Ժուլիօ բնաւ չզիտէր այն տեսարանը յորում Լուպէր արեւդան երգում ընել տուեր էր եպիսկոպոսին որ խեղճ քահանայն չնեղէ: Ընդունած զիրը, բարեսէր, մինչև անգամ այս նամակին ոճը, իրեն հանելուկ մ'երեցան: Ինչպէս փոխուեր էր սպառնացող մարդը:

Հետևեալ օրը ժուլիօ S . . . դնաց:

— Իրաւի շատ կ'ցաւիմ, սիրելիդ իմ արեղայ, որ այնչափ հեռու տեղէն ձեզ բերել պուի: Բայց մեր գործը զրով չէինք կարող կարգադրել, պէտք էր զիրար տեսնել: Նախ իրարու միտք հասկընանք: Այո՛, անկեղծ լինինք: Երբէք չէք կարծած որ ես ձեզ կ'սիրեմ:

— Ես երբէք ձեր սրտին վրայ կասկած չեմ ունեցած:

— Լաւ, դուք փափկասիրտ էք: Արտաքին երևոյթներն ինձի դէմ էին, կ'խոստովանիմ: Աստուած իմ, պարոն արեղայ, դուք իմ սեղս անցէք, որչափ մեզ կ'տանջեն: Քանի քանի ազդեցութիւններ մեզ կ'ճնշեն: Պէտք է ամենուն հետ ալ անոյշ վարուիլ: Ամէն ինչ վարդագոյն չէ եպիսկոպոսութեան մէջ: Ո՛հ, իր թեմին մէջ հանդարտիկ բարի քահանայ մը քանի՛ երջանիկ է . . . : Վերջապէս պէտք է կրել այս խաչը: Գառնանք խընդրոյն: Ձեզի համար շատ հոգեր կրեցի: Պէտք է լաւ դիտնաք որ ամէն կողմէ զիս չարչարեցին: Բացարձակ ըսեմ, ձեր գիրքը, այդ ձեր գիրքը ներելի չէ: Սիրելի արեղայ, եկեղեցւոյ մէջ պատուեալ միաբանութեան մը դէմ կ'յարձակիք. չէք կարողար ձեր աղօթագիրքը, Աստուծոյ մէջ ունենալ որ վերջին արեւմտեան հասարակարգէն հերետաճեան դէմ մատուցու համար: Այս յայտ յանդիման է, բարեկամ, կարդացէք մի անգամ:

Եւ բարի մարդն իր աղօթագիրքին մէջ այս տողերը նշանակեր էր և ժուլիօյին կարդաց:

— Այս ծանրակշիռ է, շարունակեց եպիսկոպոսը: Եւ դուք այս միաբանութեան դէմ ելաք: Եւ ինչպէս ելաք անոր դէմ: Եթէ այս գործով զբաղելու պէտք չունենայի և աշխարհիկ մարդ մը լինէի, դարձեալ պիտի ըսէի որ շատ դէժ վարուեցաք այս ուխտին հետ: Ահարկու էք անոր դէմ, վասն զի խոհեմ էք: Այս խօսքը մեր մէջ մնայ, այնպէս չէ: Բայց այժմ ընդհանուր բողոք կայ, ամէն ոք ձեզի դէմ է: Ես ինչ կ'ուզէք որ ընեմ: Հռոմէն եկած զիր մը կարդացի որ կ'իմացընէ թէ Էփէսոս միաբանութեան յանձնուած էք: Ինչ պիտի ընէք: Պէտք է հպատակիլ: Նայեցէք երկուքնիս ալ ինչ կացութեան մէջ պիտի

մնանք = Թէզվիղներն ինձի դէմ հանեցիք = Բնառ զիս հանդիստ
 չպիտի թողուն : Գիտէք որ այն վերապատուելի հարք խօսք չեն
 հասկընար և եպիսկոպոս մը կրնան հարուածել ինչպէս Սէնդ-
 Ավանտէնի երէց մը , առանց որ և է դժուարութեան : Ես քաջ
 կ'ձանչեմ զանոնք : Բայց վերջապէս կ'փափաքիմ ապացոյցանելու
 որ ձեզ կ'սիրեմ : Չեմ ուզեր ձեզի դէմ ժէզվիղաց ատելութեան
 գործիքը լինելու դառն ցառն ունենալ : Ինձ ծառայութիւն մ'ը-
 րէք , բարի եղիք ինձի համար : Ատենէք որ բաց սրտով կ'խօ-
 սիմ ձեզի հետ : Արող էք պատուով ապրիլ ձեզի ցիեանս կա-
 պուած թողակով : Լաւ ուրեմն , քիչ մ'ատենուան , երկու երեք
 տարուան համար ձեր պաշտօնը ձգեցէք , եթէ կարելի է : Աւճ ,
 սիրելիդ իմ Թուլիօ , երեք չորս տարուան մէջ , ո՞վ դիտէ Հռոմի
 և ժէզվիղաց մէջ ինչեր պիտի պատահին : Քանի շուտ կ'ընթա-
 նան դէպքերն այս մեր ժամանակը : Մէկ տարուան պատահմունքը
 հին ատենի մէկ դարու պատահմունք են : Շնորհեցէք ինձ ձեզնէ
 բարեկամօրէն խնդրածս : Սէնդ-Ավանտէնի թեմէն ձեր հրաժա-
 րականը տուէք ինձի : Գրեցէք այս գրասեղանիս վրայ փոքրիկ
 դեր մ'որով ինձ պիտի խնայընէք թէ , առողջութեանդ կարևոր
 եղած հանդիստն ընելու փափաքելով , թեմդ քիչ մ'ատենուան
 համար պիտի հեռանաք : Ես ալ իմ զիւանիս կողմէ հեռանալու
 արտօնագիրդ ձեզի պիտի ուղարկեմ : Երբոր կիրքերը հանդարտին ,
 այլ և այլ դէպքեր վրայ դան , երբոր թերևս կարիպալտի և հա-
 սարակապետականք ժէզվիղները Հռոմէն վճռեն , վասն զի ամէն
 բան յուսալի է , այն ատեն հանդարտութեամբ կ'դաք վիճակին
 մէկ թեմին մէջ պաշտօն մը կ'ստանաք : Այս է գործը , իմ ա-
 մենասիրելի արեղաս : Մի մերժէք խնդիրս : Այս կերպով կ'լուծուի
 այն : Երբև երկու բարեկամներ կ'շարժինք :

Այս միամիտ եպիսկոպոսին պատճառարանութեան դէմ գնել
 աւելորդ էր : Մարդ մը վճռանելու պարկեշտ ձև մ'էր այս : Թու-
 լիօ հասկըցաւ որ հարկ էր քաղաքավարութեամբ խնդիրը կա-
 տարել :

Եպիսկոպոսն իր գրասեղանին առջևը նստեցոց զանի : Թուլիօ
 գրեց հեռանալու խնդրագիրը :

Եպիսկոպոսը հնչակը զարկաւ :
 Գրագիրն եկաւ :

— Գրէ , ըսաւ անոր , Սէնդ-Ավանտէնի երէց , Թուլիօ արև-
 դային համար իր թեմէն հեռանալու արտօնագիր մը :

— Շնորհ ըրէք , Սրբազան տէր , այն արտօնագրին մէջ նշա-
 նակել տալ իմ 'ի Տ . . . կանոնիկոսութեան տխրոսս :

— Յօժարակամ : Ի հարկէ , որդեակի , կրնաք սասն հինգ օր
 և աւելի ժամանակ անցընել Սէնդ-Ավանտէնի մէջ գործերդ կար-
 դաղրելու համար : Իմ գրագրիս երկու տողով կ'զրէք միայն թէ
 ո՞ր օրն երկցատունէն պիտի մեկնիք :

Գրագիրը շուտ մը դարձաւ :

Եպիսկոպոսը նորատի քահանայն համբուրեց : Թուլիօ մեկնե-
 ցաւ : Այլ ևս պաշտօն չունէր Տ . . . ի վիճակին մէջ :

Եւ հետևեալ օրը Լուկիոսէն ասպդ լրագրին մէջ հետևեալ
 տողերը կ'կարդային .

« Պ . Բօլ Գուղ արեղան , Սէնդ-Ավանտէնի երէց անուանե-
 ցաւ » :

Արքեպիսկոպոսը ժէզվիղները զոհ ըրեր էր :

Դիւրին է մեկնել գերապատիւ եպիսկոպոսին հայրական ձայնն
 և Թուլիօյի ցոյց տուած զգուշի կերպերը : Խեղճ արեղան չէր
 կարող անոր այս ընթացքը հասկընալ : Աստուած իմ , ի՞նչ է
 այսքան յարգութեան պատճառը : Եկեղեցոյ իշխան մ'որ միայն
 խօսքով մը կրնայ զինքը խորտակել , ներում խնդրեր էր Թուլիօն
 Սէնդ-Ավանտէնէն կանչել տալուն համար : Իր ամենէն սիրական
 մէկ քահանային դրած նամակին պէս սիրալիբ դիր մ'ուզէր էր
 Թուլիօյի և շատ քաղցրութեամբ զինքն ընդուներ էր եպիսկոպո-
 սարանը դալուն : Արդօք կեղծաորական ձև մ'էր զիրաւ յոր-
 դորելու համար արեղան , որ իր թեմէն հեռանայ , փոխանակ
 խտտութեամբ զայն արտաքսելու : Ամենին : Բուն պատճառն այս
 էր : Լուպէր արեղան , մարդասպանը՝ միշտ եպիսկոպոսին աչաց
 առջևն էր , և Թուլիօ՝ եպիսկոպոսարանն անցած եղբրական զոր-
 ծին վրայ բնաւ տեղեկութիւն չունէր , թէև իր անունն այլան-
 դակ կերպով կապուած է այս գործին հետ :

Արքեպիսկոպոսը՝ իր դատարարակութեամբը, իր խելքով՝ եկեղեցւոյ մէջ ունեցած աստիճանաւ, դարձեալ սյառաւ կնիկան պէտաւելորդապաշտ էր: Իր ընդունելութեան սրահին մեծ բաղմոցը ներկող քահանային արիւնը, գետինը՝ իր աչաց առջև տարածուած դիակը, իբրև մնայուն ճիւղ երեակայութեան մէջ կենդանի էին: Իրեն այնպէս կ'երևէր թէ այնքան փառասիրած ծիրանին, այժմ տեսեր էր, բայց այս ծիրանին ուրիշ բան չէր եթէ ոչ քահանային արիւնն որ իր մանուշակադոյն պարեգօտը կարմիր ներկեր էր, երրոր, այս սոսկալի ինքնասպանութիւնն ուրիշ մէկը չիմանալու համար, իր սենեկապանին օդներ էր՝ Լուսպէրի մարմինը զատ սենեակ մը տանելու, բայց մեծ սենեակներուն կից, ուր երկար ժամանակէ 'ի վեր ոչ ոք բնակեր էր:

Աւասիկ պատահածը:

Երբ Լուսպէր զնդահար մեծ սրահին բաղմոցին վրայ ընկեր էր, եպիսկոպոսն ահարեկ' խոյս տուեր էր: Բայց նախասնեկէն անցնելու ատեն օդնութիւն կոչելու համար, յանկարծ մտքը փոխեց: Իր սենեկապանն էր տարուօք յարդելի մարդ մը, որու վրայ կատարեալ վստահութիւն ունէր: Թէրօմը կոչելու համար հնչակը զարկաւ և վերնագաւթին վրայ ինք անձամբ ընդունեց զանի: Սանդղին վրայ նայող դուռը զգուշութեամբ գոցեց: Ահա այն ատեն անոր իմացուց թէ սաստիկ ջերմութենէ ուղեղային տենդով բռնուած խեղճ քահանայ մ'իր առջէն ինքզինքը սպաններ էր:

Թէրօմ տեսաւ քահանան, անոր վերքը քննեց: Եպիսկոպոսին ձեռքէն պրծելու համար քահանան իր թևը սաստիկ ցնցելուն՝ զնդակն իր նշանէն շեղեր էր: Բարեբաղդօրէն՝ փոխանակ դանկէն անցնելու, շեղակի անցեր և միտին վերք բացեր էր, տեսակ մը լայն ախօս ահարդու 'ի տես, որ իսկոյն կ'երևէր թէ կարեւր չէր: Արքեպիսկոպոսին միակ փափաքն էր այս գործը ծածկել, որ եթէ լսուէր, այլ և այլ ցաւալի մեկնութիւններու տեղի պիտի տար հասարակութեան մէջ:

— Անձնուէր բժիշկ մ'ունինք, ըսաւ նա Թէրօմին, և անոր վրայ կրնանք վստահիլ: Այս վերաւոր մարդն իր անկողնոյն վրայ դնենք: Բժիշկը պիտի դայ: Տան մէջ պիտի ըսենք թէ այս քա-

հանան արեան զեղմամբ բռնուեցաւ մեծ սրահին մէջ: Երբ մի անգամ բուժի՝ եպիսկոպոսարանէն դուրս պիտի ելնէ: Այս հազար անգամ աւելի լաւ է քան թէ սոսկալի դայթակղութիւն մը, թէ և բաւական նեղութիւն պիտի քաշես:

Թէրօմ տեսաւ որ արքեպիսկոպոսը բոլորովին իրաւունք ունէր: Հրազնին ձայնը հեռուն լսուած չէր, ձիաւոր վաշտակի մ'առջէն դացող փողերուն շնորհիւ որ պատերազմական գնացք մը կ'նուագէին, այն միջոցին որ եպիսկոպոսարանին փողոցէն կ'անցնէին, նոյնպէս լոյսը խափանելու համար քաշուած վարպոյրներուն և տաքին համար գոցուած պատուհաններուն պատճառաւ:

Վերաւորն որ դիակ մը դարձեր էր՝ մօտակայ սենեակը փոխադրուեցաւ Թէրօմին և արքեպիսկոպոսին ձեռք: Անոր զանազան աղեր շնչել տուին: Ինքզինքը դտաւ, և անշուշտ զարմացաւ սաստիկ անսնելով որ անկողնի մը մէջ և իբրև հիւանդապահ ունի արքեպիսկոպոս մը: Սենեկապանը բժիշկը կոչելու դայեր էր:

Թշուառ քահանան խօսելու անկարող էր: Արքեպիսկոպոսը փափկութեամբ վարուեցաւ, և փափաքելով չափազանց որ այս մարդը շուտով բժշկուի, անոր քանի մը հայրական խօսքեր ուղղեց՝ յուսալով որ այս մարդուն բարոյականին վրայ կրնայ ազդուներգործութիւն ունենալ:

Բժիշկն եկաւ: Թէև վերքը կարեւր չէր, բայց մեծ էր շարիքը, և եթէ ըղեղի զրգուութիւն պատահէր՝ բորբոքման տեղ, թերևս հիւանդը մեռնէր: Վերքը դարմանեցին, միտերը խնամօք կարեցին, և հիւանդը Թէրօմին հողատարութեան յանձնեցին: Առանց ցոյց տալու արդիւնցին որ եպիսկոպոսարանին սպասարանները վերի սրահներն ելնեն: Եւ երբ Թէրօմ հիւանդին քովէն հեռանալու կ'ստիպուէր, եպիսկոպոսն անոր տեղը կ'նստէր:

Այս երկար միջոցներուն էր՝ որով ստեւզ զիշերներուն մեծ մասը կ'անցնէր, որ աւելորդապաշտ եպիսկոպոսը՝ թերևս կէս քունի մէջ ընկնելով՝ ինքզինքը բոլորովին կարմիր զգեստով հաղուած տեսաւ: Ձեռքն իր վրայ կ'քսէր և իր մանուշակադոյն պարեգօտը քահանային արեամբը թաթաւեալ կ'զտնէր:

Չարադոյժ խորհուրդներ միտքը կ'սլաշարէին, և իր ըրած ու-

րիշ մէկ զոհը, ուրիշ մարտիրոս մը զոր անխնայ քանակութեան էր քանի որ զանի տեսեր, ժուլիօն իբրև երրորդ անձ իր աչաց առջևը կ'ներկայանար և անոյշ զէմքով մ'անոր կ'ըսէր :

— Ես երբէք քեզի չսպառնացի : Ա՛չ սիրտս և ոչ շրթունքս քեզի զէմ ատելութեան դաղափարով մը չպղծեցան . ես քու բարձր եկեղեցական կարգը, եպիսկոպոսական պատիւը յարգեցի, բայց Աստուած մը կայ ճնշեալներուն համար որ զիտեն համբերել և միայն անոր դանդաղել :

Երբ Լուսէր իր հիւանդութենէ նոր ելաւ, արքեպիսկոպոսը զինքն իր ընտանեաց տունն ուղարկեց : Այս ամէն գէպքերէն ետք՝ ընական էր որ Նորին Սրբազնութենէ խնդրէր որ հեռաւոր թեմի մը մէջ սլաշտօնի դնէ զինքը : Պ. Քրիք Զանաթրի եպիսկոպոսին հետ ծանօթացեր էր Հռոմ ըրած ուղևորութեան ժամանակ : Լուսէրին յանձնարարական զիր մը տուաւ այս եպիսկոպոսին ուղղեալ :

Աեհանձնաբար նոյն զրոյն միացուց հազար Ֆրանքոնոյ գրամատուն մը :

— Սրբազան, ըսաւ նա, այս գումարը կ'ընդունիմ ձեզնէ : Բայց ո՛չ այս ստակին և սչ որ և է բանի համար Քրիստոսի առջև ինձ ըրած երդումէդ ձեզ չեմ քակեր : Պէտք է որ արևունս բանի մը ծառայէ : Սրբազան, խորհեցէք ըսածիս վրայ :

Խեղճ եպիսկոպոսն այնքան զարհուրած էր որ չհամարձակեցաւ պատասխան տալ : Եւ այս վերջին տեսարանին տպաւորութեան ներքև էր, ինքնասպանութեան տեսարանէն նուազ սրտաշարժ, բայց իր արդէն վշտաբեկ ըղեղին միշտ ներկայ, երբ դաւառապետին այցելութիւնն ընդունեց :

Այն օրն իր բոլոր սրտով անիծեց, «այս ձանձրալի ձեղվիլոնները» :

— Աւասիկ մեր տէրերը, ըսաւ նա, ժուլիօ աբեղան իրաւունք ունի :

Բայց իր զայրոյթը զսպեց, բայց քաղաքավար եղաւ և փաղաքուշ գաւառապետ հօր առջև, բայց Հռոմի յայտնած փափաքը կատարեց, բայց իր խղճի խայթէն նեղուելով, իր փառասիրու և սուած խոստման մէջ մնալով, այնպիսի հնար մը գործածեց

որ ժուլիօ թեմէն կամուրջն օտարադրուած սեպուի և ինք Լուսէրի վրէժին իր ստուերին կարող լինի ըսելու, եթէ իր սպառնալից և ահաբեկ երազներուն մէջ երևէր :

«Ժուլիօ առաջարկեց մեկնելու, աւասիկ իր դիրքը» :

Թ

ԺՈՒԼԻՕՅԻ ՀՈՉԵԼԻՔ

Այն տարին՝ Լուշոնի ջերմուկներու եղանակին վերջերը շատ պայծառ եղեր էր : Օտարականներ ամէն կողմէ թափեր էին անդ : Ժուլիօյի դատին լուրն աւելի բուրբուն հանած էր անդ քան թէ պլուր : Տարուան ամենէն գեղեցիկ հինգ ամիսն այն տեղ անցընող շարժուն զբոսաւոր ժուլիօյի զբոսիկէն շատ ստակ շահեցաւ : Բաղմամբ օրինակներ բերել տուաւ : Ահագին ազդ մ'որու խորագիրն էր . Յայտնեալ ձեռքեր, զին Ա Ֆրանք՝ ծառուղիները պտըտող մի շատ մարդոց ուշադրութիւնը կ'ըրաւէր : Անդքամ փոքրիկ զբոսիկն անկուշտ կարգացին ամենքը : Ի Սէնդ-Ավանտէն ուղևորութիւնը՝ լճակին ճամբուն վրայ, տեսակ մը նորաձև ոխատաղնացութիւն մ'եղաւ, և երիցատան մէջ ժուլիօյի անցուցած վերջին օրերը գրեթէ շարունակ շնորհաւորական այցելութիւններով անցաւ : Անուանի մարդիկ, զբաղէաներ, դատաւորներ, ազնուատոհմ օտարականներ պատիւ կ'համարէին երթալ այն արիասիրտ մարդուն ձեռքը սեղմելու որ իր իրաւունքն աղնաբար սլաշտպաններ էր զօրաւոր և իր վրէժինգրութեանց մէջ սոսկալի միաքանութեան մը զէմ :

* * * Եպիսկոպոսն որ ջերմուկներն եկեր էր, իբրև բարեկամ այցի եկաւ՝ Լուշոնի երէցին սաստիկ դժգոհութիւն պատճառելով, որ չէր կարող ըմբռնել թէ ինչպէս եպիսկոպոս մ'այս անիծեալն հետ կ'հաղորդակցէր :

Հետևեալ տրամախօսութիւնը տեղի ունեցաւ երիցատան սրահ-
կին մէջ:

— Բայց կ'սիրեմ այն բարի ծուլիօ արեղան, ըսեր էր Եպիս-
կոպոսը:

— Ձեր Սրբազնութիւնն ազատ է, բայց կ'ներէ ինձ եթէ չեմ
յանձն առնուր իրեն ընկերանալու:

— Քեզի ինչ չարիք ըրաւ:

— Նա Եկեղեցին նախատեց անոր ամենէն հռչակաւոր սաշտ-
պանները զարնելով: Նայէ՛, իր ողորմելի պարտաւատեորն ամեն
ուրեք կ'ծախեն: Ինչ ամօթ իրեն, որ Աղբոյն կարծէ, Գար, և
Էնթէքանասն Պէլէի պէս լրագիրներէն զովեստ ընդունեց:

— Ինչ ծանրակշիւ բան:

— Սակայն այս պահուս եկեղեցական պաշտօնէն արդիլուած
պիտի լինի: Իր յաջորդը տեղն անցած է:

— Ձեմ կարծեր որ արդիլուի: Բայց պէտք է ըսել որ իր ի-
րաւունքը պաշտպանեց միայն:

— Հապա այն զբոյսիդ, Սրբազան, այն զբոյսիդ . . . Ես չեմ
կարծեր որ այժմ քահանայ մ'անոր հետ խօսի . . . : Ո՛վ որ
ձեզ վիզաց վրայ կ'յարձակի, մեր վրայ կ'յարձակի:

— Աղէ, իմ սիրելի երէցս, կ'նայիմ որ վերապատուելի հարք
'ի քեզ եռանդուն բարեկամ մ'ունին: Շատ լաւ, բարի իրկուն:

Եպիսկոպոսը սենեակ մը բռներ էր երիցատան մէջ. քաշուե-
ցաւ դնաց և իր սենեկապանին ապսպրեց որ հետևեալ օրուան
համար պատրաստ դանուի:

Որոշեալ ուղևորութիւնը տեղի ունեցաւ:

— Սրբազան, ըսաւ ծուլիօ, երբոր Եպիսկոպոսը տեսաւ, ձեզ
սուղի պիտի նստի այդ ողորմասիրութեան զործն որով տարադրի
մ'այցելութեան դալու կ'համարձակիք: Կարախնալ չպիտի լինիք:

— Կարելի է, պատասխանեց Եպիսկոպոսը. դեռ նորատի եմ,
ուրիշ ժամանակ յառաջանալու կ'սպասեմ: Կարելի է որ այն ա-
տեն ձեզ վիզք այսչափ զօրաւոր չեն լինիր Հռոմի մէջ:

Եպիսկոպոսը բոլոր օրն 'ի Սէնդ-Ավանտէն անցուց: Ծուլիօ
դանի Լուիլին փորրիկ սենեակը սարաւ:

— Սրբազան տէր, նա աստ չէ: Ինչ ըրին զանի: Նայեցէք
ինչ մնաց անորմէ, և ըսէք թէ դժբաղդ չեմ:

— Թերևս թակարդ մը լարած լինին քոյրդ ահարեկելու հա-
մար, բայց այսօր բռնութեան գործեր կարծել չեն:

— Ես ալ այդպէս կ'յուսամ:

— Սակայն դուք ինքնին խեղճ քոյրդ դանդաղ համար պէտք
եղած խուզարկութիւններն ընելու պարտաւոր էք: Քէ կամովին
թէ ակամայ մեկնած լինի, պէտք է գիտնաք թէ ո՞ւր է: Հա-
ւանական է որ ճղանցող մէջ աւելի յաջողիք քան թէ ոստիկա-
նութիւնը:

Այն միջոցին որ . . . ի Եպիսկոպոսը Սէնդ-Ավանտէնէն կը
հեռանար, ծուլիօ հետևեալ դիրն ստացաւ:

«Պարոն արեղայ,

«Բնաւ մտցած չեմ այն կարևոր գործն որու համար բողոք
մը տուիք Տ . . . ի դատարանին: Քրանսայի և օտար երկիրները
զործունէութեամբ խուզարկութիւններ եղան և գեռ ևս կ'լինին ձեր
քոյրը դանդաղ համար: Կրնամ իսկ հաւաստել ձեզ որ Նորին
Ղսեմութիւնը՝ արդարութեան պաշտօնեայն՝ այս գործին մեծ հոգ
կ'տանի: Քիչ մ'առաջ տեղեկագիր մ'ուղղել տուաւ ինձ մեր Ի-
տալիայ մէկ գործակալին ձեռօք, տեղեկագիր մ'որ քիչ մ'անո-
րոշ է: Այս գործակալը կարծեր է տեսնել օրիորդ Քլավիէրի
նկարագիրը Չիվիդա-Վէքիա հասնող նորատի կնկան մը վրայ,
օգոստոս ամսուն մէջ տեղը, հետն ունենալով երկու կրօնուհի
և ուրիշ նորատի աղջիկ մ'որ հազիւ տասն երեք տասն չորս տա-
րու կ'երևէր:

«Բարիզէն հրամաններ ուղղուեցան մեր Հռոմի գործակալաց:
Գաղտնի, երկարատև և համբերատար տեղեկութիւններէ ետք
իմացուեցաւ որ այն նորատի օրիորդը Տէլլա Տրինիդադէ Մոնթե
վանըը չգտնուիր, և Հռոմի մէջ Նոյեմբեր-Սրբի մայրապետներն
այս մեհաստանը միայն ունին:

«Արդարութեան պաշտօնատունն այս փոքր ինչ ճշգրիտ տե-
ղեկութիւնը միայն հասած է օտար երկրէ:

«Սահման պարտիմ՝ յաւելուլ, աստ ՚ի Տ . . . մեր ընդունած տեղեկագիրներուն մէջ, կ'տեսնենք որ սեպտեմբերի 14ին, Սէնդ-Սվանտէնէն քրոջդ անհետանալէն երկու օր ետք, տիկին մը ուղեկից գտնուեց է՝ մինչև Եքալքէնի փոքրիկ կայարանը՝ Տ . . . երկաթուղոյն վրայ՝ ՚ի նարպոն, նորատի օրիորդի մ'որ պարզ հաղուած է եղեր, և որու ազնիւ կերպերն ուշադրութիւն գրաւեր են: Դէմքը քրոջդ նկարագրին շատ նման է եղեր: Չկրցան հասկընալ թէ այս նորատի օրիորդը, որ առաջին կարգի վակն նստեր է տարօք սենեկապանուհիի մը հետ՝ մը երթալու համար տոմսակ առեր է: Այս իրողութիւնը զիտող գործակալը՝ այս ուղևորուհւոյն զեղեցկութիւնն և խորին տրամուծիւնը յատկապէս նշանակեր է. այս պարագան իրեն նշանակութեան արժանի երեւելով գրեր է:

«Պ. արեղայ, այս քաներուն մէջ ճշգրիտ տեղեկութիւններ չկան, իրաւ, բայց իրենց արժէքն ունին: Անկից օրուա քաղեցէք. մենք ալ մեր կողմէն պիտի շարունակենք մեր խուզարկութիւնները:

«Պարտիմ՝ ըսել ձեզ մտերմաբար որ մեզի բնաւ նշան մը, և ոչ իսկ ժէզվիդաց այս գործին մէջ միջամտութեան երեւոյթ մը չհատու:

«Հաճեցէք ընդունիլ և այլն»:



ԱՌ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՊՈՒԹԻՒՆ ՍԿՈՑ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Ներկայ ժամանակաց պատմութեան մէջ երեք մեծ իրողութիւններ կ'տիրեն. տասն և վեցերորդ դարու վերանորոգութիւլը, 1789ի ընկերական յեղափոխութիւնն և տասն և իններորդ դարուն Պա-

պին աշխարհական իշխանութեան անկումը: Արեւմտեան ազգաց մէջ այս երեք ճգնաժամերն են որոց վախճանն է այս մեծ բառը - Ազատագրութիւն:

Լուծէրին կողմէ Պապին կոնդակին այրիւլը, Գաշնաղիը ծողովին կողմէ մարդուս իրաւանց հրատարակութիւնը, Պիոս Թեոս Թի յաջորդը, Վատիկանու պարզ եպիսկոպոս, մարդկային մտաց բոլոր ճգունքը կ'ամփոփեն որպէս զե խորտակեն այն պղնձեայ խեցին որու մէջ՝ միջին դարու երկարատե և վշտալի գիշերը, արդի մարդը ծնունդ առաւ: Այս ճիգը հազար տարի տեկց: Երկար ատենէ ՚ի վեր վերանորոգութեան արտողրած ներգործութիւնը դադար գտաւ: 1789ի յեղափոխութիւնն իր վերջին ձևերը կ'առնու: Այժմ քահանայական թագաւորութեան անկման ներկայ կ'գտնուինք:

Արծնական նկատմամբ՝ վերանորոգութիւնը բողբոզվին ամուլ մնաց: Նա հին կաթոլիկութիւնը կտրձանեց, բայց նոր քրիստոնեայ մը չաւելցուց, և այսօր, ամէն ինչ անոր մէջ հոգեվարք է սկէպտիկականութեամբ որ դժգոհ հողիներու հիւանդութիւնը դարձաւ, այն հողիներուն որ հին ձևերէն տաղահայցած կ'երևին, որով միջին դարն Աւետարանը պատասեց, դեռ ևս իր առջև ապագայ սերունդին կրօնին նշանակը չկրնալով նշմարել: Բայց մարդկային մտաց վերանորոգութեան տպաւորած ցնցոմն իրօք ճշմարիտ իմացական յեղափոխութիւն մ'եղաւ: Նա հրատարակեց մտքի իրաւունքը, մարդկային մտածութեան թագաւորութիւնը: Այն օրէն ՚ի վեր՝ այս հաւաքական մտածութիւնը, որ կարծիք կ'անուանի, աշխարհիս թագուհիւ եղաւ, ինչպէս որ քսջ նկատեց Բասգալ:

Իմացական ազատագրութիւն մարդկային մտաց, որ բոլոր միջին դարուն վարդէրն ասացէն ունեւեաց մէջ բռնուած էր, աւասիկ Լուծէրի միջոցաւ տեղի ունեցած յեղափոխութիւնը:

Ընկերական ազատագրութիւն մարդկութեան որ հին քաղաքական իրաւամբ յաւիտենապէս անչափահաս հրատարակուած էր, աւասիկ 1789ին միջոցաւ կատարուած յեղափոխութիւնը:

Ազատագրութիւն աւետարանական դաղափարին որ այլանդակ

կերպով քահանայապետական կայսերականութեան հետ զուգառո-
բուած էր, աւասիկ յեղափոխութիւնն որ կ'կատարուի Հռոմ՝ Իս-
տալիոյ մայրաքաղաք հռչակուելով :

Վերանորոգութիւնը կարծեց ընել կրօնական շարժում մը, և
իմացական շարժում մ'առաջ բերաւ :

Իտալիան քաղաքական շարժում մ'ընել կարծէ, և կրօնական
շարժում մ'առաջ կ'բերէ :

Իմացական յեղափոխութիւն,

Ընկերական յեղափոխութիւն,

Քրիստոնէական յեղափոխութիւն :

Այս է ազատագրութեան երկանց մէջ մարդկային հանձարին
եռակի ծնունդը : Իր նիւթական և կոշտ ընթացքին մէջ՝ միայն
ակներև անիրաւութիւններ ուզելու, բոնութեան դէմ ասպահովու-
թիւններ ձեռք ձգելու, ժողովրդեան կենաց մէջ լաւադոյն սոյ-
մաններ գնելու նպատակ ունի : Եւ յանկարծ, ո՛հ հրաշք, այս
սոյքարներէն նոր աշխարհ մը կ'ծնի որու իմաստը՝ նոյն իսկ ժա-
մանակակից մարդիկ, թէև մեծամասնութիւն, չկրցան հասկընալ :
Այս ցուլի վիզ ունեցող վանականը, Մարդէն Լութէր անուն, և
կրօնական բռնասպետ մը, Պապին չափ անողբելի, անոր պէս
իբրև անվրիպելի ներկայացող, այս մարդուն միթէ մտքէն կ'անց-
նէր որ իր բռնական դործերը Հռոմի դէմ մարդկութեան փիլի-
սոփայական մեծ գաշանց հրատարակութիւնն էր : Ֆրանսայի Գաշ-
նադրական ժողովը չէր երևակայեր երբէք որ մշտատև կրանիդի
վրայ կ'հիմնէր արդի ընկերական իրաւունքի հիմունքը, և իտա-
լացի հայրենասէրներն որ նախանձոտ մեծ քաղաքաց երեսին ը-
սին, այսինքն՝ Գուրէնի, Նափոլէի, Ֆլորանսի, Միլանի, Մեզ-
պետք է մեծ Հռոմի իբրև մայրաքաղաք. չդիտեն որ այս բառը
Քրիստոսը կ'ազատագրէ, որ տասն չորս դարէ ՚ի վեր խղզուած
էմնար մեծ քահանայապետին սպիտակ սիճղնաւորին ներքև :

Աստուծոյ տրամաբանութիւն, ահա ասնք են քու սքանչելիքք :

Հետևապէս ղիմադրութիւն, մոլեղին ղիմադրութիւն կայ Իտա-
լիա կատարուող այս վերջին յեղափոխութեան ժամանակ : Հսկա-
յական իշխանութեան մը խորտակում, ծերպ՝ միջին դարու շքեղ

չէնքին, ոսկեղէն պսակով այլ կաւէ խարխոխով, որմէ ետք՝ որ
և է մէկուն դաշնելովը, քանի մը ղինուորներու, քանի մը կա-
մաւորներու, նուազ քան զայս, պարզապէս դիւանական ծանու-
ցագրի մը զօրութեամբ, որ կ'հրամայէր Սէնդ-Անժի գղեկին
մէջ պահպանութիւնը դադրի. և ահա հսկայ արձանը փոշելից
ամսի մը մէջ կ'տասպալի, իր փլածոյ կոյսին ներքև տիեզերքը
դղրդելով՝ և բոլոր քրիստոնեայ Եւրոպան՝ Պոսֆորէն սկսեալ
մինչև Սառուցեալ Ովկիանն ահաբեկելով : Գու Պապ, քու բո-
լոր բանադրանօք և նոզվքով այս բանս չպիտի արդիլես : Ծերպը
բերանաբաց է, տես, աւելի ևս կ'ընդլայնի : Ընկրկէ, եթէ չես
կամիր իբրև շեղ մը խորտակիլ անոր փլատակաց ներքև : Ամենա-
կաթոլիկ վեհափառութիւններ և ամենաքրիստոնեայ թաղաւոր-
ներ, եկեղեցոյ անդրանիկ որդիք, դուք չպիտի արդիլէք այդ
բանը : Ձեր դարուն ոգւոյն գէմ պիտի շարժիք, և ձեր մէջէն
անոնք որ իմաստուն են, վասն զի ձարպիկ են, դիտեն և կ'ըսեն
թէ միայն զաղափարներով կ'կառավարուին ժողովուրդները : Չպի-
տի երթաք ձեր ուժեղ ուսը դնել այն հսկայական պատի կտորին
ներքև որ անչափս դուրս կ'կարկատի : Եւ դուք, քահանայապետ-
ներ, ընկրկեցէք, դուք որ վարդապետօրէն առաքեալ կ'անուա-
նէք ինքզինքնիդ, և որ ձախող ու հակասական անձնուրացութեամբ
մ'եկաք հրածեշտ տալու այն իշխանութենէ որ ՚ի նախնեաց ձեզի
մնացած էր յանձնելով զայն միակ եպիսկոպոսին, զերագոյն քա-
հանայապետին ձեռքը. ձեր հաւաքական ձայնը փոթորիկին մէջ
պիտի կորսուի : Աշխարհ ձեզ մտիկ չըբաւ : Այն ամէն զորդիւ-
նին՝ զոր ՚ի Հռոմ հանեցիք, տիեզերական անտարբերութեամբ
պատասխան տուին, խորտակիչ բառ մը զոր տակաւին չէք հաս-
կընար : Քաշուեցէք և դացէք ձեր եկեղեցիները փոքր ինչ ծած-
կելու մոխրոյ տակ՝ հաւատոյ վերջին կայծերը : Այն յաղթա-
նակները զոր երազեցիք՝ ձեր ոսկեղէն շուրջաններով փառաւորա-
պէս հաղուած, ծանր ծանր փորձեր են : Եպիսկոպոսներ, թոյլ
տուէք որ պապական Հռոմի մէջ յեղափոխութիւնը կատարուի,
և եթէ կ'դառնուին ձեր մէջ այնպիսիներ որ կ'հասկընան (Chris-
tus factus est obediens) Քրիստոս իսկ հլու ստեղծաւ իմաստը :

ըսէք ձեր Հոռոմի եղբօր որ իմաստութեամբ շարժի, եթէ տա-
կաին իր մեծութեան նշանները կ'սիրէ, և Աստիկանու փա-
ռաւոր երիցատունն ընդունի, վասն զի այն օրն որ ժողովրդեան
բարկութիւնն ու զայրոյթն անկից պիտի անցնին, Պետրոսի յա-
ջորդը թերևս դեանագամբաններու մէջ ասպաւեն մը վնասուելու
ստիպուի:

Այս մտածութիւնները, դէթ այն ժամանակը պատահած ան-
ցից նկատմամբ, Թուլիօյի մտքէն կ'անցնէին, երբոր նստարանի
մը վրայ բազմած՝ կ'տեսնէր շոգենաւն որ Միջերկրականի աղւոր
ջրերը կ'պատուէր արագաշարժ: Միջին դարէ ՚ի վեր Հոռոմի մէջ
խաղացուած թատերիցութեան վերջին ներկայացումներուն հան-
դիսատես լինելու պիտի երթար, որու մէջ մեծ դերասանը Քրիս-
տոսի փոխանորդը կ'իջուի, իսկ երկրորդական անձինքը կարտի-
նալներ և առաջնորդներ: Թուլիօ իր ուղեորութիւն դէպ ՚ի Հոռոմ
վերջէն առ աշխարհական իշխանութիւն՝ սոյոյ այցելութիւն մը
կ'անուանէր:

ԺԱ.

ԺՈՒԼԻՅՅԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ

Վայսերական թղթատարութեան մէկ շոգենաւին մէջն ենք Մար-
տիրոսայէն դէպ ՚ի Զիվիդա-Վէրիա: Թուլիօ աշխարհականի սև,
ամենապարզ հաղուստով է: Տեսնողը թերևս զինքը դատարոր
մը, բժիշկ մը, ուսուցիչ մը կարծէր, բայց նաև կամրջին վը-
րայ իր աղօթադիրքը կարդալու համար չպահուի: Նաւորները
քիչ ատենէն կ'հասկընան որ քահանայ մ'է. վասն զի ոչ ծած-
կեց և ոչ բացէ ՚ի բաց հրատարակեց ինչ լինելը:

Շոգենաւին մէջ ուրիշ անձ մը կայ դազդիայի քահանայի կա-
տարեալ զրեւտով: Իրաւ է որ իր աղօթադիրքը կարդալու մեծ

փոյթ չտանիր, շուտով կ'տեսակցի ամենուն հետ և շատ գլուխ
կ'բռնէ. Թուլիօ երկրորդ կարգն է, այս պարզութիւնն իր ճաշա-
կին կ'յարմարի: Ասկից զատ՝ իր ուղեորութեան ժամանակ ՚ի
հարկէ անակնկալ դէպքեր պիտի պատահէր: Իր ստակը խնայե-
լու պէտքը կ'զգայ:

Պ. Տընի արեղան, այս է այն անձին անունը, առաջին կարգը
բունած է շոգենաւին մէջ, և սեղանին վրայ նաւաստեալին իրեն
տուած պատուոյ տեղը կ'բռնէ պարծենկոտութեամբ:

Այս երկու մարդիկ իրարու շատ քիչ կ'նմանին: Մին պարզ-
մտութիւն ունի ամէն ճշմարիտ և լաւ բաներու մէջ, միւսը նրբա-
մտութիւն միամտութեան ներքեւ ծածկուած: Մին քիչ կ'խօսի և
մեղմ ձայնով մը, միւսը բարձրաձայն, ամէն բանի վրայ կ'վե-
ճաբանի և ամէն բան զիտցողի պէս:

Թուլիօ եթէ վեց ամիս անպամ շոգենաւի մէջ գտնուէր և ոչ
մէկու մը հետ խօսք պիտի բանար առանց կարևոր պատճառի
մը: Միւսը դեռ երկու ժամ չկար որ նաևուն մէջն էր՝ և արդէն
առաջին կարգի մարդիկը թողլով՝ երկրորդ կարգի մարդոց մէջ
զացեր էր համարձակ պտրտելու, և տեսնելով որ Թուլիօ իր
աղօթադիրքը կ'կարդար, անոր երեսին կ'ըսէր բարձր ձայնով.

— Դու ալ կարդաւոր ես, պարոն, շատ ուրախ եմ, ուրեմն
մինակ ես չեմ կարդաւոր ուղեոր:

- Եւ խօսակցութիւնը շարունակելով.
- Անտարակոյս Հոռոմ կ'երթաս:
- Շիտակ Իտալիա կ'երթամ:
- Ես երկար ճամբորդութիւն մը պիտի ընեմ: Բոլոր թերա-
կողին պիտի շրջեմ քաղքէ քաղք: Այժմ քանի հետաքրքրա-
շարժ է այն կողմերն այցելելը:

Եւ Թուլիօյի ժամանակ չտալով որ պատասխանէ, նաևուն մէկ
նստարանին վրայ անոր մօտ բազմելով՝ իր բոլոր պատմութիւնը
մանր կ'պատմէր, Տընիներու տան ազգաբանութիւնը, ժեղվիղաց
մօտ առած ուսմուկքը, Լիօնի կղերանոցն աստուածաբանութիւնը,
վարած փոխանորդական պաշտօնները, իր ունեցած վերջին պաշ-
տօնը, կարալիսալ-Եպիսկոպոսէն աստիկ զժողհոթութիւնն որ իր

վիճակին մէկ անկիւնը ձգած անփոյթ է զինքն առաջ քշելու ։
 Վերապատուելի ժէզվիդ հարց դէմ տրտունջները , որ մատու-
 ցած ծառայութեանցը փոխարէն ազդու պաշտպանութիւն մը խոս-
 տացեր էին , իր դիտարողութիւնը քիչ մը աշխարհ տեսնելու ,
 խոհեմութեամբ քիչ մը ստակ խնայած լինելուն , և մեծ հօրեղ-
 բայր մ'ունենալով՝ «ի բնուստ դանձապահ մը» որ իրեն երես կը
 տար և խտալիոյ այս հրաշալի ուղևորութեանը համար քսակն ոս-
 կիով լեցուցեր էր և կ'յուսար որ մեծ հաճոյք պիտի վայելէ ։
 Վասն զի ինք , Տընի արեղան , կ'փափաքէր ընկերական , քաղա-
 քական , կրօնական , վարչային խնդիրներ քննել կրկտել , եզրու-
 կեան և հումէական հնախօսութիւնը խողարկել , պատկերհանու-
 թեան և արձանադործութեան մեծ գայրոյներուն հետևիլ , երկ-
 րախօսութեան , դրամադիտութեան , բուսաբանութեան , և 'ի հար-
 կին մինչև իսկ հողագործութեան վերաբերեալ խնդիրներով պա-
 րապիլ ։

Արդէն մեր սյարոնը Բօնգէնի մօրուս վայրերը կ'ըրցընէր ,
 Հռոմի անասպտը դալարաւէտ քաղաքներ կ'իմանդէր , Տիբեր գե-
 տը կ'խողարկէր , Վիքոբ որ Լամանուէլը Բիբլինալ կ'հաստատէր
 և Պիոս Թին հետ զրկախառն կ'հաշտեցընէր , այս վերջինը՝ եր-
 ջանիկ և գոհ՝ վատիկանեան բլրին վրայ կ'հաստատէր , բոլոր
 մարդկային քաղաքական հողերէ հեռու և ազատ ։

Ժուլիօ այս ամէն խօսքը հանդարտիկ գրեթէ պաղութեամբ
 մտիկ կ'ընէր , սակայն դաղղիական օդոյն բնական եղող հետա-
 քրքրութեամբ մ'որ 'ի մեզ այս բառով կ'բովանդակի . «Ե՛նչ տե-
 սակ բնատիպ մարդ է այս» ։

Այս ամենը նաւուն կամրջին վրայ կ'անցնէր , Մարսիլայէն
 առտու նաւ մտած օրն իսկ , երբ Բրովանսի կարմիր եղբքը կ'ան-
 հետէին փոքր առ փոքր հորիզոնին վրայ , իրենց ձերպալի ժայ-
 ուերով և հեռուէն իբր հրդեհէն ելած հին քաղաքներու բեկոր-
 ներ երևելով ։

Տընի արեղան կ'երթար , կ'գար , և նաւասետին հետ կ'խօսէր
 որպէս թէ քսան տարիէ 'ի վեր զանի կ'ճանչէր ։ Գողարիկ մար-
 դավարութեամբ կ'վարուէր տիկնանց հետ , ձերերու հետ ծայրա-

յեղ յարդանօք , իսկ իր տարեկից կամ իրմէ փոքր կարծած ան-
 ձերու հետ զուարճախօսութեամբ կ'տեսնուէր ։

Այս օրէն ետև՝ Ժուլիօյի մօտ եկաւ ։

— Ահա վերստին դարձայ , սիրելիդ իմ՝ արեղայ ։

Ինչպէս որ ընթերցողը կ'տեսնէ՝ շատ շուտ բարեկամացեր էր
 Ժուլիօյի հետ ։

— Ճշմարիտ վկայ , շարունակեց Տընի , դու աչքս մտար ։ Իմ
 վրայ շատ խօսեցայ . համբերութեամբ մտիկ ըրիր ինձի պէս շա-
 ղակրատ մը ։ Աստուած իմ , այս պակասութիւնն ունիմ ։ Ուղևո-
 րութիւններն այս հաճոյքը կ'տան մարդուս որ ամէն բանի վրայ
 կ'ընայ խօսիլ ։

Հիմա կ'փափաքէի իմանալ թէ՛ որ վիճակէն ես ։

— Տ . . . ի վիճակէն , պարոն արեղայ ։

— Ա՛հ , կրֳղ , հին քաղաք մը , նշանաւոր քաղաք մ'է , այն
 տեղ Ապալտոլ մ'ունիք . . . ։

Ժուլիօյի շրթերուն վրայ ժպիտ մ'երևցաւ ։

— Այս մարդը , ըսաւ նա իւրովի մեղմիկ , իր կոչումը վրե-
 պեր է , ուղևոր գործակատար լինելու համար ծնած է ։

— Արդեօք քաղքին մէկ թաղին փոխանորդն էիր ։

— Ո՛չ , Պիտէնեան լերանց կողմը հողևոր հովիւ էի ։

— Ա՛հ , փառաւոր երկիր մ'է , կ'ըսեն , բայց ձմեռը սոսկա-
 վի , հէյ , այնպէս չէ՞ ։

— Բաւալան ։

— Եւ անունդ ի՞նչ է , թէ որ անխոհեմութիւն չես համա-
 թիր այս հարցումս ։

— Իմ անուն հարկ չկայ գիտնալ ։

— Ի՞նչպէս , ըսէ խնդրեմ ։

— Ժուլիօ Գլավիէր ։

— Ժուլիօ . . . սպասէ . . . բայց այս անունն ինձ շատ ծա-
 նօթ է ։ Նայինք յիշողութիւնս պիտի օգնէ ինձ . . . արդեօք դու
 ես երևելի գրքոյկի մը հեղինակը՝ Յայրնէալ Ժէզվիդ՝ զոր Լիօն
 զնեցի ։

— Այո՛ , պարոն ։

— Զարմանք . ինչ երջանկութիւն . այսպիսի դիպուածներ ինձի կ'հանդիպին , հէյ , բաղդաւոր եմ , իրաւ որ . դո՞ւ ես ուրեմն Թուլիօ արեղան , որ այնչափ լաւ թրջեցիր այն Աոյոլաները :

— Արդարապէս խօսեցայ :

— Անտարակոյս , մանաւանդ թէ շատ արդար : Ո՛հ , վատազդիները . ես չեմ սիրեր զանոնք , ինչպէս որ կ'դիտես : Լիօնի մէջ՝ կղերը չսիրեր բնաւ այս ընկերութիւնը : Փոխարէնը մեզի կ'հատուցանեն . կարտինալը կ'երկնչի . մեր քահանայից գումարումներու ժամանակ լաւ մը կ'խայթենք զանոնք :

— Ես ուրիշ կերպով կ'վարուիմ : Իբրև քահանայ կ'յարդեմ զանոնք , բայց իրենց ուխտին վտանգաւոր ողին կ'սարսուտեմ :

— Անշուշտ , անշուշտ , ես ալ այդ ըսել կ'ուզեմ : Ո՛հ , յիշատակադիրդ կարդալով միտքդ քաջ ըմբռնեցի : Բայց ամենքը սուրբ չեն : Ասն անոնց մէջ մարդիկ որ աղւոր և զուարթ կեանք մը կ'վարեն : Բարի՛ իրենց փոքրիկ սենեակներն ունին ուր մեծ աիկիւններ կ'ընդունին :

— Ես այդ բաներուն չեմ հաւատար :

— Գու շատ զթասիրտ ես , Պ . Թուլիօ : Ասոնք այնպիսի մարդիկ են որոց սրտին խորը բանալով միայն կարելի է ինչ լինելնին յայտնել :

Այս անբաժանելի Տընի արեղան երեկոյեան դէմ եկաւ նորէն Թուլիօն դսնելու :

— Սեղանին վրայ քու խօսքդ եղաւ , ըսաւ նա , նաւասետը գիրքդ կարդացեր է : «Աղղու գրուած մ'է» ըսաւ նա : Այնտեղ քանի մը ժէզվիզական մարդիկ կային որ երեսնին ծովիկեցին : Իբրաւի , նաւասետն ու ես գիրքը սաշտոպանեցինք : Բնաւ բարեկամաց հետ վատութեամբ վարուիլ պէտք չէ : Ո՛վ որ սիրած անձերուս գպի , իմ աչքիս լուսին կ'դպի : Եւ ահա տեսակ մը Բուադվէնի տոհմական գեղջուկ մը , զոր վերադատուելի հարբ չուով կ'ուղարկեն , համարձակեցաւ ըսելու . «Ողորմելի սարսուտեւոր մ'է» : Ի՞նչ ըսել կ'ուզես , սարսուտատար ըսելով , հարցուցի անոր : Եւ անկնարկ մը նետելով շանթահարեցի այն գեղջուկ երիտասարդն որ անտարակոյս քահանայապետին զուարթե-

րուս մէջ կ'երթայ զինուոր գրուելու : Ճիշտ է գաղափարս , Աստուած իմ , և զիւրին է բացատրել : Ազնուական ընտանիքներ շատ անդամ ստահակ զաւակներ կ'ունենան և իրենց դիւն հեռացընել կ'ուզեն : Իսկոյն՝ քահանայապետին զուարթ կ'ընեն : Ժէզվիզներն անոնց անցադիր կ'տան . հայրն այսպէս կ'ազատի իր զաւակէն որ ասեն մ'իբ կըթու թիւնը կ'ընէ : Միւրօտ սպարապետին ներքև և իբրև եկեղեցւոյ շահատակ ապա տիտի վերադառնայ ձիերուն և շուներուն հետ ելնել նստելու համար :

Թուլիօ հիացած մնացած էր . չէր կարող հասկննալ թէ ի՞նչ պէս այս այլանդակ մարդը բերնէն կ'թափէր այսչափ խօսք , առանց գժուարութեան և աղբիւրի մը պէս որ փրփրադէզ ջուր կ'ժայթքէ :

— Արտաւոց մարդ մը , կ'ըսէր Թուլիօ ցած ձայնով : Սակայն իբրև խօսակից տաղտկալի չէ , միշտ կ'խօսի : Սակից դատ բարե սրտով մարդ մը կ'երեւի ինձ :

Թուլիօ կենդանի բարեսրտութիւն մ'էր : Այս տեսակ հողիներ կասկածոտ չեն : Անսպառելի ներողամտութեան ոգի մ'ունին ամէն տկարութեանց , ամէն պակասութեանց համար : Լիօնի այս քահանան շատ արտակերպոն մարդ կ'երեւէր : Լիօնացիք փոքր ինչ շաղակրատ են և իրենցմէ բաւական զօհ : Թուլիօ կ'քննէր Տընին իբրև այս տեսակ մարդու օրինակ և ուրիշ բան մտքէն չէր անցներ :

Գժբաղդարար այս շաղակրատը շատ հետաքրքիր և անխոհեմ մարդ էր : Այնքան վրան ընկաւ , այնքան պնդեց , այնքան պաշարեց Թուլիօն , որ սա իր ուղեւորութեան նպատակն անոր յայտնեց : Այսինքն դսնել քոյր մը զոր կարծէր թէ հումակական վիճակից մէկ վանքի մէջ փակուած է :

— Իբրաւուք չունէի՛ ըսելու քեզի որ ժէզվիզները չեմ սիրեր : Քինախնդիր չեմ , բայց կարելի է . . . :

— Արելի է որ այս գործին մասնակցութիւն մը չունին : Մոլեռանդ բարեկամներ . . . :

— Աղէ՛ , Պ . արեղայ , շատ միամիտ ես : Այո՛ , իրենց գործակալներու ձեռօք ըրած պիտի լինին : Բայց այս ամէն բաները՝ հաւատ ինձ , Աոյոլայի սաշտոնատունէն ելած են :

— Ի՞նչ այլանդակ մարդ, կ'ըսէր շարունակ ժուլիօ իւրովի :
 — Ճշմարիտը՝ եթէ ես քու տեղդ լինէի տասն տեղ չէի երթար քոյրդ գտնելու համար : Նա Հոռոմ կ'դանուի : Քեզի կ'ըսեմ որ Հոռոմ կ'դանուի, և այնպէս ստոյգ եմ ինչպէս ստոյգ եմ որ Միջերկրական ծովուն վրայ կ'դանուիմ, և եթէ անդ լինէի, պիտի դանէի անտարակոյս վանքն որու մէջ զանի արդիլած պիտի լինին :
 — Թե երևս կարծած էք աւելի դժուարին է գործը :

— Ա՛հ, թէ որ ես քու տեղդ լինէի ժեզվիլդաց զօրապետին քթին տակ իմ քոյրս պիտի գտնէի :

Ժուլիօ սկսեր էր տաղտկանալ Պ. Տընիի լեղուէն, և ընտանի տէն : Ոտք ելաւ, դանի բարեկեց և իր խցիկը քաշուեցաւ :

Չիվիդա-Ա.է.քիա հասնելով՝ ժուլիօյի առաջին դործն եղաւ դադրակական ոտսիկանութեան դործակալին մօտ գնալ և Տ . . . ի կայսերական իրաւաբանին կողմէ ստացած նամակն անոր յանձնել : Այս դործակալը՝ որ յետին ծայր քաղաքավար մարդ էր, բոլորովին ժուլիօյի օգնելու տրամադիր երեցաւ, եթէ ոչ իր դործակցութեամբ, վասն զի մինչ ցայն վայր ինքն ալ արդիւնք մը ձեռք չէր ձգած այս մասին, գտնէ իր խորհրդով և հոռոմէական վիճակաց վրայ ունեցած փորձառութեամբը :

— Այս երկրին մէջ մինակ մենք ոստիկանութիւն ունինք, ըստա նա, և եթէ ցարդ բան մ'երևան չհանեց, և ոչ իսկ քրօջ մասին նշան մը, պատճառն այն է որ հաւանական չթուիր բնաւ որ Հոռոմ բերուած լինի կամ գէթ այն տեղ քիչ մը բնակած լինի : Շատ դժուարին է որ մեր դործակալները շտեմենն օտար դէմք մը, նոյն իսկ կին մը : Սակայն՝ դուք կրնաք հասկընալ որ եթէ ժեզվիլդները, ինչպէս որ պատճառներ ունիք այսպէս կարծելու, այս առևանգին հեղինակներն են, այնքան անճարակ չեն որ քոյրդ քաղաք մը բերեն ուր իրենց հոգևոր ազդեցութիւնը չափազանց մեծ է, բայց դարձեալ, ինչպէս որ իրենք ալ քաջ գիտեն, մեր հսկողութեան ներքև գրուած են : Օրինակի համար, ինչ անխոհեմութիւն, եթէ իրօք յափշտակեալ անձը՝ Նոբելիան - Սերբի վանատունը բերեր են, այն վանատունն ուր ամէն օր Հոռոմի մեծատունները կ'մանեն, ուր մանկտին անգամ ամէն ինչ

կ'տեսնեն, և ուր քսան չորս ժամ անգամ բան մը չեն կարող ծածուկ պահել : Ուստի իմ ներքին համոզումս այս է թէ, մեր ոստիկանութիւնը Հոռոմի մէջ ամէն խուզարկութիւններն ընելէն ետև՝ անօգուտ է երթալ անդ նոր խուզարկութիւններ ընել : Պարագ ժամանակ և ստակ պիտի վատնէք : Բայց եթէ իմ դուշակութիւնս սխալ չէ, ժեզվիլդներն որ ամենուրեք մարդ ունին, դատաւային վանքի մը մէջ պահած պիտի լինին նորատի օրիորդը, տեսակ մը փոքրիկ բերդաքաղաք ուր հին ժամանակի ամէն սովորութիւնները կ'տիրեն, որ ապաստանի իրաւունք ունին և ոստիկանութեան դործակալ մը չէ կարող ներս մտնել և այն տեղ բանտաորութիւն մը՝ եթէ դար մ'անգամ մնայ, ոչ ոք կարող կ'լինի դուշակելու թէ բանտարկուած է անդ :

Աւասիկ, Պ. արեղայ, կարծեմ թէ այս է ճիշտ եղելութիւնը, և չեմ երկնչիր ըսելու որ իմ այս փորձառութիւնս մի անգոտնէք : Հոռոմ մի երթաք, եթէ ոչ զուարճութեանդ համար, բայց շրջեցէք այս երկիրն իբրև ուղևոր կամ հնադէտ մինչև անգամ իբրև վաճառական, որպէս զի ամենուրեք դիւրաւ կարենաք մուտ ունենալ : Միշտ խտալերէն խօսեցէք, քիչ ատենէն պիտի ընտանի լինի այս լեղուն ձեղի : Պարսկական տէրութիւնը լոկ չորս դաւառէ կ'բաղկանայ այժմ. Չիվիդա-Ա.է.քիա ուր կ'դանուինք. Ալիթէրպ, որ հիւսիսային կողմն մօտակայ վայր մ'է, Գրօղինօնէ՝ Նափօլիի սահմանողութիւնը՝ հարաւակողմը, և կեդրոնը Հոռոմ : Բոլոր այս տեղերը յիսուն միոն երկայնութեամբ և տասն հինգ լայնութեամբ վայր մը կ'ընէ : Գրանասյի երկու դաւառներու չափ տարածութիւն ունի : Ուստի զիւրին պիտի լինի ձեզ շրջիլ այս տեղը անքը : Այս պահուս ճամբաները բաւական ապահով են :

Ստէպ պտրտեցէք եկեղեցիները. ինքզինքնիդ քահանայի, կամ պատկերաւաճառի կամ հնադիտի տեղ ծախեցէք, որպէս թէ երկրին հնութիւնները քննելու ելած էք. այս կերպով բնաւ մէկու կասկածը չէք դրդուեր, դիպուածը, կամ լաւ ևս Նախախնամութիւնը ձեզ կ'օգնէ : Աշխարհը լի է եպիսկոպոսարաններով և վանքերով : Ամենուրեք դայէք, քննեցէք ամէն բան. ամէն վանոյց բնիկներու վրայ տեղեկութիւններ ստացիք : Խոհեմ եղիք :

Հանդարտ և զգոյշ մարդ մը կ'երեկիք . այսպէս պէտք է վարուիլ խաղաղոց հետ որ անհաւատարիկ նրբամտութիւն մ'ունին : Երթար բարեաւ , պարոն : Որ և է ժամանակ եկէք զիս տեսնելու : Յատուկ հրաման ունիմ , ինչպէս նաև բոլոր իմ գործակալներս , ձեզ ձեռնառու գտնուելու :

Ժուլիօ մեծապէս շնորհակալ եղաւ այս մարդուն որ իրեն համար այնքան բարեսիրտ կ'երեկէր : Ողջունեց և քաշուեցաւ : Հազիւ թէ գործակալին դահլճէն դուրս ելեր էր որ նա զինքը կանչելով կ'ըսէր ցած ձայնով մը .

— Նոր բան մը մտածեցի : Պէտք է ձեզ ազգ առնել որ այս երկրիս մէջ մանաւանդ 'ի Հուով , զգոյշ լինիք : Մենք դիտենք որ ժեզվիդներն ալ իրենց զաղանի ոստիկանութիւնն ունին : Անտարակոյս այս միջոցին քաջ դիտեն որ Իտալիա կ'դանուիք : Չեղ 'ի կորուստ մասնելու մեծ շահ ունին : Թէ որ աշխարհական լինէիք՝ անոնց դիմագրաւ կ'իկենայիք՝ դաշունի հարուածներն ալ 'ի հաշիւ չառնելով : Բայց քահանայ էք , և կատարեալ իշխանութիւն ունին Հաւատարմութեան ատենին վրայ որմէ կախում ունին 'ի Հուով բոլոր միաբանութեանց անդամները : Եթէ քահանայ մը կորսնցընէ կամնան 'ի Հուով՝ շատ զիւրին միջոց մը կայ : Այնպիսի յանցանքով մը կ'ամբաստանեն զանի որ քաղաքային դատարանի իրաւասութեան չվերաբերիր , և եկեղեցական առանձնաշնորհութեանց ուժով ամբաստանեալ քահանայն Հաւատարմութեան ատենին ձեռքը կ'արուի : Այսչափ բաւական է ըսել ձեզ , քիչէն շատ կ'հասկընաք , և չմոռնամ ըսելու նաև որ զազղիական ոստիկանութիւնն այն ատենին վրայ բնաւ ազդեցութիւն մը չունի : Սոսկալի բաներ կ'սպասուին անոր վրայ , թէև Պիոս Թէն 'ի վեր փոքր ինչ մեղմացած կ'երեկի : Բայց դարձեալ մի վտտահիք անոր : Արթեմ թէ այս ըսելով ձեզի բարեկամական ծառայութիւն մը կ'մատուցանեմ : Աղաչեմ մի ըսէք երբեք որ ձեզ այս խորհուրդը տուի : Այնչափ կ'լսենք խտալացիքն որ արքէպիսկոպոստոսութեան բառն ահ ու գողով կ'արտասանեն , որ մենք ևս զազղիացիք այս խորհրդաւոր ատենին վրայ կ'սկսինք վախով խօսիլ և կ'ուզենք որ անոր հետ գործ չունենանք : Բայց ձեր վիճակն

իմ կարեկցութիւնս կ'շարժէ : Խոհեմ և ծածկապահ եղիք . նո՛ւրէն կ'ողջունեմ ձեզ , երանի թէ երջանիկ լինէիք :

ԺԲ

ԺՌԻԼԻՅՅԻ ՌԻԻՍԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գաղղիացի գործակալին հետ տեսակցութիւնն ընելէն ետև՝ Ժուլիօյի տեսած առաջին մարդն եղաւ Տընի արեղան :

- Հուով կ'երթաս :
- Ամենեքն , ըսաւ Ժուլիօ :
- Գրաւ կ'դնեմ որ միտքդ փոխեցին :
- Այո՛ :
- Արեմն քեզ կ'խաբեն և քու կորուստդ կ'ուզեն :
- Օ՛ն անգր , ի՛նչ շահ ունին զիս խաբելու :
- Ա՛յլ դիտէ : Աստիկանութիւն մը կայ որ երբեմն երկու հաջաւակ կողման կ'ծառայէ :
- Այս կողմէն բնաւ երկնչելիք բան մը չունիմ :
- Գարզ խօսինք , խորհրդաւոր անձ մը կ'գառնաս : Գաղղիացի գործակալին քովէն կ'գաս :
- Ասկից դիտես :
- Աստուած իմ , պարզ դիտուած մը :
- Է՛հ , շատ լաւ , զաղղիացի գործակալը բանաւոր սլառաձառներով իմացոյց ինձ որ Հուովի մէջ ժամանակ սխախ կորուսեմ՝ երկայն և անօգուտ խուզարկութիւններ ընելով :
- Հետեւէ անոր խորհրդին , հետեւէ : Բայց իմ կարծեօքս այն տեղ միայն սխախ կարենաս յաջողիլ : Աերջապէս պէտք չէ բարեք ընել մարդոց երբ չեն կամիր : Մնաս բարեաւ , 'ի կրկին տեսութիւն : Կարելի է նորէն իրարու հանդիպինք :

— Կարելի է :

— Կ'փափաքիմ իմ արշաւանքս սկսիլ հին Եարուրեայ այն կեզ՝ մերէն ուր շատ հետաքրքրական հնութիւններ կան :

— Լաւ ուրեմն , բարի յաջողութիւն . երթաս բարեաւ :

Ժուլիօ նախ ուղեգիծ մը պատրաստեց : Պատպական տէրութեան հիւսիսային կողմն այցելելու պիտի դնար . Քօրնէ-դօն , Սիւվիդէ-լան , Աիթէր , Սիւվիդա-Քասդէլլանան և շրջակայքը լաւ մը պտըտիլ : Հարաւային կողմը պիտի իջնէր Գիվօլլի , Աէլէգրիի , Գէրրաշինայի , Քրօզինօնէի ճամբով :

Փոքր ինչ իր հազուստը փոխելով՝ շրջող վաճառականի մը զգեստը հազաւ : Յետոյ վաճառականի մը կրպակը գնաց՝ ուր զանազան բարեպաշտական առարկաներ կ'ծախէին Ս . Երուսաղեմէն եկած : Աւարդարաններ էին , բոլորն ալ Երուսաղէմ օրհնուած , քանդակեալ զաղտախորներ որ աւետարանական տեսարաններ կը ներկայացնէին , և ուրիշ զանազան խաչեր , միտալներ , և այլն :

Ժուլիօ իրաւամբ մտածեց որ՝ այս առարկաներով՝ վանքերը զիւրաւ պիտի կարենայ մտնել և՛ առանց կասկած յարուցանելու՝ միաբանից վրայ մանր տեղեկութիւններ ստանալ :

Օրական ճամբորդութեանց համար փոքրիկ ձի մը ձեռք ձգեց որ ուժեղ էր և հանդարտ : Այսպէս իր ուղևորութեան համար պէտք եղածը պատրաստելով՝ հիւսիս զարկաւ և Քօրնէ-դօն ճամբան բռնեց :

Խեղճ արեղան սկիզբները յաջողութիւն չգտաւ : Գրեթէ ամեն ուրեք ստուն ընդունելութիւն տեսաւ : Սակայն յաջողեցաւ քանի մ'առարկաներ ծախել կրօնական մէկ երկու հաստատութեանց մէջ , թէև զժուարաւ քանի մը տեղեկութիւններ կրցաւ առնուլ այն տեղերուն վրայ :

Ասիէ զատ՝ իր Տընի արեղան՝ իբր չարագուշակ թռչուն՝ քաղքին զլնաւոր օթեկանն իջած դտաւ , մինչդեռ ինքն ալ նոր զգեստովն անդ մտաւ :

— Այն , սիրուն մարդ , ըսաւ անոր Տընին , ինչ փոփոխութիւն զարգաց : Տէր վիայ , ես իմ ճշմարիտ վեհապետիս տէրութեան մէջն եմ և ամենուրեք իմ թամբս կ'ցուցնեմ :

— Շատ աղէկ կ'ընես , ըսաւ Ժուլիօ , և կռնակն անոր դարձուց :

Այս մարդն իր համբերութիւնը կ'հասցընէր : Բնաւորութեան անկախութիւն կ'սիրէր երբոր քահանայ մ'այս բարեմասնութիւնը վարմունքի փափկութեան և պատշաճութեանց հետ կ'միացընէր : Կ'ատէր այն շողակրատ և թեթևօտիկ մարդիկն որ կղերին մէջ իբրև բարեմիտ երեխաներ երևիլ կ'ուզեն : Աւարտեա Տընին կարծեր էր թէ Ժուլիօն յարգած կ'լինի աղատ ընթացքով մը , ստեղծայն անոր արհամարհանքը զրգուեր էր :

Մեր ուխտաւորը Քօրնէ-դօն Գօսքանէլլա դիմեց . այս փոքրիկ հետաքրքրաշարժ քաղաք մ'էր՝ թէ Ետրուսիեան արուեստի բեկորներովն որ ամէն կողմը կ'գտնուին , թէ իր այլանդակ տեսքովն ինչպէս որ հռոմէական երկիրները կ'այստեսն , որ տակաւին միջին դարու չէնքերով լն են , և մանաւանդ այն քառակուսի արհամարհանութեամբ աշտարակներով՝ որ քաղքին շրջապատին մէջ տեղ տեղ կ'երևին , որոց համար կ'ըսեն թէ իբրև ապաւէն կ'ծառայէին քաղաքային պատերազմներու ժամանակ :

Ժուլիօ գիտէր թէ Կտալիա շատ քաղաքներ կան որ իրենց հնադէտն ունին . կերպ մը կէս դիտուն և կէս փոխանակիչ վաճառական , որ մեծ տուները , վանքերը կ'յաճախեն որպէս զի արծնեալ ապակի , Քրօզներ , հին կաւէ ամաններ , արոյրէ անդրիններ և հաւաքեն : Այս մարդիկ իրենց բնակած վայրերը քաջ գիտեն , օտարականներու համար մարդասէր են , յուսալով որ վարպետութեամբ կարկտուած Ետրուսիեան ամանով մը , կամ հնոյն վրայ ձուլուած արուրէ անդրիններով կրնան զանոնք հրապուրել , անդրիններ զոր իրենց շտեմարաններուն մէջ կ'ժամոցոտին և իբրև հինաւորց գործ անամօթաբար կ'ծախեն : Այս խաբէութիւնը բաց օղին կ'ընեն Կտալիա , և չկայ քաղաք մ'որ այս սրբաբաններն իրենց զրպանին մէջ ժանդահար չեղմէս մը կամ Պրիսայ մը չունենան , զոր ծաղրելի ծածկապահութեամբ մը քեզի կ'ներկայեն իբրև մեծաղին առարկայ մը :

Գօսքանէլլա այս մարդկան մին ունէր , որ իր տեսակին մէջ առաջին տիպարն էր : Իբրև է որ այս մարդը հռոմէական հնութիւնները լրջօրէն քննէր էր : Բայց դարձեալ ողորմելի և ան-

բաղը մէկն էր, որ իր առաժախտը և փոխանակութիւններով կ'ապրէր և հազիւ ուրեմն իր ապրուստը ճարելու կարող կ'լինէր : Սակայն պարկեշտ էր իր վիճակակիցներու մէջ և երբէք շինծու հնութիւն մը չէր ծախած :

Ժուլիօ դնայ այս մարդը դտնելու որ շատ ծանօթ էր հնաբանից, Պ. Քարլօ Վալլօնի : Քանի մը հին բաներ գնելու համար հետը սակարկեց, զոր նոր գտեր էր քաղքին հին գամբարանին մէջ :

— Անտարակոյս այս երկրին ամէն կողմերը քաջ պիտի դիտնաս, Պ. Քարլօ, բնաւ անոր ժուլիօ :

— Կարծեմ թէ գիտեմ, տէրս, քառսուն տարիէ՛ ՚ի վեր այն երջանիկ երկիրս կ'ընակիմ և գրեթէ ամէն տեղ քննած եմ : Այս տեղ մեծ քաղաքակրթութեան մը նշխարներուն վրայ կը դտնուինք : Ա՛հ, Ետրուսկեանք, տէր իմ, կրօնատէր, պատեղազմական, արուեստագէտ ժողովուրդ մը . . . :

— Այս ժողովուրդն այնքան իմ հետաքրքրութիւնս չշարժեր որչափ Իտալիոյ արդի կրօնական միաբանութիւնները : Այս է իմ յատուկ արուեստս, գիտես որ մարդ ամէն բանի չկրնար հասնիլ . . . :

— Տէր իմ, որչափ իրաւունք ունիս : Ամէն բան դիտող մարդկան չվստահինք. անոնք բան մը չգիտեն : Ես ալ իմ յատուկ արուեստս ունիմ, և հաւաստի եղիր որ մեծ եռանդով զայն առաջ տարի : Քու արուեստիդ կ'նմանի, բայց ես քիչ մը գործը բարձրէն բռնել ուզեցի : Քրմայ և քրմուհեաց միաբանութեան մեծ խնդրոյն վրայ՝ հին ժամանակէն սկսեալ մինչև կաթոլիկութեան օրով հաստատուած ուխտերը՝ անբաւ արձանագիտներ ունիմ զոր յօժարակամ քեզի ներկայացընելու պատրաստ եմ :

— Շնորհակալ եմ, պարոն, ես քեզի չափ դիտուն չեմ, ես միայն վիճակագրական տեղեկութիւններ փնտռելու հետամուտ եմ :

— Ա՛հաւաստեմ քեզ որ անոնց մէջ շատ հետաքրքրաշարժ բաներ կան, որ հին կուսպաշտութեան խնդիրը լիապէս կ'ըստաբանեն և քրիստոնեաց կղերին ու հիմնարկութեանց յաջորդութիւնը հին կրօնին քահանայապետութեան և քրմութեան : Հռոմ միշտ

գերազանցապէս կրօնական քաղաքն եղած է : Գծբազդարար եկեղեցականութիւնն այնպիսի իշխանութիւն մ'ունի անդ՝ որ մեծ քրմապետին զօրութիւնը կայսեր զօրութեան հաւասար կ'ընէին : Եւ երբ Հռոմ իր պապերն ունեցաւ, նոր հաւատոյ քահանայապետները, նոյն խիկ կայսերը վերադարձի գալով՝ ինչպէս Առատանդիանոս և իր յաջորդները, այս մէջն քահանայապետի կարեւոր տիրողսր պահեցին՝ նոյնին կապուած սրատիներուն և անբաւ հաւատոյ թից պատճառաւ : Միայն Արատիանոսի օրոքն էր որ կաթոլիկ քահանայապետութիւնը կայսերաց հրովարտանքներուն վրայ, սեռ սաւ որ՝ նոր կրօնի մէջ իսկ՝ այդ փառասիրական անունը չէին պահեր կայսերը՝ նոյն խիկ Հռոմի եպիսկոպոսաց քթին տակը : Այս պահուս՝ եթէ պապական Հռոմ միջին դարու ունեցած վիճակը պահելու կ'փափաքի, պատճառն այն է որ՝ առաջուան պէս, այս մարմնաւորի և հոգևորի խառնուրդն իր բանին շատ կ'ոգայ : Սովորաբար կ'կարծեն թէ պապերն են Հռոմի թագաւորները : Բայց այս բնաւ ճիշտ չէ. այս տեղ թագաւորութիւնը պապութեանէ վեր կ'գասուի : Մեր պապերը՝ իբրև թագաւորներ՝ աւելի կ'ուզեն թիկնապահ ատրճանակիրներ ունենալ, քան թէ ներքին եպիսկոպոսներ որ իրենց քովէն չեն հեռանար և անոնց խաչեր ու վարդարաններ օրհնել կ'տան : Պապն՝ հին ժամանակի փառասիրութեան մէջ՝ Եւրոպայի առաջին վեհադեան էր : Աւ այս թագաւորը՝ Յուլիոս Բի բնաւորութեամբ մարդոց ատեն՝ իր զրահին ներքեւ պահպանելու պատիւը կ'ընէր պապին : Այս է Աեսար կայսր և բարձր քահանայապետ : Արչափ որ բարեմիտ է, մեր արժանի և պատկառելի Պիոս Թ իր զգալը կ'տար արքայական թագին համար : Աւստի մի զարմանար որ մեր կղերական կառավարութիւնը յամառութեամբ կ'մերժէ միաբանասէր մեծ ընտանեաց մէջ մտնելու : Իրեն ինչ փոյթն է միացեալ Իտալիան : Աւ՛շ, աւելի մեծ շահ մ'ունի : Քահանայապետութիւնն ու եպիսկոպոսութիւնը կանխիկ զրամ է : Գուք զազդիացիք, այս խնդիրը չէք հասկընար, մենք խեղճ հռոմայեցիք իրերն ՚ի մօտուսս կ'տեսնենք :

— Չպիտի պնդեմ . . . : Անտարակոյս, այս քաղաքական խնդիրը . . . :

— Կերէ ինձ, տէր իմ, կարդաւ երթանք : Արդ՝ կ'ըսէի որ Տին Հռոմ կրօնական տարրին մեծ կարևորութիւն տուած էր : Իր քաղաքականութիւնն այսպէս կ'սլահանջէր : Արեւելի է ժամանակ մը կառավարել ժողովուրդները կրօնով : Արչափ ատեն որ զրահան դիտութիւններն իրենց գիտակներն ամէն բանի վրայ չեն դարձրներ, որչափ ատեն որ մարդ կրօնական և ընկերական խնդիր մը չլուծեր, կառավարողներուն համար ամենէն սլարդ եղանակն է ժողովուրդներն ահարեկել աստուածոց միջոցաւ : Ի հարկին այս միջոցը կրնայ դաւադանին և դահճին տեղը բռնել, բայց այն օրն որ մարդ ինքնիշխան կ'զառնայ . . . :

— Շատ իրաւունք ունիս, Պ. Քարլօ, բայց արդեօք կարելի չէ . . . :

— Այո՛, տէր իմ, իրաւ է, այս ընդհանուր տեսութիւնները մէկգի թողունք : Գիտունները տակաւին չգիտեն որ Տին Հռոմ քսան անգամ աւելի նշանաւոր տաճարներ, մատուռներ, զից նուիրեալ խորաններ ունէր քան թէ նոր Հռոմ արքայութեան բոլոր սրբոց բարեխօսութեան ներքեւ : Եթէ կարենայիր ինձի հետ շրջիլ տասն չորս թաղերն որ եօթնաբլրեան կամ աւելի ճիշտ խօսելու համար՝ ութնաբլրեան քաղաքը կ'բաժնեն, պիտի զարմանայիր այն անթիւ, անհամար տաճարներու, մհհաններու և այլ սրբավայրներու վրայ որ զից նուիրեալ են : Առաջին թաղը՝ Porta capena չորս տաճար ունէր, Իսիսի տաճարը, Սէրապիսի տաճարը, Ճամբորդներու Բաղդի տաճարը, Արէսի տաճարը սլարսպէն դուրս : Աւելի մատուռ և վեց բաղին : Երկրորդ թաղը՝ Coeli montium, Քէօլիոսի լեռը հինգ տաճար ունէր, Տողլոս Հոսափլիոսի տաճարը, Պապոսի տաճարը, Փաւնէի տաճարը, Ալլոզիոսի տաճարը, Աարնէս գիցուհւոյն տաճարը : Ու թ մատուռ :

— Բոլոր այս մանր պարագաները . . . :
— Այո՛, կ'իմանամ. ահա լմնցուցի : Երրորդ թաղն ունէր երկու տաճար, չորրորդը տասն տաճար, թո՛ղ միւս մատուռները :
— Այո՛, սլարոն, շնորհակալ պիտի լինիմ :
— Հինգերորդը, Իսիսի, տասն ութ տաճարով, որոց մէջ նշանաւոր Բանթէոնը կար : Աւելի երրորդը՝ Alta Semita, տասն եօթ տաճար ունէր : Պիտի ձանձրացընեմ քեզ :

— Այո՛, համառօտէ :
— Ութերորդը՝ Գիգիսի քսան մէկ տաճար ունէր : Անայիս՝ կարճ կապեցի . . . :

Ժուլիօ կենաց մէջ այսչափ համբերելու փորձանքին չէր հանդիպած : Ավանար որ տաղտկալի դիտուն մը չվիրաւորէ. սակայն վերստին անոր խօսքը կտրեց .

— Բայց, սլատուական Պ. Քարլօ . . . :
— Մտածէ որ ուրիշ բաղմամբիւ տաճարներ կան որոց զիբքը տակաւին չէ դտած դիտութիւնը : Այսպէս՝ ուր էր Աոյս Բաղդին տաճարը, ուր՝ Յաղթող Արամաղդինը, Հերայինը և ուրիշ շատերուն : Այս տաճարներուն վրայ խուզարկութիւններ բրի, և կարող եմ այժմ թերի մաս մը ընուլ, Առնական Բաղդին տաճարին տեղը ցոյց տալով՝ ճիշտ այն վայրն ուր Անարատ Յղութեան կոթողը նորերս կանդնեցին : Ի՞նչ կ'ըսես այս համադիպութեան :

— Ի հարկէ այս ամէն բաները շատ հետաքրքրական են, բայց . . . :

— Քեզ ըսի որ սլարտ էր կարդով ընթանալ, ինչպէս որ ամէն գիտական խնդրոյ մէջ այս է կանոնը : Ինչ այժմ՝ բուն աստուածոց զալով՝ անտարակոյս դիտես Ինիոսի երկու ոտանաւորները տասն երկու զից վրայ, անոնք որ խորհուրդը, Արամաղդայ սրբազան ժողովը կ'կազմէին .

Հերայ, Ահարս, Աբէնաս, Գեփորէ, Արփեփս, Ասպիէ, Արէս, Հերփե . . . :

— Կերէ, բայց . . . :
— Միշտ այսպէս կարծած են թէ Արամաղդ առաջին աստուածն էր : Այս սխալ է : Իմ հետազոտութեանց արդիւնքը ցոյց տուաւ որ Ետրուսկեան առաջին, ամենէն նշանաւոր զիցուհին, այն զոր բնածին կամ երկրածին պիտի անուանեմ՝ Յանոսն է : Յանոս կամ Իանոս, որու յունական ստուգաբանութիւնն է՝ ըստ իս, անժխտելի : Եթէ Kainein յոյն բառէն նախորդ բաղաձայնը հանեա՝ ainein կ'մնայ, այսինքն՝ սիկըն, յաւիտեականը : Կա էր որ մարդկային ազգը ցանեց, ուստի կ'ծագի իր Աերձանող անունը :

Իր տաճարներուն մէջ ամենէն երեւելին էր Կաթողիկոս Զանոսինը , որու մէջ իր գլուխը չորս դէմքով շինուած էր՝ երկնից չորս ծագաց համապատասխանող , և միշտ այս նշանակ մ'է , աէր իմ , որ գից առաջինը , տիեզերական աստուածն էր :

Թուլիօ յուսահատ էր . այս բանախօսութեան վերջը գալիք չունէր : Հասկըցաւ որ այս մարդը փոքր առ փոքր իրեն աւելի վերաբերող խնդրոյն բերել պէտք էր քան թէ տասն երկու գից :

— Ինձ հին աստեղի կրօնական միաբանութեանց վրայ խօսեցար . . . :

— Ո՛հ , ճիշտ է . Փանոսն էր , Սատուրնոսի որդին , Լասիոմի թագաւորն որ ամենէն առաջ տաճարներ , նուիրական անտառներ , խորաններ կանգնեց՝ զոհերուն համար , և քահանայից ուխտեր կամ զոհարաններ : Ամենէն հին միաբանական ուխտը զոր նախնական ժամանակաց մէջ կ'դանեմ՝ Լուդերսկէն է , որ Պան աստուածին զոհեր կ'մատուցանէր , այսինքն ամենից աստուծոյն , տիեզերական աստուծոյն : Եղբարց միաբանութիւնը , զոր Արօն Արվալ կ'կոչէ , շատ հին ժամանակուան է : Կ'ըսեն թէ հիմնադիրը՝ Աքքա Լօրէնախան է , Հռոմուլոսի սանտուն : Պատմաբաններու շողքորթութիւն : Կրնամ հաստատել որ այս կրօնաւորաց հիմնարկութիւնն աւելի հին է : Այս եղբարք թուով տասն երկու էին , սպիտակ թագ և սրբեղօտ կ'հաղնէին և իրենց զըլխուն վրայ հասկէ պսակ մը կ'կրէին : Իրենց մեծ իշխանութիւնն էր ժառանգութեանց սահմանին վրայ ծագած վէճերը կարդալը : Այս միաբանութիւնը կամ վանքը հին և նոր կրօնական ուխտից տիպարն է : Հաւատի ինձ որ բան մը փոխուած չէ՝ ի Հռոմ . անունները միայն կ'զանազանին : Ֆլամեան նշանաւոր ուխտն այսօրուան նուիրական ուխտն է : Այս Լուդերսկէն՝ Պալատէն լեռին բնիկները , որ նոր մտրթուած կենդանիներու կաշիով ծածկուած կ'սպառէին , միթէ մեր Գապուլինները չեն որ բոպիկ կը քալեն՝ իրենց պատմութեանը կ'կրեն կենդանոց մը մտրթին պէս : Կանայք զանոնք կ'յարդեն այն հռոմայեցի տիկնանց պէս որ կամովին այս Լուդերսկէնց հարուածները կ'ընդունէին , կարծելով թէ ասով իրենց ամուսնութիւնը կ'անցնի :

Իսեղձ Թուլիօ փոքր ինչ քաշքշուած կ'դանէր հնադիտին բազմաթիւները . բայց՝ առարկութիւն մ'ընելով՝ կ'վախնար որ անոր մենախօսութիւնը չերկարաձգէ և բնաւ չստանայ այն թանկազին տեղեկութիւնները զոր թերեւս այս այլանդակ մարդը , որ կենդանի համարաւարան մը կ'երեւէր , իրեն կրնար տալ : Ուստի լուց՝ միտքը գնելով քանի մը խօսք ըսել իր զիտունն առաջարեալ խնդրոյն բերելու համար :

— Այնուհետեւ կ'յար Արուսբիկեանց ուխտը , շարունակեց հնադէտը , բոլոր Ետրուրիոյ մէջ երեւելի ուխտ մը և կրօնական հիմնարկութեանց առաջիններէն մին :

— Կարող ես այսչափ մանրամասն չպատմել , չեմ ուզեր որ ինձի համար ժամաղաճառ լինիս :

— Ա՛հ , աէր իմ , բոլոր ժամանակս քուկդ է :

— Բայց , Պ . Քարլօ , իմ , իմ ժամանակս շատ սուղ է :

— Ա՛հ , այն աստեղ խնդիրը կ'տարբերի : Չսխալի խօսիմ քեզի Ֆլամինեան ուխտին վրայ և ոչ Աեստալեան խիստ կարեւոր վանոց վրայ : Այս Հռոմի խիստ յարգեալ քրմուհիք , Կարմեւեան և ուրիշ կրօնանոց ուխտին նախատիպը , նուիրական հորն անչէջ կ'սրահէին :

— Լաւ , սուտիկ հասանք վերջապէս , ըսաւ Թուլիօ խրոմի :

— Պ . Քարլօ , շատ կ'փափաքէի որ հռոմէական վիճակաց կրօնական ուխտերու արդի կայութեան վրայ ընելիք վիճակադրական խորհարկութեանց մէջ ինձի օդնէիր : Ֆրանսայի մէջ շատ մութ ծանօթութիւններ ունինք . . . :

— Ես բոլորովին գիտեմ : Չիվիդա-Աէրիայի մէջ պիտի դանես Ֆրանչիսկեան , Հիէրօնիմիտեան , Կարմեան , Գապուլինեան միաբանութիւնները . ի Քօրնէդօ կան Պէնէտիկտեանք , Կարմեանք , Գապուլինեանք , ամէն աեղ Գապուլիններ պիտի դանես , թող թէ մէզվիկներ :

— Մանաւորացէս կանանց վանքերու վրայ ինձ տեղեկութիւն տուր :

— Ո՛հ , այդ ամենը ցուցակի ձևով յօրինած եմ՝ իւրաքանչեւ իր տեղովն ու անունովն , աւասիկ , աէր իմ :

Եւ լեղուազար հնադէտը ձեռագրոց սյուրակի մը վրայ գնե-
լով ձեռքը՝ թանձր միածաղ մը կ'հանէր : Ըստ վիճակի և ա-
նուանց գրուած :

— Ես ալ այդ կ'փնտռէի , ամենասպառուական պարոն :

— Քաջ դիտէ այս ցուցակները : Նախ Պէնէտիկտեան մեծ
ընտանիքը կայ , որու կեդրոնավայրն է Մօն-Քասէն : Այս ուխ-
տին բոլոր վանականները կրնաս գտնել անոր մէջ , նոյնպէս հաս-
տատութեան թուականը , հիմնադիրներու անունը , իւրաքանչիւր
մենաստանին եկամուտը : Սէն-Ֆրանսուայի մեծ ընտանիքը բոլոր
կրօնական ընտանեաց մէջ ամենէն արդասաւորն է , վասն զի ժո-
ղովուրդէն կ'ընդունի իր անդամները : Ապա կ'դայ Սէնդ-Օկիւս-
տէնի ուխտը : Այս ամենը մեթատով դասակարգեալ է : Եթէ
կամենաս իսկ առելի շուտ նշանակել , աւասիկ նիւթոց ցանկ մը ,
հաւտա որ՝ համբերութեան դործ մ'է : Բայց լաւ ցուցակ մը ,
լաւ գիրք մ'է : Աւասիկ քու խնդրածդ ունիս Օյոստինոսեան ,
Պէնէտիկտեան , Գապուշինեան և այլն կրօնու հիք . իբրև յաւե-
լուած նոր ուխտերն ալ դրի , ինչպէս Նոտր-Լամ-Սըրէ , Սէն-
Վէնսան ալ Բօլի քորք , Սէն-Շարլի քորք և այլն :

— Սքանչելի է աշխատութիւնդ Պ. Քարլօ : Ներէ ինձ որ քա-
նի մը բան նշանակիմ :

— Յօժարակամ , տէր իմ :

Եւ Ժուլիօ՝ այս անգամ ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու
ստոյգ լինելով՝ ուղևորութեան տետրակ մը հանեց և հասական
դաւաններու մէջ դանուած բոլոր մայրապետներու վանքերը նշա-
նակեց :

— Շատ շուտով լմնցուցիր գործդ , տէր իմ : Հիմակ այս փոք-
րիկ արուրէ արձաններուն զնոյն վրայ սլոտի համաձայնի՞նք ար-
դեօք :

Այս կիսին դալու համար էր որ հնադէտն իր հիանալի յիշո-
ղութենէ այսպիսի հին յիշատակներ հաներ էր : Եւ այն միջոցին
որ հուրթեանց մասին առուտուր չկար , այս էր խեղճ մարդուն
զնորդ որսալու եղանակը :

Կօսքանէլայի մէջ ստացած խիստ ճշգրիտ տեղեկութիւնները

համոզեցին զինք որ պէտք էր իր ճամբան շարունակել , և վա-
լան անօ շալու պատրաստուեցաւ :

Այն միջոցին որ իր օթեանէն կ'երէնէր՝ սրանդոկին վերի պա-
տուհանէն զլուխ մ'երեցաւ : Այս զլուխը Տընի արեղայինն էր :

— Բարի ուղևորութիւն , սիրուն արեղայ :

— Ճշարիտը , այս մարդը շաքիս պէս ինձ կ'հետևի , ըստ
Ժուլիօ :

Ժ. Գ.

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Եր անգին ուղեգիծն առած և սիրօք յուսով լին , Ժուլիօ վա-
լանդանօյի ճամբան բռնեց : Այն անդ Պէնէտիկտեան հարողատ
և զօրաւոր մենաստան մը կար : Փառաւոր եկեղեցի մ'որ մեծ սիւ-
նազարդ գաւիթ մ'ունէր , Սէն-Պէնուայի կուսանաց պարծանքն
էր , և թէպէտ Գրանսական արշաւանքէն 'ի վեր՝ հասարակապե-
տութեան օրովը , մենաստանն առաջուան պայծառութիւնը չու-
նէր և ոչ բազմաթիւ կրօնուհիներ , սակայն դարձեալ քահանա-
յայետական վիճակաց ամենէն բարեյաջող վանքն էր : Պէտք էր
անդ խուզարկութիւններ ընել : Լուիզ կրնար վալանդանօ գրա-
նուիլ : Սահմանալուիս քաղաք մ'էր , ուղևորներու հետեւած ճամ-
բէն հեռի : Այս երկիրը զմայլելի և չափազանց ողջասուն էր :
Բնազգում մը կ'ըսէր Ժուլիօյի որ իր գանձը , վասն զի այս էր
իր սրտային խօսքը , անդ կ'զտնուէր :

Հարկ էր այս վայրը պաշարել , ներս մտնել և ամէն բան տես-
նել : Այս էր մեծ գծուարութիւնը : Վերապատուելի մեծաւորու-
հիին խօսիլ , իր վաճառքն առաջարկել , սուրբ տեղեաց վրայ խօ-
սակցութիւն մը բանալ , Ժուլիօյի ճարտարութիւնն այսչափը կա-
րող էր ընել : Բայց դարձեալ պարտաւոր էր քիչ շատ արիւ-

Թեամբ զինուիլ : Կնք չունէր Տընի արեղային յանդգնութիւնն ու
լեղուազարութիւնը : Իրիւունն իր Գանճանա՝ պանդուկը գտնուած ա-
տենն՝ մէկ սրահէն միւս սրահը կ'իջարհաւէր իբրև վշտարեկ հո-
ղի , չզիտնալով թէ ինչ միջոցներ գտնէ Պէնէտիկոսեան կրօ-
նուհեաց վրայ տեղեկութիւններ ստանալու :

Պանդուկին տէրը փորձեց :

— Այս տեղ շատ աղւոր վանք մ'ունիք :

— Ո՛հ , փառաւոր է , պարոն :

— Միթէ շատ կոյսեր կան :

— Տասն երկու ձայնաւոր կիներ , ութ հատ ալ աշխատակից :

— Միթէ այս ամէն կանայք տեղացի են :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք չզիտեմ :

— Միթէ այս կանանց մէջ օտարականներ կան :

— Կարելի է : Մենք կոյսերը չենք ճանչեր :

Պանդուկապեան այս խօսքն այնպիսի կերպով մ'ըսաւ որով հաս-
կըցուց թէ չէր կամեր խօսակցութիւնը շարունակել :

— Այս օտարականը Բիէմօնտացի լրտես մ'է , մտածեց նա :

Թուլիօ տան տիկնոջ մօտն ալ աւելի յաջողութիւն չգտաւ .
կլորիկ նորատի կին մ'որ տեսակ մը լայն բազմոցի մէջ լարուած
նստած էր : Այս խտալացի կնկան բերնէն սա խօսքը միայն կրցաւ
քաղել .

— Այս բաները չզիտենք , պարոն :

Եւ ըսաւ իւրովի .

— Այս մարդը վանուց թշնամի մ'է , յեղափոխական գործա-
կալ մը :

Քիչ մ'ևս խաչ պիտի հանէր : Հայր Անտօնիօն այս կնկան
խօստովանասցայրն էր :

Թուլիօ իր սենեակը քաշուեցաւ սրտաբեկ :

Թեթևաշարժ փոքրիկ աղջիկ մը , վառվռուն աչօք՝ սրուակ մը
Թարմ շուր բերաւ շաքարի հետ և սեղանին վրայ դրաւ :

Արդեօք այս աղջկան հետ՝ որ կրնար շատ բան գիտնալ՝ խօ-
սակցութիւն մը բանալու փորձ ընէ :

Որոշեց ընելու :

— Ըսէ ինձ , սիրուն աղջիկ , միթէ Աշխանգանօ ծնած ես :

— Ո՛հ , այո՛ , պարոն :

— Այդ շատ սիրուն քաղաք մ'է , ասկից դատ՝ գեղեցիկ վանք
մը կայ :

— Արտաքին տեսքը դեռ բան մը չէ , պէտք է ներքին կողմը
տեսնել : Ո՛հ , շքեղ մենաստանը , գեղեցիկ նկարները : Ահա այն
տեղ կ'գտնուին սիրուն ախրամայրներ , եկեղեցոյն պատերը բոլոր
բովլին ոսկեղօծեալ են , և կանանց սենեակները , որչափ աղոր
դարդարուած են , կարծես թէ փոքրիկ մատուռներ են : Ո՛հ , քա-
նի՛ երջանիկ են այս տիկիւնները :

— Հետևապէս երբեմն՝ այն մենաստանը մտած ես :

— Երբեմն , շատ անգամ , և ութ օր կայ որ անկից ելայ :
Ջիս բաներ էին որ նորատի օտարական աղջկան մը սպասաւո-
րեմ . Հռոմէն այս օրիորդը՝ ինչպէս որ ըսին , բժշկաց խորհրդով
եկեր էր քիչ մ'ատեն վանքը մնալու : Այս քաղաքը շատ քաջա-
ուողջ օդ մ'ունի , զիտէք , պարոն :

— Միթէ այդ օտարուհին բարձրահասակ է :

— Ո՛հ , այո՛ , շատ բարձրահասակ :

— Գեղեցիկ է :

— Տիրամօր մը պէս գեղեցիկ :

— Խտալերէն կ'խօսի :

— Բաւ մ'անգամ չզիտեր : Ուստի չէինք կարող իրարու միտք
հասկընալ : Յաւալի բան մ'էր այս , այնպէս չէ՞ , պարոն : Ուստի
երեք օր սպասաւորելէն ետեւ՝ վերապատուելի մեծաւորուհին ինձ
ըսաւ . Գու յիմար մ'ես , բան մը չես կարող հասկըցընել այս
օրիորդին : Եւ ասոր վրայ զիս ճամբեցին : Բարեբաղդարար Գան-
բանայէ մէջ լաւ պաշտօն մը գտայ :

— Միթէ այդ տիկնոջը դաղղիարէն կ'խօսէր :

— Կարծեմ թէ կ'խօսէր :

— Միթէ անունը չզիտես :

— Երկու երեք անգամ լսեցի անունը , բայց մոռցայ :

— Արդեօք Լուիզ է :

— Կարծեմ թէ այդ անունն ունի : Շատ արտուր , շատ յոգ

նաբեկ, շատ սոճոյն կ'երևէր: Ա՛րսէին թէ կուրծքը դէշ վի՛-
ճակի մէջ է:

Թուլիօ ուրիշ տեղեկութիւն չկրցաւ ստանալ գեղեցիկ օտարու-
հւոյն վրայ որ Ալալանդանօյի մէջ իր առողջութիւնը դանձու
համար եկեր էր:

Նորատի աղջիկը ժպտելով ձգեց դնայ:

— Բարի իրկուն, աէր իմ:

Մինակ մնալով՝ Թուլիօ մտածեց, որոճաց:

— Նէ մեծ է, թերևս գեղանի է, Լուիզ կ'անուանի: Նոյն
ինքն է, իմ քոյրս է: Կուրծքի հիւանդութիւն, բժշկաց կողմ-
ապսպրուած լեռներու օճը, այս ամենը վերապատուելի հարց
ստայօք պատմութիւններն են խարելու համար: Խտալերէն բառ
մ'անգամ չգիտէ: Եթէ Լուսիմ կամ ուրիշ քաղաք մը բնակէր,
պիտի կարենար միտքը յայտնել փոքրիկ սպառուհւոյ մը: Իմ
Լուիզս է, իմ Լուիզս է:

Եւ խանդաղին կ'քալէր մեծաքայլ իր սենեկին մէջ:

— Այս տեղ մարդ կ'սղգուի, երթամ քիչ մ'օգ առնլու:

Գիշերը կ'մօտենար, բայց դեռ մութ չէր: Եկեղեցւոյն սիւնա-
զարդ գունէն անցաւ, որ բաւական կանոնաւոր հրապարակի մը
վրայ կ'նայի. ապա նեղ ու փոքր ճամբաներէ անցաւ որ վանույ
բոլորտիքը կ'պատէին: Երբ հրապարակը վերադարձաւ, եկեղե-
ցւոյն գունէն ձայն մ'ելաւ.

— Լաւ ուրեմն, պարոն արեղայ, երջանի՛կ ես: Միթէ փնտաւձ գ
դասը:

Այս ձայնը՝ ինչպէս որ գիւրին է գուշակել, Տընի արեղայինն
էր:

Թուլիօ՝ որ սովորաբար քաղցրաբարոյ է և բարեսիրտ՝ այնպի-
սի ժամեր ունէր որ հաղիւ իր աշխուժութիւնը կ'ըսպէր: Գէպ 'ի
եկեղեցւոյն դուռը վաղեց:

— Պարոն, քեզի ի՛նչ իմ գործերս: Կ'ուզեմ որ այսուհետև
իմ անցած բոլոր քաղաքներէս՝ չպուաս, պարոն արեղայ: Թէև
չատ տարօրինակ կ'տնեմ որ մեր երկուքին ճամբան նոյնն է,
չնորհ ըրէ զիս իբրև անձանօթ նկատելու այսուհետև:

Այս կշտամբանքը ձախող էր: Պէտք չէր թշնամի դարձնել
հայրենակից մ'որ վերջապէս իրաւունք ունէր Եարուրիոյ լեռնե-
րը գալ ազատ օդ շնչելու:

— Այլ ևս պարոն արեղայ չպիտի անուանեմ քեզ, պոռայ
նա Թուլիօյի: Երթաւ բարեաւ, պարոն, սակայն կարող ենք
վերստին զերար տեսնել:

Այս խօսքը դառն և ոխակալ ձայնով մ'արտասանեց որու վը-
րայ Թուլիօ մտածել պէտք էր:

Հետևեալ օրը Թուլիօ Պէնէտիկտեան կուսանաց մեծաւորու-
հւոյն ներկայացաւ:

Այս կիներ գրեթէ յիսունը հինգ տարեկան էր: Իր անոյշ և
յստակ աչքը՝ զոր մարդկային սէր մը բնաւ չէր պղտորած, իր
նուրբ և վարդագոյն շրթունքը, իր անփայլ սպիտակութեամբ
գէմքը՝ որ միայն վանական ստուերին ներքև գեղեցկութեան մա-
րիլը կ'յայտնէր, ճակատ մ'որու վրայ բնաւ խորշ մը չկար, հիա-
նալի կ'երևէր, անաբատ և հանգարտ կերպարանը, բոլոր այս
բաներն այնպիսի տիպար մը կ'յօրինէին, զոր պատկերհանի մը
վրձինը չպիտի արհամարհէր:

Նա ընդունեց Թուլիօն այն շնորհալի համեստութեամբ զոր աշ-
խարհի մարդիկ օտարաց առջև կ'գտնեն:

— Աերպատուելի մայր, եկայ ձեզի Ս. Երուսաղէմի բարե-
պաշտական յիշատակներ ընծայելու: Զիթենեաց պարտիզէն պատ-
կաւելի Քրանչիսիկեան կրօնաւորաց ձեռօք քաղուած ձիթենիի հա-
տիկներէ վարդարաններ են. այս կրօնաւորներն որ սոյն պարտի-
զին տերերն են, քանի մը տարիէ 'ի վեր զայն պատով մը շրջա-
պատեցին: Անոր մէջ այնպիսի հին ձիթենիներ կան որ Քրիստոս-
սի ժամանակակից կ'համարին: Այս ամենը վաւերական է, իմ
վերապատուելի մայրս:

Թուլիօ իր փոքրիկ ճառն այնպիսի պարկեշտ ձայնով մ'ըսաւ,
բարեսիրտ քահանայն իր կերպարանին վրայ անկեղծութեան այն-
պիսի նշաններ ունէր որ վերապատուելի Մայրն անոր մանր մունր
աւարկաներուն աչք մը նետեց, աւարկաներ զոր Քլօրանսի մու-
տիօնէ անդին ու կըր սեղանի մը վրայ թափեր էր, և այս էր

միակ կարասին որ քանի մը ծաղկանկար սպիտակ մետաքսէ աթոռներով կ'զարդարէին խօսարանն ուր Թուլիօ ընդունուեր էր : Արովհետեւ Թուլիօ նորք ճաշակ ունէր , Զիվիդա-Վէրիայի մէկ կըստէն շատ առարկաներ դներ էր որ մեծ արուեստական զին ունէին , թէև աչքն աւեր էր մէասիւլ եթէ չկարենար ծախել իր բաղդախնդիր արշաւանաց ժամանակ : Ասոնք քանդակեալ սիրուն գաղտակուրներ , ճաշակով բանուած մասնարաններ էին , թէև կասկածելի մասունք կ'պարունակէին , ինչպէս Աոյս Մարիամայ մաղերը , Յովհաննէս Մկրտչին գօտիէն ուղտի սուս , Ս. Աննայի սանտալի բեկորներ , Բեթլէհէմի մսուրին կտորէն : Վերասպատուելի Մայրը Թուլիօյի բոլոր վաճառքը կ'փափաքէր ծախու առնլու , այնքան չքնաղ գտեր էր զանոնք : Նշան մ'ըբաւ , և խուկոյն բոլոր տիկիները , որ վանքին մէջ հանդիսա կ'ընէին , սրաթուիչ երամի պէս հասան :

- Ա' մայր իմ , ինչ հետաքրքրական վարդարաններ :
- Ինչ սիրուն բաներ :
- Ա'հ , աղւոր մասնարանները , որչափ պիտի յարմարին Տիրամօր խորանին համար :
- Մայր մեր , գնեցէք , կ'աղաչենք , այս հրաշալի գաղտախուրները :

Թուլիօ իր չորս կողմն անյաղ ակնարկներ նետեց : Անդ գեղատիպար հումայեցի կանայք կային և երբ ասնն ասնն կրօնուհիւններն օտարականի մ'առջև գտնուին , թէև օտարականը վաճառական լինի , անդէտս՝ հաճելի լինելու անդիմադրելի պիտոյը մը կ'զգան , որ կնկան մեծ հրապոյրն է : Թուլիօ իր տարօրինակ հագուստով միշտ բարեկիրթ անձի մ'ապնուածիւնն ունէր : Արնար համեստ զգեստ մը հագնիլ , բայց չէր կրնար մերկանալ խորհող մարդու նայուածքը , անոյշ ձայնը և քաղաքավարութեան այն անուշահատութիւնն որ ընտիր բնութիւններն երևան կ'հանեն : Նոյն խի իր ըւութիւնը , իր համեստութիւնը , իր վաճառքը ծախելու համար ունեցած անհողութիւնը՝ իրօք ծարտեալ սիրահարներու կերպարան մը կ'տային իրեն , որ ստէպ թատրոնի վրայ մեղ կ'նեղիկային , և որ կ'երթան անոյշ ակնարկ մը կամ սիրազիր մը

նետել սիրուհւոյ մը զոր բարբարոս ծնողք վանքի մը մէջ փակած են :

Այս գեղեցիկ վաճառականը մի շատ Պէնէտիկտան կրօնուհեաց յիշատակին մէջ մնացած է , չէ թէ մեղսական իղձերով , այլ իբրև անորշ նկարներ որ անձանօթ երջանկութեանց վրայ խորհել կ'աան , զոր թէև յաւիտենական ուխտեր կ'արդիւնն , բայց հոյին դարձեալ անոնց հոօր բնազդումները կ'պահէ :

Թուլիօ այս բոլոր գէմքերը տեսաւ և ոչ միոյն նկարը պահեց : Ո՛ր էր Լուիլ : Ինչո՞ւ համար Լուիլ վանքը չէր ձայնաւորաց գասուն կանանց հետ : Միթէ իր սենեակը փակուած էր . միթէ իրօք հիւանդ էր :

Եղբոր սիրար տակն ու վրայ եղաւ : Հազիւ թէ պատասխան կ'տար վերապատուելի Մօր և կրօնուհիւներուն հարցմանց :

Թուլիօ՝ որ չէր կամեր ծախել , ամէն մէկ առարկային վրայ ահագին զիններ գրեր էր : Ասով Մօր բաղձանքն աւելի կ'զրդուէր : Եկաւ ժամն երբ ասորանքը պիտի ընդունուէր , արդէն քսակը կը բացուէր : Ի՞նչ ընելու էր : Ի՞նչ բաւ ընել պէտք էր այն օտարուհին բերել տալու համար : Ի՞նչ միջոց գործածել պէտք էր : Թուլիօ չէր կարող այն տեղէն հեռանալ առանց փորձ մ'ընելու : Իր միտքն առ Աստուած ուղղեց և փոքր ինչ սիրա առնլով ըսաւ կարելի եղածին չափ անխուով՝ թէև չկրցաւ բոլորովին զստել ձայնի թեթև դող մը .

— Եթէ այն նորատի օրիորդն սր այս տեղն է քանի մ'ատենէ ՚ի վեր , ուզէր . . . :

Վերադատուելի Մայրը խոժու ակնարկ մը նետեց անոր վրայ :

— Ի՞նչպէս զիտես , պարոն , որ այս տեղ ունիք . . . գայեք , քոյրերս , ներս մտեք : Գու , պարոն , լրտես մ'ես , այլ այլութիւնդ քեզ կ'մտանէ : Բարեհաճէ գուրս ելնելու . . . : Հոռու մէն զիր մը դալով մեզի արդէն կ'իմայընէր որ ընտանեաց կամքով մեզի յանձնուած անձը տեսնելու փափաքող կայ :

Եւ վերապատուելի Մայրը՝ սառն դէմքով մը բարեկրով անբաղդ երիտասարդը թողուց որ իր ծրարը կապէ , և խիկոյն ներս մտաւ : Սպասուհի քոյր մ'եկաւ և Թուլիօն մինչև մնաստանին դուրը տանելով զայն վրայէն գոցեց :

Վերապատուելի Մայրը՝ նոյն օրն իսկ՝ ամենէն ճշգրիտ տեղեւորութիւններն առնլու ջանաց հայր Անդոնիօյի ձեռօք, այս կարծեցեալ վաճառականին վրայ, որ նոյն պահուն Վալանդանօ կը դանուէր: Աբասուհուջն մտքին մէջ բնաւ կասկած չմտաց՝ պանդոկին ծառաներուն հետ ժուլիօյի ունեցած խօսակցութեան վերայ, թէ սա Հռոմէն իրեն ծանուցուած առեանդիչն է:

Եթէ ժուլիօ մեծ վճատութիւն զգաց իր սիրելի Լուիզը վանքին մէջ տեսնելու անյաջող գանուելուն, իր սրտին խորն անպատում ուրախութիւն կ'զգար: Իր գանձն անդ էր: — Եթէ պատերն իսկ մաղլելով վեր ելնէի, սենեակները վաղէի, բոլոր այս կանանց ահ ու զող աղբէի անդամ, ինչ փոյթս է: Բարձրաձայն պիտի ըսեմ. նա իմ քոյրս է, իմ պաշտելի քոյրս, զոր հրէշներ ձեռքէս առին: Բոլոր Վալանդանօյի բնակիչներն իմ կողմօ պիտի բռնեն:

Այս խորհուրդը դեղեցիկ էր և մեծ սրտի մ'արժանի: Ժուլիօ սկսաւ անոր դիւցազնական և ասպետական կողմը նկատել: Փոքր ինչ աւելի մտածելով՝ տեսաւ այս ձեռնարկութեան ահադին դժուարութիւնները: Եւ ինչպէս որ կ'պատահի ստէպ երբ հողին հրատապ բաղձանաց ենթակայ՝ սոսկալի տատանմանց մէջ կ'գտնուի, անխորհուրդ խանդէ մը կասկածանաց անստուղութեան մէջ ընկաւ:

Եթէ մենաստանին վրայ յարձակում մ'ընէր, ոստիկանութիւնը պիտի հասնէր, և պատէն վեր ելնելու ատեն պիտի բռնուէր. այս յանդուզն դործին ծայրը թիարան կար, դռնփակ դատաստան մը լինելէն ետև: Ուրիմն երթայ բարեաւ քիչ մ'առաջ այնքան եռանդով յղայեալ խորհուրդը: Միթէ աւելի մեծ խոհեմութիւն չէր նախ ասպահով լինիլ թէ օտարուհին իրօք Լուիզ Քլաւիէրն էր: Քրանսական դեսպանին միջամտութիւնը՝ երբ մի անդամ Լուիզ լինելը հաստատուի, աւելի զօրաւոր պիտի լինի քան թէ անձնական միջամտութիւն մ'այնպիսի քաղքի մը մէջ ուր ժեզվիզներն այնքան մեծ աղղեցութիւն ունին:

Այս անգամ այս որոշումն աւելի խոհական էր և ժուլիօ զայն հաստատ բռնեց:

Յանկարծ լուսաւոր դաղափար մ'իր միտքը դրաւեց: — Պիտի գրեմ: Իտալիոյ մէջ միշտ գործակից մը կ'գտնուի օսկիով. այս է բաղդախնդիր կենաց երկիրը: Աեցցէ՛, դտայ: Եւ գրիչն առնլով՝ հետևեալ գիրը շարադրեց.

«Սիրելի Լուիզ,

«Բու խեղճ եղբայրդ, քու երջանիկ եղբայրդ Վալանդանօ կը գտնուի: Սէնդ-Ավանտէնէն մեկնելէդ ՚ի վեր ինչ վիշտեր կրեցի: Գու իսկ շատ վիշտ կրած պիտի լինիս: Վերջապէս քեզ կ'գանեմ: Քրանսական ոստիկանութիւնն ունայն խուզարկութիւններ ըրաւ: Սակայն իմացեր էր որ Մարսիլիայէն մեկնելով Չիվիդա-Վալթիա ելեր էիր երկու կրօնուհիներով: Ա'տեսնես՝ որ քարերարն Աստուած ձեռքէս բռնելով զիս առաջնորդեց այս տեղ: Հնորհակալ լինինք անոր: Յուսամ որ դու այժմ բացէ՛ ՚ի բաց Մեծաւորուհոյն պիտի յայտնես եղբայրդ տեսնելու դիտաւորութիւնդ ամէն արդելք առ ոչ ինչ գրելով: Այս ևս ըսեմ, համբերէ՛, Ֆրանսական դեսպանը պիտի դործէ:

«Բու բարի եղբայրդ,
«ԺՈՒԼԻՕ ՔԼԱՎԻԷՐ»:

Այս նամակը գրուելէն ետև՝ պէտք էր անձուէր և ճարտար սուրհանդակ մը գտնել: Պանդոկին փոքր աղջիկն անդ էր: Ժուլիօ իր սենեակը կանչեց զանի, դործ պատճառ բռնելով:

— Աւասիկ քեզի համար ոսկի մը: Կարո՞ղ ես այս նամակը մենաստանին օրիորդին ձեռքը յանձնել:

— Անտարակոյս, պարոն. Սկոլաստիկա քոյրն որ զիս շատ կ'օիրէ այն օրիորդին խուցը տանելու չպիտի մերժէ ինձ:

— Ուրիշ ոսկի մ'ալ պիտի տամ եթէ ոչապատասխան մը բերես:

Առջի օրուան պէս պատահեցաւ՝ երբ ժուլիօ վերապատուելի Մոր ներկայացաւ՝ հանգստի ժամանակ: Այսինքն փոքր սպասուհին հնչակը քաշեց, Սկոլաստիկա մայրն հարցուց դռնապանուհոյն, օձի պէս խօսարանը սահեցաւ մտաւ և աղաչեց բարեսիրտ քոյրն որ իր երբեմն սպասաւորած օրիորդին ներկայանայ որպէս

զի ձեռքն ունեցած ճաղկանց փունջն անոր ընծայէ : Սկոլաստիկա քոյրը , որ սլառաւ , խուլ և կէս կոյր էր , և Թուլիոյի այցելութեան տեղեակ չէր , փոքրիկ սարսուհւոյն խնդիրը կատարելու անպատեհութիւն մը չտեսաւ : Ինք անձամբ առաջնորդեց զանի օտարուհւոյն սենեկին դուռը :

Հոռոմայեցի կանայք իրենց Սարկինացի նախնեաց արիւնէն ունին : Գեղեցիկ վաճառականին արկածը , վասն զի Թուլիոյի ասպետական գործն այս անուամբ կ'ընէր այս հրաշարիգ վանուց մէջ Խտալիոյ ամենէն վարպետ սրտիեհհաններու ձեռքը նկարեալ , Պէնէտիլտեան քերց զլուսը շատ զբաղեցուց : Եթէ յաջողէր մենաստանը մտնելու . . . : Կորատի հիւանդ ազջկան սենեակը պարտիզին վրայ կ'նայէր , տան մէկ հեռաւոր կողմն էր . . . : Արդեօք խօսքը մէկ ըրեր էին . . . : Արդեօք երնարանն ունէին և զաւակիցներ . . . : Այս իտալական երեակայութեանց մէջ այս սարագանները տրամ մը կ'յօրինէին , բայց ազնիւ տրամ մը , սիրոյ քերթուած մը : Ոմանք մեղմիկ կ'ընէին . Եւ երջանիկ է որ կ'սիրուի : Ինչպէս սիրտը սարսուռ կ'զգայ սիրահարի մ'այս բառը լսելով . Բեզ ազատեցի : Մարդ եթէ կամովին անգամ մտնէ մենաստան՝ միշտ բան մը կայ անոր մէջ որ բարեաց առաջինը նկատուի կ'տայ՝ ազատ լինելու բարեքը : Կորատի քոյր միայն այս կը տեսնէին առեանդի մը մէջ :

Կամացուկ իրարու կ'ընէին որ քիչ ատենէն բան մը տեղի պիտի ունենայ : Սիրահարներն ինքզինքնին յաղթահարեալ չին համարի երբ իրենց առաջին փորձն ասարդիւն եղնէ : Գեղեցիկ վաճառականը կրնար ուրիշ հազար տեսակ ձեւեր առնուլ , ուրիշ հազար տեսակ հնարք գտնել : Գործնական վէպն իրենց աչաց առջև սիտի անցնէր : Անոնք վէպեր չէին կարգար , արդիւրած էին . բայց առասիկ վէպ մ'որու թատրն իրենց վանքն էր : Ինչ երջանկութիւն . այս նորութիւն մ'էր :

Բոլոր իրկուներ , բոլոր հետեւեալ օրը՝ նորատի քոյր չորս դին կ'ըլտեսէին : Իրենց աչքն ու խելքը դրան վրայ էին , այն սիրական խօսարանին վրայ , այն միակ փոքրիկ բացառածին աւսից մտրգիկ իրենց կ'զային :

Երբ Սկոլաստիկա քոյրը խօսարան կանչուեցաւ , կանայի բնազդում մ'իրենց ըսաւ որ մեծ գործին համար էր : Քիչ ատենէն այդ գործին հետաքրքրական վախճանն իմացան :

Թուլիոյի շատ երկայն երեցան ժամերը : Սակայն փոքրիկ օրիորդն իր պաշտօնը կատարէր էր որչափ արագութեամբ նոյնչափ ուշիմութեամբ , և քիչ ատենէն Թուլիոյի դուռը զարկաւ .

— Աւասիկ , պարոն , հիմակ տուր նայիմ ոտիկն :
Թուլիո կ'զողզողար : Իր քսակը բացաւ վճարեց փոքրիկ ազջկան և տոմսակին հասցէն նայելով .

«Առ Պարոն Թուլիո Բլավիէր»
— Այս իմ քրոջն ձեռագիրը չէ , ըսաւ :
Պահարանը բացաւ ու կարգաց .

«Ա' խնդրեմ որ Պ. Թուլիո Բլավիէր շնորհ ընէ զալու խօսարանը : Իրեն վերաբերեալ բան մը պիտի հաղորդեմ :
«ԲՈՅՐ ԹԷՐԷՁԱ , մեծաւորու հի» :

— Շնորհակալ եմ , Ատտուած իմ , իմ Լուիզս գտայ :
Երջանիկ մարդը պանդոկէն մենաստանը թառա : Գոնապանուհին կ'սպասէր իրեն և հրաման ունէր զինքն ընդունելու :
Խօսարանը կ'գտնուէր վերասրտուելի Մայրն և տժոյն ուցաւարար օրիորդ մը :

Թուլիո բարեկց : Ժպիտով մ'ընդունուեցաւ :
— Ա՛ճանչէք օրիորդ Լուիզ Բլավիէրը :
— Բնաւին , Մայր իմ . այս օրիորդն իմ քոյրս չէ :
— Ա՛տեսնէք թէ ինչպէս անկեղծութեամբ անիրաւութիւն մը կ'զարմանեմ : Երէկ քաջ գուշակեցի որ վաճառական մը չէք : Բայց առեանդ չի մը տեղ առեր էի ձեզ . և զուք պատուաւոր մարդ մ'էք : Ազգեյի ձեզն ստոյգ ապացոյց մը տալ :

Թուլիո բոլորովին ահարեկ մնաց : Սակայն սրտի զեղմամբ շնորհակալ եղաւ , և իր տունը մտնելով արասուհւոյն ուղղեց իր զաղտակուրներէն ամենէն զեղեցիկ բանուածն այս խօսքով .

Ուխտաւոր մ'որ էր քոյրը կ'փնտռէ
Առ վերասրտուելի Մայր Թէրէզա :

ՌԳԻՍԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Այս տեսարանիս հետեւեալ օրը՝ ժուլիօ Աքուաբէնտէնդէ գնաց. Պօլսէնա գեղեցիկ լճակին եզերքը շինուած փոքրիկ քաղաք մ'էր : Գժուարին ճամբայ մը բռնեց, բայց երկու կողմէն չբնաղ դիրքեր կային լեռներու մէջ՝ որոց ջրերն ստորոտը գտնուած լիճը կ'ընկնէին : Մեր ուխտաւորը՝ թէև գառն կսիծնեւրով կ'մաշէր, առողջարար սփոփում մը գտաւ այս պերճ դաշտանկարներու մէջ : Պիրէնեան լեռանց մեծութիւնն ու առատ բոյսերը չունէին : Ապէնինեան գօտին և իր դարաւանդները գժբաղդօրէն մերկ են : Այս լեռներու մէջ հազուապիւտ են անտառները, բայց հորիզոններու տեսքը կատարեալ են, ինչպէս որ կ'սիրեն պատկերհանները : Պիրէնեանց մէջ մարդ իրբև սողուն մը ջիւն մ'իր գլխուն վրայ սեպաձև բարձրացած հսկայական լեռանց կոյտերուն ներքև կը ճզմուի, մինչդեռ այս տեղ առապարները նուազ սուր են, և կլոր ու դաշտային վայրեր կան : Եւ մարդ փոխանակ բնութենէ նկուն արարած մը լինելու, անոր տէրն ու թագաւորն է :

Ապէնինեան գօտուոյն լճերուն մէջ՝ Պիրէնեանց նման բան մը չերևիր : Պիրէնեան լիճերը սովորաբար բարձրադիր են և ձիւնապատ սեպերով շրջապատեալ, անսպառելի ստինք որ անոնց վճիտ և պաղ ջրեր կ'մատակարարեն ձորերու մէջ թափելով : Ապէնինեան լիճերը ցած վայրեր կ'գտնուին և հեղատաս ջրերու առաջաններ են . ոմանք ալ ներքին փոքրիկ ծովեր կ'յորինեն, ինչպէս Պէրուզի լիճը : Հետեւապէս այս տաք դիրքին առաւելութիւնն ունին, իրենց եզերքը ստէպ բնակիչներով ծածկուած լինելով : Իրենց եզերաց վրայ ամէն ինչ առատ մշակութիւն է, բայց անոյշ

ձմեռներ կ'անցընէ անդ մարդ, և ամառուան ախորժելի զովութիւն մը կ'գտնէ : Պիրէնեան լիճը՝ վայրի և սուսկալի տեսքով, ամայի է : Հազիւ թէ իր լուրջ աղարակապանը հսկելի փանցը վրայ հիւղ մ'ունի : Միայն անցաւոր ճամբորդներ և հովիւներ կ'այցեւեն անդ, տարուան չորս ամիսները, և ապա սառած կ'մնայ՝ ձիւներու կոյտերու ներքև թաղուած, որուն կարծրացած երեսը ստէպ ճարճատեղ կ'տան, մինչև սաստիկ ջերմութեանց ժամանակ՝ երբ այս ամենը կ'հալի միահամուռ և հեղեղանման կ'ընկնի ոլորուտ շտեմարաններու մէջ :

Ժուլիօ որ բնութեան խանդալից դիտող մ'էր, իր տպաւորութիւնները կ'ամփոփէր ըսելով՝ թէ աւելի քաղցր է Ապէնինեան լեռները բնակիլ, որ կարծես թէ մարդս չեն արտաքսեր . բայց բնութիւնն աւելի փառայեղ է և Աստուծոյ աւելի կ'մօտեցընէ Ալպեան և Պիրէնեան լեռանց վրայ, ուր մարդ միշտ վայրադ տաբերաց դէմ մաքառելու պարտաւոր է :

Ո՛հ, թէ որ նոյն պահուն՝ իր սիրեցեալ քոյրը գտնէր, յօժարակամ պիտի կանգնէր իր վրանն այս մէկ մութ դիւղերուն մէկուն մէջ, որ Պօլսէնայի լճին արևմտեան եզերաց վրայ կ'գտնուին :

Գիւրին եղաւ Աքուաբէնտէնդէի Ալարիսեանց և Գասուչինեսանց վրայ տեղեկութիւններ ստանալ : Ամէն ինչ խոր հանդարտութեան մէջ էր անդ : Բան մը չէր պատահեր աշխարհիս այս խորշն ուր քաղաքակրթութիւնը դեռ իր անտիջրհեղեղեան տարիքին մէջն էր : Գասուչինեսանք և Ալարիսեանք երկար ատենէ՝ ի վեր օտարուհի մը չէին ընդունած : Ի՞նչ պիտի գային ընելու յԱքուաբէնտէնդէ, կ'ըսէին : Ժուլիօն խենթի տեղ դրին, հէք պատանոյ մը տեղ որ գժբաղդ սիրոյ մը պատճառաւ աշխարհս կ'ըջէր : Իսկոյն կ'հասկընային որ իր վաճառականի արուեստին համար փոթ չունէր : Կան բնաւորութիւններ որոց համար խոնարհիլը դժուարին է :

Երբոր Աքուաբէնտէնդէէն մնկնեցաւ, իրեն փոքրիկ տունակ մը բերին տուին :

«Միշտ կ'սխալիս : Ի՛նչպէ՛ ի հիւսիս կ'դիմես, պէտք է հարաւ դնալ : Հուժմ գնա՛ և պիտի դսնես» :

Այս տոմսակին դիրն իրեն անձանթ էր, բայց այս խորհուրդն արդէն Տընի արեղային ըսածին կրկնութիւնն էր :

Ուրեմն այս մարդը հետևեր էր իրեն մինչև Աքուարէնտէնդէ : Միթէ զիսլուածոյ արդիւնք, ճամբորդի քմահաճութիւնն էր : Տընի արեղան շահ մ'ունէ՞ր ժուլիօյի խորհուրդ տալու յամառութեամբ որ Հռոմ՝ երթայ :

Անտարակոյս ասոր մէջ խորհուրդ մը կար : Ժուլիօ դեռ ասոր մէջ համադիպութիւն մը կ'տեսներ :

Ի Գորուչիա լաւ ընդունելութիւն չդտաւ Տոմինիկեանց կողմէ : Պ. Տընին տեսաւ հրապարակի մը վրայ . բարեկեց նա զինքը, իր խոշոր ձայնովը սրուալով .

— Շատ կ'սիրես Հիւսիսը, պարոն :

ՅՕրվիէզօ՝ Պէնէտիկեանք և ոչ զինք տեսնել ուզեցին : Կարմեղեանց թե՛ ճառորուհին զինքն ընդունեց առանձին, իրմէ վարդարան մը գնեց և իրեն հետ խօսակցելու մերժեց :

Ի Պանքօրէտ՝ Գրանչիսիեանք անքաղաքավարութեամբ ընդունեցան զինքը . իրենք ալ առաստ փարգարաններ ունէին ծախու : Ժուլիօ իրենց համար շահամրցող մ'էր : Եւ դարձեալ անդ տեսաւ Տընի արեղային գէմքը :

Ժուլիօ քանի այս տեղերէն հեռանար անձկութեամբ կ'կրկնէր . Ո՞ր գիտէ, թերևս այս պատերուն ետև թողլով քոյրս կ'մնկնիմ :

Ի Մօնդէֆիաքօնէ նոյն անյաջողութիւնը դտաւ, ամենուրեք կիսկատար տեղեկութիւններ ստացաւ : Իտեղճ ճամբորդին յուսահատութիւնը մեծ էր :

Այս անգամ քիչ մնաց Տընի արեղային զիրկը պիտի ընկնէր փողոյէ մը դառնալու ատեն :

— Սիրելիք իմ, դժոյշ եղիր, վտանգաւոր քայլով մը կ'յառաջանաս : Հայնք, երբէք չուզեցիր հատալ որ ևս քու բարեկամք եմ : Լաւ, առասիկ կ'կրկնեմ, այս լեռնային երկրին մէջ գտնելու բան մը չկայ . Հռոմ գնա, սիրելիք իմ, Հռոմ դնա :

— Շնորհակալ եմ, պատասխանեց ժուլիօ, և հեռացաւ դնաց : Բնագրում մ'ատել կ'տար իրեն այս մարդը, և իր առաջին յատակադժին համար յարատեութիւն համարէ, համարէ թէ

Ֆրանսացի դործակալին տուած խորհուրդին վրայ վստահութիւն ունէր, այն որ զինքն այնչափ բարեսիրութեամբ ընդունէր էր 'ի Չիվիդա—Ալեքիա, համարէ թէ կասկած ունէր այն անձին վրայ որ իրեն չար ուզին կ'երևէր, իր դժած ուղեղիծը բնաւ չփոխեց : Ախլէրոյ դնալու համար ճամբայ ելաւ և Գասպայէ հին ուղին բռնելով՝ որու նշանաւոր հետքը դեռ ևս կ'տեսնուին, երկաթափուռի խոշոր կոյտերէ շինուած՝ ընդ առաջ անցաւ :

Ախլէրոյ վանքերով լի է : Փոխանորդի բնակարանը . հետաքրքրաշարժ քաղաք՝ խտալական հին քաղաքներուն պէս՝ զոր միջին դարն իր փարթամ շէնքերով զարդարեց : Ժուլիօ՝ Գրանչէսքինի պանդոկն իջաւ : Շատ անգամ Տընի արեղան տեսաւ որ քաղքին փողոյները կ'ըջէր, բայց անոր չխօսեցաւ :

Ժուլիօ Ախլէրոյի մէջ աւելի յաջողեցաւ իրեն ծանօթ նորաստի քահանայի մը շնորհիւ . ասոր միջոցաւ քաղքին կրօնական հաստատութեանց վրայ ճշդրիտ տեղեկութիւններ ստացաւ : Ժուլիօ այս արժանի կանոնիկոսին բացուեցաւ որ իրեն ծառայելու ամէն արամադրութիւն յցուց : Բայց քաջ իմացաւ որ բնաւ նորաստի օտարութի մը քաղքին մէկ մենաստանին մէջ չէ մտած թէ իբրև նորընծայ, թէ իբրև ազակերտութի :

— Կարծեմ թէ գողղիացի պաշտօնատարը քեզի լաւ խորհուրդ մը տուաւ, քոյրք մեծ քաղաքներու մէջ պահած չեն անշուշտ : Շատ հաւանական է որ աննշան մենաստանի մը մէջ զանի դտնես :

Ժուլիօ Ալեգրալա գնաց, փոքրիկ քաղաք մ'է Ախլէրոյի հարաւային կողմը շինուած :

1860 նոյեմբեր 20ի երեքշաբթի օր մ'էր, դեռ ևս օդը սքանչելի էր : Այս ազուր երկրին մէջ աշունը կ'երկարաձգէ :

Ժուլիօ Ալեգրալայի փոքր 'ի շատէ նշանաւոր մէկ պանդոկը հասնելով՝ բաւական ճարտարութեամբ այլ և այլ տեղեկութիւններ ստացաւ քաղքին և շրջակայից վանուց վրայ :

— Այս տեղ, ըսաւ անոր պանդոկապետը, Ալարիսեան և Տոմինիկեան կուսանաց վանքերն ունինք, և Ալեգրալայէն երկու մղոն հեռու Կօզր—Տամ ար Գօրքասիի գեղեցիկ մենաստանը : Ատիջ այս մենաստանին պաշտպան սուրբին սօժն է . նուազարաններ և

շատ բազմութիւն սիրտի դանուին : Քաղքիս բոլոր անուանանք
դասն անդ սիրտի լինի :

Ժուլիս Աէգրալայի մնաստաններու վրայ երկարորէն խօսել
տուաւ այս մարդուն : Շատ ատենէ ՚ի վեր օտարուհի մ'եկած չէր :

— Հապա՞ Նօգր-Տամ տը Գօրքասին :

— Չեմ՝ կարծեր որ անդ ևս եկած լինի : Ներսերը կ'դնուի ,
թերեւս միւս ճամբով եկած է , այսինքն Քօրնէգօյի ճամբով , բայց
ցէշ և դժուարին ճամբայ մ'է :

Ժուլիս միտքը դրաւ Գօրքասի գնալու հետեւալ օրը , գէթ
վանական հանդիսի մը ներկայ դոնուելու համար : Ճաշն ըրաւ ,
և որովհետեւ մինչև իրկուն դեռ քանի մը ժամ ունէր , հին դամ
բարան մը գնաց , Աէգրալայի հիւսիսային կողմը : Պանդոկապե-
տը ցոյց տուեր էր զայն իբրև հետաքրքրական վայր հնասէրնե-
րու համար :

Ժուլիս իր ծպտեալ հագուստը թողեր էր Մօնդէֆիասքօնէի
մէջ ունեցած անյաջողութենէն ՚ի վեր : Ուստի իր սնտուկին մէջ
դերեր էր վաճառականի զգեստը :

— Ինչ որ եմ թող այնպէս երեկմ , ըսաւ նա իւրովի , և այն
օրէն՝ ամէն տեղ իբրև դաղղիացի ճամբորդ ներկայացաւ , երկի-
ւրը շրջող և հետաքրքրական բաները քննող :

Քիչ ատենէն փորձով դիտեց որ աւելի սիրալիւր ընդունելու-
թիւն կ'դտնէ պանդոկներու մէջ , թէ պանդոկապետն իրեն հետ
աւելի երկար կ'խօսէր և աւելի տեղեկութիւններ կ'տար : Զինքը
Վսեմութիւն կ'անուանէին :

Ուստի բարակ չուխայէ թիկնոց մը , վրայէն վերարկու մը հա-
դած՝ Աէգրալայի աւանէն անցաւ և Ետրուսկեան գերեզմանա-
տան ընդարձակ շրջավայրը հասաւ : Շատ տեղեր հողը տակն ու
վրայ եղած էր , ինչպէս որ Իսաալիայ մէջ սովորութիւն է որ-
պէս զի գիտուններէ փնտուռած այն անօթները դանեն , որ Եւ-
րոպայի և մանաւանդ Նափոլիի , Հուովի և Ֆլորանսի գեղեցիկ
թանգարաններուն զարդը կ'կազմեն :

Ետրուսկեան շիրիմները խորունկ հողին տակն էին : Մարդ քա-
րէ սանդղէ և բաց օդին վար կ'իջնէր : Ախմափոր շէնքը կ'մանէր

դոնէ մ'որ պտրղաշէն էր : Երբեմն մոյթեր կամ սիւներ որ այլան-
գակ ձև մ'ունէին՝ ձեղունը կ'լունէին . բայց փոխանակ հօրիզո-
նական լինելու ձեղունն երկու կողմէն կ'ծուի և տեղ տեղ տա-
շուած և սրածայր գերաններ կ'ցուցնէ : Դիակները դադաղներու
մէջ դրուած էին որոյ ծածկոյթին ստորոտը ստէպ հանգուցե-
լոյն պատկերը կ'երեւէր , մեր միջնագարեան գերեզմաններուն պէս
եկեղեցեաց մէջ :

Ժուլիս շատ անգամ տեսեր էր Ետրուսկեան գերեզմաններու
այս կարգադրութիւնը , սակայն Վիգէլայի դամբարանը պտրտե-
լով շէնքի մը ճակատը դիտեց որ այլանդակ կերպով մը զար-
դարուած էր : Արագասահ և կիսարեկ սանդղէն վար իջաւ այս
շէնքին ճարտարապետութիւնը քննելու : Փոքրիկ տետրակ մ'ալ
հանեց և սկսաւ ճակատին ձևն ուրուագրել :

Հաղիւ թէ այս գործն սկսեր էր որ իր գլխուն վրայ ձայն մը
չսեց .

— Պարոն արեղայ . . . ներէ՛ , կարճ խօսիմ , ուրեմն այլ ևս
վաճառական չես :

Ժուլիս դուրսը դարձուց , աչերը վեր վերցուց , իր Տընին էր
խօսողը :

— Ես ալ օրինակիդ հետեցայ , շարունակեց Տընի , պարե-
զօսս մէկդի նետեցի :

Եւ արդարեւ՝ թշուառականը նորելուկ երիտասարդի մը պէս
հագուեր էր . իր ճակտին վրայ տարածեր էր մագերը զոր երբեմն
կեղծեօք ականջներուն ետևը կ'ձգէր , և ցուպ մը ձեռքը բռնած՝
կ'իջեցնէր այն այլախառն մարդիկն որ լաւ ընկերութիւնները
չեն յաճախեր իրաւ , սակայն դարձեալ փոքր ինչ դրականութեան
հմուտ և բարեկիրթ կ'երևին :

— Այդ հագուստի փոփոխութեանդ վրայ քեզ չեմ շնորհա-
ւորեր , ըսաւ անոր Ժուլիս . այդ հագուստդ շատ չվայլեր քեզի :

— Աւելի աղէկ , այսպէս հանդիստ եմ : Գու ալ նոյնն ըրած ես :

— Այդ իրաւ է : Բայց ըսէ ինձ , միթէ ուխտ մը կատարելու
համար է որ այսպէս իմ ետեւէս կ'դաս ուր որ երթամ :

— Ճշմարիտ վկայ , այո՛ , այդպէս է , սիրելիդ իմ , վրայ բե-

բաւ կողտաբար մեր մարդը : Ա՛ռդեմ տեսնել թէ մինչև ո՞ւր կըր-
նայ հասնիլ մարդկային յամառութիւնը : Պատուոյս վրայ կ'ըսեմ ,
զիս կ'զուարճացրնես : Քաջ կ'իմանաս որ եթէ տեղ մը քոյր մը
փնտուելու պէտք ունենայի , աշխարհիս ծայրը չպիտի դնայի , ինչ-
պէս 'ի Վէդրալա : Ի՛նչ դաղափար , 'ի Վէդրալա : Միայն կա-
տուններ կան 'ի Վէդրալա , և ուրիշ ոչ ինչ : Գրաւ կ'գնեմ որ
վաղուան օրդ Փօրքասի անցընելու պիտի երթաս : Ճշմարիտը , բա-
րեկամ , գլուխդ կ'կորսնցընես : Բերանս մազ բուսաւ ըսելէն .
գնա՛ , Հռոմ՛ գնա՛ : Այս է իմ հաղներդս : Ուստի , տէր իմ ,
կ'ողջունեմ քեզ և կ'քաշուիմ : Ստիպուեցայ քու իջած օթեանդ
իջնել , այս պարզ պատճառաւ որ աստ միայն մէկ օթեան կայ ,
թէ ոչ նոյն յարկին ներքև ինձ հանդիպելու ձանձրոյթը չպիտի
տայի քեզ :

Ի հարկէ վաղը նորէն պիտի տեսնուինք :

ԺԵ

ՀԱՆԿԻՍ ՏԻԲԱՊԱՀԱԿԱՆ Ի ՍԱՆԳԵԱՎԵՐԻԱ ՓՕՐՔԱՍԻԻ

Իտալիայի մէջ քիչ տիրամայրներ կան որ այնքան երեւելի լի-
նին որչափ Փօրքասիինը : Սև կամ թերևս սևաներկ փայտէ է ,
Լօրէգոյի կոյսին պէս՝ և անոր պէս սուրբ Ղուկասի դործը կ'հա-
մարուի , սուրբ Ղուկաս՝ որ երբէք քանդակագործ չէ եղած և
որ Մովսիսի կրօնն ունենալով՝ արձանագործութենէ կ'ստակար :
Բայց Պասլին վիճակներուն մէջ՝ ամէն բան մօտուստ չեն քններ :
Աղոր ներդործութիւն կ'ընէ երբ ըսուի թէ այս սուրբը Ղուկասի
ձեռօք նկարուած կամ քանդակուած է :

Փօրքասիի կոյս Մարիամը , Յիսուսի կոյս Մօրմէն աւելի եր-
ջանիկ լինելով՝ Գալիլէի մէջ անցուցած մահկանացու կենաց ժա-

մանակ , անհամար հրաշքներ կ'ընէ : Հետեապէս ուխտի նուէր-
ներ մատրան մէջ գիլուած են անհամար : Երբէք Եսկիւլաստեան
տաճար մ'այնքան նուէրներ չէ ընդունած , և երբէք Աստուծոյ
գանձն այնքան ճոխ չէր ամաններով , կանթեղներով , աշտանակ-
ներով և ախանակուռ զարդերով որչափ այն հզօր Տիրամօր գանձն
որ ամէն հիւանդութիւն կ'ըժշկէ :

Փօրքասիի Տիրամօր գանձուն մէջ նշանաւոր են մանաւանդ ի-
րեն զործածութեան համար հինգ հաս շրջագետսները , որոնք
իրարմէ փառաւոր են , և որ՝ իբրև կայսրուհոյ մը՝ շաբաթուան
ամէն մէկ օրին համար կ'ծառայեն : Տասն և ութերորդ բարեյի-
շատակ դարուն , հանդիսաւոր տօներու մէջ՝ և 'ի մասնաւորի
նոյեմբերի 21ի հանդիսին , որու պիտի ներկայ գանուինք՝ յետին
ծայր վայելչութեամբ հաղուած էր՝ ժամանակին նորաձեւութեան
համեմատ՝ դեղձան դուռը գեղեցիկ մաղերով , հոտաւետեալ և
այն աստեղի զաղղիական նորաձեւութեան ամէն նրբութիւններով :
Որովհետև այժմ՝ քրիստոնէի իբրև վեհապետ կ'տիրէ Խոտալիոյ մին-
չև յետին աւանը , պիտի գայ ժամանակ մ'որ Փօրքասիի՝ Նօզր-
Տամն ուրիշ վայելուչ հազուասով չպիտի երևի բայց եթէ քրի-
ստոնէի : Յառաջագիմութիւնը մինչև այդ աստիճանին սխտի հաս-
նի : Արդէն՝ ինչպէս Գրանսա՝ Խոտալիոյ մէջ աւելի զարդացում
կայ . 1855էն՝ Հարաւոյ մէկ քաղքին մէջ տեսանք՝ մատուռ մը
յանուն Մարիամու ամիսուան ուր Տիրամայրը վեհապանծ քրիստոնէի
մը կ'պարզէր :

Ըսենք 'ի պատիւ Պէնէտիկտեան բարի կուսանաց որ 1860ին
տիրայիշատակ տարի մը Ս. Պետրոսի յաջորդին աշխարհական
թագաւորութեան անձնուէր հողիներու , ինչպէս նաև Եկեղեցւոյ
ծայրագոյն փրկութեան համար , իրենց Տիրամայրը՝ թէև չափա-
զանց շքեղ հազուած՝ բարիղեան նորաձեւութեամբ չէր , որչափ
որ ժապաւէններով , տանթէլներով և աղամանդներով բեռնաւո-
րուած էր :

Ժուլիօ կրցաւ մօտէն նայիլ երբոր՝ մօտակայ տասն երկու ու-
ժեղ դիւղացիներու ուսին վրայ՝ վեհափառութեամբ կ'յառաջա-
նար , տեսակ մը շքեղօրէն զարդարուած դահի մը վրայ : Քաղքին

Շորատի աղջիկները՝ Ջերմակներ հաղած՝ ծաղկեայ պտակներ դրած՝
 Էւրաքանչիւրը մոմ՝ ի ձեռին՝ Տիրամայրը կ'ըջապատէին : Ապա
 Պէնէտիկանանք կ'գային , բայց միայն վանքին բակէն թափորն անց-
 նելու ժամանակ : Աղջիկները դասը մտան՝ որ եկեղեցիէն զատուած
 էր փայտէ ճարտարարուեստ վանդակով մը , և բարակ ու բուա-
 կան թափանցիկ վարադոյրով մը ծածկուած որպէս զի եկեղեցւոյ
 միջավայրէն մարդիկ կարենան կոյսերուն շարժումները տեսնել
 առանց իրենց դէմքն որոշակի դանազանելու :

Եկեղեցին՝ շքեղ շէնք մը , ծածկուած էր Պրօքաշինիի պատ-
 էրներով , որոց մէջ Ղէօնարտ տը Ալինչիի մէկ նկարը կայ և
 Սուրբ Ընտանիքն՝ որ Ռաֆայէլի կ'վերագրուի : Աւագ խորանին
 պատկերը Տեառնընդառաջ կ'ներկայացընէ : Պատկերհասնն որ Պօ-
 լնէղեան դպրոցէն է երկու տասրակները ներկայացուցեր է սպի-
 տակ լաթով ծածկուած կողովի մը մէջ : Աղջիկ մ'որ քահա-
 նայապետին հետն է և որ աւելի խաղի մը կ'մտածէ քան թէ այն
 տեսարանին որու մէկ մասը կ'կազմէ , սպիտակ լաթին մէկ ան-
 կիւնը կ'վերցընէ և տատրակներուն կ'ներկայացընէ մատը զոր կը
 դան կտցելու :

Գժբազդաբար եկեղեցւոյն քանդակուած մասերը՝ ըստ սովո-
 ըութեան մետաքսէ և փաւրիլուն զոյնէ ասուէղեններով ծածկուած
 էին : Շրջանակներուն ներքև դալարի ոստեր և ծաղկեայ պսակ-
 ներ կային . եկեղեցւոյն միջավայրը ծաղկիներով և հոտաւէտ խո-
 տերով սփռուած էր :

Եկեղեցւոյ ճակատը զոյնդոյն ասպակներով ծածկուած էր՝ ե-
 բեկոյին պայծառ լուսաւորութեան մը համար պատրաստուած :

Վանդակէն սկսեալ՝ միջավայրին ներքին կողմը մինչև կամա-
 րին առաջին խորշը տեղւոյն նշանաւոր և աղնուական անձերու
 յատկացած շրջապատ մը կ'յօրինէր : Գրան կից և երգեհոնին
 շտկութեամբ ահաղին լաստակերտ մը շինուած էր , որու վրայ
 կ'դնուէին հարիւր յիսուն երաժիշտ , ամենքն ալ արուեստին սի-
 րահար , բայց բոլորը մէկ նուագարանաց դաս մը կ'յօրինէին որ
 կարող էին ամենէն լաւ թատրոններու երաժշտական խմբին հետ
 մրցել : Վասն զի այս տեղն կրօնական երաժշտութիւն բնաւ չկայ :

Հանդիսաւոր ժամերը թիւնները պարզապէս նուագախմբեր էին :
 Առաւօտեան ժամերը թիւնը շատ երկայն քշեց : Ի բաց առեալ
 երգեհոնով նուագուած երաժշտութեան բազմաթիւ կտորներ , պէտք
 եղաւ քարոզ մ'ալ մտիկ ընել : Իտալական ձևով քարոզ մը ժու-
 լիօյի համար հետաքրքրութիւն մ'էր : Քարոզիչն իրեն նիւթ ըն-
 տրած էր Ս. Աուսին մեր սիրտը տալու հարկը , և քարոզն երկու
 մասի բաժնուած էր , ամենէն երկարը՝ վիճաբանութեան մասն եր-
 կու փաստ կ'ընդլայնէր . անպատեհութիւններ և առաւելութիւն-
 ներ : Հաղարար որ անձերու պատահած անպատեհութիւններ այս յոր-
 դարը զանց ընելնուն , անոր հաւատարիմ՝ դանտոզներուն անկից
 քաղած օղուաները : Երկրորդ մասը կ'պարունակէր իր զեղեցիկու-
 թեամբը երևելի եղող իշխանուհւոյ մը պատմութիւնը : Հողաթի
 մարմնով Ս. Աուսին աուեր էր ինքզինքը , բայց իր երկու եղբարց
 մահուամբը ժառանգորդ մնացեր էր իր հօրը ստացուածոց , որ
 իշխանուհւոյն ամուսնութեան համար ունեցած հակառակութիւնն
 ու մերժումը բանի տեղ չգնելով՝ մօտակայ իշխանի մը հետ զանի
 կարգելու խոստացաւ : Որչափ որ իշխանը զեղեցիկ էր , իշխանու-
 հին անդրայ մնաց : Վերջապէս՝ հարսնիքէն դիշեր մ'առաջ՝ լա-
 լով մատուոն եկաւ և պաղատեց Ս. Աոյան՝ որ իրեն զօրավիզ լի-
 նի ըրած ուխտը պահելու : Իսկոյն սոսկալի բորոտութեամբ ծած-
 կուեցաւ բոլոր մարմինն և աշխարհիս ամենէն զեղեցիկ իշխանու-
 հին պժղալի առարկայ մը դարձաւ :

Ատենաբանն իր ճառն աւարտեց սովորական սրտաշարժ վեր-
 ջարանով մը : Ամենքը ծուր դրին : Իտալիոյ մէջ կանոն է քա-
 րոզի ժամանակ լալ . լացին , սրուացին , կուրծք զարկին , բարձր
 ձայնով ըսին որ այնուհետեւ երբէք չպիտի մեղանչեն :

Ապա քարոզիչը վար կ'իջնէ : Ա'գադրին հեծկլտանքն ու ասլա-
 շաւի արտստքը : Ամեն ոք հետաքրքրական ակնարկներ կ'նետէ
 չորս զին , կ'խօսի , կ'ժպտի , և տեսարանը կ'սկսի երաժշտութեան
 հետ :

Այս եղաւ այն հրահանգիչ տեսարանն որու երեք երկայն ժա-
 մեր հանդիսատես եղաւ խեղճ ժուլիօն : Քիչ մը հրելով կարող
 եղեր էր երաժիշտներուն ամիլիթատրոնին աստիճաններուն վրայ

նստիլ : Իր ակնարկն անկից կրնար դիւրաւ Պէնէտիկտեան կուսա- նաց դասին կողմը տանիլ : Երեւակայութեան զօրութիւնն այնքան մեծ է որ քանի մ'անգամ ժուլիօ՝ ձայնաւոր կուսանաց թափան- ցիկ քօղին տակէն կարծեց կին մը տեսնել միւս կրօնուհեաց . հաղուստէն տարբեր կերպով հաղուած : Բայց շատ անորոշ էր այս : Արդեօք Ղուկի՞ն էր : Ինչ չէր տար այն նախանձուս քօղին մէկ ծայրը վերջընելու համար :

Այս հանգէսներուն իրիւունը՝ ժամերգութիւնն աւելի փայլուն է քան թէ առաօտուն , այն պատճառաւ որ բոլորովին երաժշտա- կան է : Այն տեղ մանաւանդ կ'տիրէ նուազախումբը , երաժշտու- թեան կտորներն աւելի երկար են , խորանին առջև եղած պա- տարադի պահանջումներէն երաժիշտները չեն նեղուիր :

Ժամերգութեան մէջ տեղ՝ երգեհոնը տեսակ մը ներածութիւն նուազելէն ետև՝ մենանուագ մը լուսեցաւ , Պէնէտիկտեան կու- սանաց ձայնաւոր դասէն կ'ելնէր ձայնը : Անկան մը ձայնն է . հիանալի տարածութիւն մ'ունէր , և թէպէտ քօղն անոր զեղզե- զանքը կ'մեղմէր՝ լեցուն և հնչական կերպով կ'հասնէր մինչև գաւթին ծայրը :

Ժուլիօ մտիկ կ'ընէ այս երգին խօսքերն որ իտալական էին , բայց դաղղիական որոշ շեշտով մը կ'արտասանուէին :

Նորէն մտիկ կ'ընէ շուարած . Ղուիզին ձայնն է . այլ ևս չլրի- պիր : Գող կ'ելնէ , նոյն ինքն է . . . այո , նոյն ինքն է . . . : Արդեօք իր քրոջը ձայնին պէս երկու ձայն կայ : Ո՛չ , ո՛չ , կա- րելի չէ : Եւ սակայն հայրենակցուհի մ'է : Գաղղիացուհի մը ֆօրքասիի Նօղր-Տամի մէջ՝ պապական վիճակաց այս խորշին մէջ : Անդ է նէ , անդ նուիրուած է , խեղճ զոհք :

Ժուլիօ դասւ իր քոյրը . պիտի ստանայ իր քոյրը :

Ժուլիօ այլ ևս ինքզինքին տէրը չէ . չմտածեր , չխորհեր : Այն միջոցին որ հաւանիչ մըմունջ մը կ'լսուի ժողովրդեան մէջ՝ ժու- լիօ իր տեղէն կ'ցատկէ՝ աղեղէն նետուած սլաքի մը պէս , եկե- ղեցւոյ միջավայրէն կ'սրանայ , աղնուական գասուն յատկացած շրջապատէն կ'անցնի , յանկարծ վանդակին դուռը կ'բանայ , և խորանին դիմացը հասնելով՝ զօրաւոր ձայնով մը կ'զօնէ իտալերէն .

— Իմ քոյրս , իմ քոյրս է : Իմ քոյրս է զոր խաբէութեամբ ձեռքէս կորզեցին Ֆրանսայի մէջ : Աստուծոյ և մարդկան առջև՝ կ'զամ իմ քոյրս առնու :

Եւ մօտենալով՝ հրացայտ աչօք , ճակտին վրայ մաղերը տնկուած , թմն երկաթէ դաւազանի պէս լարուած , Պէնէտիկտեան կուսա- նաց դասը մտնելու համար դռները կ'բռնէ , որ դողարիկ այլ զլուրաբեկ էին և կ'խորտակէ : Ժուլիօ քակուած ու կտորած կտոր- ները մէկիկ կ'նետէ , և բոլոր հանդիսականները կարող եղան տեսնել նորատի դաղղիացի օրիորդն որ ժուլիօյի առաջին աղա- զակը լսելուն լուեր , իր եղբայրը ձանչեր և անոր զիրին ընկեր էր :

Ժուլիօ անոր թմէն կ'բռնէ շուարած կուսանաց առջև , անոր հետ սրբավայրէն կ'անցնի , և քաղաքավարութեամբ կ'անդրէ որ եկեղեցիէն ելնելու համար իրեն ձամբայ բանան :

Այս թատերական պատահարին առջև՝ հանդիսականներէն ու մանք այլ յայլմէ կ'լինին , այլք ծափ կ'զարնեն :

— Իր քոյրն է , իր իրաւունքն է , լաւ ըրաւ :

— Պարտաւոր էր արդարութեան միջոցաւ զանի պահանջել :

— Արդարութեան միջոցաւ . ա՛հ , շատ աղէկ . քոյրն այն ա- տեն պառաւութենէ մտնելու ժամանակ կ'ունենար :

Ոմանք սթափելով կ'սրուան .

— Ահռելի բան է . . . բռնաբարութիւն մը . . . Տիրամօք դէմ՝ անարդանք մը . . . սրբավայրին մէջ :

Աւելի զօրեղ ձայն մը միտնեցուն վրայ կ'տիրէ .

— Անցուցէք այս մարդը . սրբապիղծ մ'է : Արօնական տուն մը բռնաբարեց :

Սակայն ամենուն աչքն եղբօր ու քրոջ վրայ կ'դառնան , որոնք դէպ 'ի դուռը կ'յառաջանային՝ ամենուն յարգանք աղղելով մին իր ազնուութեամբ , միւսն իր նշանաւոր զեղեցկութեամբն և իր ազնիւ վայելչութեամբը :

Այնուհետև եկեղեցիի մը չէր նմաներ այս վայրս . չափազանց մեծ է խառնակութիւնը : Նուազածուները կ'ցրուին , կուսանք մե- նաստան կ'մտնեն , պատարագիչ քահանայն կ'բաշուի յայսնելով

Թէ այս սրբապղծութիւնը կատարուելէն ետե՛ մատուռն արդե՛ր ման ներքե է : Տիրամօր վրայ քօղ մը կ'նետեն , մոմերը կ'մարեն : Եւ փոքր առ փոքր ամբօին որ այլայլութենէ սաստիկ յուզուած էր՝ մեծ դռնէն կ'սահի կ'երթայ , ուսկից ժուլիօ և Լուիզ անցեր էին , սպառնալիք կրելով մանաւանդ կանանց կողմէ , բայց պաշտպանութիւն տեսնելով երիտասարդաց կողմէ որ ժողովրդեան մեծ մասը կ'կազմէին :

Սակայն ձիաւոր մարդ մը շուտով Վէրալա կ'երթայ : Ժուլիօյի դէմ եկեղեցւոյ մէջ ձայն հանող մարդն էր : Կ'երթայ իմաց տալու դասաւորին Փօրքասիի եկեղեցւոյ մէջ եղած սրբապղծութիւնը : Ի հարկին յանցաւորը ձերբակալ ընելու կ'պահանջէ : Այս ձերբակալութեան զինքը պատասխանատու կ'ձանչէ , և անոր կ'յայտարարէ թէ բոլոր անցած դարձածն առաջնորդին պիտի հաղորդէ :

Իտալիոյ ինքնօրէն դատաւորաց ոստիկանութեան գործակալներն արագաշարժ չեն : Մինչդեռ խեղճ մարդը սոյն գործակալները փնտռելու ելեր էր , ժուլիօյի մասնիչը Քիդերպ կ'հասնէր և առաջնորդին սպանելով կ'վերագառնար :

Ժուլիօ եկեղեցիէն ելնելուն ինչ կ'ընէր : Իր առաջին մտմտութք , իր առաջին բնադրումն եղաւ պապական վիճակաց սահմանադրուելը հասնիլ : Բայց քիչէն քիչ քսան քիլօմէդը ձամբայ ունէր ընելու : Եկեղեցւոյ մէջ իրեն դէմ ելնող սպառնալից ձայնը ձանչեր էր : Իր վիճակին բոլոր վտանգը կ'հասկընար :

— Կորսուած եմ , ըսաւ իւրովի . փառուորները քիչ ատենէն պիտի հասնին . բայց ինչ ընել պէտք է : Պէտք էր Վիդերպը դառնալ , ձի մը գտնել կամ Լուիզին համար կառք մը : Անկարելի էր այս փափկասուն օրիորդին համար մինչև սահմանադրութեան քիլօմէդը քալել : Արդէն մեծ յոյնութիւն պիտի լինէր իրեն Վէրալա գնալը :

Ժամերը սուղ էին : Կրնային Վիդերպի մէջ ձերբակալ լինիլ : Եկեղեցւոյ մէջ արձակուած կատաղի աղաղակը ծայրայեղ միջոց մը կ'պահանջէր . ամէն բանէ առաջ պէտք էր Լուիզն ազատել :

Անխօհեմութիւն էր աւան մը վերադառնալ ուր այս դէպքն արդէն ծանօթ էր և թերևս անկից ձերբակալութեան հրամաններ տրուած էին : Վէրալայի ճամբուն վրայ հարիւր քայլ ընելէն ետե՛ ժուլիօ և Լուիզ՝ փոքրիկ բլրան մը շրջանն ըրին և նեղ ու մնաւոր ճամբայ մը բռնեցին՝ յուսալով որ այս ճամբով կարող պիտի լինին բնակարանի մը հասնիլ : Երեկոյեան ժամը չորսն էր : Այն եզանակին մէջ զիշերը շուտով պիտի հասնէր : Հեռուն Վէրալա դարձող կառուց ազմուկը կ'ըսուէր :

Երբոր ժուլիօ Լուիզին հետ մինակ մնաց՝ բլուրներու ծայրը գտնուող բնական ճամբու մը մէջ , ուր հողին ամենափոքր հողակոյտն ամէն աչքէ անտես կ'սրահէ քեզ , իր սիրական քոյրը սրտին վրայ սեղմելու անսպասուած ուրախութիւնն ունեցաւ : Այն ժամերն երբ մարդ սոսկալի դէպքերէ ետե իր սիրականը կ'գտնէ՝ դառն հեշտութիւն մ'ունին զոր մարդկային լեզուն չէ կարող բացատրել : Երեցատան անդորր կենաց հրճուանքէն ետք՝ թէ միոյն և թէ միւսին վիպական այլ և այլ դէպքերու մէջ նետուիլը , որոց վախճանը չէին կարող դուշակել , կապտուիլ , հալածուիլ , շուտբեալ կենդանեաց պէս որ հեռուէն փողբու ձայնն ու շունբու հաչելը կ'ըսեն , նեղուիլ , չզիտնալ թէ ինչ մութ քարայր կամ ինչ հիւրընկալ յարկ դիպուածով բռնուած ճամբուն ծայրը պիտի գտնուէր , ինչ փոփոխութիւն էր այս , ինչ դժնդակ ճակատադիր :

Բարեբաղդաբար՝ բնադրումով մեր հողին կ'դուշակէ թէ անակնկալ ժամու մը մէջ ինչ աղէտ կրնայ մեզի հասնիլ : Փորձառութեան չղջութենէ , երբ մարդ տակաւին չէ տառապած , ներքին ձայն մը մեզի կ'ըսէ թէ օրին մէկը պիտի տառապինք : Ի՞նչ պէս : Արնաց ո՞ր ժամանակը : Ո՞ր պիտի լինի արիննալի վէրք . չզիտենք . և ահա ասոր մէջն է բոլոր մարդկային կենաց մեծ գաղտնիքը : Այս առաջանալիք դէպ 'ի այն ահուելի անձանօթին և երկրիս վրայ դիտութիւն մը չկայ որ մեզի բէ թէ ո՞վ պիտի զոհուի , ո՞ր պիտի լինի զոհարանը , ո՞վ պիտի վերցընէ գանակն և այդ գանակն ո՞ր տեղ պիտի մղուի :

Լուիզ և ժուլիօ , այս երկու մարտիրոսները , նահատակուե-

ըլու համար սահմանուած բնաւորութիւններ ունէին , և հետեւապէս չէին զարմանար Նախախնամութեան կողմէ իրենց տրուած դերին վրայ : Փշեայ պսակը կրելու նախասահմանեալ փառաոր անձեր էին : Չէ թէ Աստուած մը կայ անդում որ կանխաւ կ'որոշէ զոհն որու տանջանքն և վշտալի հոգեվարքը տեսնելու կախործի , և այս հեթանոսութեան գաղափար մ'է , թերեւ աւելի ասպուշ . յուրթապաշտութեան գրութիւն մ'իր կոշտ յեղաշրջման մէջ , այլ մարդկային գործոց աղատ ընդհարման մէջ , կուրորէն այնպէս կ'պատահի որ ոմանք զօրեւ կ'գտնուին և միւսներն անոնք են որ կ'փշրուին : Զօրեղներն աւ հասարակ անդգամներն են . երկանին ներքեւ ցորեանը բարիներէն կ'բաղկանայ և անոյշներէն , այն մարդոցմէ որ աքք և մաքուր սիրտ ունին : Եւ ասոնք են այն սուրբերն որ երկին կ'ելնեն :

Երկրիս վրայ փրկութիւնը չկատարուիր , քանի մը կրօնական արարողութեանց կրկնութեամբ , ինչպէս որ վանական գաղափարներով սողորուած քանի մը միստիքականներ կ'երազեն — Հնդկկաստան ճգնաւորներ կան որ կրնան դաս տալ այս մասին Վարմեւեանց և Վարթուսեանց — այլ փրկութիւնը կ'ստացուի մարդկային կենաց ծանր գործոց ընդունելութեամբ , զոր Աստուած ամենուն վրայ դրած է , և այս գործերը չես կատարեր երբ այլանդակ ընտրութեամբ մը , մարդկային յարաբերութենէ կ'քաշուիս : Ճգնաւորը՝ ընկերական հիմնարկութիւնն որ երկնային է , կ'եղծէ շինովի ընկերութիւն մը կ'հաստատէ , և եթէ Աստուած ներսզամիտ է այն այլանդակ խորհրդին որով այդ խնթը կարծէ անոր ծառայել , անոնց մէջէն չենտրեր իր հրեշտակայեանները :

Գողգոթայի խաչեալը չէր ելներ վանական փեթակներէն ուր՝ մարդկութենէ դուրս՝ կ'բուսնէր Վիտրոնի բազմութիւ Եսենացիք . — վանական կենքը քրիստոնէութեան գործը չէ , անկից առաջ կար և դեռ իր սանունքն ունի Աւետարանին չմտած տեղերը — Բայց Քրիստոս գործօն կեանքէն կ'ելնէր , այն կեանքէն ուր հացը մարդ ճակատին քրտինքովը կ'վաստիի , այն կրպակէն ուր բանորը մարդոց սպասաւորն է : Երկոտասանք ժողովրդեան կորովի գործաւորներն էին ձկնորսութեան կոշտ աշխատութեան շնորհիւ :

Պողոս պարզ գործաւոր մ'էր նուարանի մէջ , և նոր ժամանակաց գառնալով՝ Քրիստոս աը Սալ , Աէնսան աը Բօլ , Շարլ Պարօմէ , Ֆէնէլօն , իրենց կենաց մէկ վայրկեանը , որ այնքան լի էր անձնուէր գործերով , վանական ամուլ հայեցողութեանց մէջ չէին անցուցած : Աշխարհս որչափ յառաջանար , այնքան նուազ Եսենացի , Վարմեւեան վանականներ պիտի գտնուին , և այնքան պէտք պիտի լինի թեւերու որ մարդկային մըջնոցին բարեկեցութեան համար կ'աշխատին : Քրիստոս առաջին անգամ ՅՅ թուականին ըրաւ յեղափոխութիւն և Քրիստոս երկրորդ անգամ ըրաւ 1789ին : Քրիստոնէութեան յայանիչ Աստուծոյ մը գործ , ժողովրդեան մը գործ որու պիտի ընկերակցին միւս ժողովրդաները , նոր ընկերութիւնը , ասպագային ընկերութիւնը հռչակելու համար :

Լուիզ իր եղբօրը պատմեց թէ ինչպէս * * * կոմսուհւոյն կողմէն բռնադատուեր էր Սէնդ-Ավանտէնէն հեռանալու :

— Քեզ ազատելու փափաքս , ըսաւ անոր , զիս անխոհեմ և զիւրահաւան ըրաւ , և առանց քու անձնուիրութեանդ ընդ միշտ բաժնուած պիտի մնայինք :

Լուիզին ըրած պատմութիւնը պիտի աւարտենք , մեր ընթերցողաց համար , յաւելով այն իրողութիւններն որոց անտեղեակ կ'գտնուի :

ԺԳ

ԺԷԶՎԻԳԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Լուիզ՝ Սէնդ-Ավանտէնը թողէն ետև՝ աւասիկ պատահածը : * * * կոմսուհին ամէն ինչ պատրաստեր էր իր խորհրդոց գործադրութեան համար : Տ . . . էն երկու մղոն հեռի Վլարիսեան վանք մը ձգեց Լուիզը :

— Այդ տեղ, ըսաւ անոր, պարտիս անցընել առանձնութեան ասիսդ, և պիտի անսնես միայն սրբակրօն կուսաններ որ մինչև անդամ անունդ չզիտեն: Միայն դիտեն որ աշխարհիկ օրիորդ մ'ես հաւատդ կորուսնելու վտանգին մէջ ընկած: Գարձեալ ազատ ես պարտեզներուն մէջ պտըտելու, մատուռն երթալու կամ սենեակդ մնալու որպէս զի օգտաւէտ խորհրդածութիւններ ընես:

Աւագ, Լուիզին խորհրդածութիւնները շատ վշտալի եղան: Կա ակտեր էր երկնչելու որ ծուղակն ընկած չլինի: Կա կ'երևա կայէր իր եղբորը վեշտը, զինքն երիցատունը չգտնելուն համար: Հէք աղջիկը շատ լացաւ, բայց իր կոչման վրայ Աստուծմէ խնդրածը լոյս չէր, այլ դառն արտասուօք խնդրեց իրմէ որ իբձդած սիրական ծուլիօն միթարէ:

Լուիզ իր նամակով ծուլիօյի որոշած պայմանաժամը լրացուցեր էր և յետս կոչումը դատարան չէր դադարած նա մանաւանդ S . . . ի Աքձէն խնայուցեր էր նշանաւոր յիշատակադիրը: Կոմսուհին իր առջևն ելած արդելքներէն աւելի ևս բորբոքելով իր խորհրդոց կատարման համար, ծուլիօյի երկու նամակ գրեց Լուիզին ձեռագիրը կեղծելով: Ծուլիօ էտ չկեցաւ դատէն, և վերահոչման օրն որոշուեցաւ: Սակայն Լուիզին աներևոյթ լինելուն վրայ մեծ շշուկներ ելեր էին բոլոր քաղքին մէջ: Չայն կար որ ծուլիօ այս մասին բողբադիր մը մատուցեր էր: Կոմսուհին ահաու գող ելաւ ըրածին վրայ: Եթէ կրօնական կոչումը Լուիզը չգրաւէր պէտք էր զանի ազատ թողուլ: Անտարակոյս բացարձակ լուութեան խոստում պիտի պահանջէին, բայց այս խոստումը պիտի կարենամր պահել: Միթէ ամէն բան իր եղբորը չ'պիտի ըսէր: Կոմսուհին կ'ըզջար դառնապէս որ գործն այս աստիճանին քշեց, նա կ'զուշակէր որ կեղծեալ նամակներ կարող էին զինքը վտանգի ենթարկել: Ուստի Հաւատաքննութեան մատուռը դնաց, Պօնիֆաս հօր խոստովարանը մտաւ և ամէն բան անոր ըսաւ: Խեղճ ժէզվիզն խնայն հասկըցաւ այս գործին ծանրութիւնը: Քսան տարիէ ՚ի վեր՝ առաջին անգամն էր որ այս մեծ տիկինը յանդիմանեց, և անոր անխոհեմ, դուռը, յանդուրն մակըրիքները չ'խնայեց, մինչև անգամ մրմնջեց նա որ կոմսուհին յիմար

էր: Սաստեց մանաւանդ զինքն որ հայր Պրիֆարի անունը գործածեր էր: Կոմսուհին հայր Պօնիֆասի ծանր կշտամբանաց առջև նուաստութեամբ գլուխը ծռեց. խօսք սուաւ իրեն ցոյց տրուած բոլոր միջոցներն ՚ի գործ դնել իր ըրած սխալմունքը դարմանելու համար, իրեն որչափ սուղի որ նստէր, եթէ մեծագումար դրամներ ալ զոհելու պէտք լինէր:

Վանք մանելով՝ հայր Պօնիֆաս դաւառապետին սենեակը գնաց, և անդ՝ կրակ դարձած՝ աչերը բոցավառ, սրտմտութենէ ձայնը դողահար, պատմեց անոր իր և կոմսուհոյն մէջ անցած դէպքը, առանց մոռնալու իր արկիւն անոնց հրամանին ներքև դնելու համար ըրած առաջարկութիւնը:

— Գրամը շատ բաներ կարգի կ'դնէ, ըսաւ դաւառապետը:

— Այսու ամենայնիւ, անկարող եղաւ այդ գրամը Թոմասուհին հրէին ներկայացումն արդիւլելու, և Աստուած միայն դիտէ թէ որչափ նեղացուց մեզ այն: Եւ ահա այժմ՝ կոմսուհին ծուլիօյի քոյրն երկրորդ Ատրիէն տը ֆարտօսիլ մը կ'ընէ: Ա՛հ, կանայք, կանայք, որչափ իմաստուն են անոնք որ յանձն չեն առնուր անոնց խոստովանահայրը լինելու: Հայր ֆանտալն է որ կոմսուհին աւրեց: Ես քաջ գուշակեր էի այս վէս բնաւորութեան անպատեհութիւնները: Մատչելի հետ եղած բանակցութեան ՚ի վեր՝ այդ արարածը կարծէ թէ կարող է աշխարհս կառավարել: Ես զանի խոնարհութեան մէջ պահել էի, հայր ֆանտալ գովեստաներով անոր գլուխը դարձուց: Աւասիկ արդիւնքը գեղեցիկ է:

— Համբերութիւն, համբերութիւն, հայր Պօնիֆաս, ամէն բան կարգի պիտի մաննէ: Չայն տուր խորհրդոյ հարց, ըսէ անոնց որ անմիջապէս գան այս տեղ գումարուին. յետոյ դնա՛ Իգնասիոս բարի հօր սենեակը: Մեր զօրապետը զանի Գրանտա կը զրկէ մեր հիմնարկութիւններն այցելելու այնպիսի խնդրոց որոշման համար զորս գրով կարգադրել անխոհեմութիւն է: Հանաճարեղ մարդ մ'է, կրնայ մեզի լաւ խորհուրդ մը տալ: Երբ պէտք լինի դիւանագիտութիւն ընել, իսալացի ժէզվիզ մը երեք դաղ զինացի ժէզվիզ կ'արժէ: Միթէ դու ալ այս կարծիքը չունիս՝ հայր Պօնիֆաս:

— Անտարակոյս , անտարակոյս , ըսաւ փոքր ինչ արագութեամբ
վերապատուելի հայրը , զարմանալով որ դաւառապետ հայրն այս-
պիսի ժամանակ մը կատակ ընելու սիրտ ունէր :

Խորհրդական հարք եկան , և քանի մը վայրկեան ետքը , հայր
Պօնիֆատ՝ Խղնատիոս հօր հետ ներս մտաւ :

Չոր , անկիւնաւոր մարդ մ'էր . իր շիւ աչերը սև ու թաւ յօ-
նից մէջ թաղուած էին , իր սրամէտ քիթը , իր նուրբ շրթուքը ,
որ՝ շատ անդամ բարակ և երդիծական ժպիտով մը կ'բացուէր ,
շանապայլի նման սուր ակուններ կ'ցուցնէր , իր ցցուած ծնօտը ,
և ամէն ինչ կ'յայտնէր որ նրբամիտ , նենդամէտ և զօրեղ մարդ
մ'էր :

Գաւառապետը խնդրեց հայր Պօնիֆատէն որ խնդիրն յայտա-
դրէ . հայր Պօնիֆատ պայծառ կերպով իրողութիւնը բացատրեց :

— Այդ շատ ծանրակշիւ բան է , ըսին խորհրդական հարք :

— Արդարև , շատ ծանրակշիւ , ըսաւ հայր Պրիֆար որ իր
անունը պիտի արատէր :

— Ի՞նչ կարծիք ունի մեր վերապատուելի հայր Խղնատիոսը ,
ըսաւ գաւառապետը :

— Խնդիրը ծանր է 'ի Ֆրանսա : Չեր քաղաքային օրէնքն որ
անհամաձայն է կանոնական օրինաց հետ , ամենէն պարզ խնդիր-
ներու առջև արդելքներ կ'հանէ : Եւ շատ անդամ կ'հարցնենմ
իւրովի թէ ինչո՞ւ համար մեր ընկերութիւնն այս խեղճ երկրին
համար մասնաւոր սէր մ'ունի :

— Վասն զի , ըսաւ հայր գաւառապետը , չկայ երկիր մ'որ
այնքան առատ նիւթական միջոցներ հայթայթէ որչափ Ֆրանսա :
Իրաւ է որ միտքերը կրաւորական հնազանդութեան լծին ներքև
դժուարաւ կ'ծախն : Գաղղիացին բանավարող է , պէտք է ամէն
բանին պատճառն անոր ըսել , բայց վեհանձն է : Իր հաւատը
լեռներ չտեղափոխեր , բայց բաւական վառվառն է իր քսակին
կապերը քակելու համար : Տե՛ս Սուրբ Պետրոսի քէնարը , ոչ ու-
րեք այնքան յաջող զնաց որչափ Ֆրանսա : Ասա՛ի՛ սիրենք այդ
Ֆրանսան , ոսկեղէն հաւկիթ ածող հաւն է , ոչ միայն ժէզվի-
զաց համար , այլ բոլոր կրօնական ուխտերու համար :

— Ա՛հաւանիմ , ըսաւ հայր Խղնատիոս , որ այդ կողմէն ձեր
գաղղիացիք արժանիք մ'ունին : Բայց գարձեալ ճշմարիտ է որ
այս տեղ դժուարին է մեզ մեր արտօնութիւնները վայելել : Ա՛հ ,
թէ որ հռոմէական վեճակները գտնուէինք , ծուլիօ արեղան և
եր քոյրը՝ իբրև հերետիկոսներ՝ 'ի զիպահալ կ'նետուէին և բոլո-
րովին կ'մոռցուէին :

— Պէտք է Աստուծոյ աղօթել : ըսաւ հայր մը միտախօսա-
նութեամբ տոյգորուած , շատ աղօթել :

— Աղօթել Աստուծոյ , շատ լաւ , ըսաւ հայր Խղնատիոս ,
հայցէ ուրեմն Աստուծոյ որ ծուլիօ արեղան յանկարծական մա-
հաւաք մեռցնէ :

— Ա՛հ , սիրելի հայր , ինչ կ'ըսես :

— Մեր երևելի աստուածաբաններէն մէկուն ըսածը , մեծն
Մէնդօզան . կըսէ նա , աղաչել զԱստուծոյ որ մեռցնէ շա-
տաւ այն մարդիկն որ մեղ հաւածելու կ'որոտորոտին , ելէ ուրիշ ճար
մը չկայ աննոցի աղաթելու : Արդ՝ ձեր խենթ կոմսուհոյն բոլոր
գեղեցիկ որոյալմները չկրցան արդիւլել ձեր հաւածիչն իր յի-
շատակալիբը հրատարակելու և իր դասն առաջ վարելու : Յան-
կարծական մահ մը շատ պատեհ ժամանակի պիտի հասնէր , քա-
նի որ իր քրոջ յետս կոչումն ունինք : Աւրեմն , սիրելի հայր ,
դու որ աղօթելու խօսք կ'ընես , այդ աղաչանքն ըրէ Աստուծոյ :
Բայց դուք կ'զմայլիք մեր աստուածաբանից վրայ և իրենց վար-
դապետութիւններն 'ի գործ գնելու կ'վարանիք : Կարծես թէ կը
մոռնաք որ մեր մէջէն ամէն զիբը շինող չկրնար զայն հրատարա-
կել առանց խստիւ քննուելու և Զօրապետին հաւանութիւնը
ստանալու . և որովհետև Զօրապետը քահանայապետներէն ամէն
իշխանութիւն ընդունած է , կ'հետեի որ չկրնար վրիպիլ , և թէ
մեր Զօրապետին կողմէ հաւանութիւն գտած ամէն վարդապետու-
թիւն Եկեղեցոյ կողմէ կ'ընդունուի :

— * * * կոմսուհին ալ այդ կ'ըսէր այն փոքրիկ Ղուիզին :

— Բոլորովին անօգուտ էր , ըսաւ չոր ձայնով մը հայր Խղ-
նատիոս : Աշխարհականները , մանաւանդ կանայք այս բաները
պէտք չէր որ զիանային : Բայց 'ի Ֆրանսա կանայք կարգալու և

Քան իմանալու անյադ վիպիար ունին : Եթէ վէպեր կարգալու
արդիւրոն , աստուածաբանական դրեանք կ'ընթերուն , այնչափ
յիմար են : Յիտալիա ոչ ինչ չեն կարգար և այս շատ աւելի
լաւ է : Իրենց սիրահարներուն վրայ կ'իտրհին կամ աղօթադիրք
կ'կարդան . այս սահմանն դուրս չեն ելներ : Ուստի դիւրին է
զանոնք կառավարել : Բայց մեր աստուածաբանից դառնալով , դի-
տէք որ եթէ մեր իտալացի կորէններն այս տեղ ունենայինք , ար-
դէն Պ. Ժուլիօյի ձեռքէն պրծեր էինք :

— Ի՞նչ կ'ըսես , դոչեց հայր Պօնիֆաս , կատակ կ'ընես , վե-
րապատուելի հայր իմ :

— Բնաւ կատակ չեմ ըներ , և մեր Սանչէ հայրն ալ կատակ
չէր ըներ երբոր կ'ըսէր թէ՛ Մարդ էր պարիսը կամ սպայառածն ա-
զարելու հոմար , կարող է մեծամարդիլ կամ մեղա անգամ էր իշխաֆե-
գադոնի սպաննել : Այս աշխարհականաց համար է , պիտի ըսես
ինձ , վասն զի մենամարտութեան չենք ելներ մենք : Բայց աւա-
սիկ մեղն վերաբերեալ կտորը : Մեր Գանիրոս և Կարամուէլ
հարք չէին վախնար ըսելու թէ՛ Ներքէն է եկեղեցականաց և կրօնա-
տորաց սպաննել ոչ միայն իրենց կեանքը պաշտպանելու այլ իրենց և մե-
բանաթեան ինչքը : Հայր Լամի կ'ներէ կրօնաւորի մը Սպաննելու
այն անց որ մեքանաթեան պարիսը կապել կ'ուզէ , եթէ այս մեղցը
միայն կայ արգելելու , ինչպէս երբ էր բանասրիսթիաններն սլուելու պար-
բաստ կ'ըզոնտի եթէ անմեղապէս չսպաննուի :

Արդ Պ. Ժուլիօ արեղան մեր միաբանութեան դէմ զրամ յի-
շատակապրով մեր պատիւը կ'ուզէ կապտել , նոյնպէս մեր ինչքը
մեղն դէմ վարած դատով . ուրեմն իրաւունք ունի միաբանութիւնն
ինքզինքը պաշտպանելու : Ասոնք կ'ըսեմ որ մեր միաբանութեան
աստուածաբանական ընտիր վարդապետութիւնները պաշտպանեմ :
Գիտեմ որ Ֆրանսայի մէջ դործադրութիւնը կարելի չէ : Նոյնը
կրնամ ըսել արքայասպանութեան վարդապետութեան մասին :
Միայն Մարիանա չպնդեր թէ՛ Մարդ էրառանդ ասնի բռնապար մը
սպաննելու : Նա չէ , այլ մերիններէն մին է որ ըսաւ թէ Հէնրի
Գն սպաննելով՝ Ժոսէ Բլէման իրօք ազնիւ , սքանչելի , յիշատա-
կելի քործ մ'ըրաւ , որով հասկեցոաց երկրի էնեանաց որ իրենց սքե-

քիշա յեանարիսթիաններն անպարիժ լին ծառ երբէ : Բայց այս ա-
ւածներն աւ այժմ կանոն չեն կրնար լինիլ ՚ի Ֆրանսա : Տեղը
չէ այժմ ըսել (Non est hic locus) : Գարձեալ կարիճներ չկան
երկիր մ'ուր մերինին պէս ոստիկանութիւն կ'զանուի , և ելէկարա-
կան հեռադրութեամբ , երկաթուղիներով և արդի հանձարին բո-
լոր այս զգուելի դիտերով ամէն մէկ քայլին արգելք մը կայ :

— Կ'երեւի ինձ , ըսաւ մեղմաձայն Պօնիֆաս հայրը միստիքա-
կան թէզիվիդին , որ վերապատուելի հայր Խոնատիոս փոքր ինչ
իրեն տրուած յարգանքը չարաչար կ'ործածէ և բնաւ խնդիրը
չլուսաբաներ : Խնդիրը Մարիանայի և Սանչէի վրայ չէ որչափ
չէ Արիստոտելի և իր քաղաքադիտութեան վրայ :

— Գիտուն վարդապետ մը , սուրբ մարդ մ'է , պատասխանեց
միստիքականը :

Հայր Պօնիֆաս իր ուսերը թեթեւ մը թոթուեց :

— Ղաւ ուրեմն , վերապատուելի հայր , ըսաւ իտալացի դա-
ւառապետը , ի՞նչ խորհուրդ պիտի տար ինձ :

— Հանդարտ մնալ , ըսել կոմսուհույն որ աղջիկը թողու : Գուք
այս բանիս բնաւ մասնակից եղած չէք : Եթէ Իտալիա գտնուէինք ,
սուրբ հասարակութիւնը պատրաստ պիտի լինէր և ձեր կոմսու-
հին ալ կրնար անոր ատենին առջևն ելնել : Բայ ՚ի Ֆրանսա . . .
հող մ'է զոր չեմ ճանչեր :

— Չենք կարող , ըսաւ հայր Պօնիֆաս , * * * կոմսուհին Ե-
րեսի վրայ թողուլ : Եթէ Ժուլիօ արեղային քոյրն էր եղբորը
զրկուի , ամէն բան անոր պիտի պատմէ , բոլոր անցած դարձածը :
Երբէք Ժուլիօ չպիտի հաւտայ որ մասնակից չենք եղած դործին ,
նա մանաւանդ հայր Պրիֆար յետին ծայր վտանգի պիտի ենթար-
կուի . Ժուլիօ արեղան երկրորդ յիշատակադիր մը պիտի ընէ —
դրելու մարմաջն ունի — մեղ շատ սև զոյներով պիտի նկարա-
գրէ : Կարելի է որ կոմսուհին ալ դատի կոչէ զրամ կեղծ նա-
մակաց համար : Այս բաները սոսկալի գայթակղութիւն մը պիտի
պատճառեն և մեր միաբանութեան արատ պիտի բերեն : Գժուա-
քաւ ՚ի դործ պիտի դնեմ մեր Սանչէ , Լամի , Ժան Կան և այլն
հարց աստուածաբանական որոշումները : Բայց ծայրագոյն պարա-

դայից մէջ պէտք է ծայրագոյն միջոցներ ՚ի գործ գնել: Ամսու-
 Տին հարիւր հազար Փրանք եկամուտ ունի. իր եկամտից պէթ
 երրորդ մասը մինչև ցայսօր մեր միաբանութեան գործոց համար
 տրուեցաւ, եթէ իր ընկած վտանդէն զինք ազատենք՝ մեր ուխ-
 տին համար ունեցած չափէ դուրս եռանդին համար, այն աստն
 մեզնէ բան մը չպիտի զլանայ: Թո՛ղ օրիորդ Քլավիէր աներեղթ
 լինի: Արդեօք հայր Իգնատիոս չէ՞ կարող զանի Խտալիոյ մէջ
 վանք մը դնել և լաւ պահպանել տալ: Քրանսայի մէջ կարելի
 չէ: Արեւել չէ իսկ զանի կրօնուհի ընել, քանի որ հայր Պրի-
 ֆար կարծէ թէ այս է անոր կոչումը:

— Այո՛, ըսաւ հայր Պրիֆար, եթէ իր թշուառ եղբայրը չլի-
 նէր, հիմակ Նախիթան-Սրբի՛ն մենաստանը պիտի գտնուէր: Հրեշ-
 տակ մ'էր այն աղջիկը, և անշուշտ Աստուած կ'ուզէր զանի ի-
 րեն կոչել:

— Լաւ ուրեմն, թող այդպէս լինի, ըսաւ հայր Իգնատիոս,
 այդ կոչումն իրեն տալու կ'աշխատինք:

— Ա՛հաւանիմ այդ յատակադին, ըսաւ դատաւարտը: Ար-
 դարե՛ւ մեր ուխտին բարեկամները պէտք չէ որ երեսի վրայ թու-
 դուք: Եթէ օրիորդ Քլավիէր անհետի, կոմսուհին պիտի ա-
 զատի: Անոր վրայ բնաւ կասկած չպիտի ունենան: Սեր թշնամի-
 ները չարամտութեամբ պիտի ըսեն անշուշտ որ այս գործին մէջ
 մատ ունինք, բայց եթէ մեզ ամբաստանող նշան մը չկայ, իս-
 կոյն գործը պիտի մոռցուի: Գարձեալ հող պիտի տանինք ամէն
 տեղ ձայն հանելու թէ այն նորատի օրիորդը, հերետութեան
 մէջ ընկած եղբոր մը մօտ իր հողին ՚ի կորուստ մասնելու վախ-
 նալով, անոր ազդեցութենէ կամաւ հեռացեր է: Մինչև անգամ
 կրնանք թելագրել թէ իր եղբոր մօտ աւելի մեծ վտանգներու
 պիտի հանդիպէր: Անկրօն մարդոց մէջ այս խօսքը պիտի տարա-
 ծենք, որ շատ ուրախ պիտի լինին քահանայի մը դէմ այսպիսի
 զրպարտութիւններ կրկնելու: Եւ այս մասին ծանրապէս պիտի
 մեղանչեն, վասն զի կրօնի և քահանայից դէմ ատելութեամբ
 վառուած պիտի խօսին. մինչդեռ մենք այս ցաւալի ձայները տա-
 ըած ելով՝ միայն թեթեւ յանդանք մը պիտի գործենք:

— Այո՛, ըսաւ հայր Իգնատիոս, վասն զի ատելութենէ չպի-
 տի ընէք, այլ ձեր պատիւը պահպանելու համար: Անայիմ որ
 չէք մոռցած թէ մեր հարք Լուվէնի 1643ի դրուածոց մէջ սնդե-
 ցին որ . . . մեզք չէ զրպարտելն և սուտ յանցանք ամբաստա-
 նել որպէս զի մեզի դէմ խօսողներուն վարկը կտորինք և կործա-
 նենք: Եւ մեր Ասն, Գանիէլ Պասպէլ, Բէնալոսա, Բելլիսիօ-
 լի և այն այս կարծիքը հաւանական կ'դատեն, և այս բաւական
 է, մեր հաւանականութեան վարդապետութեան համեմատ՝ ըն-
 դունել տալու խղճի ապահովութեամբ:

— Այո՛, այս ամենը զիտենք, պէտք է նշանաւոր կին մ'ա-
 զատել, որ մեզի համար վտանգ աչք առաւ: Պէտք է ազատել
 մեր միաբանութեան պատիւը, որ մեծապէս վտանգի պիտի ենթար-
 կէր եթէ կոմսուհոյն անխօհեմութիւններն երևան ելնէին:

— Օրինակի համար, ըսաւ հայր Պրիֆար, կոմսուհին՝ այն
 փոքրիկ ազջկան ուղեորութեան, յատակա բնակութեան ծախքը
 պիտի վճարէ:

— Այդ խիստ իրաւացի պահանջում մ'է, ըսաւ դատաւարտ-
 տը, և քեզ կ'յորդորեմ, հայր Պոնիֆաս, անոր հասկըցընելու
 որ անոր վրայ կ'յուսանք մեր Անարատ Յղութեան մատուցը զար-
 դարելու համար: Շքեղ աղամանդներ ունի կոմսուհին և ամէն
 տեսակ անոյին զօհարներ: Արծեմ թէ անոր գործած ծանր սխալ-
 մունքը դարմանելու համար իր աշխարհային վայելմանց զոհողու-
 թիւնն արդար և հաճելի գործ մը պիտի լինի սուրբ Աուսին:

— Հանդարտ եղևք, հայր իմ, կոմսուհին ինչպէս նաև իր հա-
 րստութիւնն այսուհետև մերն են:

— Լաւ ուրեմն, ըսաւ հայր Իգնատիոս, քոյր մ'ունիմ որ
 Փօրքասիի Նօդր-Տամի վանուց վերատեսչուհին է: Թող ձեր յի-
 մար կոմսուհին աղջիկն անդ տանի կամ մէկուն ձեռօք զրկէ: Ես
 քրոջս պիտի իմաց տամ, և պէտք եղած պահպանութիւնը պիտի
 ընէ: Ի՛նչ քաջայոյս լինինք որ շնորհն այս օրիորդին սրտին պի-
 տի խօսի:

Այսպէս ահա * * * կոմսուհին ազատելու համար՝ վերապա-
 տուելի հարք Լուիզին ճակատադիրը վճուեցին:

Կոմսուհին տեսեր էր Լուիզն և բան մը զանց չէր ըրած իր վստահութիւնը շահելու համար : Տիկին Քլավիերի մի շատ նա-
մաններն անոր ցոյց , վասն զի բոլոր ըսած խօսքերէն Լուիզն
մօրը հետ ունեցած մտերմութիւնը միայն ճշմարիտ էր : Տիկին
Քլավիերի մահուանէ վեց ամիս առաջ դրուած նամակի մը մէջ ,
այս սղարբերութիւնը կար զոր կոմսուհին գիտել տուաւ օրիորդին :

« . . . Իմ աղջիկս եօթ տարուան օրիորդի մ'ամէն բարեպաշ-
տութիւնն ունի : Հրեշտակ մ'է . նա կ'հաւաստէ թէ՛ ըստ որում
իւր եղբայրը ժուլիօ քահանայ կ'ուզէ լինիլ , ինքն ալ կ'օնուհի
կ'ուզէ լինիլ : Երանի թէ այս՝ աղջկան հոգտատուն կոչման մը
սկիզբը լինէր : Խաղաղութեամբ գերեզման պիտի մտնեմ : Աւա՛ղ ,
եռանդադին կ'հայցեմ Աստուծմէ , բայց միթէ արժանի եղա՞յ իմ
աղաչանքս կատարուելուն » :

Այս նամակին ընթերցումը Լուիզն վստահութիւնը պիտի ա-
ւելցընէր կոմսուհոյն վրայ , այնպէս որ իր կոչման վրայ ներ-
գործութիւն մ'ունենայ .

Կոմսուհին՝ հայր Պօնիֆատի հրամանն ընդունելէն ետե՛ւ իր
կարգադրութիւններն ըրաւ : Ուղեորիլ կ'սիրէր , նոյն իսկ ուխտի
զնալ : Գրէվ դացած էր Քրիստոսի սուրբ պատմութիւնը պաշտե-
լու , զոր հոռմայեցի զինուորներ վիճակի դրին չարչարանայ օրը
— այս պատմութիւնն 'ի Ֆրանսա՝ Արժանդէօյլի մէջ ալ կ'գտնուի
և ուրիշ երեք չորս հատ քաղաքներու մէջ — այն պատմութիւնն
որ վիճակի դրուեցաւ և ոչ ուրիշ մը , քաջ գիտցիր :

Եւ եթէ այս բանս զարմանքդ կ'պատճառէ , զիտցիր որ սուրբ
պատմութիւնն արտօնութիւն ունի շատ տեղեր գտնուելու Յօլհան-
նէս Մկրտչի գլխուն հետ , նոյնպէս սուրբ Աննայի գլխուն և սուրբ
Թլիատին հետ զոր տասն եօթերորդ դարու եպիսկոպոս մը Շա-
լոնի գետը նետել տուաւ իբրև աւելորդապաշտական և բաւա-
կան դայթակղեցուցիչ մասունք մը , և սակայն դարձեալ զայն
գեռ կ'մեծարեն 'ի Շարբու և ուրիշ չգիտեմ՝ Խտալիոյ ո՞ր քաղ-
քին մէջ :

Արդ՝ կոմսուհին ստե՛պ փափաք յայտներ էր Իտալիա գնալու
չէ թէ սուրբ Թլիատը մեծարելու համար այլ Կաղարէթի մէջ

Սուրբ Կուսին ընտկած տունը — որ հրեշտակայ ձեռօք Լօրէա
փոխադրուեցաւ :

Ութ օր կար որ Լուիզ Սէնդ-Վանտէնէն մեկներ էր : Կոմ-
սուհին զնայ անոր յայտնելու թէ ժուլիօ իր գատէն ետ կեցեր
էր և յիշատակադիրը չէր հրատարակեր :

— Այսպէս ուրեմն ազատած է , ըսաւ կոմսուհին , և զանի
պիտի տեսնես երբոր հայր Պրիֆարի երկրորդ պայմանը կատա-
րես , այսինքն վանք մը քաշուիս ամիս մ'առանձնանաս : Շատ
ատենէ 'ի վեր Սանդա-Գազա ուխտի երթալու զիտաւորութիւնն
ունիմ և ես ինքս Լօրէտի Իւրսիւլեանց վանատունը քիչ մ'ատեն
ասպաշխարութեան համար քաշուելու : Ա'փափաքիմ քեզ իմ հետս
տանելու , եթէ հայր Պրիֆար հաւանի : Այսպէս , սիրելի զա-
ւակս , եղբորդ կ'դրես : Պէտք չէ աւելի ևս մտտտանջութեան
մէջ թողուլ զանի : Կարող ես անոր բոլոր անցած դացածը պատ-
մել և ինչպէս քիչ մ'անոր ազատութեան համար աշխատեցանք :
Պիտի իմանայ որ իմ հսկողութեանս ներքև ես և բոլորովին պի-
տի հանդարտի :

Լուիզ վարանեցաւ : Բայց կոմսուհոյն ցոյց տուած սէրը , իր
մօրը նամակները , Ալէքսանդրի մօտալուստ ամուսնութիւնն որով
սիրտը դեռ ևս կ'արիւնէր , յորդորեցին զինքն իր առաջին դաս-
տիարակութեան միատիքական գաղափարներուն դառնալու : Կա-
րելի է նաև Խտալիան տեսնելու փափաքը , որու վրայ այնքան
հրաշալի բաներ կ'պատմեն , աւելի զրգեցին զինքը կոմսուհոյն
հետեւելու : Քանի որ ամիս մը վանքի մէջ ասպաշխարելու համար
խօսք տուած էր , Լօրէտի Իւրսիւլեանց վանքն երթալ նախադա-
սելի էր , և կոմսուհին կ'ըսէր թէ ուղեորութիւնն երեք շաբաթ
միայն պիտի տևէր : Լուիզ , բանագրանաց և արդելման շանթե-
րէն իր եղբայրն ազատելուն վրայ սաստիկ ուրախանալով՝ վստա-
հութեան արամադիր էր : Նա ընդունեց , ժուլիօյի երկար գիր
մը դրեց զոր կոմսուհին գիւրաւ իր ուղղութենէ դարձուց , և նոյն
իրկունն իսկ ճամբայ ելան : Ուղեորութիւնն արագ եղաւ : Կոմ-
սուհին ուրախութեամբ տեսաւ Փօրտաիկի՝ Նօթր-Տաի գունդուն
Լուիզի վրայ գոցուիլը : Անկից Լօրէա զնայ և Սանդա-Գազայի
շրջանն ըրաւ բարեպաշտութեամբ ծնկադր վրայ :

Իսկ Ժուլիօ գլխուն փորձանք պիտի բերէր թէ հոռմէական
վիճակները գնար իր քոյրը փնտռելու : Հայր Իգնատիոս անոր
հսկողութեան հոգն իր վրայ կ'առնուր :

Մայրապետ կ'արդարացընէ միջոցները :

Ժուլիօ սաստիկ յուզուեցաւ երբ լսեց Լուիզին պատմածները ,
իր սոսկալի յուսահատութիւնն ինչզինքը Գորբուսիէ Նոբր-Տափ մէջ
բանտարկեալ տեսնելով , մայրապետ լինելու համար իրեն գէմ
եղած հալածանքը , վերջապէս ինչ անպատում ուրախութիւն
զգացեր էր երբ իր եղբայրն իբրև աղատութեան հրեշտակ տե-
սեր էր :

Ըստ կարգի Ժուլիօ պատմեց Լուիզին թէ ինչ վիշտ կրեր էր
'ի Սէնդ-Վվանտէն իր մեկնելէն ետև , թէ ինչ միջոցներ 'ի գործ
գրեր էր զինքը գտնելու , գատին գուշակեալ վախճանը , իր անձ-
նական ընդունայն այցելութիւններն իտալական վանուց մէջ , մին-
չև այն բարեբաստիկ օրն որ զինքն իր քրոջմէ զատող վանդակը
խորտակեց :

Այս խօսակցութեան ժամանակ՝ Ժուլիօ այնքան պաշարուած
չէր իր սիրական Լուիզը թեև ունենալու ուրախութենէ որ չմտա-
ծէր թէ ինչ փափուկ կացութեան մէջ կ'գտնուէին երկուքնին ալ :

Բարեբաղդօրէն Ժուլիօ իր քովն ունէր թղթակալն որու մէջ
թղթագրամ ունէր և Ֆրանսայէն բերած ոսկին , և որովհետև
այս տեսակ փախուստներու միջոցին՝ ստէպ պատահարներ տեղի
կ'ունենան՝ խոհեմութիւն համարեց որ Լուիզ այս ոսկիին մէկ
մասն իր քովը պահէ :

Աէգրալայէն 'ի Ֆօքրասի տանող ճամբէն երկու հազարամէրը
հեռացեր էին , երբ չափազանց փոքր այլ կոկիկ անակի մ'առջև
եղան : Տնակին սպիտակ պատերուն բոլորտիքն ամէն բան մտքուր
էր : Գրան երկու կողմէն ծաղկանց երկու ածուներ զայն կ'զար-
գարէին :

Այս ծաղիկները , ասոնց անոյշ հոտը Ժուլիօյի համար բարե-
զուշակ նշաններ էին :

Եղևնի փայտէ զատուած երկու սենեակներ էին բոլոր բնակա-
րանը : Գուռը կիսրայ էր . քառսուն ութ՝ յիսուն տարու ուժեղ

ճարք մը , նուազ տարօք կին մ'որ հոռմէական աղոր տիպար
մը կ'ցուցընէր , երկու տղաք՝ որոնց ամենէն փոքրը տասն՝ տասն
երկու տարու էր , այս հիւղին բնիկներն էին : Ժուլիօ զանոնք
տան գործերով զբաղած գտաւ :

Ձիթապտուղներ քաղելու սկսեր էին և ձորին մէջ գտնուած
քանի մը դեղեցիկ ծառեր՝ խրճիթէն քիչ մը հեռի , տան ախ-
րոջ բոլոր հարստութիւնը պիտի կաղմէին :

Ժուլիօ իր քրոջ հետ գրան առջևը ներկայացաւ և բարև տուին :
Տան տէրը գիմուորեց զանոնք և ըսաւ որ ներս մաննի :

Ժուլիօ հարցուց այս մարդուն թէ իրեն երկու ձի կրնայ գտնել
և Թոսքանայի սահմանադրութիւնը հասնելու համար իրեն ուղեցոյց
լինիլ :

Մարդը Ժուլիօյի առողջանութենէ հասկըցաւ որ գործը զաղ-
ղկացիի մը հետ է , և այս դէպքին մէջ սիրոյ պատմութիւն մը ,
առեւանդ մը պիտի լինի , և հետեւապէս շահելի լաւ գումար մը :

— Յօծարակամ , պարոն , ըսաւ անոր դէշ գաղղիարէն լեզուով ,
ուղեցոյցն ու լաւ ուղեցոյցն ես պիտի լինիմ , բայց ձի մը միայն
ունիմ : Աէտք է սպասել որ երթամ Աէգրալայէն մէկ հատ բե-
րեմ :

— Բայց երկար սպասելու ատեն չունինք :

— Պատիւ բրէք ինձ նստելու : Նախ՝ ոչ որ Իաքօմօյի տունը
կ'մտնէ առանց հիւրընկալութիւն ըն՝ ունելու . Իաքօմօ հարուստ
չէ , բայց ժլատ ալ չէ և միշտ քանի մը շիշ զինի ունի իր հիւ-
րերուն մեծարելու համար : Նայինք՝ զաւակներս , գունաս էք ,
յողնած էք , անօթի պիտի լինիք : Աէտք է քիչ մը բան ուտել
և դժ առնուլ . նոյն միջոցին գործի վրայ ալ կ'իստինք :

Արդարև՝ Ժուլիօ ու Լուիզ անօթի էին , բայց փոյթ չէին ը-
ներ : Իաքօմօին կ'ինն անոնց խոշոր ապուխտ մը , ձիթապտուղ և
պանիր մեծարեց :

— Արովհետև կ'շտապիք , ըսաւ Իաքօմօ , պէտք է որ շուտով
ընենք : Բայց ամէն բանէ առաջ՝ ձեր պատմութիւնն ինձ պատ-
մեցէք : Վնայիք որ ձեզի գաղղիարէն կ'իստիմ : Քիչ մը խօսիլ
սորվեցայ այդ լեզուն , գուշակեցէք , ո՞ր : Ֆրանսա : Ամենին .

1849ին ՚ի Հոռմ, երբ գաղղիացւոց դէմ կ'պատերազմէի, և 1859ին երբոր անոնց հետ կ'պատերազմէի սորվեցայ : Արիստաշտ տիի զինուորներէն եմ, Պապին, իբրև թագաւորի մեծ թշնամիք մը : Սիրուն տիկին, այս խօսքէս մի զարհուրի, չարամիտ չեմ : Գէև քահանաները չեմ սիրեր՝ Հոռմի յեղափոխութեան ատեն անոնցմէ շատերուն կեանքն աղատեցի : Եւ երբ կ'ըսեմ թէ քահանաները չեմ սիրեր, ըսածս զիսեմ : Պէտք են քահանաներ որ մեզի բարոյական քարողեն : Մենք շուներ չենք, վերջապէս Աստուծոյ կ'հատանք : Եկեղեցւոյ մէջ մեծաւոր լինիլը բաւական չեսպելով՝ կ'ուզեն նաև քաղաքականութեան մէջ ալ լինիլ : Ո՛հ, ո՛չ, Տէր վկայ, ո՛չ : Իրենց ժամանակն անցաւ, մեր սանձը կը կրծենք, մենք հոռմայեցիք, բայց այդ բանը չպիտի տևէ :

Իաքօս քաղաքական երկայն ճառ մը պիտի խօսեր՝ ատեն ատեն զինի անկե լով, բայց ժուլիօ՝ որ տրտում ու մտահոգ էր, իր լռութեամբը հասկըցօց որ այդ խնդիրը՝ թէև իրեն համար կարևոր, պէտք էր մէկի թողուլ :

— Գուք ինձ ձեր պատմութիւնը չպատմեցիք, ըսաւ նա : Նայինք, խօսեցէք : Այս չքնաղ օրիորդը կ'յափշտակէք, այնպէս չէ՞ :

— Իմ քոյրս է, ըսաւ ժուլիօ :
 — Ո՛հ, բացատրութիւնը լաւ է : Մենք զիանք այդ բանը : Նայինք, ըսէք ինձ ճշմարիտը :

ժուլիօ համառօտ բացատրեց Գործարարի Նոր-Տոմ դէպքը :

— Արճի, պատանի, եթ աւազակաց գնդի մը պարապլուխը լինէիր, եթէ Բօրդօ-Անդիօյէն կամ Գաստէլ Գօնտօլֆօյէն ՚ի դարձին՝ սրբազան Պապը կողոպտէիր, զարձեալ եթէ խղճիկ վերայ ութ տաս մարդասպանութիւններ ունենայիր, քեզ այնչափ չպիտի յարգէի, բայց նուազ պիտի ցաւէի վրայ, քան որ կը ցաւիմ այժմ մայրապետաց ապաստանարանը բռնութեամբ մտնելուդ : Ա՛հ, գաղղիացիք, կրակոտ են, մեր բարքը չեն զիտեր : Խաղաղ դանակի հետ՝ որու հետ որ կ'ուզես, պապին և մամին քթին տակ աղջիկներ գողցիր, եթէ շարժին, ցոյց տուր անոնց թաղաւորաց իրաւունքը : մեր մէջ այսպիսի քաջագործութիւններ

ընէլէ ետև՝ մարդ պրծելու հնարը կ'գտնէ : Ոստիկանութիւնն այնքան խիստ չէ սպանողներուն դէմ : Բայց, Տիրամայրը, բայց կուսարանը : Գու չպիտես տակաւին թէ ինչ ծանր բաներ ըրիր : Բաջ գիտցիր ուրեմն որ Աէրալայի բոլոր փատուրները քեզ փնտուելու ելած են : Սոսկալի մարդ մ'է սորք հասարակական Բեան Կորնո գործակալը, բոլոր երկրին սարսափ կ'աղղէ : Անտաբալոյս ամէն կողմը թմբուկ զարնել տուած է : Արեւի է ժամէ մը իմ տանս առջև պիտի երևին՝ և աղքատիկ տունս տակն ու վրայ պիտի ջննեն : Բայց զարձեալ եթէ յաջողին մեզ բռնելու, մեծ գործ մ'ըրած պիտի լինին : կ'ախորժիմ անոնց խաղեր խաղալ :

Գժուարին էր համոզել Իաքօսն որ Աուիլ ժուլիօյի քոյրն է : Կ'կարծէր թէ այս խնթ զաղղիացին Գօրքասիի կուսարանէն զանի յափշտակած է : ՚ի զուր ժուլիօ ջանաց հակառակը հաստացրնելու, այդ դէպքը գործին արգելք մը չէր լիներ : քաջը արամադիր չէր որ և է դժուարութեան առջև ընկրկելու : Ուստի ժուլիօ թողաց որ ուզած կարծիքն ունենայ :

Երբոր թեթև ճաշը լմնցաւ, Իաքօսն երկու ուղևորաց ըսաւ .

— Չիրար կ'սիրէք, զաւակներս, աղէկ կ'ընէք : Աստուած իմ, եթէ փոքր ինչ պարկեշտ մարդ մ'եմ, այդ բանը պարտաւոր եմ սիրոյ, երկու սիրոյ : Ա'սիրէի իմ պառաւ մայրս զոր՝ տանս տարի կայ՝ կորուսի, Աստուած հոյին լուսաւորէ : Ա'սիրէի այն զոր ահա այս տեղ կ'տեսնէք . . . : Երբ տեսայ որ ամէն բան լմնցած է, թէ գուք Հասարակապետութեան չար գաղղիացիք մեր նորածին Հասարակապետութիւնը սպաննեցիք, իմ խրճիթս վերադարձայ :

Իմ վրայ յանցանք մը չկրցան գտնել : Ամէն խուզարկութենէ խոյս տուեր էի : Չիս հանդարտ թողին : Երջանիկ ապրեցայ, յետոյ Արիստաշտի ներքև պատերազմելու վերադարձայ : Այս անգամ, գուք գաղղիացիք, մեզի դէմ չէիք այլ մեզի հետ : Միայն քիչ մը շուտ կանկ առիք : Իտալիա աղատ չէ Ալպեան լեռներէն մինչև Ադրիականը : Բայց ամէն բան լրացած չէ, և եթէ երբէք Արիստաշտի պէտք ունենայ Իաքօսն, պատրաստ է նա : Ոչ կ'իս և ոչ որիքս կրնան զիս բռնել : Ա'թոխմ կ'երթամ, վերջէն դառնալու համար :

Այսպէս խօսելով հանդերձ՝ Իաքօմօ ուղևորութեան կ'ստորաօտուէր :

— Ի՛հ, քանի որ ստիպողական է դործը , ձեզի համար ձի մը փնտուելու չպիտի երթամ : Պէտք է ինձի հետ քալել : Երբ սիրուն աղջիկներ կ'յափշտակենք պէտք է որ մարդ լինիլ դիտնանք : Եմ ձիս լաւ և հուժկու կենդանի մ'է որ ինձի պէս սահմանադիտուն բոլոր ճամբաները զիտէ . կարող ես անոր վտասհիլ , դեղանի աղջիկ , անսր վրայ պիտի թառիս : Հարկ չկայ քաջ ձիաւարժ լինիլ . իմ հաստ թամբս կակուղ է , առջևի կողմը կռթնէ որ բարձր է : Եթէ վտանգ մը տեսնես , սանձը թող ձգէ , ոտքով կենդանիին կուշտը սեղմէ և բանէ մը մի վախնար . քեզ սատանային ճանկերէն անգամ կարող պիտի լինի ազատել : Օ՛ն առաջ մնաս բարեաւ , կին , մնաք բարեաւ , տղաքս . վաղը կէս օրին մօտ պիտի տեսնէք զիս : Հիմակ մեկնինք . կեցցէ՛ ազատութիւն :

Այս մարդն երկու հրացանակ ունէր : Ժուլիօյի ըսաւ .

— Միթէ զինուած ես :

— Զինուած , ո՛հ , այո՛ :

Եւ ժուլիօ ցոյց տուաւ անոր դրպանի ըէվօլվը մը :

— Կեցցէս , պատանի , կարող ենք ճակատամարտ մղել :

Եւ երբ դուրը հասան , Իաքօմօ շարունակեց .

Սահմանադիտիսը հասնելու համար շատ ճամբաներ կան : Բնականապէս ամենէն շիտակ և դիւրին ճամբուն վրայ ձեզ պիտի փնտուեն , Վալանդանօէն Բէդիկլիանօյին վրայ : Ամենէն վայրենի , ամենէն դժուարին շաւիղն է : Անտարակոյս չպիտի մտածեն այդ կիրճերուն մէջ ձեզ փնտուելու , ուր մաքսանենդները թաղարոր են : Իսկ մաքսանենդներուն դալով . . . :

Քիչ մնաց պիտի ըսէր . Ես ալ մաքսանենդ եմ , բայց կայ առաւ և բաւական համարեց յարելու :

— Կ'ձանչեն Իաքօմօն :

ՄԱՍՆ ՎԵՅԵՐՈՐԴ

ՀԱՌԱՏԱԿՆԵՆՈՒԹԵԱՆ ԶՈՂ ՄԸ Ի ՀՈՌՄ

Ա.

ՍԱՀՄԱՆԱԳՂՈՒԽ

Վօլքարսէղայի ճամբան մինչև Վալանդանօ բաւական լաւ է : Մեր ուղևորներն աղէկ կ'քալէին . ժուլիօ լեռնականի ոտք ունէր :

— Եթէ ուրիշ կերպ դաստիարակութիւն առած լինէիր քաջ մաքսանենդ մը կ'լինէիր , կ'ըսէր Իաքօմօ , որ այսպիսի բաղդախնդիր կեանք մ'ամէն բանէ նախադաս կ'համարէր :

— Իաքօմօ , ըսաւ ժուլիօ իր ուղեցոյցին ցած ձայնով մը , եթէ մեր վրայ յարձակող գտնուի , ամէն ճիգը թափէ քոյրս ազատելու , ես միշտ կրնամ ինքզինքս ազատել : Եթէ մի անգամ Վօլքարսէղա հասնինք՝ թող ինձ սպասէ : Իմ նեցուկս եղիր : Քու վրագ վտաս հեմ , Իաքօմօ :

Երբոր Թոսքանէլլայի մօտ հասան , մաքսանենդը ձախ կողմը զարնելով արսուղի ճամբայ մը բռնեց , որպէս զի չանցնի այն քաղքէն ուր լճիբու փառուորներ ուղարկած էին : Երկու հազարամէգր հեռուէն միայն սահմանադիտիսը տանող ճամբան մտան , որ երթալով կ'գժուարանար :

Քիչ մ'ատեն Քալվէլոյի զառիթափ վայրերը դեղերեցան և Երզն Ետրուրեան հին քաղքի մ'ամայի շրջապատը հասնելու վրայ էին, որ այն կողմերը Քաադրօ անուամբ ճանչցուած է, որմէ անդին սահմանազուխը պիտի անցնէին, երբ յանկարծ՝ աւերակներու մէջ՝ լեռնամէջի մը խորէն՝ թանձր պուրակէ մը դուրս ելան չորս զիմակաւոր մարդոց խումբ մը: Մաքսաննոյր տեսաւ զանոնք և հասկըցաւ որ ամենէն վատ տեսակ ելուզակներէն են, որ քանի մ'ամսէ՝ ի վեր Քօրնէդօէն մինչև Արիւերպ բոլոր երկիրը կ'աւերէին, և ոստիկանութիւնը չէր կարող պապական զօրականաց ձեռքը անոնց հետքը գտնելու: Քաջը տեսաւ որ մեծ վտանգ կար:

— Կորսուեցանք, ըսաւ նա ժուլիօյի, եթէ վհատինք: Իրարու աջակից գտնուինք և յաւաջ անցնինք: Մեր եակը կեցիր, օրիորդ:

Աւազակները ճակատ կազմեցին և իրենց ատրճանակներով սպասեցին: Երկու կողմէ հրացանները պարպուեցան: Աւազակներէն մին ընկաւ մեռաւ: Իաքօմօ, որ ժուլիօյի երեքիւր տեսաւ, զանի բռնեց:

— Աւ իմ ընկերացիս, վերաւորուեցայ . . . պաշտպանէ քոյրս . . . :

Իաքօմօ կրակը շարունակեց ահարկու դէնքով, երեք աւազակներն այս անակնկալ զիմադրութիւնը տեսնելով՝ փախուստ տուին: Աւաջին հրացանի պայթումը լսելով՝ Լուիզը տանող ձին զարհուրելով՝ Աօլքարսէզայի կողմը բռնելով արշաւակի մեկներ էր:

— Իաքօմօ, աղատէ քոյրս:

Այս եղաւ ժուլիօյի վերջին խօսքը:

Գնդակ մ'եկեր անոր ձախ թևը զարկեր էր: Նոյն պահուն լուսնի շառաիղ մը՝ ամպէ մ'եղնելով՝ այս տեսարանս լուսաւորեց: Մեռելատիպ գեղնութիւն մ'իբ երեսը կ'ծածկէր: Իաքօմօ վէրքը փնտռեց, արիւնը յորդահոս կ'վազէր, ժուլիօյի շապիկը պատուեց և դարման ու կապեր պատրաստեց: Լեռնամէջն հոսող առուակէ մը գնաց թաղեայ զլխարկով քիչ մը ջուր բերաւ: Քա-

նի մը կաթիլ ժուլիօյի երեսին թափեց և չկըցաւ անոր մարմնոքն անցընել: Աւերքը խնամօք լուաց, չորցուց և զայն լաւ մը կապեց:

Ինքն ալ երկու տեղէ զարնուեր էր, բայց այս թեթև վէրքը հաղել կ'զգար: Մին ճակատին վրայ էր, զոր դնդակ մը սկրդեր էր, միւսը ձախ սրունքին վրայ, զոր միայն քիչ մը ցուէն կ'ըզգար: Իաքօմօ այս թեթև վրքին համար փոյթ չէր ընէր: Այս լեռներու վրայ շատ անգամ այսպիսի կռիւներ ըրած էր:

Սակայն իր կացութիւնը ծանր էր: Բնակութիւն չկար մօտ տեղուանքը: Ինչ ընել պէտք էր Քասպրօյի ընդարձակ առանձնութեան մէջ:

Լուսնալու մօտ էր: Պէտք էր սպասել, հսկել գաղղլացի երիտասարդին վրայ, որ կորուսած արիւնէն սաստիկ տկարացած լինելով՝ հաղել ուրեմն կ'չնչէր: Կարելի է իրեն ծանօթ ուղևոր մը կամ մաքսանենդ մ'անկից կ'անցնէր:

Աւելի հեռուն սոսկալի կերպով կ'ստնդայ աւազակն որ կարելի էր զարնուած էր:

Հաղի կէս ժամ կար որ Իաքօմօ վերատորը դարմաներ և իր քովը նստած՝ կ'ջանար ձեռքը, քունքը, կուրքը շփելով՝ տաքութիւնը պահել և անոր կենդանութիւն տալ, երբ յանկարծ ձիաւոր մարդոց ձայնը լսելի եղաւ իրենց արդէն բռնած ճամբուն ուղղութեամբը:

Իաքօմօ մտածեց թէ ասոնք կրնան աւազակներ լինիլ՝ որ խմբովին կ'գան: Հողաբլրի մը վրայ ելաւ և թանձր ու կարծ իռ մը մէջ սքըլեցաւ բոլորովին անտես մնալով, իբրև անթափանցելի դաւարուս վերարկուի մը ներքև: Ոչ ոք կարող պիտի լինէր երևակայել որ անոր տակը մարդ մը պահուած է, այնքան ցած էր ծառատունկը:

Բայց Իաքօմօ անկից ամէն բան լսել ու տեսնել կարող էր: Այն ժամն էր որու վրայ բնութեան անսման նկարիչ մ'ըսաւ, դիշեր չէր, բայց գեւ ցերեկ ալ չէր: Արշալուսոյ առաջին շողերը լուսոյ գունատ նշոյլներուն կ'ստանուէին: Ուստի անորոշ դոյն մ'առաջ կ'զար զոր պատկերհան մը բնաւ չկըցած է նկարել:

Չիաւորներն՝ որ աղմկալի կ'յառաջանային՝ քիչ ատենէն կուռին վայրը հասան :

— Փառուորներ են , ըսաւ Իաքօս , շատոր են : Այս խեղճ պատանին աղատելու համար չեմ կարող բան մ'ընել . դոնէ երթամ իր սիրուհին գտնելու փորձ փորձեմ . անտարակոյս ձին շիտակ ճամբով տարած է զինքը :

— Պարոն , դիմակ մը , ըսաւ ձիաւոր մ'որ ատրճանակրի համազգեստ ունէր :

— Իբաւ է , սրտասխանեց մարդ մ'որ զնդին զլսաւորը կ'երեւէր , թէն համազգեստ չունէր բնա :

— Պարոն , աւասիկ ուրիշ դիմակ մ'ալ , ըսաւ ուրիշ ատրճանակիր մը :

— Ա'երեւի թէ այս տեղ կուռած են , ըսաւ պարազուխը , Բիէտրօ Ֆրաբայի մէկ քաջագործութիւնը պիտի լինի այս : Սակայն պէտք է որ Նորին Ասեմութիւն պապական փոխանորդն այս խումբը ջնջելու հող տանի , որ կ'կողոպտէ և կ'սպաննէ :

— Պարոն , նոյն ինք Բիէգրօ Ֆրաբան է , զանի կ'ճանչեմ :

— Գէշ լուր , վերջէն առիթ մը կ'ունենայինք զանի բունելու : Ա'երեւի թէ այս անմիտն արիասիրտ ուղեորի մը հանդիպելով սպաննուած է , ուղեոր մ'որ չէ համբերեր . . . նայինք միւս զիտակը :

Նոյն պահուն պարազուխը թուլիօյի մօտեցաւ : Ա ելի վառվառն լոյս մը հորիզոնը կ'լուսաւորէր . վերաորին դէմքը՝ արեւելքի կողմը դարձած էր և այս լոյսն անոր վրայ կ'զարնէր :

— Մեր փնտուածն ալ այս մարդն է : Նոյն իսկ մեր դաղընացին է : Բայց ո՞ր է իր քոյրը :

Եւ հրաման տուաւ որ երկու փառուորներ Աօլքարսէզայի ճամբան խուզարկեն :

Ինք , միւսներուն հետ , ձիէն վար իջաւ , թուլիօյի մօտեցաւ , երակը զննեց , և տեսաւ որ վէրքը դարմաներ են :

— Այս աւազակներն ինչ յիշատար են : Տեսէք , իր վէրքը դարմաներ են : Բայց այս խեղճ Բիէգրօ Ֆրաբան : Նայինք արդեօք մեռած է :

— Բոլորովն մեռած է , պարոն , առանց խոստովանանք լինելու մեռած է : Աստուած հողոյն ողորմի . կարիճ մ'էր նա :

Այս հետաքրքրական դամբանականին ատեն՝ պարազուխը՝ իր տակի զգեստէն օղի սրուակ մը հանելով՝ թուլիօյի մօտեցաւ , այս ըմպելիէն քանի մը կաթիլ բերնին մէջ կաթեց , անով քունքը շփեց և շնչել տուաւ :

Այս ըմպելիին օգուտը քիչ ատենէն երևան ելաւ . թուլիօյի վէրքը ճարտարութեամբ դարմանուած էր : Ինքզինքին եկաւ երազէն ելնող մարդու մը պէս :

— Քոյր իմ . . . Իաքօս . . . ո՞ր եմ . . . ո՞վ էք դուք :

— Պարոն թուլիօ , մենք քու բարեկամներդ ենք , և քու վերադ շատ կ'ցաւինք : Մեզ զրկողները միայն հողոյդ փրկութիւնը կ'ուզեն : Աւելի լաւ է ասոնց հետ գործ ունենալ քան թէ Բիէտրօ Ֆրաբայի մարդոց հետ : Ի՞նչ վիճակի մէջ ձգեր են քեզ , Աստուած իմ : Նայինք , փորձ փորձէ ոտք երնելու : Ա՛հ , աղէկ է : Պարոն աբեղայ , դու նորատի ես , միշտ յոյս կայ , ասկէ զատ վտանգաւոր չէ թևի վէրքը : Նայինք , բերէք խիստ հանդարտ ձի մը : Հիմակ փորձէ վրան հեծնելու :

— Քոյրս . . . հասպա քոյրս :

— Երկու մարդիկ գացին զանի փնտուելու : Անտարակոյս հիմակ պիտի բերեն զանի : Բանէ մը մի երկնչիւր : Ամէն ինամք պիտի տարուի անոր համար . . . իսկ դուք օգնեցէք պարոն աբեղային , քովն մի հեռանաք , կարելի է տկարանայ : Երթանք 'ի Ալիգէրայ , բայց ծանր ծանր :

Ապա՝ դէպ 'ի թուլիօ դառնալով վարդապետական դէմքով մը , նոյն մարդը յարեց .

— Բոլոր կենացդ մէջ շատ տխուր յիշատակ մը պիտի ունենաս , պարոն աբեղայ : Սուրբ վայր մը բռնաբարեցիր , Տիրամօր սրբավայրը սղծեցիր : Ո՛րչափ մոռցար քու նօրիական պաշտօնդ : Այս բաներն Իտալիոյ մէջ խստիւ կ'դատեն և սրբապղծութիւնը կ'պատժեն : Գու Ֆրանսա չես այս տեղ :

Թուլիօ այս անմիտ կշտամբանաց անորոշ ձայները կ'լսէր : Բաւական կ'ապրէր զգալու համար որ ձիու վրայ է , որ մաքսանենդին հետ չէր , որ իր սիրական Լուկան իր մօտը չէր Իաքօսի հանդարտ հեծանելիին վրայ : Այսչափ միայն զիտէր : Բուռն ցաւ

մը մերթ ընդ մերթ աղաղակ մը հանել կ'տար անոր : Բնութեան մէկ բարիքն է որ հողոյ գործունէութիւնը կարծես թէ կ'զարբի՝ երբ ծանր վնաս մը կ'հասնի մարդու մարմնոյն : Բարեբաղդաբար այն ատեն կ'մոռնայ մարդ իր յոռի կացութեան բոլոր ծանրութիւնը : Պէտք է որ մարմինը սպիանայ : Նորարթութեան հետ պիտի դայ զդալու կարող ազդու մտածութիւնը :

Ժուլիօ Վիդէրպ հասաւ , և այն տեղ իրեն պէտք եղած խնամքը տուին : Բժիշկը յայտնեց որ վէրքը վտանգալի չէ և թէ՛ քիչ ատենէն , կալանաւորը կրնար Հ.Ո.Մ՝ գնալու համար ճամբայ ելնել :

Բ

ՎԻԴԷՐՊԻ ԳԵՐԲԵՆԱՏԵԱՆ

Այն օրն որ պապական ոստիկանութիւնը ժուլիօն կ'ձերբակալէր՝ Հռոմէն եկած խիստ հրամաններուն համեմատ՝ ուրիշ խիստ կարեւոր ձերբակալութիւն մ'ըրեր էր : Վիդէրպ՝ Իտալիոյ ուրիշ մի շատ քաղաքաց պէս՝ իր դերբնատեսն (extatique) ունէր . . . : Այս անձը՝ Լօրա Տօնի անուամբ՝ դուեհիկ կին մը չէր . իր միտախրականութիւնը չէր նմաներ բնաւ նոյն տեսակ կանանց միտախրականութեան որ տիրող կրօնական կարծեաց կ'աջակցին և կըրին ու հռոմէական քաղաքականութեան մէջ կ'գտնեն՝ իրենց առաքելութեան արտաքին նուիրադործումը : Գրեթէ միշտ կրօնական միաբանութիւն մ'այսպիսի կանայքը կ'խրացընէ , կ'զովէ և կ'զործածէ որպէս զի ըստ կարգի ինքն ալ անոնց կողմէ դովուրի : Քիչ ատեն կայ որ ժէզվիզներն այս տեսակ կին մը ձեռք ձգեցին , որ վերապատուելի հարց վրայ բարձրաձայն դովեստներ կ'թափէր և անոնց կ'զրկէր իրեն խորհուրդ հարցընողները :

Լօրա Տօնի՝ որ տեսիլներ և յայտնութիւններ ունէր , և ըն-

տաներար իր պահապան հրեշտակին հետ կ'խօսակցէր՝ բնաւորութիւն մ'ունէր որ շուտով լծի ներքև չէր ընկներ : Իր մարդաբէութիւններն որ շատ այլանդակ էին , այնքան մեծ հռչակ հանեցին որ մինչև Բարիզ հասան , ուր կրօնական այլ արտակեգրոն ընկերութեան մը մէջ կրցեր էին բաւական հաւատացողներ գտնել :

Աւասիկ ասոնք էին այս դերբնատիսին հրապարակաւ քարոզած վարդապետութիւններն՝ ի Վիդէրպ՝ բազմաթիւ այցելուններու առջև որ քնաշըջական ճգնաժամերը տեսնելու կ'զային :

Մարիամու իշխանութիւնը պիտի սկսէր : Ի զուր չէր որ Պիոս Թ ասոնց մեղաց յղացելու հրատարակեր էր զանի : Գերբնատիսին համեմատ՝ այս ճշմարիտ էր , և այս վարդապետութեան հրատարակութիւնն էր որ քրիստոնէութիւնը պիտի փրկէր : Բայց այլանդակ բան , և ահա այս էր պատճառն որ պապական շանթեր իրեն դէմ արձակուեցան . Լօրա Տօնի կ'սնդէր որ պապերու աշխարհական իշխանութեան անկմամբն էր որ Եկեղեցին իր նախնի պայծառութեան պիտի դառնար : Նա ճարտասանական , մինչև իսկ վսեմ մեկնութիւններ կ'տար գործունէին (magnificat) վրայ . կործանուած պետութեանց (deposuit potentes) իրեն համար պապերուն արքայական զօրութեան կործանման նշանն էր : Պիոս Թ վերջին թաղաւորը պիտի լինէր և առաջին հեղ քահանայապետն որ խաչելոյն վշտալի պսակն իր գլուխը պիտի գնէր : Այս էր սոյն բառին իմաստը . Exaltavit humiles խնարհ+ պիտի բարձրանան :

Այս ամենը միտախրականութեան և քաղաքականութեան այլանդակ խառնուրդ մը կ'յօրինէր : Ամէն միջոց ՚ի գործ գրին Լօրա Տօնի վրայ ներդրածութիւն մ'ունենալու : Մեծ վարձք խոստացան անոր եթէ աշխարհային իշխանութեան հարկը պաշտպանելու յանձնառու լինէր՝ պապութեան հողեր անկախութեան համար : Ամէն առաջարկութիւն մերժեց , Անդոնէլլիի գործակալները ճամբեց , որ յատկապէս Վիդէրպ եկեր էին զանի շահելու , և դրեթէ դռնէն դուրս վճանեց այն պապական նուիրակն որ իրեն ստէպայցի կ'զար , և իր զոռոզութիւնը կ'զդուէր անոր վրայ յաղթութիւն տանելու յուսով :

Իր հռոմէական հպարտութեամբը զննուած , նա յայտարարեց

Թէ Ս. Հոգւոյն անհաւատարիմ չպիտի գտնուի և իր խիղճը չպիտի վաճառէ . և այն օրէն սկսաւ աւելի համարձակ մարդարեանալ Պապին աշխարհային իշխանութեան անկումը : Իր ազդեցութիւնը սկսեւ էր վտանգաւոր դառնալ : Խտալացի ազատականներն իր դուշակութիւններէն օգուտ կ'ըաղէին միտքերը գրգռելու և այն գաղափարն արծարծելու թէ Հռոմ՝ առաջին առթիւ՝ Խտալիոյ նոր թագաւորութեան մայրաքաղաքը պիտի լինէր : Նուիրակն անոր դէմ սոսկալի տեղեկագիր մը գրեց : Որովհետև Լօրա Տօնի հաբուստ էր և երկրին մէկ հարուստ գերդաստանին անգամը, ուրիշ լաւագոյն միջոց չգտան այս մարդարեութեանց դէմ բայց եթէ ըսել թէ հաւատաքննութեան պատկանող ծանր գործ մ'է, որպէս զի սովորական դատարաններէ զանի հեռացրնեն և այնպիսի ատեանի մ'ենթարկեն որ ամենէն առաջ յանցաւորը բանա կ'զնէ և զանի կ'դատէ երբոր յիշէ :

Խեղճ արեղան և հպարտ մարդարեութիւն իրարու մօտ նստեցուցին այն խարխուլ կառքին մէջ որ ղերենք Հռոմ պիտի տանէր : Պապին չորս պահապան զինուորները, երկուքն առջևէն և երկուքն ետևէն, ուղեկից էին որպէս զի կալանաւորները խոյս չտան : Թուրիօ խոյս տալու գաղափարը չունէր : Գերբնատեսը կատողութենէ խելագարեւ էր :

— Թշուառները, կ'ըսէր նա, պիտի ընկնին : Ա՛ իմ անոյշ մայրս, քու իշխանութիւնդ պիտի սկսի երկրիս վրայ : Այլ ևս Անսար մը չպիտի երևի Աստուծոյ եկեղեցւոյն մէջ :

Եւ կառքին մէջ ձիգ կենալով Լօրա Տօնի՝ զինքը ծածկող քօղը մէկ ձեռամբ վեր առնլով և միւսն Հռոմի կողմը կարկառելով իր գունատ ձգնաւորութիւնի դէմքով կ'նմանէր միջին դարու այն արձաններուն՝ որ նիհար մարմին ունին և իրենց զգեստուց ծալքին տակէն հազիւ կարելի է գուշակել որ կնկան ձև կ'պահեն :

— Ա՛չ, այլ ևս Անսար չպիտի լինի, կ'յոչէր նա, ո՛չ Քրիստոսի քահանայ Անսար պէտք է և ոչ հեթանոս Անսար . Մարիամ, Անարատ Մարիամ, վերջապէս ոտքդ լրիւ օձին դիտուն վրայ, և քու առջևդ խոնարհելով աղչեք յաղթութիւնդ պիտի հռչակեն : Եւ ձեզի համար, ո՛ր կանայք, իմ քոյրերս, աղատու-

թեան թուականը հասաւ : Ձեզի համար մեծ բաներ տեղի պիտի ունենան : Գուր Մարիամու հետ և Մարիամաւ պիտի իշխէք : Եկեղեցին մինչև ցար, կոշտ զօրութիւնը ներկայացուց որ է մարդը, այժմ սիրոյ զօրութիւնը պիտի ներկայացընէ, որ է կինը, որ իբրև տիպար պիտի ունենայ Անարատ Մարիամը : Ա՛ քահանայապետ, մի ջանար ժողովելու այն եռապատիկ թագին բեկորները, զոր յեղափոխութիւնները խորտակեցին, վասն զի քու ճշմարիտ իշխանութիւնդ նոր պիտի սկսի : Գուր հոգիներու բացարձակ թագաւորը պիտի լինիս : Քու անսխալականութիւնդ քրիստոնէսայ ժողովրդոց մեծ վարդապետութիւնը պիտի լինի, բայց պէտք է որ աշխարհային մեծութիւնները դադրին : Քրիստոսի եկեղեցւոյ մէջ ալ առաջինք չկան, չկայ նուաստացուցիչ ստորակարգութիւն Անարատ Մարիամ ձեռօք վերականգնեալ կնկան համար : Նա ևս եկեղեցականութեան պիտի մասնակցի, վասն զի նա մարդէն աւելի մաքուր է, նա աւելի սիրելի զիտէ : Եւ որովհետև Կուր, Պիոս Թ, այս մեծ վարդապետութիւնը հրատարակեցիր, մարդոց ձեռօք բարձրացած այս պահէն վար պիտի իջնես խոնարհելով, որպէս զի մեծապանծ բարձրանաս՝ իբրև նոր եկեղեցւոյ զլուխ :

Տասն և իններորդ դարու կաթոլիկ կղերականութեան ամենէն տխուր մոլորութիւններէն մին, կրնամ գրեթէ ըսել՝ մեծ ամօթ մ'էր՝ ըստ երևոյթին գովելի դիտաւորութեամբ՝ քաջալերելը կրօնական աշխարհին մէջ միստիքականութեան սոսկալի զարգացումը : Ընկերական մեծ տաղնապներու մէջ մարդարեական ոգին՝ որ մարդկութեան մէջ կ'յտնուի, կ'զարգանայ . անտեսագէտներ, զբաղէտներ ընկերական ազատագրութիւնը կանխաւ կ'զոյան : Նիւթական աշխարհի մէջ մարդարեութիւնը գերբնային զօրութեանց անուամբ կ'ծնի : Աստուածն է որ կ'երևի, սուրբ Պոյսն է, ընտանի հրեշտակներն են : Այս ամենն անկեղծութեամբ կ'կատարուի : Թերահաւատ ընկերութեան մէջ կ'սխալին երբոր այս գերբնատեսներն ու մարդարեւները կ'ամբաստանեն իբրև խաբեբայ և ստախօս . այս յայտնութեանց հակամէտ մարդոց պէս պարզամիտ մարդիկ չկան : Գրեթէ միշտ ցաւադար սրբակրօն օս

ըրիորդներ են, որ վանքը կ'ապրին կամ սյարզ ու խստակրօն կենս
ցաղ մ'ունին :

Ոչ որ կրնայ երևակայել թէ քանի քանի անձեր մարդարէա
ցած են, ամենէն ժողովրդայիններն են Սալէզի վաւակունք, Լուր
տի նորատի օրիորդը : Քիչ կրօնուհիներ կան որ իրենց տեսիլ
ներն ունեցած չլինին — մեր խօսքն անոնց վրայ է որ հայեցողա
կան ու անգործ կեանք կ'անցընեն, Գթութեան քորք ժամանակ
չունին տեսիլներ ունենալու — : Այս ամէն բաները կ'վազի, կը
տարածուի աշխարհի մէջ, և մեկնութեանց առիթ կ'լինի : Միս
տիքական ընթերցուածքով զրդուած ըղեղներն այս տարափոխիկ
ախտով կ'բռնուին : Ա'սկսին բորբոքիլ, և չարիքը սոսկալէ կեր
սով կ'տարածուի :

Բոլոր մարդարէութեանց տիրական դաղափարն որ մէկ դարէ
'ի վեր շրջաբերութեան մէջ են, աւասիկ այս է . Բարիդ պիտի
այրի : Եւ այս մարդարէութիւնը հաճելի է մանաւանդ անոնց որ
միտիքականութեամբ մոլորած են : Իրենց ամենէն բուռն հաւա
տարմութեան աւարկան այս է : Ոմանք կատկածի ներքեւ դրին
Լուի Թէի վերադարձը զոր Մարգէն տը կալարդօն իմացուց .
այլք կ'կարծեն թէ՛ Սալէզի վաւակաց ըսածներուն հակառակ՝
Պիոս Թէ՛ իտալական միութեան կուսակիցներէն չպիտի խա
չուի, բայց ամենքը համաձայն կ'կրկնեն իրենց մարդարէից և
մարդարէութեաց հետ . ԲԱՐԻՉ ՊԻՏԻ ԱՅՐԻ . . . Բարիդ՝ որ
մարդկութեան սիրան է իր նուիրական և վեհանձնական ներշնչու
թիւններով . Բարիդ որ մարդիկը կ'սիրէ և աշխարհի կենդանի
ու փրկարար Քրիստոսն է . այս հայհոյիչ լեզուներն անոր դէմ
բանագրանք կ'կարդան իբրև վատանուն Բաբելոնի դէմ : Ա'տես
նեն միայն տիղմն որ թագուհի քաղաքին հողաթափը կ'աղտոտեն,
չեն տեսներ անոնք երկնային լուսաւոր ճաճանչն որ իր գլուխը
կ'բոլորէ :

Ո՛չ, չպիտի կորսուի այն քաղաքն ուր ամէն մեծ բաներու հան
ձարը կ'եռայ, ո՛չ, չպիտի կորսուի : Այս բարեբաղդութիւն մ'է
նոյն իսկ ձեզի համար . վասն զի եթէ կորսուէր, նա իր աւերա
կաց ներքեւ պիտի թաղէր, (իրեն յանդիմանուած թերահաւատու

թեամբը, առանց մտածելու որ ձեր սխալանօք այդ թերահաւա
տութիւնը յառաջ բերիք) ոչ միայն ձեզ զարհուրեցընող մարդ
կային ազատութեան համար հրատապ առաքելութիւնը, այլ նաև
կրօնական գործոց նախաշարժումն որ իրմէ կ'բղխի և զոր Հռոմ
կ'ընդունի, այլ չծնիր : Բարիդ աւելի Հռոմ է քան նոյն իսկ
Հռոմ : Իր ծոցը կ'եռայ այն սերմն որ քրիստոնէական դաղափա
րը պիտի ծաղկեցընէ . . . :

Գ.

ՄՈՒՏԻ Ի ՀՈՌՄ

1860 նոյեմբեր 22ին էր : Իրկունը մեծ բազմութիւն կար 'ի
Քօրսօ . Բօքօլօ հրապարակին մէջ տեղ տեղ ակումբներ կազմուե
ր էին, նոյնպէս պապական քաղաքին ուրիշ զանազան վայրերը, 'ի
Քանբօ-Վաչինօ և Սէնդ-Անժի դղեկին կամրջին վրայ : Հռոմա
յեցի ազնուապետները՝ իրենց աշխարհային սովորութեան համե
մատ՝ Մօնդէ-Բինչիօ կ'գիմէին կառուք : Պատկերհաններ, հոռ
մայեցի դատարկաշրջիկներ, կանայք որ ինքզինքնին ցոյց տալ կ'ու
ղեն, այն դիւրել աստիճաններէն կ'ընթանային որ զմայլելի ձե
մեղիքը կ'տանին ուսկից մարդուս աչքը բոլոր Հռոմ կարող է
տեսնել : Մնայուն բանակին դաղղիացի սպաններն ամբոխին հետ
կ'խառնուէին . խաղաղասէր քաղաքացին նոյնպէս կ'ստրտէր,
բայց երբէք մինակը, այլ երկու երեք հողիէ բաղկացեալ ակում
բով : Հռոմայեցիք, ցոյց տալու համար պապական կառավարու
թեան Ֆրանսայի շնորհած պաշտպանութեան համար իրենց երախ
տագիտութիւնը, սովոր էին դանակ խաղցընել ամէն դաղղիացի
զինուորի կուշտին մէջ երբոր Հռոմի առանձին թաղերու մէջ զըտ
նէին : Խիստ հրաման մը կայ այժմ զինուորներուն որ երբէք մինակ
դուրս չեննեն :

Այն օրը զարմանալի յուզմունք մը կար քաղքին մէջ: Խոռ-
վութիւն մը չէր այն, և խոռվութեան բնաւ չէր նմաներ: Հայ-
րենասիրական մասնաժողովը՝ նոյն օրն իսկ՝ իր յայտարարութիւն-
ներէն մին հրատարակեր էր: Մէկ քանին յանդիմութեամբ փակ-
ցուցած էին՝ ցերեկը, պատերուն վրայ, և դեռ ևս կ'տեսնուէին
անոնց կտորները զօր ոստիկանութիւնն այն մեծ սանդղին՝ որ
լա Գրէնլէնդ Կէլ Մենթէ կ'տանի, վանդակաց մոյթերուն վրայ ձգեր
էր, նոյնպէս եկեղեցեաց և հասարակային շինութեանց խարխիս-
ներուն վրայ:

Հատ կ'սուտէին այս յայտարարութեան վրայ որու ներգործու-
թիւնը շատ մեծ եղեր էր, և որ՝ մեծ համբերութեան յորդո-
րելով հանդերձ, խորհուրդ կ'տար հռոմայեցոց մեծ հարուած
մը տալու համար պատրաստ գտնուիլ: Այս յոյսերը բնաւ չպի-
տի իրանային: Միայն հռոմայեցոց համբերութիւնը պահ մը չհա-
տաւ. և եթէ ազատութեան ժամը դեռ ևս անոնց համար չհնչեց,
անօգուտ վրդովումներ չորգուելու և իրենց հայրենասիրութեան
իղձերը լաւագոյն օրերու համար պահելու փառքն ունեցան:

Վերջին տարիներուն երբ Իտալիա իր մեծ մայրաքաղաքը Հռո-
մէն պահանջեց, և դիւանադատութենէ սպասեց անկողային անձ-
կով, այս գերի ժողովուրդը սքանչելի կարգ և հանդարտութիւն
պահեց: Մասնաժողովին ձայնը լսելի եղաւ ամէն անգաման, իբ-
րև հայրենեաց ձայնը: Ծանր կռիւ մ'եղնելով վտանգ չպատճա-
ռեց և ոչ խտտութեանց առիթ տուաւ:

Անշահ կառքն որ ժուլիօն և մարդարէու հին կ'տանէր Բօբօ-
լօյի դռնէն Հռոմ մտաւ, և Հաւասարմանութեան պաշտօնաբան բան-
տին ճամբան բռնեց:

Երբոր հրապարակին այլ և այլ ակումբներն այսպէս խտախ
պահպանուած երկու կալանաւորները տեսան, պահ մը վառվառն
և մտայոյղ հետաքրքրութիւն մ'ունեցան:

— Հաւանական է որ քաղաքական յանցաւորներ են, կ'ըսէին
ոմանք:

Այլ փաստորները տեսնելով կ'խորհէին թէ ոստիկանութիւնն
երկու առաջին կարգի ոճրագործներ ձեռք ձգած էր:

Որովհետև կառքը ծանրաբայլ կ'երթար՝ ժողովրդեան մէջէն՝
մարդ մը, որ կառապանը կ'ձանչէր, անոր մօտեցաւ:

- Ո՛չ են այս անձինք:
- Հաւատարմութեան պաշտօնատան բանտաւորներ:
- Կո՛յս Մարիամ, պատասխանեց հռոմայեցին, արդահատու-
թեան ակնարկ մը ձգելով ժուլիօյի դռնատ այլ հանդարտ կեր-
պարանին վրայ:

Այս բառը, հասարակմանութեան պաշտօնաբան բերնէ բերան կըրկ-
նուեցաւ այն ճամբուն վրայ ուր կառքը կ'ընթանար:

Հետաքրքիրներու ակումբներն աւելի բազմացան՝ քանի բանտին
կ'մօտենային: Այն փողոցն ուր բանտը կ'գտնուի դրեթէ ամբոխը
խոնած էր երբոր փատորները ժուլիօյի և մարդարէուհայն օդ-
նեցին որ վար իջնեն: Լօրա Տօնիի մեծ ճլխական կերպարանը
ստիկալի բան մ'ունէր. այնքան դարերէ՛ ՚ի վեր քահանայապետ-
ներուն ըրած յանցանաց և մոլորութեանց վրէժխնդիր ողին կ'ե-
րէր նա, որ Հռոմ կ'մանէր երկնային բարկութեան անօթն ՚ի
ձեռին ըսելու համար տարաբաղդ Պիոս Թին, պապ-թագաւորաց
ներկայացուցչին. Գու հիմակ անոնց ձեռօք պիտի դատուիս. Մա-
նէ, Թէսէլ, Փարէս:

Անբացատրելի բան մը ժողովրդեան կ'ըսէր թէ այս կինը բնաւ
յանցաւոր չէր, ազատարարի մը կերպարանն ունէր: Բանտին
սեմէն անցաւ դերագոյն վեհափառութեամբ մը: Ժուլիօ խաղա-
ղութեան հրեշտակ մը կ'երևէր որ կ'զար Հռոմի ըսելու. Փրկու-
թեան օրերը կ'մօտենան, ես կարապետ մ'եմ:

Ժողովուրդը կրնար այս Գաւթի նոր որդւոյն պուալ. ո՞վ անաւ:
Բայց ծանր դռներն այս երկու զոհերուն վրայ ընկան դոցուեցան.
ամբոխը տրամութեամբ քաշուեցաւ:

- Անկից ոչ ոք գուրս կ'եղնէ, կ'ըսէին:
- Գրագէտ դասէն քանի մը հռոմայեցիք Տանդէի սոյս ոսանաւորը
կ'մրմնջէին.

Գուտ սը ներս կ'մտնէ, լեղաւորէ, ասին յոյս:

Բայց ուժեղ ձայն մ'ելաւ վերջին ակմբէն:

— Չեր աղատութեան ժամը հեռու չէ :

Բանտերուն վերակացուն իր մտից արձանագրին մէջ գրեց Թուլիօյի անուններն ու մականունները : Այս չարագոյժ մարդուն մօտ՝ դեռատի աշխարհական մը կար՝ որու հեղինակի և անշահ գէմքը չէր կրնար վստահութիւն ազդել : Երբ սլաշտօնական ձևերն աւարտեցան , այն միջոցին որ բանտապահը իրեն պատրաստուած մութ զնդանը զինքը պիտի տանէր , այս երիտասարդը մօտեցաւ և մարտիրոսին ըսաւ հեղինակի ձայնով մը .

— Աղոր ուղևորութիւն մ'ըրիր , պարոն արեղայ :

Թուլիօ անոր երեսը նայեցաւ . լրտեսն էր որ՝ Տընի արեղայի անուամբ , այս դժբաղդ քահանային հետեւեր էր :

— Աստուած թող ներէ քեզ , ըսաւ անոր Թուլիօ :

— Օ'ն անդր , ես իմ պաշտօնս կ'կատարեմ : Ա'փափաքէի անմիջապէս աստ առաջնորդել քեզ , ասով տաժանելի պտոյտներէ պիտի աղատէի , մանաւանդ այն դիշերային արշաւանքէն երբ սահմանազխուն վրայ քեզ բռնեցի՝ Բիէտրօ Ֆրաբայի զնդակներէն արինաթաթաւ վիճակի մէջ : Բայց այս աշխատութիւնս , կ'յուսամ որ պիտի լաւ վարձատրուի : Մնաս բարեաւ , պարոն արեղայ , խօսքիս անստ , այլ ևս ժէզվիդաց գէմ մի գրեր :

Գ

ՀԱՒԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԲԱՆՏԵՐԸ

Երբոր օտարականը Հռոմ կ'այցելէ , և լաւ մը կ'ըննէ այն բոլոր շքեղ հրապարակը , բարձր սիւներով զարդարուած , որ Հռոմի Սուրբ-Պետրոսին դիմացը կ'տարածուի , բնաւ մտքէն չանցնիր որ այս փառաւոր սեանց շարքը կ'քօղարկէ ցած , մութ , փլատակներով լի թաղ մ'որ ոլորուտ և աւերուն սալաքարներով փո-

ղոցներ կ'պարունակէ : Եթէ կառքով Աւատիկան գնաս , կառապանը քեզ կ'տանի այս փողոցներուն զլիաւորէն որ բոլոր շիւնաշարին ձախ կողմը կ'եղրի , ապա Բիզայիսին հետևութեամբ շինուած փոքրիկ Քամբօ-Սանտօի մը բարձր պատերուն մէջ տեղէն կ'անցնի , և տեսնելով մեծ շէնք մ'որու նեղ պատահաններով սև ճակատը , ուր արևը բնաւ չմտնէր , վարանեալ կ'մնան և չես կարող ըսել թէ ճգնարանի մը , բանտի թէ հիւանդանոցի մ'առջևը կ'գտնուիս : Այս շէնքն ասոնց ամենուն հանգամանքն ունի , Հաւատաքննութեան պաշտօնական պալատն է :

Երբոր Հռոմի յեղափոխութիւնը տեղի ունեցաւ , և Հասարակայնութիւնը եռապետաց օրով հրատարակուեցաւ , ժողովուրդն այս շէնքին վրայ քայլեց որ իր արհաւիրաց առարկան էր : Պասգիլլի ուրիշ նոր առումն էր , իբրև ընկերական նշանակութիւն ունեցող դէպք : Թողովուրդը միշտ իր դադափարները նմանցընելով կ'այտնէ . Պասգիլլն իրեն կ'ըսէր թաղաւորաց հաճոյքը , որոնք ամէն արդարութենէ դուրս՝ զնդաններու վրայ դրած էին իրենց ոյժն և ամբաստանեալը չէր կարող ինքզինքը պաշտպանել . Հաւատաքննութեան պաշտօնատունը կ'ըսէր հոռմայեցուց թաղաւոր դարձած եկեղեցականութեան հաճոյքը , որ իր առաջարկած վարդապետութեանց դէմ հակառակախօսները չտանիր և հանդերձեալ կենաց մէջ Աստուծոյ արդարութիւնը կ'կանխէ այն մարդոց դէմ որ ինչ և է յանցանքով կ'բռնուին նուիրական իրաց նկատմամբ : Հռոմի ժողովուրդը Սէնդ-Անժի գղեկին կործանումը չպահանջեց , հին Հռոմի հսկայ մէկ յիշատակարանն է , Ագրիանոսի ամբարտակը : Պապերուն պարիսպը յարգեց և զնաց Հաւատաքննութեան զնդանները փլել :

Անոնց մէջ քիչ կալանաւորներ գտաւ . բայց զնդանին մէկուն մէջ դիակ մը կար : Շատ ատենէ 'ի վեր կ'մնար անդ , հաւատաքննիչ պաշտօնատան անհոգութեամբը մոռցուած պիտի լինէր , կամ անօթութենէ մեռնելու դատապարտուած պիտի լինէր հաւատաքննչի մը վրէժխնդրութեամբը :

Այս դիակն որ անդ մոռցուած էր անտարակոյս պժգալի բան մ'է , բայց պապական իրողութիւն մ'է : Պիոս Թի քահանայա-

սլեառութենէ ՚ի վեր՝ հաւատաքննութեան խստութիւնները փոքր առ փոքր դադրեր էին : Բայց քահանայապետն այս նողկալի ասեանը բառնալու արիւթութիւնը չունեցաւ :

Ամէն մարդ կարգաց ~~սուրբ հասարակնութեան~~ զնդաններուն ահռելի նկարագրութիւնները, ինչպէս որ 1843ին Հռոմի ժողովուրդը գտաւ : Շղթայակապ կմախքներ, այլք զետինը սփռուած, կէրէ մէջ մինչև ուսերը թաղուած մարմիններ, որով ամենէն սուկալի տանջանքը կ'յայտնէին, տանջանաց զործինիրով լի սրահներ, կոյնոցներու մէջ զնդաններ որ երբեմն տարբարող զոհեր, կիսովին տղմի մէջ թաղուած, իրենց հոգեվարքն երկարաձկեղու համար պէտք եղած հացը կ'ընդունէին, և ուրիշ աւելի սրաւձմիկ պարագաներ :

Այս ողբալի պատմութեանց հեղինակներէն ոմանք կ'հարցընեն թէ ինչպէս ժողովրդեան արդարութիւնը չջնջեց այս վատանուն պալատին յետին հետքն անդամ : Մենք այս պանդառութեան վերայ չենք յաւելի : Ընդ հակառակն՝ կ'փափաքէինք որ ամէն ինչ խղճահարութեամբ պահուէր անոր մէջ, և չորացած դիակները, և տանջանաց զործինները, և ստորերկրեայ վայրից մարդկային դիակաց հոտերը և այն հարիւր կանդուն երկայն բակն ուր դաղտնի կ'այրէին, հրապարակի վրայ այրելու չյանդղնելով : Ար փափաքէինք որ այս ամենը մնային որ տեսակ մը միջին թանդաբան մը լինէր, ամենուն համար բաց, ուր ամէն մարդ կարող լինէր աչօք դիտել և ստուգել թէ երկար դարերով ինչ էր կրօնամոլութիւնը, և դեռ ևս ինչ կրնար լինիլ, եթէ մոլեռանդ վանական մը պապական գահն ելնէր : Ասան զի, պէտք է ըսել, վանականներն են որ եկեղեցւոյ մէջ զեղծումներ ու ոճիրներ մտցուցին : Թող ընթերցողը քաջ դիտնայ, որ վանականութիւնը քրիստոս չընրաւ, եկեղեցւոյ էութեան յարակից չէ բնաւ, այլ միայն անոր մէկ զիպուածն է :

Վանականութիւնն է որ ամէն կրօնական աններողութեան ոճիրները գործեց : Եւ եթէ ուշի ուշով պատմութիւնը կրկտենք դիւբին պիտի լինի համոզուիլ որ աշխարհային կղերը՝ արիւնալի հալածանաց զմեղակ ժամանակաց մէջ կշտամբանաց արժանի չէ այլ

միայն այս յանցանքն ունի որ վանականաց զործի եղաւ և շուտով իր իրաւունքն անոնց ձեռքը յանձնեց : Եթէ Պիոս Ե ըսաւ թէ՛ Ներդոմ-Քիւնը հերետիկոսաց անագորոն պարտւոյ մէջ կ'էլայանայ, պատճառն այն է որ Պիոս Ե պապ լինելէն առաջ՝ վանական եղած էր և սուրբ Տովմիսիոսի ուխտին վանականներէն, այն սուկալի ուխտին որու յանձնուած էր հաւատաքննութեան պաշտօնը : Եթէ Պիոս Թ ինքզինքին ձուլելով՝ խիստ ներող մարդ մ'երևցաւ, եթէ իր բնաւորութեան քաղցրութիւնն ամէն բունն միջոցներէ վինքը կ'հեռացընէ, պատճառն այն է որ իր ուսերը բնաւ չպղծեցան վանական զգեստով մը :

Թուլիօ Հաւատաքննութեան պալատին մէկ զնդանին մէջ պիտի բանտարկուէր անշուշտ, եթէ սուրբ պաշտօնաբան կիսովին աւերած վայրը Հռոմի մէջ բնակող զաղղիացի զօրաց զօրապետին պահականոց մը շինելու յարմար չգտուէր՝ Վատիկանու և Սէնդ-Անժի գղեկին մօտաւորութեան պատճառաւ :

Ինչ այլանդակութիւններ կ'պատահին մարդկային իրաց մէջ : Այս երեսները կարգալու առենդ զաղղիական եռագոյն դրօշ մը կ'ծածանի սուրբ պաշտօնատան մութ ու ցած դրան վրայ : Գրան ձախ կողմը հիւզ մը կայ, հանդարտ Դօրմանտայի մը, կամ զուարթերես Ասաքօն մը՝ սոսկալի դրան առջև, որ միայն զօճ մը կլանելու համար կ'բացուէր, պահպանութիւն կ'ընէ անհոգութեամբ :

Աշխարհաշրջիկներ, դուք որ Հռոմի հետաքրքրաշարժ բաները դիտելու կ'երթաք, զացէք զաղղիական պահականոցը, Սուրբ-Պետրոսի հրապարակին բոլորչի սիւներուն ետեւը, առաջարկեցէք զնդանները տեսնելու. անսարակոյս անոնց մէջ պիտի առնուք դիակներուն հոտը :

Երբ Պիոս Թ կայէթէն դառնալով զահն ելաւ՝ սուրբ միաբանութիւնը շտապաւ ժամանակաւոր ստուն մը կառուցանել տուաւ քանի մը ցած ու նեղ հիւղերով, այն յուսով որ զաղղիացւոց մօտալուտ չուէն ետքը, երբ մի անդամ քահանայապետին աթոռն ամբանայ, իր հին պալատը պիտի երթայ նստելու :

Հռոմի մէջ Հաւատաքննութիւնն առ ժամանակեայ է, ինչպէս

և ուրիշ բան մը , ինչպէս նոյն ինք պատական թաղը : Այս չնչին յուսով կ'ապրի զոր գլուխնադիտութիւնն այլանդակ անուամբ մը պսակեց . statu quo անփոփոխ դէր :

Այս է ահա փտտութենէ քայքայող հիմնարկութեանց դժնդակ պայմանը . իրենց անցելոյն դուրսի սովորութեանց աւելի անդու-թեամբ կ'յարին քան թէ իրենց հին բարօրութեան վիճակին մէջ : Մի և նոյն խղճահարութեամբ անոնց ձեւերը կ'պահեն : Այս պա-հուս սուրբ-պաշտօնատունը պահերէց մը կայ , որ գերապայծառ կարտինալ մ'է . ընդհանուր տեսուչ մ'որ միշտ Տոմինիկեան հայր մ'է , կնքապահ մը , դատաւորի օգնական մ'որ առաջնորդ և միանդամայն նորին Սրբութեան պատուակալ սենեկապետ մը , սուրբ-պաշտօնատան խորհրդականներ , որ կրօնական այլ և այլ ուխտերու միաբաններ են , սպաներ և պաշտօնեաներ . և այս ամենն այնպէս կազմակերպեալ կ'գործեն որպէս հին ժամանակները , մի-նակ փայտակոյտները չկան 'ի մեծագոյն փառս Աստուծոյ և սուրբ աթոռին : Սուրբ միաբանութիւնը շաբաթն երեք անգամ կ'գու-մարուի , երկուշաբթի Սուրբ-Հատատաքննութեան պալատը , ուր ներկայ կ'գտնուին ընդհանուր տեսուչն և խորհրդականները , չո-րեքշաբթի Սահար-Մարտի վանքն Տոմինիկեանց , և հինգշաբթի Պապին առջև ղ հաւատաքննութեան և հերետիկոսութեան խնդիր-ներու համար» , և այս գումարման ներկայ կ'գտնուին կարտինալ-ներ , բաղնիքի առաջնորդներ , աստուածաբան հայրեր՝ իբրև խորհրդական :

Թուլիօ և Լօրա Տօնի իրենց յատուկ խուցը նետուեցան , և այս բանտարկութիւնը Պիոս Թի քահանայապետութեան և եկե-ղեցւոյ փրկութեան շատ օգտակար բան մը նկատուեցաւ : Դա-տային քննութիւն մը սկսաւ սուրբ-պաշտօնատան երկու նոր դա-տելիներու դէմ :

Օգնական դատաւորն որ պաշտօն ունի դատին վրայ տեղեկու-թիւններ տալ , պաշտօնապէս բանտը դնաց և Թուլիօն իր առջևը բերել տուաւ : Անվերջանալի հարցաքննութիւն մը խմբադրեց որ հետեւեալ չորս ամբաստանութիւնները կ'պարունակէին .

Առաջինն էր այս . ինք Թուլիօ Բլավիէր , Տ . . . ի թեմին

քահանայ դիտութեամբ բռնաբարեր էր Ֆօրքասիի Նօդր-Տամի Պենետիկտեան կուսանաց ցանկը , և այս հակառակ է Սէն-Պէ-նուայի ուխտին արտօնութեանց և իրաւանց և օրինօք սաստիկ ար-դիւրած :

Երկրորդ՝ Թուլիօ սոյն բռնաբարութիւնը շարունակեր էր սուրբ վայրի մը մէջ , բուռն խորտակմամբ , և այս գործը թիարանի պատժոյ արժանի էր :

Երրորդ՝ այս յանցանքը գործեր էր ժամերգութեան ժամանակ եկեղեցւոյ մը մէջ ուր հաւատացեալները դումարուեր էին , և այս ալ սոսկալի գայթակղութիւն մ'էր :

Չորրորդ՝ յիշեալ քահանան Յիսուսեան միաբանութեան դէմ պարսաւատետր մը յօրիներ էր , միաբանութիւն մ'որ յատկապէս անձնուէր է սուրբ աթոռին , և քահանայապետաց կողմէ հաս-տատեալ , թղթանենդի մը պէս հռոմէական եկեղեցւոյ եպիսկո-պոսի մը վերադրեր էր զիրք մ'որու անունն էր , Կրօնական կրօն , վատ առաջարկութիւններով , հերետութեամբ լի զիրք մը :

Օգնական դատաւորին տեղեկագիրն այս հարցաքննութեան վը-րայ հիմնուած էր . այսինքն , յանցաւորն ոչ դատաւորի առջև կ'ներկայանար , որ դէմ առ դէմ վկաներ կ'կոչուէին , ոչ փաս-տաբան ունէր , երբեմն դատաստան կ'լինէր միայն երբ հրատա-րակութեան կարեւորութիւն տեսնուէր : Այն ատեն վճիռը Հռոմի գլխաւոր եկեղեցեաց դռներուն վրայ կ'փակցընէին : Պատիժը տաս տասն երկու տարուան համար բանտարկութիւն էր , երբոր ամբաստանեալը թշուառ էր և պաշտպանէ զուրկ լինէր և ստակ չունենար վճարելու :

Թուլիօ պարզօրէն , համառօտ , արժանապատուութեամբ պա-տասխանեց օգնական դատաւորին բոլոր հարցմանց :

- Ստորագրէ հարցաքննութեան թուղթը :
- Ես ոչ ինչ չեմ ստորագրեր :

Այս եղաւ ահա այս եղական դատաստանին առաջին և վեր-ջին տեսարանը : Թուլիօ երկար տարիներ անդ պիտի մնար , և ոչ սուրբ-պաշտօնատան դահերէցը , ոչ ընդհանուր տեսուչը , ոչ դատաւորի օգնականը , ոչ խորհրդականներ պիտի չմտածէին

այս քահանային վիճակին վրայ : Սուրբ-պաշտօնատան պաշտօն-
եայք իրենց բանտաւորներն ըստ հաճոյս ունին . ասոնք զիշերօթիկ
աշակերտներ են իրենց համար : Աստի զուռը ժուլիցի վրայ
դոցուեցաւ :

Մոռցանք խցիկը նկարադրելու :

Տասն ոտք երկայնութեամբ և վեց ոտք լայնութեամբ պատեր ,
դուռ մը միայն առանց պատահանի , փոքրիկ լուսամուտով որ
երկաթէ վանդակ ունի՝ որպէս զի քիչ մը լոյս մտնէ : Խշտեակ մը ,
փոքրիկ նստարան մը , փոքրիկ սեղան մը , հողէ աղտոտ աման
մը , և մերկ քարայատակ : Լան , ինչո՞ւ համար այս մարդը սովոր-
ական ճամբէն շեղեցաւ , ինչո՞ւ համար կաթովիկութեան մէջ
վերանորոգութեան զաղափարներ մուծանելու ելաւ , ինչո՞ւ հա-
մար եկեղեցւոյ սուրբ տապանակին , այս է Յիսուսեան միաբա-
նութեան դպչելու յանդգնեցաւ : Ինչո՞ւ համար ուրիշ շատ ե-
կեղեցականաց հետ Պասլին աշխարհական իշխանութեան պաշտ-
պան չլիցեցաւ , փոխանակ բանտի՝ հիմակ արքեպիսկոպոսարանի մը
սրահին փափուկ նստարանին վրայ պիտի լինէր ամենուն սիրելի ,
գոռելի , և օր ըստ օրէ եկեղեցւոյ պատիւներու շաղէն վեր ել-
նելով , քիչ ատենէն ընդհանուր փոխանորդ , ապա եպիսկոպոս ,
ապա կարտինալ պիտի լինէր : Այս բարձր իմացականութիւննե-
րը , այս խորհողներն որչափ վարուիլ չգիտեն :

Ժուլիօ անձարակ մ'էր :

Հիմակ՝ կեցիր այդ բանտիդ մէջ՝ եկեղեցականութեան անարդ
թափթփուքը , ժան Հիւսի առհմին և բոլոր այն չարչարուած ա-
ղատասէրներուն յետինը , որոնք պապական Հռոմի վրայ շատ յար-
դանօք չխօսելու յանդգներ էին : Եթէ քու պահապանդ մոռնայ՝
քանի մ'օր , սև հացդ քեզի նետելու , անօթութեան անպատու մ'
տանջանաց մէջ պիտի մեռնիս : Հոգեվարքի պիտի հասնիս կուսի-
ներդ կրծելով ցաւէդ : Ոչ ոք զիակդ պիտի վերցընէ , և ոչ իսկ
զնդանդ մաքրելու պիտի մտածեն որպէս զի անոր մէջ ուրիշ զոհ
մը նեանն որ քու փոքրած մարմնոյդ մօտ պիտի ստիպուի ապրե-
լու . . . :

Եբբոր վերին Իտալիան կ'ընդուն Ֆրանսա վերաբառնալու , Բօ
լճին սահմաններէն անցնելով , քու առջևդ լերանց ահագին դօ-
տի մը կ'կանգնի : Ասոնք արեւմտեան Ալպեան լեռինքն են : Այս
պատէն անդին անցնելու համար , զոր Ապենինեանց բարձունքէն
կ'տեսնես Հռոմէն դառնալու ատենդ , երկու մեծ ճամբաներ ու-
նիս որ մեծ արուեստով շինուած են Ալպեանց կողերուն վրայ .
Մօն-Սընիինը , որ քեզ Սալուա կ'նետէ , և Սինթոնինն որ քեզ
Զուլիցերի կ'տանի : Կոյն պահուն Իտալիա դեռ ևս իր աշնան
զմայլելի օրերն ունի , Մօլօ աի Կայէդայի դաշտերուն մէջ կրնաս
նարինջ քաղել , այն դաշտերուն մուտքն ուր կորուս Անիպալ , և
դէզադէզ ձիւներ իրենց սպիտակ սաւանով Ալպեանց հսկայածև
կատարները կ'ծածկեն : Միայն քանի մը ժամ չպիտի կուռիս ձիւ-
նին և ցուրտին խստութեան դէմ , այլ երկարատև օր մը : Գար-
ձեալ ինքզինքդ երջանիկ պիտի համարիս եթէ ահագին շաղէ
դիծերը սոսկալի ձիւներու ներքև անհետ եղած չեն և եթէ ուղե-
ցոյցներդ չեն մոլորեր :

Եթէ բարեբաղդութեամբ այս վտանգերէն անցնիս , վտանգներ
որու փոքրագոյնն է ցրտէն մեռնիլը , գաղղիական լեռնահարթին
վրայ առաջին տեսնելը մեծ աւանդ է , Լան—ԼԸ—Պուրկ : Մեծ
օթեան մ'ուր ահագին վառարաններ դժոխային կրակ մը կ'ընծայեն
քեզի , Լուվրի պանդոկին պէս շատ ձօխ կ'երևի քեզի :

Ուրեմն Լան—ԼԸ—Պուրկ կ'դանուինք :

Աղքատիկ եկեղեցի մը կայ Ալպեան դիւղաբաղքին մէջ տեղը :
Քահանայ մը սեղանին առջևն է : Մեծ , ուժեղ մարդ մ'է , աղ-
գու կերպարան մ'ունի որ արդէն քանի մը խորշումն բով թմրած

է, տառապանաց նշան : Սպի մ'որ նոր գոցուած է, իր ճշմարտը կ'ախօսէ : Տեսնողը պիտի կարծէ թէ Խրիմի մէջ զինուորն է, որ Սալուա դարձած է, և պատերազմէն ետքն՝ եկեղեցական անդորր պաշտօնի մէջ հանդստութիւն փնտռելու եկեր է : Իր ձայնն արիական և քաջահնչուն է : Իր շարժումներն աշխոյժ են, բայց իր սուրբ պաշտաման ծանրութիւնը միշտ կ'պահէ : Արարողութիւնները շուտով կ'կատարէ, զօրականի պէս կ'ընէ պատարագը : Քիչ ատենէն հինգ վեց հաւատացելոց օրհնութիւնը կ'տայ, որոնք վանդակին մօտ դումարուած են, և աւանդատունը կ'քաշուի :

Եկեղեցին ցուրտ է, բայց աւանդատան մէջ կրակարանի մը շնորհիւ մեղմ տաքութիւն մը կ'ախրէ : Քահանան իր եկեղեցական զգեստները կ'հանէ, աղօթարանի մ'առջև ծուներ կ'ընէ, լայն թղթի մը վրայ գրուած աղօթք մը կ'կարդայ և շուտ մ'ոտք կ'ընէ :

Լուսարարն անդ է :

— Այսօր հիւանդ մը կայ նայելու :

— Ատանդի մէջ հիւանդ մը չկայ կարծեմ, պարոն երէց, միայն օտարուհի մը, որ Բօսֆօսի օբլասն իջած է երկու օրէ 'ի վեր՝ Խտալիայէն դառնալով՝ չափազանց կ'տառապի : Մօն-Սընի անցքը թէ իրեն և թէ զինք առաջնորդող կառապանին համար սոսկալէ է եղեր : Քիչ մնաց ձիւներուն ներքև պիտի մնային :

— Այդ բաւական է :

Եւ նոյն օրը, կէս օրէն ետքը՝ Լան-լը-Պուրկի երէցը Բօսֆօսի օբլասին ճամբան կ'բռնէր բամբակամած փափուկ վերարկուով մը փաթթուելով :

Օթեանին մէկ սպասուհին դացեր էր հարցընելու օտար կնկան թէ արդեօք կարող է երէցին այցելութիւնն ընդունիլ : Օտարուհին հաստատական պատասխան մը տուեր էր :

Երէցը պարզութեամբ և անոյշ համակրութեամբ մը ներկայացաւ որ այնքան լաւ ներդործութիւն կ'ընեն հիւանդաց վրայ : Բժշկի մը կամ քահանայի մը ժպտուն դէմքը դրեթէ միշտ յանկարծական սփոփում կ'ըրէ հիւանդին :

Այս օտարուհին, ինչպէս որ ընթերցողը դուշակեց, ուրիշ անձ մը չէ այլ Լուիզ :

Վօլքարսէղայի ճամբուն վրայ՝ Լուիզ Խաբօմօի հոժկու ձիով քաւական հեռացած լինելով՝ վերջապէս Թոքթանայի հողը կոխեր էր՝ իր եղբորը վիճակին վրայ յետին ծայր տաղնապ զգալով : Խաբօմօ իր դալարաւէտ թաղստեան տեղէն ելեր էր, Հաւատաքնութեան փատարներուն ծուլիօյի առնուլ տանիլը տեսնելէն ետև : Տարակոյս չունէր որ նորատի գաղղիացին՝ մի անգամ այսպիսի ձեռաց մէջ ընկնելէն ետև՝ յաւիտենական բանտարկութեամբ պիտի քուէր Քորքասիի Նօդր-Տամի մէջ ըրած յանդգնութիւնը : Իրեն համար կարևոր գործն էր իր կենդանին զրտնել և պատական երկիրներու սահմանէն Լուիզը դուրս հանել, ինչպէս որ ծուլիօյի խօսք տուեր էր :

Վօլքարսէղայի ճամբան բռներ էր արագօրէն, և մաքսանենդի մ'աչքերէն տարբեր աչաց աննշմարելի եղող ճամբու հետքը բռնելով՝ Լուիզէն քիչ մ'ետքը՝ սահմանադուխը հասեր էր :

Հարկ եղեր էր խեղճ քրոջ յայտնել ախուր Ջշմարտութիւնը : Վերջապէս Խաբօմօ հասկըցաւ որ նորատի ամուլքն իր առաջուան կարծած անձերը չէին, այլ անհայտ ատելութենէ հալածեալ երկու զոհեր : Լուիզ առատօրէն վարձատրեց Խաբօմօն այնքան արիութեամբ մատուցած ծառայութեան փոխարէն : Եւ այս քաջասիրտ մարդն աղջկան կապուելով՝ այս տխուր պարագայիս մէջ իր փորձառութեան թելադրած ամէն խորհուրդներն անոր տուեր էր :

Ըսեր էր անոր .

— Հուովեական վիճակաց մէջ անօգուտ է ներկայութիւնդ, նոյն իսկ վնասակար . վառն զի կարող են քեզ բռնել, Քորքասիի Պէնէտիկտեանց մօտ ինչպէս գտնուիլդ և ինչ պայմաններով անոնց հետ կապուիլդ հասկընալու պատճառանօք : Արդ՝ այս ողորմելի երկրին մէջ հարցաքննութիւն մը կրնայ տան տարի տեւել : Ստէպ կ'մոռնան իսկ թէ կալանաւոր և թէ իր յանցանքը կամ կարծեցեալ յանցանքը : Ուստի Քրանսա դարձիր : Եղբայրդ Հաւատաքնութեան ատեանին ձեռքն է, և Հաւատաքնութեան ատեանը քաւական սոսկալի բան մ'է : Խիստ հզօր միջնորդութիւն մը պէտք է անկեց պրծելու համար : Ի Բարիդ պաշտպանութիւն մը փնտռէ :

Կառավարութեան միջոցաւ եղբայրդ պահանջէ : Գու անձամբ՝ եթէ հարկ է , մինչև Այստեր ներկայացիր :

Լուիզ այս խորհրդոց իմաստութիւնն ըմբռներ էր : Պէտք չէր իր եղբորը հետ կորսուիլ , այլ պէտք էր զանի ազատել : Խորին մշտով համակեալ ու սրտաբեկ Թոսքանայի սահմանադրւեալ մեկներ և Ֆլորանսէն ու Գուրէնէն անցնելով ՚ի Մօն-Սընի հասեր էր , ընդ փոյթ Լիօն և Բարիզ զնալու յուսով , որպէս զի իր եղբորն ազատութեան աշխատի :

Մեծ դժուարութեամբ անցաւ Մօն-Սընիէն : Զինք տանող կառքը ձիւներուն մէջ կորսուեր էր : Օթեանին կրօնաւորները նուազեալ և կէս մը սառած հաներ էին Լուիզը , և երկու ժամ մեծ խնամք տարեր էին անոր վրայ : Սակայն կառքը , թէև կիսովին խորտակեր էր , Լան-լը-Պուրի հասնելու համար վերստին ճամբայ ելեր էր : Բայց այսքան յոգնութիւն , մանաւանդ բարոյական ցնցումներ , Լուիզի փափուկ կազմուածքը սաստիկ զղորեր էին : Այս քանի մ'օրը զինքն այլայլեր և պառաւջուցեր էին : Առանձնութիւնը , լքումը , սոսկալի կասկածներ , զրեթէ յուսահատութիւնն իր հողին կ'ընթէին . և մարմինն որ շատ տկար էր , ներքին սառապանաց չէր կարող տոկալ :

Լան-լը-Պուրիի երէցը հիւանդները դատելու վարժած լինելով առաջին նայուածքով գիտեց որ օտար աղջկան վիճակը վտանգաւոր բան մը չունէր , այլ միայն նորա բարոյական ոյժը կազդուրեցու պէտք կար :

Հիւանդին խօսք չբացաւ ոչ խոստովանանքի և ոչ վերջին օժման վրայ . յորդորեց զինքն որ վաղանցուկ աղիտից հանդուրժէ , որ քիչ մը հանդիստ առնլով կրնային ամոքիլ , և փառք տալ այն զթալի նախախնամութեան որ կարծես թէ մեր ձեռքէն բռնած կ'առաջնորդէ վտանգաց մէջ , և որ անյայտ խորհուրդներ ունի ամէն բանի վրայ :

Այս քաջալերական խօսքերը Լուիզի վստահութիւնը դրաւեցին : Նա հասկըցաւ որ բարեսիրտ և ուղիղ մարդ մ'էր իրեն հետ խօսողը :

— Պարոն արեղայ , բտաւ անոր , շատ պէտք պիտի ունենամ

ձեր խորհրդոց . վասն զի այս ժամուս խիստ դժուարին վիճակի մէջ կ'դտնուիմ :

Եւ պատմեց անոր կարելի եղածին չափ համառօտ կերպով իր եղբորը ձերբակալութիւնը , պատկան հողէն իր փախուսար , Բարիզ զնալու դիտաւորութիւնն որպէս զի պաշտպաններ փնտռէ :

Այս պատմութեան ժամանակ երէցին դէմքը սաստիկ կարմրեր էր . ամենէն թեթև պարագաներն անյազ հետաքրքրութեամբ մտիկ ըրեր էր : Գրեթէ դողդոջուն ձայնով մը՝ այս խօսքն առաջ նետեց .

— Միթէ Տ . . . Է՞ն էք :

— Այո՛ , պարոն :

— Միթէ ժուլիօ Բլավիէրի քոյրն էք , Սէնդ-Վանտէնի երէցին :

— Այո՛ , պարոն . արդեօք կ'ձանչէք եղբայրս :

— Օրիորդ , իմ կեանքս անոր պարտաւոր եմ : Լիս հովտին մէկ վաղեմի երէցն եմ : Եղբայրդ իմ բարերարս է : Իմ քսակս , իմ սիրտս իրն են : Պատրաստ եմ ձեզի համար :

— Իրաւունք ունէիք , պարոն . մարդկային իրաց մէջ Նախախնամութիւնն իր խորհուրդներն ունի . զիս իմ եղբորս մէկ բարեկամին քովը բերաւ : Ինձ սիրտ կ'տաք . այդ նեցուկն որմէ զուրկ էի , կ'զգամ որ ՚ի ձեզ դտայ : Մինակս չպիտի քալեմ այս իմ բռնած դժուարին շաւղիս մէջ . դուք պիտի ազատէք եղբայրն ու քոյրը :

— Իմ բոլոր ճիգս պիտի թափեմ այս բանիս համար : Գուք Բարիզ գնալով Փրանսական կառավարութեան մօտ ձեր եղբոր ազատութիւնը հայցելու ատեն , ես ուղղակի Հռոմ պիտի երթամ և պիտի նայիմ թէ արդեօք հնար մը չկայ այս խեղճ բարեկամն Հաւատաքննութեան ատենին ձանկէն ազատելու համար : Հաւատաքննութիւնը շատ ճարտիկ պիտի գտնուի եթէ չյաջողիմ անոր խաղ մը խաղալու : Իմ գրասեղանիս մէկ ծակին մէջ քանի մը հազար Փրանքի արժէթուղթ ունիմ : Հօրեղբոր մը ժառանգութենէ ընկած է ինձ այդ գումարը , որ , իրաւի , ասկէ աւելի պատեհ ժամանակ մը չէր կրնար մեռնիլ : Այդ գումարն ոսկի բա-

նալի մը պիտի ընեմ, և 'ի Հռոմ՝ այս բանալիով մինչև Վատիկանու դռները կարելի է բանալ:

Լուիզ աչերն երկինք տարաւ և իր ձեռքը վեհանձն երէցին երկնցուց:

Քանի մ'օր ետք՝ տենդն անցեր էր. Լուիզ բաւական ոյժ առնլով կարող էր Բարիզ ուղևորիլ: Իսկ Լուպէր Ալպեանց լեռներէն կ'անցնէր, և Գիւրէնի ու Ֆլորանսի վրայէն Հռոմ կ'հասնէր:

9

ԼՈՒՊԷՐ Ի ԺԷԶԻՒ

Թէպէտ Լուպէր նոյն ինք անկեղծութիւնն էր և հետևապէս անկարող կ'գտնուէր կեղծաւորութեամբ վարուիլ, սակայն Հռոմ մանելուն հասկըցաւ որ իր նպատակին հասնելու համար պարտաւոր էր մեծ խոհեմութիւն բանեցընել: Իր գործը դժուարին էր: Ամէն բանէ առաջ պէտք էր ժէզվիդաց կասկածները փարատել, վասն զի անոնք միշտ իրենց լրտեսներու միջոցաւ պատրաստ էին մաքաւիլ իրենց փնաս բերող բաներու դէմ: Պիրէնեան լեռանց բնակիչներն իրենց լեռնական կորովութեան հետ կասքօններու նրբամտութիւնն ունին, որոց արիւնը ստէպ անոնց արեան հետ խառնուած է: Ուստի քաջ զիտեն պատեհ ժամուն կասքօն լինիլ: Եւ այս բանս անոնց համար հաշիւ, ցածութիւն, բարոյական ստորութեան արդիւնք չէ, այլ բնազդում, հնարադիտութիւն վտանգի ժամանակ: Իրաւ է որ ամէն տեղ երբ մարդ բնութեան դէմ մաքաւելու պէտք ունի, նենգամտութեան ոգին չափազանց կ'աճի, առանց անոր ուղղամտութեան չափէն աւելի փնասելու: Տեսէք Օվէրնիացին՝ իր լեռնային կոշտ և դժուարին կեանքով, իր արտաքին միամտութեան ներքև կ'պահէ նուրբ հնարք:

Ուստի Լուպէր փոքրիկ յատակադիծ մը յօրինեց: Նախ՝ չէթէ Աթենասայ պանդոկն իջաւ, ուր ամէն մարդ կրնար զինքը տեսնել, այն եկեղեցական խառնիճազանձ՝ ամբոխին մէջ, որ կաթոլիկ աշխարհի չորս կողմէն անդ կ'գան, այլ փոքրէք արտաղէ փողոց մ'իջաւ, Տէլէ Վէթէրէլէ անուամբ, որ շատ ոլորուտ և շատ մութ էր, և Ժէշի-ի (ժէզվիդաց ասպարան) ընդարձակ շէնքերու ետևը կորսուած էր: Ամիսը քիչ մը ստակ տալով իր ուղածէն աւելի հանդիստ սենեակ մը գտաւ անդ, վասն զի առանձին և համեստ կեանք մը վարելու միտք ունէր յախտենական քաղքին մէջ:

Ապա Հռոմի մէջ Պապին առաջնորդական փոխանորդութիւնը վարող կարտինալին քովը գնաց: Իր կղերական թղթերն՝ որ շատ կանոնաւոր էին՝ վաւերացան: Հարցուցին իրեն թէ ո՞ր եկեղեցին պատարագ ընել կ'ուզէր:

- Ես առաջին անգամն է որ Հռոմ կ'գամ, պատասխանեց նա:
- Ո՞ր իջար, հարցուց անոր Նորին Բարձրութեան զբաղիւրը:
- Տէլէ Վէթէրէլէ փողոցը:
- Շատ լաւ, Ժէշի-ի եկեղեցիէն քանի մը քայլ հեռու կը գտնուիս. իբրև զաղղիացի անդ պատարագ ընելու հաճոյք պիտի ունենաս:
- Շնորհակալ եմ այդ ծանօթութեան համար: Բայց այդ եկեղեցին շատ բազմութիւն պիտի լինի:
- Այնչափ շատ չէ, կարծեմ, այս միջոցիս:
- Այս համառօտ տրամախօսութեան ժամանակ՝ կարտինալին զրազիրը զաղղիացի քահանային ազդու և պարկեշտ դէմքը շատ նայեր էր: Այս մարդուն համար համակրութիւն մը զգաց և բարեսիրութեան զգացմամբ Ժէշի-ի վերապատուելի հօր ուղղեալ երկտող յանձնարարական մը գրեց:
- Սրտովին կ'ընդունիմ, ըսաւ Լուպէր:
- Եւ իր ձեռքն այս անձին կարկառելով՝ շնորհակալ եղաւ:
- Հետևեալ օրն այգուն՝ Պիրէնեանն որ կանուխ ելնելու վարժ էր, Ժէշիէն գնաց իր զաղղիացի քահանայի կատարեալ զգեստով: Լուպէր իր յանձնարարական դիրն յանձնեց:
- Բարի առաքեցար, ըսաւ անոր վերապատուելի լուսարարը:

Եւ ամէն ինչ Պիրէնեան երէցին հրամանին ներքեւ դրուեցաւ այն պաշտօնատէր մարդավարութեամբ որ Յիսուսեան միաբանութեան ուղոյն յատուկ է :

Լուսէր որ կ'ուզէր ազատ շրջանի մը մէջ շարժիլ և իր ժէզ վիզը չդայթակղեցընել, անոր ըստ .

— Աերապատուելի հայր, Հռոմ բնակած ատենս քեզի կարելի եղածին չափ քիչ ներդրութիւն պիտի տամ : Այս երկրիս մէջ արշաւանքներ ունիմ ընելու, և այն օրերը չպիտի դամ 'ի ժէզի :

— Կատարեալ ազատութիւն ունիս մեզի հետ, Պ. արեղայ : Եւ ժէզվիզը յարեց .

— Միթէ մեր հայրերէն մէկը չէն կամիր տեսնել : Մեծ խնդութեամբ կ'հիւրընկալենք դաղղիացի քահանաները : Մեր հարց շատերը դաղղիացի են :

Լուսէրին միտքը բան մ'ընկաւ :

— Միթէ այդ վերապատուելի հարց մէջ հայր Կամպիակը կը գտնուի :

— Այո՛, պարոն արեղայ, մեր Հռոմի հարց մէջ ամենէն մեծ յարգանք վայելողն է :

Հայր Կամպիակ՝ Լանկտօկի ամենէն հարուստ և անուանի դերգաստանէն կ'իջնէր : Լուսէրի գասընկերն եղած էր նա Տ . . . ի կղերանոցը : Ընկերակցութեան սիրով իրարու հետ կ'ապուած էին, ընկերական աշխոյժ սէր մ'որ պատանեաց մէկ ազնիւ զգացումն է և որ ժամանակ անցնելով իսկ միշտ վառ կ'մնայ :

Ժէզվիզական կոչումն այս Կամպիակ բարի արեղան դրուեր էր, թէև աշխարհիս մէջ ամենէն նուազ ժէզվիզ լինելու մարդ մ'է : Մեծ եռանդով ընդունուեր էր նա փառատէր միաբանութեան կողմէ, որ մեծ անուանց չափէ գուրս սիրահար է : Արագօրէն իր ճամբան առեր էր, մի միայն ազնուական ծննդեան յանձնարարութեամբ որ Հռոմի մեջ աւելի մեծ ներդրութիւն ունի քան թէ մեր մէջ : 'որ ժէզվիզը գրամադիտական ուսմանց համար մեծ եռանդ ունեցեր էր : Միաբանութիւնն այս փափաքը քաջալերեր էր, և մեծ քաղքի մը մէջ՝ վերապատուելի հօր՝ այս գիտութեան ուսման համար ամէն գիւրութիւն տալու մտօք, Հռոմ

կոչեր էր, ուր իր պարզասիրութիւնը, իր քաղցրութիւնը, իր ճշմարիտ գիտունի բարքն ամենուն սիրաբը դրուեր էին :

Հետեւապէս նշանաւոր անուն մ'էր այս մարդը ժէզվիզաց մէջ և ուխտին մեծ խորհրդին անդամը : Սեպէ թէ Լուսէր՝ «իւր արեղայ մարքիզին համար» ինչպէս որ զինք կ'անուանէր կղերանոցը, իր հին սիրոյ զգացմամբ աւելի բորբոքեցաւ, սեպէ թէ կ'փափաքէր այս խորհրդաւոր ժէզիւն փոքր ինչ մօտէն տեսնել, սեպէ թէ այս քանս իր յատակադմին նպատատու էր, որպէս զի ոչ որ Հռոմի մէջ կ'ստիպուէր ունենայ միաբանութեան մէկ բարձրագիւր անդամին կողմէ այսպիսի բարեկամական ընդունելութիւն տեսնող քահանայի մը վրայ, Պիրէնեան երէցը փութաց վերապատուելի լուսարարին պատասխանել .

— Հայր Կամպիակ աստ է . վայ, աւելի աղէկ . իրաւի շատ ուրախ պիտի լինիմ զանի տեսնելով : Կրարու գասընկեր եղած ենք կղերանոցը . ո՛րչափ մեծ ուրախութիւն պատճառեց ինձ այդ լուրը : Աղը զինք տեսնելու պիտի երթամ :

— Ձեր այցելութիւնն անոր պիտի իմացընեմ :

— Հայր իմ, շատ բարեսիրտ ես :

Կրաւի՝ հետեւեալ օրը Լուսէր, որ կարևոր անձի մը կերպարանն առած էր, ժէզիւն մեծ խօսարանը կ'երթար և վերապատուելի հայր Կամպիակը տեսնելու կ'իսնդրէր : Գոնասպան հայրը ժէզվիզին իմաց տալու կ'երթար, և քանի մը վայրկեան ետք՝ երկու գաղղիայիք իրարու հետ անցուցած անդորրաւատ օրերը կը յիշէին, ատեն մ'երբ երեակայութիւնն ամէն բան կ'զարգարէ և սիրան՝ որ սնունդի կարօտ է, բոլոր կենաց համար զօրեզ բարեկամութիւններ կ'հիմնէ :

Հայր Կամպիակ որ գիտնոց ամէն միամտութիւնն ունէր՝ անկեղծ համակրութեամբ ընդունեց Լուսէրը : Անոր մէջ բերած յիշատակներն այն տարիներուն վրայ որ ամէն մարդու համար ակնարկ մ'են, Լուսէրի անսանձ ազատաստութիւնն՝ որ չէր փոխուած և որ առաջին անգամուն իսկ կ'ճանչցընէր ժէզվիզին այն անձը զոր ինքն ալ «Պիրէնեան արջ» կ'անուանէր, այս ամենը թովեցին վերապատուելի հայրը :

— Այս տեղ աւելի չմնանք, սիրելի բարեկամ, սենեակն ել-
նենք :

Եւ երկայն նրբագաթէ մ'անցնելով՝ և քարէ լայն սանդղէ
մը վեր ելնելով, որ առաջին դատիկոնը կ'տանի, ահադին վեր-
նագաթի մը հասան որ բաւական նեղ պատուհաններով լուսա-
ւորուած էր որ վերէն լոյս կ'տային միայն : Սենեակներու շարք
մը ձախ կողմէն կ'տարածուէր, և այս կարդին երրորդ մասին
կողմերը կ'գտնուէր հայր կամայիակի խուցը :

Միաբանութեան բարձրաստիճան պաշտօնէի մ'այնքան փառա-
ւոր չէր այս խուցը : Մեծ սենեակ մ'որ բաւական հովասուն էր,
երկրորդ սենեակի մը հետ հաղորդակցութիւն ունէր, և այս սե-
նեակն ալ վերնագաթին վրայ դուռ ունէր և մատենագարանի ու
ննջարանի տեղ կ'ծառայէր. ուրիշ բան չկար : Սակայն ժէզէ-
այս դատիկոնին բոլոր խցիկները բոլորովին իրարու կ'նմանէին :
Ամէն վերասրատուելի հայր իր մեծ սենեակն ու մատենագարանն
ունէր :

Լուսէր իրաւի զմայլած հեռացաւ հայր կամայիակի քովէն : Սա
խօսք առաւ իրմէ ստէպ դալ տեսնելու զինք որչափ ատեն որ
չուով բնակի :

— Այլ սակայն, շարունակեց նա, պիտի ապայրեմ դռնապա-
նին որ թոյլ տայ քեզ շնտակ իմ սենեակս ելնելու իմ որոշե-
լիք ժամերուս, երբ զիս սենեակս գտնելու ստոյգ պիտի լինիս :
Մեր սիրական ֆրանսայի վրայ պիտի խօսինք և մեր դեղեցիկ Լանկ-
տոկի վրայ : Մեր արջի ու մարքիղի արամաստութիւնները պիտի
սկսինք :

Լուսէր օր մը գրեթէ արտասուազին դտաւ ժէզվիլը : Քիչ
ատենէն խօսակցութիւնը վերապատուելի հօր վրայ ներդործող
դադափարներուն վրայ դարձաւ : Մտերմութիւնը հաստատուեր էր
իրենց մէջ յաճախակի տեսութեամբ : Փոքրիկ մարքիղը՝ բաց սըր-
տով խօսեցաւ այնպէս որ առաջ բնաւ չէր խօսած :

— Ո՛չ, բարեկամդ իմ, աստ երջանիկ չեմ. վասն զի աստ չեն
սիրուիր : Այս տեղն սիրտերը չափազանց չոր են, վասն զի ամե-
նուն աչքը զերար կ'գիտեն : Արտաքուստ՝ ամէն կերպ յարդանք

Ք'մատուցանեն ինձ և զիս կ'ատեն, վասն զի միաբանութեան ողին
չունիմ, կ'ըսեն : — « Բան մը չունիս ըսելու միւս հարց վրայ » :

Միթէ կարծես թէ այս մեծ դեան մ'է. միթէ կարելի է որ
ուսմունքով զբաղած մարդ մը, որ քանի մը ժամու հանդիստ ու-
նի միայն, միւս հարց լեզուի և ընթացքի պակասութիւնները դի-
տելու և ուղղելու համար հոգ տանի : Ի՛նչ ապարդիւն պաշտօն :
Ես ինձմով զբաղելու բաւական գործ ունիմ : Ո՛ր բարեկամդ իմ,
սրչափ կ'կարօտիմ աշխարհի մէջ ազատ քահանայի կենաց. վկայ
է Աստուած որ զայն չարաչար չպիտի դործածէի, բայց գոնէ
չպիտի բռնուէի այս պղնձեայ ճախարակին մէջ, ուր դադա-
փարներ, դղացումներ, աղատութիւն, ամէն ինչ հաշուով է
բազմակնձիւր ժամացոյցի մը պէս՝ որու մշտտե միակերպութիւնը
բանէ մը չկանդարիր : Հողոյ համար մահատու է այս, ծանր
ինքնասպանութիւն մ'է : Բայց, բարեկամդ իմ, ի՛նչ ըրի : Այժմ
պէտք է խոստովանահօրս ըսել այս սրտակցական խօսքերը զոր
քեզի յայտնելու տկարութիւնն ունեցայ :

Աստուած իմ, Աստուած իմ, ի՛նչ տանջանք : Ո՛հ, այս սըր-
տակցութիւնն ուրիշ որ և է պարապայի մէջ օրինաւոր է ամէն
խղճի մէջ, բայց իմ ըրած ուխտիս պատճառաւ ամէն բան ըսե-
լու պարտաւարեալ լինելուս, եթէ ծածկեմ, այս լուութիւնը դա-
տապարտելի պիտի թուի ինձ : Խղճի խայթը պիտի դայ, և այն
ամէն կսկիծանքն զոր իրեն հետ կ'բերէ : Այն ատեն պէտք է ամէն
ինչ յայտարարել, այն ատեն պէտք է սնոտեաց քասօսին մէջ
ընկնիլ որ՝ իրբև մարդ՝ զիս կ'նուաստացընեն և ոչ քրիստոնէի
մ'արժանի են : Խեղճ Լուսէր, որչափ կ'շնորհաւորեմ քեզ Լան-
լը—Պուրկի մէկ խոնարհ երէցը գտնուելուդ : Եւ տես, այս
անտանելի կենաց թշուառութիւնն այնքան մեծ է, որ այս մանր-
մական հաղորդակցութեան ժամն ինձ չափազանց սուղի պիտի
նստի : Պէտք է որ անուանեմ այն մարդն որու հետ այս սրտակ-
ցութիւնն ունեցայ : Եւ պէտք պիտի լինի բոլոր ըսածները կըրկ-
նել, որպէս զի լիովին համոզուին որ իմ կոչմանս հակառակ շար-
ժելով միաբանութեան վեասելու մտօք չես եկած այս տեղ :

Ա՛հ, կոչում, քանի՞օն կ'ցաւիմ վաղանցուկ խանդի մը հետեւ :

լուս : Շատ երջանիկ պիտի լինիմ եթէ մեր մէջ անցած դացածին անսուտ պատմութիւնն ընելու՝ քեզ վնաս մը չգայ և իբրև անխորհուրդ պատիժ մը՝ ես ալ արդիլուիմ քեզ տեսնել : Ար տեսնես, բարեկամ, որ փոսն ընկած է մարդ այս ընկերութեան մէջ որ կրօնական միաբանութեանց իբրև ընտիր տիպար մը ներկայանալու կ'պարծի : Լրտեսութիւն, բռնութիւն, աւասիկ այն ուղին որ զիրար սիրելու համար միացած եղբարց աւետարանական դաղափարին տեղն անցած է : Բայց դու միշտ եկուր, վաղն ու միւս օր : Ես շաբաթ իրգունը պիտի խոստովանիմ . մինչև այն ատեն ազատութիւն ունիմ :

Լուսէր բաւ մ'անգամ ըսելու արիութիւնը չունեցաւ . խեղճ Տօր ձեռքը սեղմեց և դուրս ելաւ :

Երկու օրէն ետքը միայն կարող եղաւ Լուսէր Թէղի նորէն դալու : Հայր Կամպիակի որոշած ժամէն տասն վայրկեան անցեր էր : Լուսէր, փոքր ինչ մտահոգ՝ արադօրէն կ'քալէր ընդարձակ նրբագաւթներուն մէջ, ժէզվիզ մարքիզին տրտմութեան վերայ մտածելով : Խուցին զիմացը հասաւ, կարծելով թէ հայր Կամպիակի խոցն է . դուռը գոց էր . բայց յարակից մատենադարանին դուռը կէս բաց էր : Լուսէր բաւական ընտանի էր վերսպատուելի Տօր հետ և կրնար ներս մանել համարձակ : Կարծեց թէ իր բարեկամը քանի մը վայրկեանէն պիտի վերագառնար : Ուստի դրատունը մտաւ, գոցեց դուռն որ նրբագաւթին վրայ կ'նայ յէր, որպէս զի մարդ չտեսնէ զինքը, և պատրաստ էր զայն բանալու երբ հայր Կամպիակ գար, և կ'սնդար իսկ որ անոր յանկարծական զարմանք պիտի պատճառէր երբ տեսնէր որ զիրքերը կ'թղթատէր :

Սակայն Լուսէր երկու երեք դուռ սխալ առեր էր : Թէզվիգաց Զօրաստիւն մասնաւոր զբքատան մէջ կ'գտնուէր : Անոր բնակարանը՝ որ իրարու պատկից քանի մը սենեկէ կ'բաղկանար, սոյն գտնիկոնին կեդրոնը կ'բռնէր : Շատ քահանայից պէս՝ Լուսէրն ալ զրեանց հետաքրքիր, և համոզուած լինելով որ հայր Կամպիակ քանի մը վայրկեանէ դուռը պիտի գար զարնէր, սխալ իր առջև դանուող առաջին հատորներն առնուլ : Այլ և այլ

ընդունով հոգեկանութեան վրայ դուած մատեաններ էին, գրեթէ նոյն դիրքով, յետին ծայր խնամօք կազմուած, բայց առանց ճոխութեան կամ լաւ ևս ըսելու համար, անշուք պերճութեամբ : Տիպերուն դեղեցկութեան, սեկերուն բարակութեան, դժաձև զարդերուն վրայ զմայլեցաւ : Այս առաջին հատորները զբքատան աչքերը դնելու ատեն՝ երկրորդ դրեանց շարք մը տեսաւ, որ առաջինէն ծածկուած և անոր չափ խնամատարութեամբ կազմուած, և շատ աւելի ճոխ էր : Հետաքրքրութիւնը զօրաւոր է : Իրաւ է որ բարեկամի մը խուցը կ'գտնուէր . չէր կամեր որ ըրածն անխոհեմութիւն լինէր : Այս դրեանքը գաղղիական ժամանակակից դրականութեան հաւաքածոյ մ'էր, և որ աւելի այլանդակն էր, իր կարգէն քաշած առաջին հատորը Բօլ տը Բօքի վէպերէն մին էր : Լուսէր ընթերցումաճքի մասին շատ խղճահար չէր : Սակայն իրեն զարմանալի թուեցաւ գաղղիացի վիպասանաց ամենէն թեթեւը՝ Յիսուսեան միաբանութեան մէկ պատուակալի մը զբքատան մէջ գտնելը :

— Այլ սակայն, կ'ըսէր նա, Գրիգոր ԹՁ պապը, այս բռնասէր ինքնակալը, յետին ծայր հաճոյք կ'զգար Բօլ տը Բօք կարգալով . ուստի իմ փոքրիկ մարքիզ կրնայ այդ սիփոփանքը տալ իրեն : Միայն կ'ուզէի զիսնալ թէ այս բանս իր խոստովանահօր կ'ըսէ թէ ոչ :

Բայց, ո՞ զարմանք, այն միջոցին որ զիրքը դարակին վրայ պիտի դնէր, որպէս զի հայր Կամպիակ վրայ հասնելով իր անխոհեմութիւնը չտեսնէ, գրեանց երրորդ շարք մ'իր աչաց կ'ներկային . առաջնոյն մակադիրն էր՝ ձեռօք դրուած՝ կռակը փակած թղթի մը վրայ Խոստովանահօր հարց . այս թղթակազմ ձեռագիր տետրներն այբուբենի կարգով տառեր ունէին կտրածին վերայ : Լուսէր՝ սաստիկ յուզուելով՝ խորհրդաւոր արձանագիրը բացաւ : Հետաքրքրութեամբ մը, զոր գիւրբին է հասկընալ, իր սիրական ժէզվիզ մարքիզին սկզբնատառերը փնտռեց : Նոյն միջոցին անորոշ սարսափ մ'իրեն կ'ըսէր . միթէ սխալած չեմ : Արդեօք հայր Կամպիակի դրատունը չեմ : Տարակոյսը փարատեցաւ երբ այդ Կամպիակ անունը տեսնելով՝ անոր խոստովանանքն ամ-

փոփոռած դոտաւ : Սակայն չտիէն աւելի չըսենք : Իրաւ է որ իւրաքանչիւր վերապատուելի հօր խոստովանութեանց համեմատ այս ներքին կենսադրութիւնները գրուեր էին , բայց մասնաւոր մեղք մը չէր պատուած , և հետեապէս խոստովանանքի նուիրական գաղտնիքը պահուած էր : Ժեզվիկները միշտ Աստուծոյ հետ կանոնաւոր հաշիւ կ'տեսնեն , զիտեն թէ մինչև ի՞նչ աստիճան կարող են նենգել անոր հետ :

Աամսիակ ժեզվիկը կենդանի դոյներով նկարուած էր անոր մէջ . իր պարզասիրութիւնը , իր միամտութիւնը , իր խորագիտութեան և խոհեմութեան թերութիւնը , ու խախն համար ունեցած գոյղն համակրութիւնը , իր բնաւորութիւնը , դրամագիտական ուսման մասին այլոց տածած գաղափարը , որ միակ պատճառ մ'էր , կ'ըսէր արձանագիրը , զանի ընկերութեան մէջ պահելու միշտ , իր հաստատուն և խորին բարեպաշտութիւնը , բայց իր անդու վիշտն որ աշխարհի մէջ կրօնական պաշտօնը չվարեր , վասն զի անդ լուծի ներքև չլիտի դանուէր , այս ամէն պարագաները յտակ , դրախչ կերպով գրուած էին . մարդն ըստ բնութեան նկարագրուած էր անոր մէջ :

Սակայն ժամանակը կ'անցնէր :

— Աւերջապէս ո՞ր եմ , կ'ըսէր Լուպէր իւրովի : Իր բոլորափրը խորին լուութիւն մը կ'տիրէր . մտակայ սենեկին մէջ բնաւ շշուկ մը չկար , և ոչ այն ընդարձակ նրբագաւթին մէջ որմէ անցեր էր այս գծնդակ գուռը հասնելու համար :

Խոհեմութեան բնագում մը , անձնական պահպանութեան զգացում մը յորդորեց զինքը գուրս ելնելու ընդ փոյթ և այս զբքատունէն հեռանալով երթալ խօսարանն ու պարզապէս իր բարեկամը հարցընել : Բայց Լուպէր յանդուզն էր , այս արկածն իրեն զրգուիչ կ'երևէր . միւս հետաքրքրաշարժ փոքրիկ արձանագիրներն անդ էին , և իրենց խորագիրները , Օտորայ խոսքուանանք . — Թղնասիտ փախանութեան , զինք անգլիմագրել մագնիսի պէս քաշեցին :

— Նայինք , ըսաւ իւրովի , եթէ միաբանութեան թշնամեաց մէջ խեղճ Ժուլիօն ալ գրած են : Անլրէսզ անոնց մէջ պիտի լինի :

Լուպէր արձանագիրը բացաւ , Ժուլիօյի անուան սկզբնատառերը փնտռեց : Արդարև սրբակրօն միաբանութեան ամենէն կատաղեթշնամեաց մէջ երկարօրէն յիշուած էր Լուպէրի արժանի բարեկամը : Անոր յանդիմանութեամբ վերադրուած յանցանաց ցանկը կատարեալ էր : Մանր պարագաներ կային անոր մէջ , այնպիսի պարագաներ որ կարելի չէր երևակայել թէ ամենէն ճարտար լրատները կարող էին իմանալու իր վրայ , իր յօժարութեան , ներքին կենաց վրայ , իր քրոջ հետ ունեցած յարաբերութեանց վրայ : Մինչև անդամ Պիրենեան նորատի օրիորդին արկածին վերայ , այն օրիորդն որ գիշերայն Սէնդ-Ավանտէնի երիցատունն ընդունուեր էր :

Լուպէր՝ հրաբորբոք երևակայութեան տէր մարդ մը , իր տենդային հետաքրքրութենէ շարժեալ՝ վայրկեանները կ'մտնար և կը լափէր իր բարեկամին վրայ գրուած այս կծու տարեգրութիւնը : Ժուլիօն Հում քաշելու համար հուշակաւոր Տընիին արուած հրամանն ու անոր արշաւանքը կարգալու վրայ էր , երբ յանկարծ մտակայ սենեկին մէջ շշուկ մը լսուեցաւ : Շուտ մը վայելուչ կարգով գրեանքը սեղծ գրաւ , և քիչ ատենէն բազմաթիւ մարդոց քայլափոխները լսեց որոնք սենեակը կ'մտնէին : Այս անգամ ժպիւրհ մարդն իր կացութեան վտանգը հասկըցաւ :

Այն տեղ իբրև գող կամ լրտես բռնուիլ՝ մէկ վայրկեանի հետաքրքրութեան փոխարէն Հաւաստաբնութեան զնդանները կամ Թէրաչինայի թիարանը նետուիլ , ահա այս գաղափարը ներկայացաւ ակն յայտնի՝ մեր մարդուն մտայ մէջ : Այս հեռանկարն իրեն հնհուր տուաւ : Բայց ի՞նչ ընել պէտք էր : Յանկարծ գուրս ելնել՝ վերապատուելի հարց ուշադրութիւնը գրդուելու վտանգն աչքն առնելով , որոց մտակայ սենեկին մէջ հաւաքուիլը կ'կասկածէր , շատ վտանգաւոր միջոց մ'երևցաւ իրեն :

Փոխանակ ազդու ընթացք մը բռնելու , ինչպէս որ՝ վտանգի ատեն՝ Լուպէրի զօրեղ բնութիւնն ունեցողները կ'ըսեն , իրեն անբացատրելի սարսափ մը յանկարծ զինք համակեց , իր սրունքը սկիարացան , կարծես թէ գերազոյն մաղնիսական զօրութեամբ մը իր բնական ոյժն ու կամքը ջլատեցան :

Այս վշտադին տարակուսանայ տաղնասպին ժամանակ՝ սենեկին մէջ աթոռներ շարժեր էին, և յանկարծ լուռութիւնը յաջորդեր էր: Լուպէր՝ յստակ լսեց որպէս թէ նոյն սենեկին մէջ զանուած ընկեր առ Հոգւոյն՝ Սուրբ սովորական մաղթանքը, լատիներէն լեզուաւ, և այս մաղթանքն ընողն էր ձերուսի մ'իւր ծանր և տկար ձայնովը: Աթոռներն երկրորդ անգամ շարժեցան, ապա նորէն լուռութիւնը տիրեց:

Անտարակոյս վերապատուելի հարբ հատեր էին, և Լուպէր ատոյգ էր թէ սոյն մեծ միաբանութեան բարձրագոյն խորհրդոյ մը նստին ներկայ գտնուելու անհաստատել բաղդն ունեցած էր:

Սակայն Լուպէրի անձկալի վիճակը միշտ նոյնն էր: Տեսակ մը երկիւղ կայ որ միւս երկիւղներուն չնմանիր: Ճակատամարտի դաշտին մէջ թնդանթի մը գիւնացը լինիլը՝ որոշ կացութիւն մ'է: Երբոր բնութիւնը՝ ըղեղին զրկումամբը՝ և վառօղին ասբեցութեամբը՝ ջլային առաջին գողը կ'ըսպէ, մարդ այնուհետև վտանգը չմտածեր: Ամենքը գնդակներու ներքև չեն ընկնիր, և ամէն ոք այս յուսով կ'ապահովի: Բայց սոսկալի երկիւղը, անբուժելի երկիւղն անձանթիւն երկիւղն է:

Լուպէր այս գծնակ տպաւորութեան ներքևն էր՝ որ կերպ մը ճիւղազ դարձեր էր, որու մէջ կորուլի, գուեհիկ երկիւղներու անհաղորդ մարդ մը՝ անբացատրելի սարսափի մը ներքև ինքզինքը նկուս կ'դանէ: Թողուց որ այս տրաման շարունակուի, որու մէջ ամենէն վտանգաւոր գերը կ'խաղար, ազդու որոշում մը ընելու անկարող լինելով, որպէս զի դիպումսով այս ընկած տարօրինակ վիճակին սոսկալի հետևանքէն պրծելու հնարին լինէր:

Երկու արմուկները գրքատան վրայ կ'լսեցան, մարմինն անշարժ, ձեռները միացած և կարկամած՝ անհաշտելի աստուծոյ մը առջև ծունր դնող ապաշխարողի մը պէս, կ'սպասէր նա, ապշութեան մօտ վիճակի մը մէջ, այս գէպքին ելքը:

Խօսակցութիւնն սկսեր էր: Լուպէրի վիճակը զինքն ամենէն աննշան խօսքին ուշադիր կ'ընէր, և իր արտաքոյ կարգի զրգուութեամբը կարող կ'ընէր իր ըղեղին մէջ տպաւորել բոլոր խօսքերը:

Այն ձերուսին որ մաղթանքը կարդայեր էր նոյն ինք զօրանքան էր ժեզվիկաց, ինչպէս որ Լուպէր արդէն հասկըցեր էր:

Տեսակ մը յայտագրի մէջ բացարձակ ամփոփեց ընկերութեան կացութիւնն աշխարհիս հինգ մասանց մէջ: Թեզվիկներն Անկլիոյ մէջ յետին ծայր յաջողութեան մէջ էին, նոյնպէս Միացեալ-Նահանգաց, Գանատայի մէջ, ուր շատ զօրաւոր էին. Պէլժիոյ մէջ, ուր եպիսկոպոսաց դասն ու աշխարհիկ կղերն իրենց իշխանութեան ներքև էին:

Աւելի գեղեցիկ էր ուխտին վիճակն 'ի Լեհաստան, ուր իրօք ընկերութիւնը կ'ափրէր, այս ազգին բացառիկ վիճակին շնորհիւ, որ Ռուսիոյ լուծն անհամբերութեամբ կ'կրէ:

— Յուսամ որ պիտի հաւանիք մեր Լեհաստանի վերապատուելի հարց առած հրահանգացս, որ ասոնք են: Ամէն միջոց 'ի գործ դնել ազգային հակահրական զգացումները զրկուելու, որ չափազանց կ'օղնեն կրօնական ատելութիւններն աւելցնելու: Միշտ իբրև ամբարիշտ, եկեղեցւոյ թշնամիներ, հաւատքի հալածիչներ, իբրև բանաւորներ նկարագրել Ռուսերը, որոց գէմ ամէն ինչ ներելի է: Բարիքը տարապիւր լեհացւոց հետ անընդհատ կը թղթակցիմ, անոնց մէջ կրակոտ փառասէրներ կան, որ հետադհետե կ'զայրանան և անոնց զայրոյթը հազիւ թէ ձեր Բզարատուքի կարող կ'ընի զսպելու: Աւասիկ լեհացւոց քաղաքական յատակագիծն որ շարունակ կ'ինդրեն մնզն որ զիրենք պաշտպանենք և մեր կողմէն՝ կրօնական յեղափոխութիւն մը պատրաստել, մինչդեռ իրենք ալ հայրենի երկրին ժողովուրդը պիտի զրկենն ուստական տիրապետութեան դէմ: Այս յատակագիծն որ երկար ատենէ 'ի վեր հասունցած և Բարիզ հաղորդուած է, մի շատ քաղաքական անձերու որ զազղնացւոց կայսեր կ'մօտենան, որպէս զի լեհացւոց գատին զինքը նպաստաւոր ընեն, այս է. Ամենուրեք եկեղեցեաց մէջ հայրենասիրական երգեր պիտի երգուին: Ռուսք պիտի անհանդիսա լինին, իրենց ոստիկանութիւնը պիտի զինեն, իրենց զօրքերը դուրս պիտի հանեն: Այս երգերը պիտի երգուին հասարակային հրապարակաց վրայ ուր պիտի հաւաքուին: Կարգախօսք պիտի լինի երբեք զինեալ չերկրէ:

Եթէ զօրքերը ժողովուրդը ցրուելու համար հրաման ստանան, ծունր պիտի դնէ և իր կուրծքը քողակներուն պիտի ներկայէ : Մամլոյ մէկ քանի զլիսաւոր դորժինները քննեցին և տեսան որ ամենքն ալ Լեհաստանի նպատաւոր կ'դանուին, և յեղափոխականաց համակրութիւնները, ազդայնութիւն անուանած բանին համար, մեր դատին զօրապէս պիտի ծառայեն : Այս խորհուրդը յղացողներն արդէն ստոյգ են որ բոլոր Եւրոպա պիտի բողոքէ Ռուսիոյ դէմ, որ անվնաս մարդկային խումբեր կ'ջարդեն . մարտիրոս ժողովրդեան համար եռանդուն ազդակ մը : Այն ատեն անկարելի պիտի լինի որ Եւրոպա Ռուսիոյ վրայ հարկ չդնէ Լեհաստանի թաղաւորութեան վերակազմութիւնը :

— Ռուսաստան, ըսաւ վերապատուելի հայր մը, կարելի է որ չդիջանի և այս սարաբազդ ժողովուրդն անխնայ ջարդէ :

— Քրանսա չպիտի ներէ այդ բանին : Ազգայնութեան Տօն֊Քիշօղն է եղեր : Լեհաստանը պիտի պահպանէ, և կամ պիտի յաջողի, և մենք ալ անոր հետ պիտի յաջողինք, կամ իրեն դէմ միւս տէրութիւնները պիտի հանէ և այն ատեն . . . :

— Եւ այն ատեն, ըսաւ վերապատուելի հայր մը . . . :

— Եւ այն ատեն յեղափոխութիւնն երկար ատեն պիտի տևէ, և այս բանս մեզի համար լաւագոյն է : Դէպքերն Աստուծոյ ձեռաց մէջն են : Լեհաստանի մէջ մեր խաղաղք դերին վրայ միայն հող տանինք : Տարակոյս չկայ որ ազգային շարժման կղերին տակը օդնութիւնը հետզհետէ Լեհաստանի երախտագիտութիւնն ու սէրը չյանկուցանէ իր անկախութեան աջակից դանուողներուն վրայ : Եթէ վատ օրերն որոյմէ կ'երկնչինք մօտալուտ ապագայի մը մէջ՝ մեզի համար ծաղիկն, եթէ Իտալիոյ տէրութենէ, և թերևս Հռոմի վիճակներէն վճնտուելէն ետև՝ եթէ պատասարան մը չգտնենք միւս երկիրներուն մէջ՝ որ մուսներուն պէս յեղափոխութեան մէջ ընկած պիտի լինին, ինչպէս որ կ'երկնչիմ, ապահով պատասարան մը պիտի գտնենք կաթոլիկութեան լիովին հաւատարիմ եղող այս ժողովրդեան մէջ . միաբանութիւնը Լեհաստանի մէջ պիտի վերակազմուի և անդ կրնայ աւելի բարեյաջող օրերու սպասել :

Այս համառօտ յայտարարութենէ ետև՝ որ Լուսէրի հետաքրքրութիւնը սաստիկ զրգուեց, Զօրապետն երկարօրէն խօսեցաւ հռոմէական վիճակաց մէջ միաբանութեան ունեցած կացութեան վրայ : Յետոյ յարեց .

— Եթէ երբէք Պուրպոնեան ցեղը վերստին Նափոլիի դահն ելնէ, ամէն բանէ առաջ մայր թագուհոյն շահերը պահպանելու պիտի պարտաւորինք : Ոչ միայն նորատի թագուհին՝ Պավիէրայի Մարիամ - Սովիան, տկար Քրանսուա Բի վրայ իշխանութիւնն եթէ գործածէր, ազատական զինուորներ ընելու ճամբուն մէջ պիտի դնէր զանի, այլև մեր ընկերութեան դէմ ամէն թշնամական զգացումները՝ զոր աստ բերաւ՝ պիտի ներշնչէր : Երբէք չպիտի ներէ մեզ որ Լօլա Մօնդէզ պաշտպանեց մեզ 'ի Պավիէրա : Ռեբմն կարևոր է երկու ամուսիններու մէջ թշնամական ողին սնուցանել : Եթէ Քրանսուա Բ իր զլիսուն մնայ, մայր թագուհոյն որդոյն 'ի նպատտ պիտի հրաժարի և այն ատեն Նափոլին մեր կողմը պիտի լինի :

Այլ ևս այս տեղ բնական ենք միայն, անօդուտ է այս բանս ծածկել : Պատուութեան աշխարհային իշխանութեան խախուտ կացութիւնը մեզ ըստ բաւականին կ'յայտնէ մեր ճակատագիրը : Վատանուն յեղափոխականք պահ մը պիտի յաղթանակեն : Եթէ Պապը Վատիկան մնայ կամ եթէ կաթոլիկ ազգաց դիմէ որպէս զն համակրութիւնները զրգուելու փորձ փորձէ, դարձեալ մենք միշտ պիտի մեկնինք : Այս տեղ ոչ այնքան պատուութեան որչափ մեզի դէմ ատելութիւն ունին :

'Նոյն իսկ կղերը՝ իր վրայ մեր ունեցած դերազանցութենէ վերադուրած լինելով՝ մեզ կ'ատէ դէթ յեղափոխականներուն չափ և ամենէն առաջ մեր անկման վրայ պիտի խնդայ : Ի՞նչ փոյթն է . նա պիտի մնայ : Այս թաղումներ և մկրտութիւններ ընող մարդիկ վախի տեղ մը չունին ժողովուրդէ մ'որ ունակութեամբ իր պաշտաման կատուած լինելով՝ պատրաստ է իր պապն ու կարտինալները մէկ գի թողուլ բաւական է որ իրեն թողուն իր Տիրամայրը : Ասկից դատ՝ աշխարհիկ կղերն իտալացի է և բնապէս ժողովրդեան հետ համակիր : Մենք՝ մէկվիզներս, ազգայնութիւն

չունինք, մեր ընկերութիւնն է մեր հայրենիքը, մենք աշխարհա-
քաղաքացի ենք, և ասոր մէջն է մեր սո՛ժը. սակայն այս է նաև
պատճառն որ մեզ ժողովուրդներէն կ'բաժնէ, 'ի մեզ միայն օ-
տարականներ կ'տեսնեն: Այս է ահա պատճառն որ իտալացիք
իրենց քահանաները պիտի պահեն և մեզ Իտալիայէն պիտի վը-
տեն: Աքսոր պիտի լինի մերը և թերևս շատ երկարատև աքսոր մը:

Պահ մ'անդորրութիւնը սիրեց: Յետոյ սկսաւ վիճարանութիւն
մը կամ լաւ ևս, ինչպէս որ կըսեն խորհրդարանական լեզուա-
պաշտութեան ծանրակշիռ կացութեան վրայ խօսակցութիւն մը:
Վերապատուելի հայր մը սա խօսքը փախուց բերնէն որ մեծա-
մասնութենէ լաւ ընդունելութիւն չգտաւ:

— «Աստուած իմ, շատ լաւ կ'լինէր եթէ քիչ մը զիջանէինք:

— Sint ut sunt aut non sint (ինչպէս որ է այնպէս մնայ):
ըսաւ վերապատուելի հայր մը: Այս դիւցադնական խօսքը մեզ
փրկեց, պէտք է նաև աշխարհական իշխանութիւնն ազատել:
Հռոմ՝ յեղափոխութեան պիտի յաղթէ անընկճելի յամառութեամբ
տեղի չտալով: Արդի սայքարը ցոյց կ'տայ որ ահադին զօրութիւն
մը կայ այս օգտաւէտ հիմնարկութեան մէջ:

— Ամէն ինչ որ մարդկային է կ'անցնի, շարունակեց վերա-
պատուելի հայր մը, որ հաշտութեան խօսք մ'արձակեք էր ան-
զղուշութեամբ:

Այս անգամ հանրական աղաղակ մը բողաւ անոր դէմ: Այս
դժպէհի կարծիքը յայտնող ողորմելի մարդը նոյն ինք ժէզվիզ մար-
քիզը, հայր կամայիակն էր, որու ձայնը քաջ ճանչեց Լուպէր:

Ամենապատուելի հայր զօրապետը խօսքը շարացարեց:

— Առջի օր Նորին Սրբութեան՝ Պապին հետ ունեցողութիւն
մ'ունեցայ: Բարի Պապն որ մեզ քիչ կ'սիրէ, ըստ սովորու-
թեան՝ մեր ընկերութեան համար ունեցած բարեսիրական զլաց-
մունքը յայտնեց: Ես ալ կրկնեցի մեր բայարձակ անձնուիրու-
թութեան զգացմունքն առ պապական աթոռն: — Այո՛, ըսաւ նա
ինձ, կարծեմ՝ թէ մեծահոգակ միաբանութիւնք սուրբ աթոռը
պահպանելու համար շատ բաներ կընայ ընել: — Պատասխան
տուի անոր որ այս խօսքերը մեր վերապատուելի հարց պիտի հա-

ղորդեմ և շատ երջանիկ պիտի լինին: Չանի ախուր, բազմահոգ
և օր ըստ օրէ քայքայուն վիճակի մէջ գտայ: Իրաւի՛ հրաշք մ'է
որ Նորին Սրբութիւնը՝ իր կաթուածի հարուածներով, իր օրունքն
ունեցած խոցով այսչափ երկայն կեանք մը վարէ: Թէև կրնանք
Աստուծմէ ինդրել մեր ուխտին աւելի անձնուէր պապ մը, նա
այնպիսի կացութեան մէջ կ'գանտի որ առանց մեզի չէ կարող
քայլել: Ինքն ալ քաջ կ'զգայ այս բանս: Նա բաւական նրբու-
թեամբ ըսաւ ինձ որ փորձառութիւնն իրեն կ'սորվեցընէր աւելի
լաւ ճանչելու իր բարեկամները: Շատ հեռու են այն ժամանակ-
ներն երբ մեզ հայր Թինէրի ձեռք կ'ճլմէր: Եւ սա ինքն և մեր
ուխտին վրայ նախանձող բոլոր միաբանութիւններն աւելի մեղմա-
ցած կ'երևին մեզի հետ: Գժբազդութիւնը մարդիկն իրարու կը
մօտեցընէ:

Երբ Նորին Սրբութիւնը խօսելու վրայ էր՝ յայտնեց ինձ որ
Ֆրանսայի վսեմափայլ գետպանը կ'թախանձէ եղեր որ Հաւատա-
քնութեան բանտերէն արձակենք ժուլիօն, այն նորատի քահա-
նան որ մեզի այնքան չարիք հասոյց 'ի Ֆրանսա, և բարեբաղդու-
թիւն ունեցանք զանի ձերբակալ ընել տալու ահաոր ատենին
միջոցաւ: — Չեր Սրբութիւնը, ըսի անոր, եկեղեցոյ այս թշնա-
մոյն ազատութիւնը չպիտի շնորհէ: Միշտ քահանայից ձեռք
քրիստոնէից ընկերութեան մէջ չարիք հասած է, և ինչ աւե-
րումներ չըրին Լութեր և Կալվէն: Գրիգոր ԺՉ պապին աղու-
ընթացքը յանկարծ Լամենի գոռոզութիւնն իջեցընելով՝ Ֆրան-
սայի մէջ արգիլեց եօթնևտասներորդ դարու կարծեցեալ վերա-
նորոգութեան չափ վտանգաւոր պայթում մը: Այս ժուլիօն եր-
կրորդ Լամենէ մ'է, թերևս առաջինն աւելի վտանգաւոր. մին
բուռն էր և նոյն իսկ իր բարեկամները կ'վիրաւորէր. սա յա-
փշտակիչ գայլ մ'է դաւնուկի զոհասով:

Այս խորհրդածութիւնս կարծես թէ մեծ տպաւորութիւն ը-
րաւ Նորին Սրբութեան վրայ: — Կարելի է իրաւունք ունիս, ը-
սաւ նա. ասկից զատ՝ պապերը հազիւ ուրմն կ'միջամտեն սուրբ
հաւատաքնութեան ատենին որոշումներուն և այս մասին Աստու-
ծոյ և անարատ Կուսին խորհուրդ պիտի հարցընեմ: — Անմիջա-

պէս կարտինալ-պաշտօնէին քովը դայի, որ մեզի լիովին անձ-նուէր է: Գիտէք, հարբ իմ, որ շատ ապերախտ պիտի լինէր, եթէ մեր կողմը չընէր. անոր ահապին հարստութեան չափազանց օղնեցինք: Իր միլիօններն ՚ի նպաստ մեր կ'իստին: Սիրալիր կերպով իմ ձեռքս սեղմեց: Պատմեցի անոր Նորին Սրբութեան հետ ունեցած խօսակցութիւնս: — Ա՛հ, գերապատուելի հայր, ըսաւ ինձ վսեմափայլ պաշտօնեայն, բանէ մը մի վախնար: Նորին Սրբութիւնը բան մը չպիտի ընէ, հաւատարի եղիր: Ձեր պաշտպանեալին տեղը բանախն մէջ շատ աղէկ է:

Ուրեմն այսպէս անհոգ ենք այս մասին»:

Լուպէրի հետաքրքրութիւնն ևս քան զևս կ'աւելնար: Սակայն հեռուանց հեռու կ'նայէր այն դրան որ գժբաղդարար իր վրայ դոցուած էր: Ձերապատուելի հարց ժողովը կարելի է ուրիշ հետաքրքրաշարժ դադանիք մը յայտնէր:

— Որովհետև, ըսաւ նա, թախարհի մէջն եմ ընկեր, եթէ ժամ մ'ևս մնամ վտանգս չպիտի աւելնայ: Համբերութիւն, վերապատուելի հարց բնակարանէն պիտի ելնեմ ինչ կերպով որ կարենամ ելնել:

Փոքր ինչ քաջութիւնը վրան կ'դար:

— Բան, ըսաւ նա իւրովի վերջապէս, զիս չպիտի ուտեն անշուշտ:

— Այժմ դանձային տեղեկապիրն ունինք, շարունակեց Զօրապետը:

«Մեր կացութիւնն երբէք այսչափ յաջող չէ եղած: Մեր ծախսերը հեազհետէ գիղուող եկամտից մօտ ոչ ինչ են: Պէտք է հաւանիլ որ արդի պարշէլի քաղաքակրթութիւնը քաջ գիտէ դրամադրութիւնները գիղել տալ: Քաղաքակրթութեան մեղ հայթայթած անբաւ առաւելութիւններէ օրուտ քաղելու պարտաւորեցանք: Մեր փոքրիկ խնայութիւնները ճարտարութեամբ շահուղներով ահագին գումարներ բերին: Այնուհետև անհամար պարգէններ եկան: Այս տարի կտակներն աւելի առատ եղան քան թէ նախորդ տարիները, այնպէս որ վերջին եռամսէին համար՝ մեր Բարիզի դործակալն իմ հրամանաւ կարող եղաւ տունը՝ 800

Փրանքնոց 2000 բաժին Աէվիլ-Բսերէս-Բատիքսի, ընդ ամենը մէկ միլիօն. 800 Փրանքնոց Օդրիշիէն-Լօմպարաի 2000 բաժին, մէկ միլիօն. 500 Փրանքնոց Սարակոսայի 1000 հատ արծէթուղթ: Հինգ հարիւր հազար Փրանք: Ընդ ամենը երկու միլիօն հինգ հարիւր հազար Փրանք:

«Յաջորդ եռամսէին համար՝ բաց ՚ի անակնկալ շահերէ, մեր բոլոր տոկոսները, նոյնպէս Հաւլի, Պարտոյի, Սան-Ֆրանչիսքօի հիմնարկութիւններէ մեր միւս եկամուտները, ասիկց զատ՝ մեր առևտրական տոններէն և կտակներէ հասոյթները. ուստի զուտ շահն այս տարի վեց միլիօնի պիտի հասնի»:

Նոյն պահուն Լուպէր դարձեալ սկսաւ անհանգիստ լինիլ, դանձային յայտադիրը հաւանօրէն վերջ պիտի տար տեղեկապիրն: Այս է փափակ վայրկեանը: Ի՞նչ ընել պէտք էր պրծելու համար:

Եթէ բանալիք փակները չչլին մը հանէր, եթէ յանկարծ մէկը ներս մտնէր, եթէ Զօրապետ հօր սենեկէն ելնելու ատեն վրայ հասնէին, ի՞նչ մեծ աղմուկ պիտի ելնէր Թէդի-ի մէջ: Եթէ բարեբաղդութեամբ ձայն մը չլուէր, կարելի է զինք սեսնէին և դռնապանին խմաց տային: Եւ սակայն ասիկց զատ միջոց մը չկար:

Լուպէր՝ տենդային յուզմամբ, մեծ ոճիր մը դործողի պէս՝ և բոլորովին երեսները կրակ կարած՝ գէպ ՚ի դուռը դիմեց, փախանքին ներքին կոճակը բռնեց, կարելի եղածին չափ մեղմիկ դարձուց լեզուակը, դուռը բացաւ և թողուց որ լեզուակն իր առջի գիրքը բռնէ: Բայց հազիւ թէ կէս մը բանալու կարող եղաւ այդ դուռը՝ որպէս զի անցնի, բայց չկրցաւ արդիւնել որ դուռն իրեն յատուկ աղմուկ մը չհանէ երբ իր ծղիւնիներու վրայ կ'զառնայ. սուր կ'իւնչ մ'որ ամենուր յայտնի է, և որ բոլոր ժողովին լսելի եղաւ:

— Ա՛յ կրնայ այս ժամուս իմ սենեակս մտնել, ըսաւ մէզովիցայ զօրապետը: Նայեցէք ո՛վ կրնայ լինիլ, ըսաւ նա հայր Աամս պիակին, որ ճիշտ դրբատան դրան մօտ նստեր էր:

Հայր Աամսիակ ոտք ելաւ, սենեակը մտաւ, դուռը կիսբաց զտաւ, նրբազաւիթն ելաւ և նշմարեց քահանայ մը. կարծեց թէ

այս քահանան Լուսէրն է իր հասակն ու ընթացքը գիտելով, որ մեծաքայլ կ'ըլլանք դէպ 'ի սանգուղը: Սաստիկ զարմացած, դէմքը տակն ու վրայ՝ հայր Կամպիակ զարձառ և Զօրապետին ըսաւ թէ զըբատան դուռը կ'իստովին բաց էր, բայց ոչ ոք անդ կ'ըլլանուէր:

Տան մը մէջ ուր ամէն ինչ թուարանական ճշգու թեամբ կ'կատարուի, այս զիպուածը բոլոր հարց մտմտութեամբ տուաւ, նոյն իսկ զօրապետին: Իսկոյն դուրս ելնելով նրբազարիւրը կ'մտնեն. հայր Կամպիակի այլայլութիւնը հարց համար անբացատրելի է և անոնց վրայ մեծ տարադրութիւն կ'ընէ: Գրքատան ներսի կողմը կ'ընեն: Ոչ ոք կ'երեւի, նրբազարիւր ձայն ձիւն չկայ: Անկից հարց սենեակները կ'վաղեն: Ամէն ոք՝ ժողովին անդամներէն դատ հանդարտ նստած կ'աշխատէր: Եղբարք իրենց սրաշտոնը կ'կատարէին. և այն որ Զօրապետ հօր սենեակին հոդն ունէր, և որ՝ առաւ չէր գոցած՝ զըբատան արտաքին դուռը բխլորովին, նոյն պահուն տունը չէր գտնուէր:

Ատեն մ'երբ շարունակ զգուշութիւն ընելու պարտաւոր էին, երբ հռոմէական մասնաժողովը՝ ժէզվիդաց թշնամին, կրնար չարագուշակ դաւադրութիւն մը նիւթել, հրգեհնել, ուսմբեր պայթիւթել տալ, ժէզվիդաց ասպրանին մէջ ամենքն արհարօք բռնուեցան: Եղբայր դոնապանն արտաքոյ կարգի բան մը չէր տեսած: Բայց երբ հարց ու փորձ ըրին թէ ո՞րք մտան տունը, պատասխանեց թէ օտարական մը չէր մտած վերի գտտիկոնը, եթէ ոչ այն գազզիացի քահանան՝ որ առջի օրն այցի եկեր էր հայր Կամպիակին, և որ վերապատուելի հօր յատուկ հրամանին վրայ՝ շիտակ իր խնցը պիտի ելնէր ամէն անդամուն որ այցի գար:

Այս քահանայն երեք ժամ կեցեր էր հայր Կամպիակի սենեակը: Հայր Կամպիակ Զօրապետին առջև կանչուեցաւ որպէս զի յայտնէ թէ օտարական քահանայն ժամը քանիին այցի եկել էր իրեն, և ժամը քանիին իր խուցէն ելեր էր:

Հայր Կամպիակ հաստատեց թէ բոլոր օրը տեսած չէր բնաւ գազզիացի քահանայն: Իսկոյն եղբայր դոնապանը բերին. այս ալ յայտնեց ճշգիւ թէ որ ժամուն քահանայն 'ի ժէզլի մտեր էր և

թէ իր աչաց առջև մեծ սանդղին ձամբան բուներ էր, և թէ որ ժամուն անոր վար իջնելը տեսեր էր:

Ինչ այլանդակ դազանիք = Արդեօք հայր Կամպիակ իր ուխտին դէմ կ'դառնար: Գրքատունէն դառնալու ատեն յայց տուած այլաշայլութիւնը, դոնապանին ստոյգ յայտարարութենէ թէ օտարական քահանայն այն օրն հայր Կամպիակի սենեակը դացեր էր և անկից դուրս ելնելը չէին տեսած, հայր Կամպիակի ակներե տուութիւնը, քանի որ գազզիացի քահանայն անշուշտ ընդունէր էր, այս ամէն պարզութեամբ մեծ անձկութեան մէջ ձգեցին ժէզլի տան մէջ, և սրովհետեւ երեակայութիւնը՝ նոյն իսկ ժէզվիդական գլուխներու մէջ՝ շուտով կ'բորբոքի, դաւադրութեան մը խորհուրդն իսկոյն իրակամութիւն օտացաւ, և այս դաւադրութեան գլուխը հայր Կամպիակ համարուեցաւ: Պատական երկիւղ մը տիրեց ամենուրեք:

Գազանի ժողովը գոնարուեցաւ: Հայր Կամպիակի երկդիմք ընթացքը խստիւ գատարնութեան ենթարկուեցաւ: Անլուր բան մ'էր այս ժէզլի մէջ: Պէտք էր հայր Կամպիակը հեռուօր վանք մը դրկել ասրաշխարելու համար: Այս առարկունը պէտք էր անմիջական լինէր: Եթէ հայր Կամպիակ յանցաւոր էր և բան մը նիւթեր էր, իր շուն ամէն բան 'ի դերե պիտի հանէր. եթէ անմեղ էր, հնազանդութիւնն Աստուծոյ առջև ընդունելի զոհ մը պիտի գնէր իր վրայ:

Այս եզու դազանի ժողովին համառօտ դատաստանը = Լուսէր հեռուեալ օրն իմացաւ որ հայր Կամպիակ Հռոմէն հեռացեր էր:

Է

ՓՈՒՔՐԻԿ ԳԵՐԸՊԱՅԾԱՌԸ

Լուսէր մտածեց որ հայր Կամպիակին չուն փոքր 'ի շատ էր պատճառաւ եղած պիտի լինէր: Կանկածները փարատելու հա-

մար՝ ՚ի ժէշէ- իր պատարագն ընելու շարունակեց . Պէրդրան արբային համար յանձնարարական գիր մ՝ ունէր . գաղղիացի քահանայից մին էր այն որ Հռոմի մէջ իբրև թղթակից կ'մնան և շատ վիճակներու գործերը կ'անօրինեն :

Շանսէրի ընդհանուր երէցը՝ Լան-լը-Պուրկի երէցին նամակ մը տուեր էր այս անձին համար : Ուստի եռանդուն ընդունելութիւն մը գտաւ անորմէ : Այս մարդն որ հռոմայեցի եպիսկոպոսաց ամէն սովորութիւններն աուեր էր Լուպէրին շատ օգտակար եղաւ : Ամենուրեք զանի ներկայացուց : Լուպէր իր ազատ և անկեղծ բնաւորութեամբը Հռոմի մէջ շատ լծանկողին բարեկամներ ստացաւ որոցմէ իր խորհրդին գործարարութեան համար օգուտ քաղել կ'յուսար , խորհուրդ մը զոր սակայն բոլորովին զազանի կ'պահէր Պէրդրան արբայէն :

Մանաւորապէս առևթ ունեցեր էր խօսելու պատական ընտանեաց մէկ նորատի անդամին հետ , այսինքն գերապայծառ Անդրէաս Ճիուսդօին հետ , Պապին զաղտնի սենեկապետը , որ շատ մարդավարութեամբ տեսնուեր էր իր հետը և իրեն ծառայելու պատրաստ դնուեր էր այն կեղծ ու պատիր մեծարանօք որ անհարազատ հռոմայեցուց յատուկ կնիքն է : Անտարակոյս այս մարդը ծախու էր : Փոքր ինչ ազատ կեանք մը կ'վարէր զաղտնագողէ Վատիկանու արքունիքը ստորին պաշտօններու վարձքը չափէն աւելի քիչ են : Այս եպիսկոպոսն աչքը խոշոր խոշոր բացաւ կոյս մը ոսկիներու առջև՝ երբ օր մը Լուպէր այս անձին այցելութիւնն ընդունելով՝ սեղանին վրայ դանոնք համրելով կ'զուարճանար :

— Աւատիկ , ըսաւ Լուպէր , այն ընծայն զոր բարեկամ մը ծանր վիճակէ մ' ազատելու համար զիս օղնողին պիտի տամ :

— Դիւրին է այդ ընել , ըսաւ եպիսկոպոսը՝ իսկոյն խայծէն հրապուրուելով :

— Եթէ գործը սրտովին յանձն առնուք՝ անտարակոյս պիտի յաջողի :

— Շատ լաւ , սրտովին պիտի բռնեմ . ինչ է խնդիրը :

— Տէր Աստուած , շատ փոքրիկ բան մը . . . : Անխոհեմութեան գործ մը . . . : Իմ մէկ նորատի բարեկամ քահանայից մին Հաւատարմութեան ատենին ճիրանն ընկեր է :

— Հօ , հօ , Հաւատարմութեան ատեննը , բայց այդ զօրաւոր ատենն մ'է , տէր իմ :

— Օ՛ն անդր : Միթէ դուք որ Նորին Սրբութեան Պապին կը մօտենար , ամէն բանի կարող չէք : Նայինք , պատասխան տուէք : Եթէ յանձնառու կ'լինիք , ահա ձեռքս , պայման դնենք : Գուք ինձ օգնեցէք , և բոլոր այս ոսկին ձեզի կ'ընծայեմ :

Խտալացին անկուշտ աչօք կ'դիտէր այն դեղեցիկ ոսկիները , որ այնպէս կանոնաւոր զիզուած էին և այնպիսի թովիչ զոյն մ'ունէին :

— Միթէ առանց կատակի կ'խօսիք , ըսաւ նա Լուպէրին :
— Ո՛հ , առանց կատակի :
— Քաջ դիտէք որ գործը շատ ծանր է , կարելի է ապագառ վտանդի մէջ դնեմ . . . :

— Գուք այնքան ճարպիկ էք որ բնաւ վտանդի չէք հանդիպիր : Միթէ դուք զերար չէք ճանչեր իբրև աւաղակներ սօճաւաճառի մը մէջ : Շատ ատենէ ՚ի վեր փոխադարձ ապահովութիւն կ'գործածէք : Իբօք , ինչ է խնդիրը : Բաւական է միայն Հաւատարմութեան ատենին մէկ քանի անգամներն որսալ , զործակատար մը , աղղեցութեան տէր խորհրդական մը : Այդ ձեր դիտնալիք բանն է : Չեր մտաց բոլոր ճարտարութիւնն ՚ի գործ գրէք , և դուք Հռոմի մէջ այդ ճարպիկութենէ զուրկ չէք : Եթէ հարկ է մեծ և անդիմադրելի փաստը գործածել , անոնց զրպանին մէջ սահեցուցէք այս դեղեցիկ ոսկիներէն մէկ քանին : Ասոր համար աստ եկած եմ , կ'երդնում ձեզ : Հատ մ'անդամ հետս ՚ի Սովորա տանելու միտք չունիմ , եթէ Տիբեր դետին մէջ անդամ նետեմ :

Տիբեր դետին մէջ նետել : Այս խօսքն արդէն կ'ահարեկէր զերապայծառը : Առանձին կ'ըսէր .

— Այս գաղղիացիք տաքղուիս մարդիկ են . Լուպէր արեղան ըսածն ՚ի գործ վնող մարդ մ'է :

Յետոյ յարեց .
— Ո՛հ , այդ դումարը Տիբեր դետը չպիտի նետէք :
— Լաւ ուրեմն , առէք առ այժմ ձեզի պէտք եղածը . մնացորդ մասը կ'ստանար բարեկամիս ազատութենէ ետք :

— Պէտք է անշուշտ Նորին Սրբութեան մօտեցող ուրիշ քա- նի մ'եպիսկոպոսներ շահիլ :

— Լաւ ուրեմն , ձեզ կ'բռնեմ ձեր խօսքէն . միթէ այս չորս դէզ օսկին ձեզի կ'բաւեն :

Եւ անկաշա մարդը համրեց՝ հանդիսաւոր ծանրութեան մ'ա- անն , երբ Լուսէր ինքզինքը կ'զայէր որպէս զի ծիծաղը բռնէ , թէ քանի հոռմէական սկուտ կ'ընէր այն գումարն որ իրեն կ'ըն- ծայուէր :

— Ուրեմն բարի վախճան մը ստանալու , անմիջապէս մեծ հա- րուած մը տալու համար , դէշ չլինիր , պարոն , երկու երեք հատ դէզ աւելցրնել . այն ատեն զործին յաջողութեան համար կ'խոստանամ :

— Թո՛ղ այդ լինի ձեր ուղածը . աւասիկ չորս կոյս կս : Այս բարի զործին համար յաակապուցած գումարիս երկու երրորդ մնան է :

— Անբարակոյս այս բարեգործութիւնն ընելու համար է մի- այն որու մասնակից կ'լինիմ ձեզի հետ , որ սոյն օսկին առնելու կ'հաւանիմ զիսնալով որ ինձ բան մը չպիտի մնայ անկից : Ա՛հ , պարոն արեղայ , այժմ՝ արչափ դժուարին է Հոռմի մեջ յաջողիլ : Երբեմն , ա՛հ , երբեմն , երանելի ժամանակ մ'էր . Գրիգոր Թ.Ձի ատեն բաւական էր Վաեղանինօն երթալ դանել որ իր սափրիչն եղեր էր , և որ իր մատրիմ սրտակիցը դարձեր էր : Այդ դու- մարին մէկ քառորդն անդամ՝ բաւական պիտի լինէր : Բայց մեր աղօր աւանդութիւնները կ'կորսուին . կ'ուզեն հաճելի լինիլ Նո- րին Սրբութեան որ քանի մը բաներու համար խիտ է : Եւ այժմ՝ շնորհները շատ աւելի սուղ կ'ծախուին : Իսկ դուք , պարոն ա- բեղայ , շարունակեց զերապայծառը , Հոռմէն չպիտի մեկնիք ան- շուշտ առանց Պատլին մէկ աստիճանին ասպետ լինելու : Այդ միշտ աժան է . քանի մը սկուտ միայն կ'բաւէ :

— Այնչափ մեծ փափաք չունիմ այդ բանին , ինչմեղքս պահեմ :

— Այդ մասին , յաջողելու վստահ եմ : Տեսէք . . . մինչև անդամ Մեծ Սուրբ Գրիգորի շիղջը ձեզի համար կրնայի ստա- նալ . . . կամ Ոսկի Մարակի նշանը . . . : Ընարեցէք :

— Նոյնիք վերջը , եթէ ստակս աւելնայ այն ատեն բան մը կ'լինենք :

— Ֆրանսայի կղերին մէջ մեծ բան մ'է այդ :

— Ո՛հ , եւ իմ զործս կարգապրած եմ , արդէն մեծ վիճակի մը սահմանուած եմ :

Այս խօսակցութեան վերջերը՝ զերապայծառն իր երկայն ձեռ- ները մեղմիկ սահեցուցեր և իր մասք ծանրութեամբ դրպանը նե- ակեր էր :

Խոնարհարար բարեկեց և մեկնեցաւ :

— Քիչ ատենէն ձեզմէ լուր կ'ընդունիմ , այնպէս չէ , ըսաւ . Լուսէր :

— Առաջին ատ թիւ , պարոն արեղայ :

ԿԱՄՏԻՆԱԼ ԱՆԳՈՂԵԼԼԻ

Եւ բոսայի մէջ շատ զբոյրտեցին կարմինալ Անդոնէլլին : Նույն- բական միաբանութեան բարի գաւակ մ'է . ճշմարիտ բարկղեան մը՝ սիրուն կերպերով . դեռ ևս երիտասարդի պէս կ'վարուի , և այս բանս իրեն կ'յարմարի : Երբոր քաղքէն Վատիկան մնան իր այ- ցելուներն ընդունելու , իրբև աշխարհային մարդ հաղուած՝ փոքր ինչ սեթեկեթեակ հեծեւաղօր սպայի մը պէս , զիւրին է հասկը- նալ որ դեռ ևս քաղքը նորա կ'յաջողի : Ամզանը հազած՝ առա- ջին պաշտօնէի պատուոյն մէջ կ'երևի , բայց առանց թեթև ամ- բարտաւանութեան : Սիրալիբ խօսող մ'է , իր դաղափարը զիւս- նագիտական երկար շարաբանութեան մը մէջ ընկղմելով , որու մէջ կ'ըռէ միայն ինչ որ կ'ուզէ ըսել , և այս ամենը պատուա- կան գաղղիարէն լեզուաւ : Եր քաղաքավարութիւնը ցողտրիկ է :

Երբ քովէն հեռանաս, չես կարող երեակայել որ նա յետագէմ՝ կառավարութեան մ'առաջին պաշտօնեայն է: Մարդ աչերը կ'ըջի որպէս զի սառուցէ թէ իրօք Աատիկան կ'դտնուի, թէ ոչ սահմանադրական տէրութեան մ'առաջին պաշտօնէին սրահը: Ըսենք՝ ՚ի գովեստ կարտինալին, որ նոյն եռանդով և նոյն ճարպիկութեամբ պիտի ծառայէր աղատականութեան կողմէ շատ յառաջացած իշխանութեան մը քաղաքականութեան:

Անդոնէլլի այն մարդոց դասէն է որ յարասե հաւատարմութեամբ դրութեան մը կ'կապուին և դատի մը կ'նուիրուին բարեկամի մը ծառայելու չափ եռանդով: Կարտինալը քայքայուն պապութեան բացարձակ աշխարհական իշխանութիւնն անկեղծօրէն կը պաշտպանէ: Այսպէս կ'վարուի մեծ վայելչութեամբ, ասպետական համարձակութեամբ մ'որ կարող է ամենէն դաժան քաղաքական հակառակորդները զինաթափ ընել: Հարուստ տան մը վերակացուն է, որ իր բոլոր անձնական գաղափարներն ՚ի բաց մերժեց իր տիրոջը գաղափարներն ընդունելու համար:

Երդէն ըսինք որ «չ կարէ՛քին մնլեռանդ պաշտօնարկու մ'է: Այլ սակայն՝ այս ճարպիկ մարդը զուրկ է հանձարէ: Աշխարհիս վրայ՝ կրօնական խնդիրներու մասին անցած դարձածին նկատմամբ պառաւ կնկան մը աղիտութիւնն ունի: Բարիզի կրօնական մամուլը շարունակ զինքը մոլորեցուց, աւելի նշանաւոր խօսք մ'ըսենք, ոխերիմ՝ ընդդիմութեան մէջ զինքը կարծրացուց, ինչպէս որ նոյն ինքն զՊապը, կարտինալները, եպիսկոպոսայ մեծ մասը, բազմաթիւ քահանաներ և բարեպաշտօն կոչուած աշխարհականները խտացուց:

Կարտինալը կրնայ հաւատ ունենալ, բայց այս պահուս՝ ըստ Աէյոյի Աետարանին վրայ կ'երդնու անդրդուելի կերպով, այնպէս ինչպէս որ ամէն առտու կ'մեկնեն շլացուցիչ պայծառութեամբ և աննման բռնակռուի անուշութեամբ անուանի վարդապետներ որոց ամենէն հնարագէտները Բօքիլլ և Պաքօնէ կ'կոչուին:

Այս ծանրակշիւ հեղինակութեանց վրայ՝ կարտինալը լիովին համոզուած է այսօր որ ո՛չ ըսելու յամառութիւնը՝ Պիոս Թ սուրբ քահանայապետին հետ համակամ, եւրոպական զիւսնագիտութիւնը

կ'ընկճէ: Այս «ոչն» ապագայ սերնդոց զարմանք ու հիացում պիտի պատճառէ, կ'ըսէ նա իւրովի, և այս «ոչն» ըսելուն համար, Անդոնէլլիի փառքը դարէ դար պիտի հասնի:

Բայց այս արդէք մը չէ՝ որ իբրև բանիբուն մարդ՝ Աատիկանէն ելնելու ենթադրութեամբ, Անդոնէլլի՝ որ կարտինալութեան աստիճանն աղքատ եղած ատեն ստացաւ, պատուովն ապահոված չլինի քանի մ'աղւոր միլիօններ, որ՝ ինչ և իցէ անդ՝ հանդիստ ապրելու իրեն դիւրութիւն կրնան տալ և չցաւիլ իսկ տանն հինգ հազար Փրանքի ամսական վարձքը զոր իբրև կարտինալ կ'ընդունի:

Այս է այն մարդն որու հետ Ֆրանսա պաշտօնապէս կ'բանակցի միջազգային քաղաքական յարաբերութեանց մասին:

Ժուլիօյի գէպքը մեծ աղմուկ հաներ էր: Պրուքսէլի մեծ լրագիր մ'որու թղթակիցը միշտ ստոյգ տեղեկութիւններ կ'հաղորդէ, օրիորդ Բլավիէրի բանտարկելութեան անհաւատալի արկածը, խորտակեալ վանդակին վէպը, ապուշ կրթած պապական զինուորներու քթին տակ եղծք մ'իր քոյրը յափշտակելը, ՚ի վերջէ Ժուլիօյի Հաւատաբնութեան զնդանը նետուիլը պատմեր էր:

Երբ Լուիզ Բարիզ հասաւ՝ արդահատող սիրտեր դտաւ: Արտաքին գործոց պաշտօնատան մէջ՝ իր դեղեցկութիւնը, իր երկտասարդութիւնը, իր աղէտքն ամենէն ծեր պաշտօնաւորներն ՚ի դուժ շարժեցին: Աւերջապէս նոյն իսկ պաշտօնէին առջեւ ելաւ որ մարդկութեան և արգարութեան այս դասն երկու ձեռօք բռնեց: Կառավարութեան ամենէն բարձր պաշտօնեայք ժէզվիդայ այս նահատակին բաղդին կարեկից գտնուեցան: Դիւանադիտական հեռագիր մը քաշուեցաւ առ դաղդիական գեսպանատունը, դրեթէ հրաւեր մ'էր ուղղեալ գեսպանին որպէս զի նորատի քահանան իր զնդանէն հանէ:

Դեսպանն առաջին առթէն օրուտ քաղելով՝ այս փափուկ խրնդրոյն վրայ կարտինալ-պաշտօնէին տրամադրութիւնը քննել ուղեց: Հատ խօսեցաւ նորատի յանցաւորին Ֆրանսայի մէջ դրդուած համակրութեան վրայ, իր քրոջ ստացած բարձր պաշտպանութեանց վրայ և թէ ինչ լաւ սպաւորութիւն պիտի ընէր մտայ

մէջ եթէ իմանային որ այն նորաստի քահանայն Հռոմէն արձակուեր է :

Այս ճառն այնքան ճարտարաբունստ կերպով ըստ սրբան որ կարող է ըսել ամենէն նորաստի ղիւանադէտը :

Կարտինալը մինչեւ վերջը մտիկ ըրեր էր :

— Անկարելի է, պարոն դեսպան, անկարելի . ուրեմն չգիտէք որ Հռոմի ամէն միաբանական ուխտից մէջ այդ ուխտն երկնիս զրայ իրմէ վեր մէկը չճանչեր . ոչ ինձի պէս սրաշօտնայ, ոչ ձեզի պէս դեսպան, ոչ ձեր օգոստափառ տիրոջ պէս կայսր մը, ոչ Նորին Սրբութեան պէս պապ մը : Զուղեցինք աստ բան մը փոխել և մանաւանդ ամենէն անելի ժէպիլեպայ միաբանութիւնը : Այդէդէն ի դարձին՝ ամէն ինչ կ'վերանորոգէր կամ դործնապէս ճին գրութիւնը ձեռք կ'առնէր : Այս վերջին նորոշումն իր դրեց կ'յարմարէր տրամաբանօրէն . Այս անդ կեցանք : Ուստի հաստատապէս որոշած ենք որ բան մը չփոխուի իրայ ճին կարգին մէջ : Խօսքը մեր մէջ, սուրբ հաւատաքննութիւնը՝ բոլորովին կաթոլիկութեան վրայ ճիմնեալ այն ճին գրութիւններէն մին է որ մեր արդի քաղաքափոխութեան հակառակն է, բայց սուրբ տապանակին մէկ մոյթն է, անոր դպչել ամէն բանի դպչել է : Պէտք չէ մոռնալ որ քահանայից թագաւորութեան մէջն ենք : Ամէն ոճիր որ սուրբ իրերու կ'արտեանի, պէտք է որ յատկապէս մեր մէջ անհաշա կերպով զսպուի : Հաւատաքննութեան ատենանը սարսափ կ'աղղէ, այս բանով միայն ահուելի է . . . :

— Սակայն կ'տեսնէք, վստահացլ տէր, որ զո՛հերի կ'ընէ և չնչին յանցանոց համար :

— Չնչին յանցանք մի, սրբոն դեսպան : Կուսարան մը բռնաբարել, այսօրիսի սոսկալի դայթակիութիւն մը սրբավայրի մը մէջ :

— Բայց իր քոյրն աղասելու համար էր, քոյրը զոր իր կամայ հակառակ՝ Փօրքասիի մէջ կ'պահէին :

— Պէտք էր դատաւորաց, նուիրակին զիմէր :

— Եւ միթէ կարծէք, վստահաւր տէր, որ իր քոյրն իրեն պիտի դարձնէին :

— Կարելի է : Սակայն կ'հաւանիմ, յարեց Նորին Վսեմութիւնը ժպտելով, որ այդ բանը կրնար երկար տեւել :

— Արեմն մի մեղադրէք զինք եթէ ոչ օրինական, դէթ կտրուկ ճամբայ մը բռնեց :

— Բնաւ չեմ մեղադրեր զինք, կ'հաւատտեմ ձեզ : Քաջ կ'ըմբռնեմ թէ ինչ զղացմամբ այս բռնութիւնը բանեցուց : Բայց Հաւատաքննութեան ատենանը դործն այդ կերպով չպիտի դատէ : Եւ առանց ազդած երկիւղին՝ հաւատացէք, պարոն դեսպան, որ ամէն դիշեր, Իտալեոյ մէջ մեր հաղարուոր վանքերը պիտի կողոպտուէին, սուրբ կանայք բռնաբարուէին, նուիրական անօթները յափշտակուէին : Աւագահները չեն յարդեր ամենէն լաւ պաշտարանուած ճոխ բնակութիւնները, բայց դռնապան քրոջ մը առջև կ'գողան : Անքի մը սահմանէն անդին անցնիլ, կրօնահայ մը լանջանոցին դպիլ, սրբապղծութեան ծանր յանցանքներ են : Հաւատաքննիչ ատենան անդ է, որ կանգուն կ'երևի այն երեակայութեանց առջև որ ոչ օրէնքէն և ոչ զինուորական զօրութենէ կ'ահաբեկին : Բայց զնդաններու մէջ փտտիլ, մութին մեռնիլ, այս և միւս աշխարհիս մէջ դատապարտուիլ, ահա ասով միայն կ'զսպուի աւագակութիւնը, այս է վստաց պահապանը, ամենօրեայ սրբապղծութեանց դէմ մեր ասպհովութիւնը :

Կարող էինք ամէն բան ընել ձեր կառավարութեան հաճելի լինելու համար, բայց այս բանս ո՛չ երբէք : Փոքրիկ Մօրդարան ետ տալ շատ աւելի դիւրին պիտի լինէր, և սակայն դիտէք, այդ կիտին հասնելու համար՝ պէտք պիտի լինէր խոստովանիլ որ մեր կրօնական և քաղաքային օրէնսդրութիւնը յուրի է, և այս բանս երբէք չկրնար ընել կառավարութիւն մը :

Գիւանադէտը չէր կարող պնդել :

Լուիզին կողմէ հասած գիր մը Բարիզէն, Լուպերի իմացուցեր էր իր ուղեորութեան յաջողութիւնն և քահանայապետական կառավարութեան մօտ ստանալը ձեռնառութիւնը դաղղիական գեսպանատան միջոցաւ :

Լուպեր Ժուլիօն տեսնելու և դէթ իր քրոջ նամակին վրայ տեղեկութիւն տալու ընդունայն ջանաց : Յատկապէս խիստ հրամաններ տրուած էին անոր զնդանին բան մը չմտեցընելու :

Լուպեր զնաց իր նպիսկուպոսը գտնելու, որ երանելի ոսկիներն

իր գրպանը դնելէն 'ի վեր՝ չերեցեր էր : Պիրէնեանը նախ համբերեր էր . ապա գնաց նոյն անձին այցելու թիւն ընելու , որ որեթէ վ՛ւտութեամբ զինքն ընդունեց , և անոր յախանական խօսքն ըսեր էր . « Պիտի նայինք . . . շատ կ'յոսամ » : Լուսէր քանի մ'անգամ ևս զացեր էր և միշտ նոյն պատասխանն ընդուներ էր :

— Շատ աղկ , ըսաւ նա իր բովի , ծուղակն ընկայ : Անայիմ որ 'ի Հուովոսի օսկի բանալին ամէն դուռ կ'մտնէ , բայց անդ կը մնայ և չբանար : Ո՛հ , թշուառական , քեզ պիտի կծեմ :

Լուսէր խօսքը բռնեց . որ մը կանուխ՝ երբ բոլոր քաղաքն 'ի քուն էր , դնաց եպիսկոպոսին դուռը զարնելու և տան դռնապանին ըսաւ . Շատ ստիպողական բան մ'ունիմ ընելու զերապայծառ Անդրէաս Ժիուսիօսին :

Այս մեծ անձը բռնուեցաւ : Շուտ մ'անկողնէն ելաւ , տան զղեստը հագաւ , և փոքրիկ սրահի մը մէջ Լուսէրն ընդունեց :

— Է՛հ , նայինք , ըսաւ ու ժեղ Պիրէնեան քահանայն՝ այնպիսի ձայնով մ'որ այլանդակ նշանակութիւն մ'ունէր , կ'փափաքիմ որ դործին վերջ տրուի : Պէտք է դործ տեսնել թէ ոչ ոսկիներն ետ տալ : Ա՛յլ էք ըսածս , զերապատիւ տէր :

Ողորմելի եպիսկոպոսն որ այս ճարտասանութեան շատ վարժ չէր , գրեթէ կ'դողար :

— Այս մարդն իր կացութեան վրայ չափազանց կ'շփանայ , կ'ըսէր նա : Ա՛հ , թէ որ դաղղեական զօրաց բանակը Հուովոսի չզրտնուէր , ինչպէս զանի ապահով տեղ մը պիտի նետել տայի իր պաշտպանած բարեկամին հետ : Բայց դաղղեացիի մը դպչել , այդ դժուարին բան է : Պէտք է ապացոյցեալ յանցանք մը , այն ժուլիս անաստուած արեղային յանցանքին նման :

— Պարոն արեղայ , ըսաւ Լուսէրին աղու ձայնով մը , հաւաստի եղիք որ աշխատեցայ . . . : Եթէ գիտնայիք ի՛նչ նեղութիւններ քաշեցի . . . որչափ դրամ ծախք ըրի ձեզի համար , նոյն իսկ ձեր տուած գումարէն աւելի : Ահա , ձեզի հաստատ ապացոյց մը պիտի տամ : Անտարակոյս ստակ տալով յաջողեցայ իմանալ ձեր գեղականին և կարտինալ Անդոնէլլի մէջ անցած խօսակցութիւնը ձեր բարեկամին համար :

Եւ մանրամասն պատմեց երկու դիւանադիտաց խօսակցութիւնը : Պիրէնեան քահանային բարկութիւնն իջաւ : Այս ցեղերը կծու և վառվառն են , բայց ուղիղ մանաւանդ վեհանձն են : Իսկ ճեպիսկոպոսն աւելի մեռած էր քան կենդանի : Սակայն զգաց որ իր խօսակցին ձայնը կ'մեղմանար :

— Արճիկ , այդ սոսկալի բան է : Եւ միթէ ուրիշ միջոց մը չկայ յաջողութեան :

— Աստուած իմ , ուրիշ ճար չկայ բայց միայն Պապին մօտ բարեխօսել : Այս պիտի փորձեմ . . . : Ո՛հ , խօսք կ'տամ շուտով ընել . . . բայց քիչ մ'ատեն կ'ուղեմ :

— Շատ լաւ , ու թ օրէն պիտի գամ :

Երբոր Լուսէր տրտում և վհատ իր պանդոկը կ'դառնար , միտքն ընկաւ տեսնել այն տեղերն ուր ծուլիօյի արկածները պատահեր էին : Լուիզ խիստ սրտաշարժ կերպով պատմեր էր իրեն այս տեսարանը :

— Ա՛մեկնիմ , ըսաւ Լուսէր իր բովի : Երթամ պիտի Փօրքասիի Նօդր-Տամը տեսնելու : Այսպէս համբերելու պիտի ստիպուիմ :

Հեսեկալ օրը հասարակաց կառքի մը մէջ սքլած՝ Ալիէրպէն Աէդրալա կ'ուղևորէր :

Թ

ՄԱՔՍԸՆԵՆԳԻՔ

Լուսէր ամբողջ ժամ մ'անցուցեր էր Փօրքասիի Նօդր-Տամի մէջ : Տեսեր էր սև արձանն իր շաքաթական հագուստով , իր գեղեցիկ նկարներով , քանակեալ ցանկը՝ զոր շուտ մը վերանորոգեր էին և թէև գործաւորը նոր փայտին հին փայտի գոյն տա-

լու ճգներ էր բայց տակաւին կ'երևէր թէ ո՞ր կողմէն խորտա-
կուեր էր :

Այս ամէն բաները մեր ուղեորին հետաքրքրութիւնը սաստիկ
զրդուեցին : Կարծես թէ դեռ կ'տեսնէր իր նորատի բարեկամն
որ՝ տենդային եռանդով վառուած՝ ժամանակին միջոցաւ սեցած
քանդակները կ'խորտակէր և Լուիզը տեսնելուն հնչական ձայնով
մը կ'պուար . Իմ քոյրս է , իմ քոյրս կ'ուզեմ :

Լուսէրին յատակագծին կ'յարմարէր դերապայծառ ծիուսդօին
տուած ութ օրէն օդուտ քաղել , Պօլսէնայի լճին շրջակայքը
պտրտելով , նոյնպէս Վիդէրպի և Գօրնէդօյի մէջ տեղ գտնուած
մեծ քաղաքները . յետոյ միտք ունէր Հռոմ մտնել Զիվիդա-Վէ-
քիայի երկաթուղիով : Նօր-Տամէն հեռանալու միջոցին Լուիզի
ազատարարին այցելութիւն մ'ընել ուզեց , այսինքն քաջասիրտ
Իաքօմօին :

Լուիզին տուած տեղեկութեանց համեմատ՝ դժուարութիւն չկրեց
մաքսանենդին փոքրիկ ճերմակ տունը գտնելու : Իաքօմօն իր սուռն
էր : Լուսէրի հետ շուտ մը ծանօթացաւ . չկայ բան մ'որ այն-
քան մարդիկն իրաբու մտեցընէ որչափ նոյն գատին համար անձ-
նուիրութիւնը , այն էակներու համար սէրը :

— Իաքօմօ , դու բարեսիրտ մարդու մը պէս վարուած ես . քեզ
կ'սիրեմ այնպէս որպէս թէ զիս ազատած լինէիր , այն չքնաղ
օրիորդին տեղը :

— Հապա միւս խեղճ մարդը :

— Ա՛հ , զիտե՛ն արդեօք թէ ո՞ր է :

— Սատանային ճանկի՛ն տակ :

— Աւելի գէշ տեղ մը . կարելի է սատանան որսալ . բաւա-
կան է նորա անձնատուր լինիլ :

Լուսէր մանր պատմեց բոլոր եղած ճգուները և ապարդիւն մնալը :
Իաքօմօ սկսաւ ծանր խորհիլ :

— Ուրեմն , Նորին Կայսերական վեհափառութեան Նափողէօն
Գ.ին դեսպանը Նորին Սրբութեան կառավարութեան մօտ այնա-
ջող ելաւ :

— Այո՛ , Իաքօմօ :

— Չափէ դուրս յանդգնութիւն : Եւ սակայն եթէ դուք գաղ-
ղեացիք չլինէիք , Նորին Սրբութիւնը պիտի ստիպուէր իր թաղը
հանել և խոյրը դնել :

— Այդպէս է : Հոգ չեն ըներ ցոյց տալու որ այդ ծառայու-
թեան մեծ արժէք կ'ընծայեն : Այլ սակայն իմ փոքրիկ եպիսկո-
պոսս դեսպանին չափ անյաջող ելաւ :

— Կ'իմանամ , բայց քու ոսկիներդ պահեց :

— Այո՛ , Իաքօմօ :

— Ա՛հ , թէ որ այդ գողին առած դումարին մէկ քառորդը մի-
այն ձեռքս ունենայի . . . :

— Եթէ այդ է միայն խնդրածդ , Իաքօմօ , դեռ ոսկի ունիմ :
Եւ քսան Ֆրանքոնոյի պատատ մը հանելով՝ թուղթը պատուեց
և Պիրենեան քահանայն մաքսանենդին սեղանին վրայ հաղար Ֆրանք
ոսկի թափեց : Երբէք այսպիսի ահազին դումար մը Իաքօմօին
խրճիթը չէր մտած :

— Ա՛ն այդ ոսկին , ըսաւ նա Լուսէրին , ես արդէն իմ վարձքս
առի : Խեղճ աղջիկը շատ առատաձեռն գտնուեցաւ ՚ի Վօլքար-
սէդա , և կ'զգամ որ դեռ կ'իսովին կատարեցի իմ պաշտօնս . . .
պէտք է եղբայրն ալ ազատել :

— Արդեօք այդ բանին համար միջոց մ'ունիս :

— Պիտի փորձեմ : Իաքօմօ բնաւ ինքզինքը չզոյլեր : Բայց ո-
րովհետեւ Նորին Վսեմութիւնը Ֆրանսայի դեսպանը չյաջողեցաւ՝
պէտք է որ Իաքօմօն դործելու ելնէ : Այս սիրական պատանին
չկրնար անդ մնալ : Միայն քանի մը ժամ հետը տեսուեցայ , բայց
ինձ այնքան անկեղծ , բարի երեցաւ որ իբրև որդիս զանի կ'սի-
րեմ : Ութ օր անդամ այն եղած տեղը չպիտի մնար . Բայց Իա-
քօմօն չկրնար ամէն բան ընել առանձին : Վերստին կ'աղաչեմ
քեզ , և ՚ի հարկին՝ քեզ կ'հրամայեմ , վերցուր պահէ այդ ոս-
կին . մեզի պէտք պիտի լինի ՚ի Հռոմ : Մնաս բարեաւ , կի՛ն , Տի-
րամօր աղօթք ըրէ Իաքօմօի համար : Սոսկալի արշաւանք մ'է ը-
նելէքս . բայց պատուոյ խնդիր մ'է այն :

Լուսէր ու Իաքօմօ ճամբայ ելան Զիվիդա-Վէքիա դնալու .
նոյն իրկունս իսկ Հռոմ մտան :

կ'սպասեն մինչև որ ուժգին ալիք մը գալով զինքը ծովեզր հասնեն կիսամեռ :

Պիոս Թ. Առի Ժ.Ջի ճակատադիրն ունեցաւ, 'ի բաց առեալ կառափնաւոր : Տարաբաղդ Պուրպօնին պէս ուղիղ խորհուրդներով վառ՝ իր յատուկ բնազդով մով վերաորում լինելով այն նուաստութենէ որու մէջ Գրիգոր Ժ.Ջ պապը պապութիւնը ձգեր էր, բնական էր որ սահմանադրական զօրութեամբ նոր թուական մը բանալու փափաքէր, և իր նախորդին վարած իշխանութենէ նուազ յուզեալ և աւելի հանդարտ իշխանութիւն մը վարել : Պասերու աշխարհական թաղաորութիւնն այնպիսի անկարգութեան մէջ գտաւ նա որ չկրցաւ նորա ներկայացրնել այն կարանաւորաց թուղթերն որոնք հոռուական բանտերուն մէջ կ'վխտային . ուստի հարկ եղաւ Օկիասի այս ախոռները մաքրել, շարադործներուն, նոյնպէս քաղաքական յանցարարաց հետ խառնուած աւազակներուն ըն հանուր ներողութիւն շնորհել :

Այս իշխանութեան սկզբնաորութեան նշանաւոր մէկ երևոյթն ալ այս եղաւ . Պիոս Թ., որու բարեպաշտութիւնը հանրածանօթ է՝ հումայեցոց երևակայութիւնը հիացրնելու համար, առանց դիտնալու քրիստոնէից մեծ խնջոյքն իր նախնական պարզութեան վերածելով, իր ձեռօքը հաղորդ տուաւ հին դրութեան այս դատապարտելոց 'ի մեծ գայթակղութիւն ժշկիւլաց, կարսինալաց և Հռոմի բարեպաշտից :

Պիոս Թ. աւելի կ'արժէ անշուշտ քան թէ իր շորս կողմի պարպաները : Գծուարին է երևակայել թէ հոռուական եպիսկոպոսաց դատը մտաւոր ինչ աղքատութեան մէջ ընկած են : Անկարելի է որ վերջապէս կործանման չհասնին այն իրարու յաջորդող սերունդներն որոց միակ իտութիւնն է աստուածաբանական դոգմն ինչ ծանօթութիւններ, ժամերդութեան և կանոնական օրինաց փոքր ինչ հմտութիւն : Ինչ անկում, այնպէս ճոխութեամբ օժտեալ ժողովրդեան մը մէջ :

Պիոս Թի օրովը՝ որ խոտակրօն է, հոռուական նորափայտ եպիսկոպոսաց իգարիութիւնը յայտ յանդիման երևելէն դարբեցաւ : Մինչև գաղղիական զօրաց դարձ, այս եպիսկոպոսները՝ որ մեծ ըն-

Ժ

ՊԻՈՍ Թ. ԵՒ ԽՌԻՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ՀՌՈՄ

Ժամանակակից կրօնական պատմութեան մէջ նշանաւոր պատկեր մը կ'երևի . այս է Պիոս Թին պատկերը : Մաստայի եղական արտօնութիւնն ունեցած պիտի լինի՝ իր դահակալութեան առ թիւ՝ եւրոպական ազատականաց սրտային ողջոյնն ընդունելու, և կղերական կուսակցութեան կողմէ անիծուելու, իսկ իր քահանայապետութեան վերջին տարիներուն մէջ ազատական աշխարհին նզովքն ընդունելու և անդրալեռնական կղերին անբաւ ցնծութեան ձայներով զովաբանուելու : Մի և նոյն մարդիկն որ կ'ուշեն . Կեցցէ՛ Պասին-թաւոր, կեցցէ՛ անմահն Պիոս Թ. անոնք են որ 1847ին կ'ըսէին . «Այդ Մաստայի կարտինալը պապ ընտրելով յոռի գործ մ'ըրին . յեղափոխական պապ մ'ունինք» :

Ինչպէս պէտք է բացատրել մտաց մէջ տեղե ունեցած այս այլանդակ փոփոխութիւնը : Միթէ Մաստայի բացարձակ իշխանութեան կուսակից մ'էր որ ազատականութեան վերարկուն կը հագնէր : Միթէ այս ժամուս իսկ՝ ազատական մ'է, որ յետադիմութեան մէջ առաջատար իր նաւարկելով՝ բացարձակ իշխանութեան կուսակից կ'ձևանայ որպէս զի խաղաղութեամբ մեռնի եր կարտինալաց և անդրալեռնեայ դադափարներով տոգորուած եպիսկոպոսացը ծոցը : Ո՛չ այս և ոչ այն :

Պիոս Թ. միջին ճամբայ մը բռնած է . սահուն դարու վարներ՝ որոց վրայ ազատութիւնն ընդ քարշ կ'ածէ վերանորոգութիւններ ընելու տրամադիր թաղաորներ, զինքը զարհուրեցողին և այժմ՝ յետադիմութեան անցաւոր պատսպարանին մէջ կ'հասնի՝ նա աբեկեալ մարդոց պէս որ ծովին երեսը ծփող խութը գրկելով

տանեաց մէջէն կ'եղնէին, դեղանի աղնուական կանանց սիրահար- ներն էին. բայց զաղղիացի սպան երևելէն 'ի վեր՝ դերապայծառն արհամարհուեցաւ, ուսնոցները նորեւուկի տեղ անցան: Եւ այս եպիսկոպոսները կամայ ակամայ քաշուեցան այն երջանիկ աշխարհականներուն առջև:

Աշխարհական պապութեան ճակատադիրն ինչ որ լինի ասկից երկու երեք տարի ետք՝ թէ զիւանադիտաց սիրելի իրաւախոհութիւն մը լինի, որու միջոցաւ խնդիր մը չլուծուիր՝ այլ ուրիշ ծամու մը համար վերջնական լուծում մ'ընդունելու կ'պատրաստուի, այն մաշած գղեստներուն պէս զոր միշտ կ'հաղնին մինչև որ թեթև շարժում մը զանոնք պատառ պատառ ընէ, թէ մտացի Իտալիոյ իղձերն անտես չառնուին, և թէ Հռոմ Իտալիոյ մայրաքաղաքն իր բնական ճակատադիրն հասնի, դարձեալ այս մեծ դէպքը զոր տասն հինգ տարի առաջ մեզնէ շատ հեռու կ'համարէինք՝ իրօք կատարուած է: Պիոս Թ՝ որ թաղաւոր է միայն Նափոլէօնեան սուիններուն շնորհիւ՝ տասն չորս տարիէ 'ի վեր բան մը չէ: Ս'հաստատեն թէ հոգևոր անկախութիւնը կարելի չէ քահանայապետին համար առանց աշխարհային վեհապետութեան: Պապն ու եպիսկոպոսութիւնը՝ որչափ որ այս գրութիւնն իբրև վարդապետութիւն չեն դառնիր, կ'մերժեն ասոր հակառակ գրութիւնն իբրև աններելի սխալմունք: Եւ ահա սակայն տասն չորս տարի որ քահանայապետն 'ի դործ կ'դնէ լիովին՝ իր հոգևոր իշխանութիւնը, վարդապետութիւն մը կ'վճռէ, ժողովներ կ'կազմէ, կոնդակներ կ'հրատարակէ, թէև քաղաքականապէս օտարաբնիկ զօրաց հաճոյից ներքև կ'գտնուի՝ առանց կորուսելու իր քահանայապետական ազատութիւնը:

Ուրեմն փորձառութիւնն եղած է. թէ Վիքթոր-Էմմանուէլ Գրիբնալ հասնի, թէ անկախութիւնը յաղթանակէ, Հռոմի աշխարհային իշխանութեան ձևն ինչ որ լինի՝ փոյթ չէ թէ Սէնդր-Սնթի դղեկին վրայ որ և իցէ դրօշակ տատանի, Վատիկանու հողէոր խօսքերը տիրող իշխանութեան ճնշման չպիտի ենթարկին, ինչպէս որ չենթարկեցան Ֆրանսայի երկարատև պաշտպանութեան ներքև:

Քաղաքական լըջամիտ մարդիկ չափազանց զայրացան Նափոլէօն Գ.ին ծանրաշարժութեանց վրայ այնպիսի խնդրոյ մէջ՝ որու հանդոյն իր ձեռքն ունի, մէկ խօսքով միայն զանի կարելով:

Կայսրն իր ժողովրդականութիւնը շատ կորոյս Ֆրանսայի մէջ՝ նոյն իսկ գործաւոր դասուն մէջ որ ճշմարիտ ոյժն է. տեսաւ այս բանս, բայց իր ցաւալի երկարաձգութիւնները մէկզի չթողուց. . . : Համբերող է նա, վասն զի իր ոյժը կ'զգայ, ընդ երկար ուշացրնել ուղեց գործը, և դեռ ևս պիտի ուշացրնէ՝ թէ իր կառավարութեան ներքին դժուարութեանց սլառձառաւ, թէ քահանայապետական թաղաւորութեան կործանումը նուազ աղմկալի և սոսկալի ընելու համար: Այս յասպաղումները բարիք են. նախախնամական տրամաբանութեան մէջն են: Ինչ մեծ բաներ որ երբեմն ընկան աշխարհիս մէջ այս կերպով ընկան:

Երբ հին կաղնիին երկար ձմեռներէ չորցած ձիւղը, թէև երկար ատենէ 'ի վեր տերևներէ և կեղևէ զուրկ է, հազարաւոր ճճիներէ ծակոտած է, հովահար կ'երերայ, բայց դեռ վար չենկնիր: Պէտք է վերջին քայքայում մը, ծայրագոյն փտում մը, ժամ մ'երբ հորիզոնէն ծաղող փոթորիկը զայն վար պիտի տապալէ՝ առանց բոլորովին խորտակելու, դալարաւետ գետնի վրայ, ուր աղքատը պիտի զայ զայն կտրելու, ինչպէս որ կամի՝ իր կրակարանը տանելու համար: Բնութիւնը քան զմարդ աւելի զթամ պիտի լինի:

Նոյն բանը պիտի պատահի աշխարհական պապութեան մասին: Նափոլէօն Գ. բուռն անկման մը նուաստութենէ զանի աղատած պիտի լինի: Ո՛չ կառափնաւ, ո՛չ բանտ, ո՛չ աքսոր: Պիտի հասնի ժամ մ'երբ նոյն ինք քահանայապետը, թէ Պիոս Թ. և անոր յաջորդը, պիտի զգայ իր գլխուն վրայ թաղին բարձումն և միայն քահանայապետական խոյրին մնալը: Պիտի զայ և ուրիշ ժամ մ'երբ պիտի խոստովանի անկեղծօրէն որ այն խոյրն աւելի զիւրատար է: Ահա այս կէտն է որ պսակեալ զիւանադիտութիւնը, զոր Նափոլէօն Գ. կ'անուանենք, «նախախնամութեան լուծումն» կ'ուչեց:

Մինչև սոյն վերջին ժամը՝ պապութիւնը պիտի քաշքշուի զայն

բոյթի և վշտաց մէջ, այս անկման երկար օրերուն ժամանակ որ նոր դրութեան զինքը վարժեցրնելու պիտի ծառայեն, իրեն համար նոր դրութիւն մը, այսինքն պարզապէս առաքելական կենաց: Հռոմ՝ բնակող մարդը ստէպ կրնայ տեսնել Պիոս Թ.ն որ, հասարակային արարողութեան ժամանակ, մինչև անդամ եկեղեցիները, հիւանդանոցները, վանքերը շրջելու ատեն՝ կ'արտասուէ: Վերջին քահանայ թագաւորը կարծես թէ լիովին կ'զգայ այն օրէնքին ծանրութիւնն որ արքայական ցեղերն իրարու համերաշխաւոր կ'ընեն, թէ ժառանգական լինին Սուրբ-Լուիի հարստութեան պէս և թէ ընտրական Հռոմի քահանայական թագաւորութեան պէս:

Լուպէր՝ որու սիրտը շատ զգայուն չէր, յուզուեցաւ երբ օր մը դիպուածով Գրէնիտտ ԿէԼ Մծիգէի եկեղեցւոյն առջև անուշտով Պապը տեսաւ որ կառք կ'հեծնէր: Քանի մը ձիաւոր ատրճանակիրներ՝ կապոյտ մաշած համազրեստով, որպէս թէ այս զօրականներն իրենց հին հագուստները հինցրնելէն ետև վերստին նորոգելու պէտք չեն զգար, Պապին կառքին առջևն էին: Այս հետևեալը զօրականները չունէին ոչ աշխարհային ունայնութիւններն անգունող կրօնի մը ծայրագոյն քահանայապետին համեստութիւնը, ոչ հզօր միապետի մը ծանրակշիւ մեծութիւնը: Լուպէր այս զգալի անկումէն տխուր տպաւորութիւն մը զգաց: Խեղճ թագաւոր, ըսաւ նա:

Բայց երբ քահանայապետին կերպարանն եկեղեցւոյն սեմին վերայ երևցաւ իր անոյշ աչքերով՝ առ վշտին կարծրած արտականոնքովը հովանաւորեալ, ուսկից դեռ ևս քանի մ'արասօր կ'հօսէին, երբ տխուր այլ պայծառ վեհափառութեամբ մ'իր ձեռքը բարձրացուց որպէս զի պատահիլ անդ զումարուած մարդիկն օրհնէ, կոշտ Պիրէնեան քահանայն զգաց ակամայ իր ծնկացը կ'ընտիլը: Իսկոյն ծունր դբաւ այս սրտաշարժ օրհնութիւնն ընդունելու, որ անտարակոյս երջանկութիւն պիտի պատճառէր հոգւոյ մը զոր անգութ ճակատագիր մը կարեւիւր վերաւորեր էր:

Անդ կային կրօնաւորներ՝ զոր Լուպէր ճանչեց իրենց զգեստէն, նոյնպէս միջին դասու հռոմայեցիներ, ժողովրդեան մարդիկ, մանա-

կտիք: Այս ամենքն ապուշ նայեցան, առանց ատելութեան ինչպէս նաև առաջ սիրոյ՝ արտասուազին թագաւորը և այս օրհնութիւնն անտարբերութեամբ ընդունեցին: Սովորութեամբ ծունր կը դնէին, ծիծաղելով ոտք կ'եւնէին:

— Թշուառներ, ըսաւ Լուպէր գրեթէ բարձրաձայն:
Ապա մտածեց:

— Այս թագաւորութիւնը բոլորովին մեռած է: Ժողովուրդը միայն կառքն ու ատրճանակիրները տեսաւ: Իրենց թագաւորին առջև միայն համր են: Երբ Ս. Պետրոսի պատշաճմին բարձունքէն կ'լսեն Benedicat vos (խաղաղութիւն ընդ ձեզ) զոր Պիոս Թ. կ'հնչեցընէ՝ մինչև բոլորչի կամարակապ սրահները՝ իր ազգեցիկ և անոյշ ձայնով՝ նոյն մարդիկ քան զիս ատելի կ'խոնարհին. անոր վրայ կ'տեսնեն Քրիստոսի փոխանորդը: Իսկ աստ սառ կարած են. կարծես թէ ոչ ինչ չեն պարտաւոր իրենց վերջին կտարին:

Այն օրը քահանայապետին արտասքը պատճառ մ'ունէին: Իր յատուկ ոստիկանութեան միջոցաւ իմացեր էր որ մեծ յայտարարութիւն մը կ'պատրաստուէր քաղքին մէջ, ոչ միայն հռոմէական մասնաժողովին թոյլտուութեամբն այլ գրեթէ իրեն հրամանաւոր: Թերևս հետևալ օրն այս մարմնաւոր պերճութեանց վերջին օրը լինէր, որոց շատ կապուած չէ բարեպաշտ ծերունին իբրաւ, բայց խղճի խայթէ մղեալ՝ կ'փափաքէր որ զանոնք իր յարգաց աւանդէր:

Հռոմի մէջ ժողովրդային խռովութիւնները չունին այն ծանր զայրապին կերպարանն ինչպէս ունին այլուր: Հռոմի մէջ ցոյց միամիտ անուանեալք և կ'ծածկուի խռովութիւնը: Բարիզի խռովութեան մէջ անգակն ու սուինը միշտ զոհեր կ'ընեն. Հռոմի մէջ ուրիշ բան չպատահիր այլ միայն իշխանութեան կողմէ քանի մը ձերբակալութիւններ և պապական զօրականաց կուշտը մղուած քանի մը դաշոյնի հարուածներ: Քրանսայի մէջ խռովարարը փութաջան մարդ մ'է որ նոր կառավարութիւն մը նախագծել կ'ուզէ, և սովորաբար լաւ պաշտօնի մը կ'յուսայ, յեղափոխութեան շնորհիւ, հռոմայեցի խռովարարը նշանի մը նայելով կը շարժի: Եթէ մասնաժողովը խոհեմութեամբ վարուիլ պատուիրէ՝

ամենէն հրաւրու հայրենասէրն իմաստութեան օրինակ կ'ըսանայ :
Եթէ մասնաժողովը կամենայ փոքր ինչ հասարակաց կարծիքը
դրողուել , պատական կառավարութեան արամագրութիւնները քնն-
նել , եթէ իրողութենէ մը փափաքի հասկընալ թէ գաղղիացի
բանակին հրամանատարն ինչ դիրք պիտի բռնէ խուլութեան առ-
ջև , իր մարդոց կ'ըսէ . Ի Գօրսօ . այս կ'նշանակէ . Նեղը դրէք
պատական զինուորները , խոհեմութեամբ քանի մը դանակի հա-
րուածներ տուէք , աղաղակեցէք . Անկցի թաղաւոր-պատը , բայց
ոչ աւելի բան մը :

Ժամը դեռ հասած չէ :

1861 փետրուարի չի խուլութեան յիշատակը դեռ պահած
են : Ինդիրը Ֆրանսայի արամագրութիւնները լաւ մը հասկընալ
էր : Գիտէին որ գեսպանն իտալական միութեան շատ նպաստա-
ւոր էր :

— Մենք ապուշ մարդիկ ենք , ըսեր էր մասնաժողովին ամե-
նէն ժիր անդամոց մին : Միթէ կարծէք թէ կաբաւները խորոված
երկինքէն պիտի իջնեն ձեր գլխուն վրայ : Գաղղիացոց կայսեր
քաղաքակնութիւնն է Պասն արտաքուստ պաշտպանել . բայց ե-
թէ պատական իշխանութիւնն անդիմադրելի յեղափոխութեան մը
առջև կործանի , գաղղիական դունդերը՝ քանի մը հրացան պար-
պէլէն ետև՝ դրոշակին պատիւը պահելու համար , Սէնդ-Անժի
բերդը պիտի քաշուին և մեզ պիտի թողուն որ դերասպանաւ Մի-
րոտին փոքր պատմները հալածենք : Իսկ Եւրոպա կատարուած ի-
րողութեան առջև պիտի խոնարհի :

Ծերունի մ'որ Ֆրանսա կ'ձանչէ՝ այս խորհուրդն իբրև յետին
ծայր վտանգաւոր՝ մերժեր էր :

— Զուլուացէք , ըսեր էր նա , այդպիսի մեծ սխալմունք մը
գործելէ : Գաղղիացի զինուորը բան մը միայն կ'ձանչէ , հրա-
մանը : Ձեզ անխնայ պիտի աւլէ թափէ Տիբեր գետին մէջ : Ժո-
ղովրդային ցոյց մը , այլ ոչ յեղափոխութիւն :

Այս իմաստուն խորհուրդն ամենքն ընդունել էին :

Ուստի այս եղաւ ծրարիրը . քննել գաղղիացի զօրաց հրամա-
նատարին բռնելիք ընթացքը , բայց նայիլ , որ եթէ ծանր յեղա-

փոխութիւն մը ծաղի , աղղային կուսակցութեան դէմ աղղու մի-
ջոյներ պիտի բանեցընէ թէ ոչ թոյլօրէն զիմադրելով՝ թերևս
պիտի թողու որ հռոմայեցիք իրենց ուղածն ընեն և այսպէս խն-
դիրը կարեն թափեն :

Ասոնք եղան բարձրէն մասնաժողովին ըրած որոշումները . իսկ
վարը կ'ըսուէր զուհիկ և հլու խուժանն որ պատրաստ էր կռիւն
սկսիլ՝ սրած դանակն 'ի ձեռին :

Իաքօսն երկու օրէ 'ի վեր Հոմոմ էր երբ այս յեղափոխական
շարժման պատրաստութիւնները կ'լինէին , որ մինչև այն ատեն
եղածներէն աւելի ծանր կ'երևէր ամենուն : Եթէ գործերը վեր
'ի վերոյ նկատէր մարդ կարելի է սխալէր և իրօք կարծէր թէ
մեծ յեղափոխութիւն մը պիտի պատահի : Պատին ալ տրուած
տեղեկութիւններն այս մտօք էին :

Լուպէր եթեմարուր քաղաքը սովորական անդորրութեան մէջ
տեսնելով բնաւ կասկած մը չէր առած : Մարդ մ'որ ամէն բան
դիտէր , որ այս ժողովրդային ցոյցին մէջ մեծ գեր պիտի խաղար
և որու հետ առտու երկու ժամ ամբողջ անցուցեր էր՝ բաւ մը
անդամ չէր ըսած ապստամբութեան վրայ :

Սպանիոյ հրապարակի իրարու հանդիպեցան :

— Միթէ նոր բան մը դիտէք , բայց Պատը տեսայ որ կնկան
մը պէս կ'լլար :

— Լաւ կ'ընէ :

Լուպէր չհասկըցաւ այս խօսքին իմաստը : Գիւրին է դուշակել
թէ ո՞վ էր այս մարդը :

Իաքօսն՝ Կարիպալտի մէկ հին զինուորը , արհեստիւ մաքսա-
նենդ , հզօր շեղերով , հակապատական համոզումներովն աղղու
մարդ մը լինելով՝ չէր կրնար անտես անցնիլ այն անձանց կողմէ
որ այս շարժումը կ'պատրաստէին և զանի իբրև անդին դործի մը
ծառայեցընելու պէտք ունէին :

Մասնաժողովին մէկ գործակալն անոր հանդիպելով ըսեր էր .

— Իաքօսն , վաղը քեզնէ պէտք ունին :

— Շատ լաւ , պարոն :

Նախ Իաքօսն քանի մը դահեկան առաւ որպէս զի թաղաւոր

— պապին անկանն համար քանի մը բաժակ պարպէ : Ապա իրեն տրուած զինուորական հրամանը մտիկ ըրաւ այնպիսի մարդու մը պաղուծեամբ և հաւատարմութեամբ որ պատրաստ է իր դրօշակին ներքև մտնել :

— Հիմակ ուշադրութիւն , ըսեր էր Իսքոսմ : Ես ձեզի եմ , բայց ինձի քանի մը մարդիկ տուէք և 'ի հարկին' օգնեցէք ինձ որպէս զի երթամ իրենց զնդանէն հանեմ քանի մ'ընտիր բարեկամներ որոց վրայ իր ճանկը ձգած է Հաւատարմութեան ատենը :

— Յօժարակամ , ըսեր էր խուփութեան կարգադրիչը , այդ լաւ խոտորում մը պիտի լինի :

Որպէս զի կասկածելի չլինի և կարենայ երկու օրուան մէջ բոլոր քաղաքն ազատօրէն շրջել և իր մարդիկը զինետանց մէջ գաննել՝ մասնաժողովին գործակալը գացեր էր իմաց տալու ոստիկանութեան թէ վրդովում մը կ'պատրաստուէր :

— Այդ բանը գիտենք , պատասխան տուին անոր :

— Կարծեմ թէ ժողովրդեան մէջ շշուկ կայ թէ բանտերը պիտի խուժեն :

— Շնորհակալ եմ , այդ ազդարարութիւնը լաւ է :

Այս յունաց արժանի փոքրիկ հնարքով՝ գործակալը բայէ 'ի բաց գործակից գտնելու կարող եղաւ , և պապական ոստիկանութիւնն անոր երթևեկութանց վրայ հսկելու բնաւ հօգ չըրաւ : Չէին կասկածեր մարդէ մ'որ կառավարութեան այլ և այլ տեղեկութիւններ հաղորդեր էր :

Փետրվարի 2ին՝ մասնաժողովին որոշած ժամուն՝ աներկիւղ խիտ ամբոխ մը՝ իրենց վերարկուներով փաթթուած հին ձևով , եկան բռնեցին Քանբօն , Քօլիզէի շրջակայքը , Հավօնէ հրապարակը , Գօրսօն , տէլ Բօբօլօ մայտանն և ամէն բանուկ փողոցները :

Առջի օրէն ոստիկանութիւնն իր պատրաստութիւնները լռելեայն ըրեր էր որպէս թէ պատերազմի ժամ էր : Երկու բանակաց մէջ միշտ բարեկամներ կ'գտնուին , և իրարու ծանօթ մարդոց մէջ այս այլանդակ խօսքն անցեր էր այնպէս որպէս թէ խրախճանաց ժամադրութիւն մը կար :

— Աղղը նորէն կ'տեսնուինք :

— Այո՛ , երթամ պիտի դանակս սրելու :

ՀՌՈՄԻ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ

— Ո՛ւր կ'երթաս , Պետրէ :

— Աղմուկ կայ 'ի Գօրսօ , անդ կ'երթամ :

— Ինչո՞ւ պէտքն է , անմիտ :

— Հայրենասէր եմ : Թէև ցնցոտիներ կ'կրեմ , կ'զգամ որ հօսօ մայեցի եմ :

— Լաւ ուրեմն , վերջը :

— Աւերջը՝ կ'լսեմ իզմէ վեր եղող մարդոց խօսքը : Տաղտուցած են մեր քահանայից կառավարութեան : Եպիսկոպոսներէն պրծիլ կ'ուզեն : Ամէն մարդ թող իր գործը նայի : Քահանաները յեկեղեցին , աշխարհի մարդիկ , աշխարհի իրաց կառավարութեան ղլուխը :

— Որդեակ իմ , դու քիչ մը դուհիկ լեզու մը կ'խօսիս : Իմ ժամանակս այդպիսի բան մը չէին ըսեր : Նայինք , բացայայտ խօսէ : Միթէ կ'ուզէք Նորին Սրբութիւնը , վանականներն ու քահանաները վռնտել :

— Ամենեկն , ծերունի հայր :

— Ի՛նչպէս , չէն տեսներ որ այդ է յեղափոխութեան վերջնական նպատակը :

— Ես այդպէս չեմ տեսներ , վասն զի գործն ըսածիդ պէս չէ :

— Աոյս Մարիամ , ի՛նչ կ'ըսես : Շատ պարզամիտ ես , Պետրէ : Լաւ , իմ որդիս , քու կորստեանդ կ'զիմես , նոյնպէս քու պարագայիցդ և ձեր հայրդ պիտի երեսի վրայ մնայ :

— Ես այդպիսի բան մը չեմ տեսներ , վասն զի այն ատեն . . . :

— Անշուշտ պիտի երթաս պոռալու . Աեցցէ՛ թաղաւոր-պապը :

— Աստուած չընէ :

— Ողորմելի յիմար , մտիկ ըրէ . ո՞վ կ'տայ քեզ ազատութիւնը , բացարձակ ինքնիշխան ազատութիւնը՝ իր բոլոր ուրախութիւններով , հաճոյքով միթէ թաղաւորը չէ :

— Լաւ , ես աւելի կ'սիրեմ կանոն մը . այդ բանն իմ հայրենի երկրիս աւելի պատիւ կրնայ բերել :

— Հռոմի ճշմարիտ թաղաւորը՝ մեր սրբազան Պատր չէ , աղքատն է : Գու կ'ծիծաղիս . . . : Այո՛ , աղքատը , մուրացկանը , թխազոյն , աղտոտ , ծակոտած վերարկուով մարդը : Գու , ես՝ այս քաղքին մէջ թաղաւորն ենք , քաղաք զոր խելացի մարդիկ յաւիտեանական կ'անուանեն : Հասարակաց վայրերը , փողոցները , պալատներու դռները՝ եկեղեցեաց դարիթները՝ մենք թաղաւոր ենք : Անդ կ'ապրինք , անդ կ'պառկինք , անդ կ'ընդունինք այն աղւոր թարմութիւնը զոր պնտականներն անդամ չունին իրենց աղւոր սրահներուն մէջ : Ո՞վ պիտի տայ քեզի այս բաներն երբ Փրանսական ձևով ոստիկանութիւն մը հաստատուի այս տեղ :

— Երանի թէ ամէն ինչ Փրանսական ձևով հաստատուէր 'ի Հռոմ :

— Տղէ՛տ . կ'տեսնեմ որ դու երբէք Փրանսական մեծ քաղաքներու մէջ ոտք չես կոխած : Անդ մուրացկան չեն ընդունիր : Քաղաքներու դռներուն վրայ դերանէ մը կախուած ահային թիթեղ մը սա ահռելի արձանադուրթիւնը կ'պարունակէ . «Մուրացկանութիւնն արդիլեալ է» :

— Լաւ , ես ալ այդ կ'ուզեմ : Երիտասարդներն աշխատութեան կ'վարժեցընեն , և զիտեմ որ անդ պատսպարաններ կան ապիկարներու և ծերերու համար :

— Տղաս , կարծեմ թէ զլուխդ դարձուցին : Բայց այդ պատըսպարանները բանտեր են :

— Ի՞նչ առասպել :

— Այո՛ , բանտեր , վասն զի եթէ մի անգամ անդ մտնես , և այս ալ մեծ դժուարութեամբ , այնուհետև դուրս ելնելիք չունիս : Մնաս բարեալ պիտի ըսես արևուն , աղատ օդին , սիրական ձեմելեաց , ծնած թաղիդ , այն սուներուն ուր սղայու թեան ասեն

խաղացեր ես : Այս է այն կողմի կեանքը , պարոն Պետրէ , որ դեակ , այս է կեանքը : Աւելի լաւ է աղւոր ճաշէ մը զըկուիլ քան թէ կանոնաւոր կերակուրներ ուտել՝ վայրի կենդանեաց յատուկ վանդակաւոր խոցերու մէջ : Ասոնք են իմ անձնական կարծիքս :

— Այդ կարծիքդ քեզի պահէ , հայր իմ , ողջոյն քեզ :

— Դեռ խօսէ հետս :

— Ի՞նչ խօսիմ :

— Ուրեմն աշխատութիւնը սիրելու սկսար :

— Ե՛ս , ամենևին . բայց պիտի ենթարկիմ աշխատութեան . այս լաւագոյն է քան թէ ձեռք բանալ ու մուրալ վանուց դռները :

— Ահա նոր դաղափարներ : Ի՞նչ նուաստութիւն կայ այդ բանին մէջ : Միթէ վանականներն ալ մեզի պէս մուրացկաններ չէ՞ն . միթէ սուները չէ՞ն պտտիր մուրալու համար : Լաւ , այդ վանականները մեզ կ'աղնուացընեն : Մեր արուեստը բանելու խոնարհելով մեզ կ'մեծցընեն : Որդեակ , վանականներ , և շատ վանականներ պապեր եղան : Մուրացկանութիւնը , վանականաց ձեռօք , մինչև քահանայապետական աթոռն ելաւ : Այդ մեծ փառք մ'է :

— Քեզի լինի այդ փառքը : Այսօր կ'գիտեմ որ զործաւոր մը յարգ ունի . մուրացկանը կ'արհամարհուի : Միթէ քու մուրացկան վանականներդ յարգ ունին : Սովորութեամբ անոնց ողորմութիւն կ'տան , ստէպ առ հարկի . մարդ չուզեր որ դէշ երեխանոց : Ես այս ամէնը քաջ կ'տեսնեմ :

— Տրտմութեան մէջ պիտի մեռցընես զիս :

— Թող մարդ լինիմ և քեզ պիտի սնուցանեմ : Մնաս բարեալ , համբերութիւն : Աւասիկ իմ դանակս : Զգու շանան թող Նորին Սրբութեան ասրճանակիրները :

— Ա՛հ , դժբա՛ղդ որդի : Բայց , Պետրէ , ինձ մտիկ ըրէ :

— Ի՞նչ կ'ուզես դարձեալ , հայր իմ :

— Գու պատճառ մ'ունիս և ինձ չես յայտներ , քանի որ կ'երթաս այդ յուզմանց մէջ մտնելու , ուր չկայ բան մը վաստակելու , մեզի պէս մարդոց համար , բայց եթէ հարուածներ : Նայինք , Պետրէ , ըսէ ամէն ինչ հօրդ :

— Լան, կ'ուզեն զիտնալ, Թիույլէգան, Մարինո քանդակազորձին գուստրը կ'սիրեմ:

— Լան, հետը կարգուէ:

— Նա չպիտի առնէ մուրացկան մը:

— Բայց դու, դու իր հօրմէ աւելի հարուստ ես: Մուրալով աւելի դրամ կ'վաստկիմ՝ քան թէ նա իր արձաններով զոր ոչ ոք կ'գնէ. և քանի մը աղոթ ոսկիներ պահած եմ անկիւն մը, զանոնք քեզի պիտի տամ, եթէ դու ալ ինձի պէս ապրիս:

— Ո՛չ, կ'ուզեմ Թիույլէգայի հօր հետ աշխատիլ: Իր արուեստը պիտի սորվիմ, բայց առ այժմ՝ երթամ պիտի իմ հայրենեաց անկախութեան համար պատերազմելու: Ե- կեցցէ՛ քե՛ Ի- րապէս:

— Գնա՛ սատանային ծակը:

ԺԲ

ՃՀՄԱՐԻՑ ՊԱՀԱՐՈՒՄ ՄԸ

Երբոր մասնաժողովին կողմէ պատրաստուած ժողովրդային ցոյցը՝ մեծ յուզմունք կ'պատճառէր ՚ի Հռոմ, երբ քահանայապետին զօրքերը հրապարակներու մէջ կ'գումարուէին, երբ բաղմամբ զինուորներ մեծ փողոցներուն բերանը կ'սպասէին որպէս զի բուռն զօրութեամբ խուլարարները վանեն, Ֆրանսական բանակը՝ հրամանատարին պատուէրին վրայ՝ ճամբայ ելնելով՝ ըստ կարգի՝ սքանչելի ճշգութեամբ կ'հասնէր, և ուղղմադիտական հնարքով մը, զոր քահանայապետական զօրաց անձանսթ էր, Պապին ոստիկան զօրաց՝ որ կուրօրէն կ'յարձակէին, և դաւադիրներուն մէջ՝ որ հայրենասիրական ազդողակներ կ'արձակէին, կ'մանէր: Այս գործողութիւնն երկար եղաւ, բայց յաջող վախճան ունեցաւ:

Ծանր ծանր յառաջ անցան, սպայք, տանապետը և պարզ զինուորները բոլորովին դադրեցան քաղաքավարութեամբ մը՝ ազաչեցին հռոմայեցի պարոններն որ սուխները խաղցընելու ծանրութիւնը շտան իրենց: Հետաքրքիրներու ամբոխն որ միշտ կը տանապատկի՝ ծանրաքայլ կ'ցրուէր: Քահանայապետական ոստիկաններն երբեմն ըմբոստ զիրք մը կ'բռնէին. տրամադիր էին դադրեցնելը շատ երկայնամիտ գտնելու և իրենց սրտնեղութիւնը չէին ծածկեր այսպէս եռանդ ցոյց տալու առիթ մը ձեռքէ հանելու ստիպուած լինելուն: Միւս կողմէ՝ հռոմայեցի հայրենասէրները շատ պիտի յուսահատէին եթէ այս մէկ քանի քահանայապետական զինուորները չհարուածէին: Աւստի թէ ծաղրական և թէ եղբրական ձև մ'ունէր այս այլանդակ կոիւր, որով ակն յայտնի եղաւ մասնաժողովին՝ որ դադրեցան զօրաց տրուած հրամանները խիստ էին, թէ մարդավարական ձևեր պիտի բանեցընէին որչափ ատեն որ այս շարժումը ծանրակշիւ չլինէր, բայց անհաշտ պիտի դառնային այն օրն որ յեղափոխութիւն մ'ընելու փորձ փորձէին անխոհեմութեամբ:

Այս բաները կ'անցնէին հետաքրքիր ամբոխին գումարուած վայրը: Ան երևակայութիւններ որոց համար հանդէս մ'է պատամբական շարժում մը, վասն զի նոր տեսարան մ'է: Այս տեսարանը կրնայ քանի մը կեղեքանք պատճառել, բայց ամէն ոք գերասան մ'է և իր գերին կցորդ քանի մ'անախորժ զիպուածներէն կրնայ միտթարուիլ:

Գաղղիական զօրքն ահարկու կերպով տարածուեր էր Տէլ Բօքօջ հրապարակէն մինչև Գօլիզէն, այսպէս բռնելով մեծ արահետն ուր կ'ըջի ժողովուրդը, և հետեւապէս՝ պատերազմը դաշտին տէրն էր:

Արդէն զուշակեր էին ինչ որ կրնար պատահիլ մասնաւոր տեղեր, հետեւապէս քահանայապետական ոստիկանութիւնը բանտերուն պահանորդները կրկնապատկել տուեր էր:

Իարօ, իբրև ճարպիկ ուղղմադէտ, իր բոլոր պատրաստութիւններն ըրեր էր: Քանի իրեն խոստացուած մարդիկ նշանակեալ տեղը կ'հասնէին, զանոնք կ'առնէր, մութ սենեկի մը մէջ կ'նե-

տէր, ուր ժողովուրդը մեծ ախորժ կ'զգայ վասն զի անդ ազատութիւն կ'գտնէ: Լուսկերի ոսկիով վճարուած կենարար զինի մը անոնց մեծարել կ'տար: Եւ երբ այս մարդիկ որ թուով զրեթէ երսուն հոգի էին, այս մոլեգին գրդուութեան հասան, առանց որոյ կարելի չէ յաղթութիւններ տանիլ, երբ դաւադրական ճառով մ'անոնց երեակայութիւնը բորբոքեց քահանայից կառավարութիւնը սաստիկ դարովելով, անոնց քանի մը զէնք բաժնեց՝ զոր խցիկի մը մէջ պահած էր՝ և անոնց զլուխն անցնելով, մօտ առ մօտ քալեցուց մինչև Հաւատաքննութեան բանախն դուռը: Առաջին ընդհարումը սոսկալի եղաւ: Աստիկանութիւնն արդէն իմացած լինելով՝ դարանամուս կ'պահէր կրկնապատիկ պահանորդներ որ պաշարման օգնեն: Քանի մը մարդիկ ընկան երկու կողմէ՝ առաջին հրացանի հարուածներէ. բայց Իաքօմօի գնդին եռանդը յաղթահարեց: Այս մարդիկ նոյն պահուն քանի մ'առաւելութիւններ ունէին, աւելի բազմաթիւ էին, խմբ էին և յանգուզն էին: Փոքրիկ դունդը յարձակողներուն բազմութիւնը տեսնելով խկոյն վհատեցաւ: Առաջին դուռը խորտակեր էին Իաքօմօի մարդիկ, պահակաց կայանը դրակեր էին և արդէն այս վայրը հրամայող սպայն՝ երկրորդ դրան ետեը քաշուած՝ կ'սորհէր անօգուտ արիւն թափելու փորձէն հրաժարելու, երբ բազմաթիւ վաշտ մը դաղղական զօրաց փողոյէն դուրս ելաւ որու երկայնքը բանախն գաւիթը կ'տարածուի: Իաքօմօ՝ իր պահանորդներն ունէր. սուլիչի մը ձայնէն իմացաւ գործը: Իր ընկերներուն նշան ըրաւ: Շուտ մը պահականոցէն դուրս ելան և քանի մ'ոլորուտ փողոյներ բռնեցին: Այսպէս գրեթէ ամենքը խոյս տուին իրենց զլխաւորին հետ. քանի մը հոգի միայն գերի ընկան:

Իաքօմօ՝ փոշիսով և արիւնով ծածկուած՝ քանի մ'օր թագչեցաւ: Երբ տեսաւ որ առանց վտանգի կրնար դուրս ելնել՝ զնաց Լուսկերը գտնելու:

— Մահաբեր մտատանջութեան մէջ էի, սիրելիդ իմ Իաքօմօ, երբ քեզ այլ ևս չտեսայ ժողովրդային ցոյցէն ետքը. ըսի իւրովի. Իաքօմօ կուռին մէջն էր՝ անշուշտ պահանորդ զինուորները զանի բռնած են: Աստի տեղեկութիւն փնտռելու գացի: Ի-

մացայ որ Հաւատաքննութեան տան մէջ արիւնալի կուռ մը պատահեր է. այն ատեն իբրև ստոյգ համարեցի որ իմ քաջասիրտ Իաքօմօն անդ մեռած ընկած է: Եւ զրեթէ Նախախնամութեան դէմ տրտնջելու վրայ էի, որ իմ խեղճ Թուլիօյիս ձեռքէն իր լաւագոյն պաշտպաններէն մին կ'կորզէր: Աւերջապէս ահա երեւան ելար: Գու կ'ապրիս, ես երջանիկ եմ քեզ տեսնելու և ասպաղային մէջ կ'յուսամ:

— Ասոնք քու սատանայ դաղղակացիքդ են որ այսչափ չարիք գործեցին: Ինչ արշաւանք. իմ կենաց մէջ շատ մեծ պարծանք մը պիտի համարէի զայն: Ինչպէս լաւ կարգադրեր էի ամէն բան: Չօրսպետ մը հարիւր հազար զօրք ասկից աւելի լաւ չէր կրնար շարժել: Բայց ինչ օրուտ. բաղդ չունիմ:

— Ամէն ինչ լմնցած չէ, Իաքօմօ:

— Ո՛հ, սէ, դեռ իմ մտքիս վրայ եմ: Երակներուս մէջ դեռ արիւն ունիմ և զլխուս մէջ գաղափարներ: Միթէ այն դեղին դրամներէն դեռ կ'մնան:

— Շատ քիչ:

— Պէտք է ամէն բան աչք առնուլ: Ա՛ղէ, արիւթիւնը ձեռքէ չհաննիք: Երթամ պիտի ուրիշ գաւ մը հիւսեմ:

— Իաքօմօ, դու քաջասիրտ մարդ ես:

ԺԳ

ՍԱՐԻՆԱ ՊԱՆԳՈՒՆԸ

1861 փետրվարի 10ն էր: Երեք կորովի, մարտադէմ և յանդուղն մարդիկ՝ որ հոռմայեցի զիւղացուց հագուստ հագեր էին, աղօտ կանթեղի մը լուսով կ'ճաշէին. այս կանթեղին հաստ պատրոյգը՝ մնացած գոյզն ինչ իւրը ծծելով՝ ժահ հոտ մը կ'սփռէր

Մաքինս պանդոկին մէջ : Այս պանդոկը կ'յաճախէին Հռոմէն անցնող հովիւներ , մաքսաննոցներ , արհեստիւ մուրացկաններ , զողեր և այն կասկածելի մարդիկ որոց արուեստն է ամէն բանի պատրաստ գտնուելը :

Այս դձուձ տեսքով տունը դուռ մ'ունէր միայն Տիբեր գետին ձախ դին դտնուած տձև հրապարակին վրայ , Վէստեան տաճար կոչուած այն զմայլելի մանրանկար ճարտարապետական շինութեան մօտ : Վարը բաւական ընդարձակ , մրոտ ծխոտ սրահ մը կար , քանի մը խուցեր , խոհանոցն ու մառանները : Վերի դին տասն երկուքի չափ՝ մութ ու աղտոտ նրբագաւիթով մ'իրարմէ զտուած՝ նողկալի սենեակներ կային : Երբ շատ ամբօխ լինէր , երբ՝ տարուան մէկ քանի ժամանակներ՝ բազմաթիւ գիւղացիներ լեռներէն իջնէին , այս սենեակները մարդկային մըջունոցներ կը գառնային դիշերը . տաս տասն երկու մարդիկ խշտեակներու վրայ կ'դիզուէին : Երկու անշահ անկողններ , որոց սաւաններն ուր ուրեք կ'փոխէին՝ այս սենեակներու միակ կահ կարասին էին : Պանդոկապետուհին Թիուսդինա տիկինն էր , լայն երիկամունքով պառաւ կին մը , որ քառակուսի գլուխ ունէր , հաստ այլ գեղեցիկ դէմք , և Գրանդվէրի կանանց ախպարը , բայց տարիներէ և տաժանելի աշխատանքէ , նոյնպէս նուաստ և վշտալի կենցաղավարութենէ մը թորշումած :

Այս կինը միայն որդի մ'ունեցեր էր . դուկեր էր զանի հայրենակիցներու հետ միանալու , որ Հռոմը կ'սլաշտպանէին զաղղիական զօրաց դէմ : Քաղքին առման օրն իրեն դիակ մը բերին :

Թիուսդինայի տունն ապահով տուն մ'էր : Անդ ամէն բան կարելի էր ըսել : Պատկանական կառավարութեան դէմ գաւաղութեան խորհուրդներ , առեանդի դաւեր , ճամբաներու վրայ առաջարկելի աւազակութիւններ , բռնաբարութեամբ և մաղկելով տուն կոխելու միտքեր , արշաւի ելնելու համար կազմելու խումբեր , այս և ուրիշ տեսակ մեքենայութիւններ կ'պատրաստուէին այս երկայն սեղանին վրայ , երբ հիւրերը՝ բազմաբաններու վրայ նստած՝ իրենց արմուկին վրայ դռնօղաբար կ'կոթնէին թեթև անհամ գլինի մը խմելու որ Ալպանօի և Վալէգրիի լեռներու այգի-

ներէն կ'քաղէին : Թիուսդինա մայր մ'էր իր այս զիւցազուներուն համար՝ որ իր ծուխերն էին : Եթէ մէկն երբէք մատնուէր , պանդոկը բողբոջվին ամայի պիտի դառնար : Աինը հաշտ էր հոռմէական ոստիկանութեան հետ որու՝ ձեռքի տակէ՝ տարեկան հասոյթ մը կ'վճարէր : Առատօրէն ողորմութիւն կ'տար բոլոր Գապուչներուն և ուրիշ մուրացկաններու : Խորշի մը մէջ դրուած Տիրամայր մ'անոր ձեռօք կ'զարդարուէր գեղեցիկ շրջազետտներով և կանթեղ մը շարունակ այս պատկերին առջև կ'վառէր : Երբէք իր պահքն ընելու չէր մտնար :

— Այսպէս ուրեմն , կ'ըսէր երեք անձերէն մին՝ որ կարծես թէ միւս երկուքին վրայ կ'տիրէր , դուք աներկիւղ մարդիկ էք :

— Այո՛ , պարոն :

— Հինգ հարիւր սկուտ պիտի ընդունիք :

— Թող հինգ հարիւր լինի :

— Բայց վտանգ կայ :

— Օ՛ն անդր :

— Բարձր պատէ մը վեր պիտի ելնենք :

— Գժոխքէն վեր անգամ կարող ենք ելնել :

— Կարելի է դնակներ ընդունինք :

— Անոնք մեզ կ'ճանչեն :

— Ուրեմն հաստատ էք :

— Անշուշտ , մենք մարդ ենք , ուրիշ խօսք չուզեր :

— Կէս գիշերին դամ պիտի ձեզ առնուու : Չուանէ ելնարան մը պիտի ունենամ , նոյնպէս բազմահար բէվօլվներ՝ ամէն մէկուն համար , եթէ՝ սուր որ լինի՝ յարձակում կ'ընենք՝ պարպեցէք հրացաններն և կարելի եղածին չափ շատ մարդիկ սպաննեցէք : Խընդիրն առեանդի մը վրայ է . չորս ձի մեզի պիտի սպասեն : Պէտք է բոլոր դիշերը քաշել , Սուպիաքօէն անցնիլ և առեանդեալ անձը՝ սահմանադլխէն գուրս՝ Ռօքա-Սան-Սանֆանիօ թողուլ՝ պատկան պահակներու խուզարկութենէ հեռու : Բայց հինգ հարիւր սկուտը , վաղն այս տեղ ձեզի պիտի համբեմ նոյն ժամուն . և զանոնք մեր արժանի պանդոկապետուհին մօտ առանդ կ'ձգեմ : Տիկին , մօտեցի՛ր :

Եւ սկուտները գրնդիւնով սեղանին վրայ նետեց, զանոնք չորս կոյտ ըրաւ և կնկան առջևը շարեց :

— Տեսա՞ք. մինչև վաղն իրկուն պահէ և լաւ ընթրիք մը պատրաստէ :

Երկու մարդոց աչքն անսովոր փայլով մը կ'ըղային իրենց սև յօնից ներքև : Գայլին քանի մը ժամ քնանալու : Ժիուսդինա զանոնք պիտի արթնցընէր :

Սարինա պանդոկին երեք մարդիկը՝ կէս դիշեր կէս ժամ անցած՝ լռին փողոց մը հասան որ Հոռոմի ամենէն բանուկ թաղերուն մէկ ծայրը կ'դանուէր : Գիշերը սոսկալի էր. հեղեղի պէս անձրև կ'թափէր յաւիտենական քաղքին վրայ : Արևելեան հովիտ ուժղին կ'փչէր և մերթ ընդ մերթ ահազին տարափ կ'ընէր : Այս մարդիկ իրենց վերարկուններով փաթթուած՝ ատեն մը քալելէն ետև՝ առանց իրարու խօսք մ'ըսելու երկայն պատի մ'երկայնքը կեցան՝ որ բաւական բարձր էր : Մթութիւնը սաստիկ էր : Պարագլուխը փոքրիկ լապտեր մը վառեց և չուանէ ելնարան մը բանալով պատին կատարը նետեց ակիչներովը. ինքն ելաւ ամենէն առաջ և միւս դաւաղիւններն իր ետևէն ելան : Ուրիշ մը փողոցը կեցաւ : Երբ պարագլուխը պատին միւս կողմն իջաւ՝ դրան մը կողմը դիմեց ձեռքը խարխաբելով որպէս զի մութին ուղածը զանէ, վասն զի չէր կամեր գողի լապտերը գործածել որպէս զի չտեսնուի : Իր դօտիէն ահազին բանալիներ քաշեց և մէկ հասարտաքին հաստ փականքի մը մէջ մղեց որ ամրապէս ցած ու թանձր դրան մը կցած էր, զնդանի մը դրան պէս :

Առաջին բանալին փականքին մէջ խառնակեցաւ և բաւական ժամանակ պէտք եղաւ զայն հանելու համար : Ուժղին դուռը ցնցեց և աղմուկ մը հանեց : Ուրիշ քանի մը բանալիներ ալ փորձեց ընդունայն : Աւերջապէս իսկաւ մը փականքին լեզուակը բռնելով՝ քաշեց զայն սուր շփնդով մը զոր անկարելի եղաւ խափանել : Ծանր դուռն իր ծղիւնիներուն վրայ դարձաւ : Ալալանաւորը՝ որ բռնէն արթնցեր էր առաջին աղմկէն՝ կանգուն կեցաւ :

— Հեռուէ ինձ, ըսաւ Իսքոմո, աղատեցար : Երբ պատին ստորոտը հասնի՞ք՝ չուանէ ելնարանէ մը վեր պիտի ելնես միայն : Ես

ալ քու ետևէդ պիտի գամ : Մարդ մը քեզի կ'սպասէ փողոցը : Իայց մանաւանդ կատարեալ լուութիւն պէտք է :

Ժուլիօ դուրս կ'ելնէ իր ազատարարին ձեռքը բռնելով, 'ի վերջէ աղատիչ չուանը կ'բռնէ : Աւեր կ'ելնէ, ապա պարագլուխն իրեն հետ եկող մարդը կ'անցընէ և երբ կ'գիտէ որ երկուքնին ալ աղատ են և վտանգէ դուրս, ինքն ալ կ'սկսի վեր ելնելու : Արդէն զեանէն քանի մը քայլ վեր ելեր էր, երբ սոսկալի ձայն մը կ'լսուի : Երկաթէ ձեռք մը զանի կ'բռնէ և վաթ կ'քաշէ : Բանտապահն էր՝ որ աղաղակներ կ'արձակէր և օդնութեան կ'կոչէր : Գիշերապահն աղմուկ կ'լսէ, հրացան մը կ'պարպէ՝ զինուորները՝ զօրանոցը պառկած լինելով՝ շուտ մը կ'արթնան և ջահերով կ'հասնին : Նոյն պահուն երկու մարդիկ խաւարին մէջ կուռեցան : Բանտապահը կ'զգայ որ իր վիզը սոսկալի կերպով կը սեղմեն : Այն ատեն լայն դաշտն մը պատենէն կ'հանէ և իր հակաւորը զետինը տապաստ կ'կործանէ :

Երբ պահնորդները կ'դան, երբ ջահերը կ'լուսաւորեն այս տեսարանը, բանտապահը կ'տեսնէ իր ոտից առջև ընկած մարդը, իր Աւերջալայի դրացին, իր մաքսանենդ բարեկամն է, Իսքոմոն :

Իսկ Ժուլիօ՝ ուժղին ձեռքի մ'օդնութեամբ՝ կ'խաամու ընկած էր պատին միւս կողմը :

ՎԵՐՋ

ԵՐՐՈՐԴ ԷԱՏՈՐԻ

ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՐԱԽՈՒՄ ՄԸ ՏՍԱՆՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆ

Ա. Խաբուած սէր մը	Երես
Բ. * * * կոմսուհւոյն յանդուզն խորհուրդը	3
Գ. Ժէզվիդաց արտօնութիւնները	7
Դ. Ատենը	17
Ե. Լքումն	25
Զ. Թափառական հրէին տրաման	32
Է. Վերաբողոքեալ դատ	37
Ը. Ժէզվիդաց զօրապետին նամակը	42
Թ. Ժուլիոյի հռչակը	47
Ժ. Առ աշխարհական պատութիւն սոցյ այցելութիւն	57
ԺԱ. Ժուլիոյի ոգիսականը	60
ԺԲ. Ժուլիոյի ոգիսականին շարունակութիւնը	64
ԺԳ. Հանդիպում	73
ԺԴ. Ոգիսականին շարունակութիւնը	83
ԺԵ. Հանդէս տիրապահական 'ի Սանդա-Մարիա Փօրքասիի	94
ԺԶ. Ժէզվիդաց բարոյական աստուածաբանութիւնը	100
	109

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱԻԱՏԱՌՆՆՈՒԹԵԱՆ ԶՈՂ ՄԸ Ի ՀՌՈՄ

Ա. Սահմանադրութի	125
Բ. Վիդէրայի գերբնատեսը	130
Գ. Մուտք 'ի Հռոմ	135
Դ. Հաւատաքննութեան բանտերը	138
Ե. Լան-լը-Պուրկ	145
Զ. Լուպէր 'ի Ժէզիւ	150
Է. Փոքրիկ գերապայծաւը	169
Ը. Կարտինալ Անդոնէլի	173
Թ. Մաքսանկնդը	179
Ժ. Պիոս Թ Ե խոովութիւնն 'ի Հռոմ	182
ԺԱ. Հռոմի մուրացկանները	191
ԺԲ. Ճշմարիտ պաշարում մը	194
ԺԳ. Սաբինա պանդոկը	197

1655
1656
1657
1658

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0835312

